

ՀԲԿԱՆԴ ՆԱԲԿԱՅԵՆ

ԿԱՎԱԿԱԿԻՐ  
ԳՐԱՐՆԱԿԻ  
ՀՆՅՆԱՏԵՆ  
ԲՐԻՆԱՏԵՆ  
ԵՐԻՐԵԻՆ

1995

11-25

17401

ԻՐԱՆԻ ՄԱՐԿԱՅԵՆ

հ2

ԻՄԿԱՏԻՐԻ


ԳՐԱԾԱՐԵ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱՆԻ ՄԱՐԿԱՅԵՆ

ԹԻՐԵՆ

2987



✓



1995

**Սարգսյան Ե. Ղ.**

*Դավադիր գործարք. Հայաստան—Ռուսաստան—Թուր-*

*Ա 259 քիա.— Եր.: Հայաստան, 1994 204 էջ:*

*Մենագրությունում նորահայտ արխիվային փաստաթղթերի, օտար ազդյունների և հատկապես, թուրքերեն լույս տեսած գրականության հիման վրա վեր է հանվում պանթուրքիզմի ու պանիսլամիզմի գաղափարախոսության ազդեցիվ բնույթը:*

*Զգալի տեղ է հատկացված 1918-1920 թթ. Անդրհովհաս կատարած թուրքական արշավանքներին, վեր է հանվում բնմալական Թուրքիայի հայաչինջ քաղաքականությունը Արևելյան Հայաստանում: Ցույց է տրվում Խորհրդային Ռուսաստանի հակահայկական, թուրքանպաստ քաղաքականությունը 1920-1921 թթ., որը զրսևորվեց 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված Խորհրդա-թուրքական պայմանագրում:*

ISBN 5-540-01565-7

• 0503020913

U \_\_\_\_\_ 94

701 (01)-94

© Սարգսյան Ե. Ղ., 1994

## Մ Ո Ւ Տ Ք

Վերջերս մեզ հնարավորությունն ընձեռվեց մուտք գործել նախկին խորհրդային Միության արտաքին գործերի նախարարության և ԽՍՀՄ-ի ԿԿ առընթեր մարքսիզմ—լենինիզմի ինստիտուտի արխիվների այն ֆոնդերը, որոնք գտնվում էին յոթ կողպեքի տակ: Այդ ֆոնդերից են խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի արխիվը, ֆոնդ-Референтура по Турции, խորհրդա-թուրքական և խորհրդա-հայկական 1920 թ. մոսկովյան բանակցություններին վերաբերող ֆոնդերը:

Նշված ֆոնդերում պահպանված են մեծ քանակությամբ փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ Անկարայի կառավարությունը իր հարձակումը Հայաստանի դեմ քողարկում էր «հայ ժողովրդին դաշնակցականների լծից ազատագրելու» կեղծ լոզունգով, որին թակարդվեցին Հայաստանի հեղկոմի ղեկավարները՝ իրենց ազիտացիայով կազմալուծելով հանրապետության բանակը ու դրանով իսկ դյուրացնելով թուրքական զորքերի առաջխաղացումը:

Նույն ֆոնդերում վերհանեցինք 1920 թ. ամռանը խորհրդա-թուրքական և խորհրդա-հայկական, հատկապես խորհրդա-թուրքական 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին կայացած մոսկովյան երկրորդ բանակցություններին վերաբերող փաստաթղթերը:

Մենագրությունում օգտագործել ենք փաստեր թուրք հեղինակների աշխատություններից, որոնցում արժանավել են մեր կողմից բարձրացված հարցերը:

Ժամանակակից թուրք պատմաբանների և պետական ու  
ուսումնական գործիչների հրատարակած աշխատություննե-  
րում, քաղաքական հուշերում առանձնապես մեծ տեղ է հատ-  
կացված 1920—21 թթ. իրադարձություններին ու Անդրկով-  
կասի նկատմամբ քեմալականների վարած արտաքին քա-  
ղաքականություն, 1920 թ. հուլիս-օգոստոսին Մոսկվայում  
տեղի ունեցած բանակցություններին, 1920 թ. հայ—թուրքա-  
կան պատերազմին և Ալեքսանդրապոլի դաշնագրին, 1921 թ.  
կոքոված Մոսկվայի ու Կարսի պայմանագրերին և այլ հարցի-  
րին, որոնք լուսաբանվում են վերին աստիճանի միտումնա-  
վոր, աղավաղված ձևով: Հակահայկական ոգով գրված իրենց  
գործերում թուրք հեղինակները ջանք շեն խնայում արդարաց-  
նելու քեմալական թուրքիայի դեպի Անդրկովկաս կա-  
տարած արշավանքն, այն ներկայացնելով նույնիսկ որպես  
«նեոդրոմ» Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստա-  
տելու գործում, որպես թուրքական ազգային ազատագրա-  
կան շարժման բաղկացուցիչ մաս, իսկ այդ ազրեսիայի հե-  
տևանքով թուրքիային անցած տարածքները՝ որպես բուն  
թուրքական հողեր:

Թուրք պատմաբանների աշխատությունների մյուս հիմ-  
նական նպատակը հակահայկական պրոպագանդան է, որը  
միշտ վերջ ներծծված է պանթուրքիզմի ուսկյիսուն գաղա-  
փարներով: Պանթուրքիզմը մեր օրերում էլի չի դադարում ծա-  
ռայել որպես զենք թուրքիայի կառավարող շրջանների ձեռ-  
քում՝ արտաքին քաղաքականության ասպարեզում, նրանց  
հետապնդած գավթողական պլաններն իրականացնելու  
գործում:

Գ լ ու խ ա ո ա ջ ի ն

ՕՍՄԱՆՑԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱԳՐԵՍՒԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

1918 թվականին

Նախաքաղ դեպի Մեծ Թաւրան

Ինչպիսի՞ն էր իրադրութիւնն Անդրկովկասում և կովկասյան ճակատում թուրքական ներխուժման նախօրյակին։ Հոկտեմբերյան հեղափոխութեան հաղթանակից հետո 1917 թվականի նոյեմբերի 15/28/-ին ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարարիատը՝ մենշևիկ Ե. Գեգեշկորու գլխավորութեամբ։ Այդ կառավարութիւնը ստեղծվեց Թիֆլիսում՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հյուպատոսների գործուն մասնակցութեամբ։ ԱՄՆ-ի հյուպատոս Սմիթը հեռագրում էր պետական քարտուղար Լանսինգին. «Ես նոյեմբերի 24-ին ներկա կլինեմ Անդրկովկասյան կառավարութիւն կազմակերպելու հարցի շուրջ հրավիրվող խորհրդակցութեանը։ Այդ կառավարութիւնը կմիանա Հարավային Ֆեդերացիային՝ և

1. Հարավ-Արևելյան Ֆեդերացիան կամ Հարավ-Արևելյան միութիւնը ստեղծվել էր 1917 թվականի նոյեմբերին Դոնի, Կուբանի ու Թերեքի հակահեղափոխական կազմակերպութեան կողմից՝ խորհրդային իշխանութեան դեմ պայքարելու նպատակով։ Նրա կազմակերպման մեջ գործուն մասնակցութիւն ունեցավ վերը հիշատակված Սմիթը, որը Դոնի, Կուբանի, Աստրախանի և Ուրալի կազակական զորքերի լիազորների հետ կնքեց մի համաձայնագիր, որով երաշխավորվում էր ԱՄՆ-ի աջակցութիւնը կազակական պետութեան ստեղծման գործում։

կմերժի զինադադարը կամ սեպարատ հաշտութիւնը: Անհրաժեշտ է նրան ֆինանսական օգնութիւն ցույց տալ... Այդ հարցը մեզ համար շատ կարևոր է»<sup>1</sup>:

1917 թվականի նոյեմբերին Անդրկովկասում ստեղծվեցին ազգային խորհուրդներ, որոնց ղեկավարութիւնն ամբողջովին անցավ բուրժուա-ազնվականական մտավորականութեան ու զինվորականների ձեռքը: Կոմիսարիատի երկամսյա տիրապետութեան հետևանքով երկրամասի տնտեսութիւնը կատարյալ քայքայման էր հասցվել: Դադարեցվեց հացի ներմուծումը Հյուսիսային Կովկասից, ընդհատվեց երկաթուղային կապը Բաքվի ու Թիֆլիսի միջև: Ամբողջ Անդրկովկասում գյուղացիական զանգվածները այլևս չհավատալով իրենց հող տալու կոմիսարիատի կեղծ խոստումներին, ապստամբում էին և առանձին տեղերում յուրովի լուծում հողային հարցը: Գյուղացիական խոշոր ապստամբութիւններ տեղի ունեցան Վրաստանում ու Հայաստանում:

1917 թվականի վերջին և 1918 թվականի սկզբին տեղի ունեցան ժողովրդական զանգվածների մի շարք ելույթներ կոմիսարիատի ու «ազգային խորհուրդների» դեմ: Բոլշևիկների նախաձեռնութեամբ գումարվում էին բանվորների, գյուղացիների ու զինվորների ցույցեր ու ժողովներ, որոնցում ընդունվում էին Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականութիւնը դատապարտող որոշումներ: Շատ սեղերում ժողովների մասնակիցները պահանջում էին իշխանութիւնը հանձնել խորհուրդներին:

1918 թվականի հունվարի 9-ին Հաղպատի բոլշևիկյան ժողովը ընդունեց որոշում, որտեղ ասված էր, որ նա ճանաչում է Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի

1. «Papers relating to the foreign relations of the U. S. 1918, Russia», Washington, 1932, vol. 11, p. 592. Անգլիայի ու ԱՄՆ-ի ազդեցիկ պլանների մասին Անդրկովկասում տե՛ս Ե. Ա. Թոքարժևսկի, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане (Баку) 1957, Д. Е. Енукидзе. Крах империалистической интервенции в Закавказье. Тбилиси, 1954, Г. Галоян, Борьба за Советскую власть в Армении, Москва, 1957 г. Ե. Կ. Տարկիսյան, Англо-американская интервенция в в Закавказье в 1918—1920 гг и борьба народов Закавказья за свое освобождение. «Известия» АН Арм. ССР, № 3. 1953.

իշխանութիւնը և բոլոր հնարավոր միջոցներով կնպաստի շոկտեմբերյան հեղափոխութեան լողունգները կենսագործելու գործին: Հիշյալ որոշման մեջ ընդգծվում էր, որ համաձայնողական կուսակցութիւնների բլոկը՝ հանձնես Անդրկովկասյան կոմիսարիատի, ի վիճակի չէ հօգուտ շքավոր գյուղացիութեան ու բանվոր դասակարգի լուծելու գյուղացիական ու ազգային հարցերը<sup>1</sup>:

Անդրկովկասի բանվորական ու գյուղացիական զանգվածները երես էին դարձնում համաձայնողական կուսակցութիւններից և անցնում բոլշևիկների կողմը: 1917 թվականի դեկտեմբերի 19-ին (1918 թ. հունվարի 1-ին) Թիֆլիսում կայացած բանվորական ու զինվորական դեպուտատների խորհուրդների երկրամասային II համագումարին մասնակցող Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի արդյունաբերական կենտրոնների պատվիրակները, անվստահութիւն հայտնելով Անդրկովկասյան կոմիսարիատի հենարանը հանդիսացող մենշևիկներին, էսէռներին ու ազգայնական մյուս կուսակցութիւններին, լքեցին համագումարը և հրավիրեցին Արեւելյան Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի խորհուրդների արտակարգ համագումարը: Այդ համագումարի բոլոր պատգամավորները միահամուտ դատապարտեցին ինչպես Անդրկովկասյան կոմիսարիատի, այնպես էլ Թիֆլիսի ու Քութայիսի նահանգների պաշտպանողական խորհուրդների քաղաքականութիւնը: Համագումարը ճանաչեց Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի իշխանութիւնը: «Կովկասյան խոշորագույն պրոլետարական խորհուրդները, Բաքվի, Գրոզնու, Եկատերինոդարի, Նովոռոսիյսկի խորհուրդները և այլն, — գրում էր «Պրավդան» — ընթանում են բոլշևիզմի դրոշի ներքո և շին ճանաչում Անդրկովկասյան կոմիսարիատը»<sup>2</sup>:

Մինչդեռ Անդրկովկասում ակտիվ էին գործում խորհրդային Ռուսաստանից անջատվելու կենտրոնախույս ուժերը և դրա արգասիքը հղավ այն, որ 1917 թ. դեկտեմբերի 5-ին

1. Տե՛ս «Кавказский рабочий», 21.I.1918, № 15.

2. «Правда», 5.XI. (231). 1918. № 17.

18/-ին ռուսական և թուրքական գործող բանակների միջև  
Երզնկայում կնքվեց զինադադար<sup>1</sup>: Դրանով իսկ Անդրկով-  
կասյան կոմիսարիատը շեր ճանաչում Խորհրդային Ռուսաս-  
տանի և կենտրոնական տերութիւնների միջև 1917 թվակա-  
նի դեկտեմբերի 2-ին (15-ին) Բրեստ-Լիտովսկում կնքված  
զինադադարը, որի պայմանները տարածվում էին նաև Կով-  
կասյան ռազմաճակատի վրա:

Թուրքական բանակի գերագույն հրամանատարութիւնը  
համաձայնեց կնքել Երզնկայի զինադադարը բացառապես  
Անդրկովկասի նկատմամբ իր զավթողական պլաններն իրա-  
կանացնելու համար: Թուրք նվաճողներին անհամեմատ ա-  
վելի հեշտ էր իրենց նպատակներն իրականացնել Անդրկով-  
կասը Խորհրդային Ռուսաստանից անջատված լինելու պայ-  
մաններում: Էնվեր փաշան, դիմելով Անդրկովկասյան կո-  
միսարիատին հաշտութիւն պայմանագիր կնքելու շուրջ բա-  
նակցութիւններ վարելու առաջարկով, հիմնվում էր կովկաս-  
յան հրամանատարութիւն կողմից առանձնացված հանձնա-  
ժողովի նախագահ գեներալ Վիշինսկու հայտարարութիւն  
վրա, որ վերջինս արել էր Երզնկայի զինադադարը կնքելու  
ժամանակ, այն է՝ կովկասյան բանակը բանակցութիւնների  
մէջ է մտնում «Կովկասյան անկախ կառավարութիւն» անու-  
նից:

Երզնկայի զինադադարի համաձայն, ռազմական գոր-  
ծողութիւնները դադարեցվում էին Կովկասյան ռազմաճա-  
կատի բոլոր հատվածներում. ստեղծվում էր դեմարկացիոն  
գիծ, որն անցնում էր կովկասյան բանակի առաջավոր գծի ու  
թուրքական զորքերի միջև: Այդ դեմարկացիոն գիծն օրինա-  
կաբն էր համարվում մինչև վերջնական հաշտութիւն կնքելը:  
Ընդ որում վերապահութիւն էր արվում, որ դեմարկացիոն  
գծի խախտումը կողմերից որևէ մեկի կողմից կարող է հե-  
տևել միայն ռազմական գործողութիւնները սկսվելուց 14  
օր առաջ արված նախազգուշացումից հետո միայն<sup>2</sup>:

2. Զինադադարի մասին համաձայնագրի լրիվ տեքստը տես Документы  
внешней политики СССР, т. I, М., 1957. д. № 30.

1. Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, էջ 19.

երզնկայի դինադադարի համաձայն, Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ կովկասյան բանակի կողմից օկուպացված գոտով:

Խորհրդային կառավարության դիրքորոշումը Արևմտահայաստանի նկատմամբ, որտեղից նա պատրաստվում էր դուրս բերել ցարական զորքերը՝ վերջնական հաշտություն կնքելուց հետո, երևում է ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից 1917 թվականի դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) ընդունված «Թուրքահայաստանի մասին» դեկրետից, ուր ասված էր, որ խորհրդային կառավարությունը «պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անկախ պետություն ստեղծելու իրավունքը»: Հիշյալ դեկրետն իրականացնելու նպատակով Ռուսաստանի ժողովուրդը անհրաժեշտ էր համարում զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանի» սահմաններից և դրա փոխարեն հայկական ժողովրդական միլիցիայի ստեղծումը՝ տեղի ազգաբնակչության անձնական ու գույքային անվտանգությունն ապահովելու համար: Բացի դրանից, ժողկոմխորհուրդը պահանջում էր, որպեսզի հնարավորություն ստեղծվի գաղթական ու վտարանդի հայերին, ինչպես և պատերազմի տարիներին թուրքական իշխանությունների կողմից երկրի խորքերը թշված հայ ազգաբնակչությանը վերադառնալ «Թուրքահայաստան»: Վերջապես, այդ դեկրետը նախատեսում էր «Թուրքահայաստանում ժամանակավոր ժողովրդական կառավարության ստեղծումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով:

Ռուսաստանի ժողկոմխորհուրդը կովկասյան գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարեց ամեն կերպ աջակցել գաղթական հայերի և պատերազմի տարիներին բռնի կերպով թշված հայերի վերադարձը «Թուրքահայաստան»:

Սակայն այդ դեկրետի իրականացմանը խանգարեց նույն խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից ցարական բանակի զորացրումը, դրանով իսկ «Թուրքահայաստանի մասին» ընդունված դեկրետի իրագործումը մնաց

թղթի վրա: Բանակի զորացրման հետևանքը եղավ այն, որ ռուսական զորամասերը սկսեցին թողնել իրենց գրաված դիրքերը, ինչը և հասցրեց Կովկասյան ճակատի մերկացմանը\*: Այդ գործում մեղք ունեին նաև Անդրկովկասի կոմիսարիատը և ազգային խորհուրդները, որոնք ձգտում էին հրեանրավորին շափ սեղմ ժամկետում ազատվել հեղափոխականորեն տրամադրված բանակից: Երեք տարվա պատերազմից հյուծված զինվորական զանգվածներին կոչ էին անում թողնել ամեն ինչ և վերադառնալ տուն՝ ազգային զորամասեր կազմելու համար: Ծուղակի մեջ ընկան շատ զինվորներ, որոնք տենչում էին վերադառնալ տուն և անցնել խաղաղ աշխատանքի: Սկսվեց զինվորների զանգվածային փախուստը ռազմաճակատներից, ինչը հանգեցրեց բանակի քայքայմանը: Զորքերի մեջ երկպառակութուն առաջ եկավ, որը երբեմն բացահայտ թշնամական բնույթ էր ընդունում: Զինվորներն ինքնագլուխ բաժանում էին իրար մեջ ռազմական գույքը: Այս ամենը ուղեկցվում էր ռուսական զինվորների մեկուսացմամբ: Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից անցկացվող բանակի «ազգայնացման» կուրսը կործանարար հետևանքներ ունեցավ:

Ճակատից սկսեցին հետ կանչել ուկրաինացիներին, լեհերին, հայերին, վրացիներին՝ ազգային գնդեր կազմավորելու համար: Բոլոր ռուս զինվորներին առաջարկվեց տուն վերադառնալ: Այն զինվորները, որոնք չէին ցանկանում ենթարկվել հրամանատարության և Անդրկովկասյան կոմիսարիատի հրամաններին, բռնի ուժով զինաթափվում էին:

Հայկական առանձին թերթիք, նշելով ճակատի մերկացման աղետալի հետևանքները Անդրկովկասի համար, ստիպված էին խոստովանել, որ ստեղծված դրության պատասխա-

---

☆ Լենինի «Ծարիզմի պարտութունը պատերազմում» հայտնի յոգունգը դարձել էր բուլշեիկյան կուսակցության առաջնահերթ խնդիրը՝ ազիտացիայի միջոցով կազմալուծել, բարոյալքել ռազմաճակատներում գործող զորամասերը, որպեսզի ռուսական բանակը պարտութուն կրի, Ռուսաստանը պարտվի պատերազմում: Դա անհրաժեշտ էր բուլշեիկյան կուսակցությանը իշխանությանը տիրանալու համար: Եվ երբ դա նրան հաջողվեց, նա սկսեց ցարական բանակի զորացրումը բոլոր ճակատներում, նույն թվում և Անդրկովկասի ճակատում:

Եւտովութիւնը ընկնում է Անդրկովկասյան կոմիսարիատի վրա: Այսպես, հայ լիբերալների օրգան «Մշակը» 1917 թվականի դեկտեմբերի 17-ի առաջնորդողում, որը վերնագրված էր «Դործել, և ոչ թե հուսահատվել», գրում էր. «Դժբախտաբար, Անդրկովկասում գոյութուն չունի հեղինակավոր, գործուն, եռանդուն, երկրի հանդեպ իր պատասխանատվութիւնը դիտակցող իշխանութիւն: Կա միայն նրա ստվերը: Այդ իշխանութիւնը, որը միակողմանի քաղաքականութիւն է վարում, ընդունակ չէ հասկանալու մոմենտի կարիքները և դրադժելու երկրի սոցիալական վերափոխման հարցերով: Ըսկատի մերկացման մեջ ոչ փոքր շահով պատասխանատու է նաև Անդրկովկասյան կոմիսարիատը»:

Ճակատը լքող զորքերի փոխարեն Անդրկովկասյան կոմիսարիատը խոստանում էր ազգային զորամասեր դուրս բերել: Սակայն նրանց կազմակերպումը շահագանց դանդաղ էր ընթանում: Ահա թե ինչ էր ասվում այդ կապակցութեամբ զինվորական դեպուտատների խորհրդի գործադիր կոմիտեի անդամի նամակում, որն ուղղված էր ազգութիւնների ժողովրդական կոմիսարիատին. «Սկսեցին ստեղծել ազգային զորամասեր, բանակ գնացողների թիվը քիչ էր, ուստի և ըսկրովեց հարկադիր զորահավաքը: Ժամանակին շներկայացող մարդկանց ձերբակալում էին և ուղարկում համապատասխան ազգային զորամասերը»<sup>1</sup>:

Հրամանատարները հաճախ էին հաղորդում այն մասին, որ զինվորները հրաժարվում են մտնել ազգային զորամասերի մեջ: Այսպես, 4-րդ կորպուսի հրամանատարը 1917 թվականի դեկտեմբերի 25-ին Կովկասյան ռազմաճակատի շտաբին հեռագրում էր հետևյալը. «Հայերը, բոլշևիկների ազդեցութեան տակ, հրաժարվում են գնալ հայկական ստորաբաժանումները: Հրամանատարական կազմն ի վիճակի չէ պայքարելու դրա դեմ և հեղինակութեամբ չի օգտվում: Նկատելի է բացորոշ արհամարհական վերաբերմունք դեպի սպաները»<sup>2</sup>:

Համադանի կայազորի զինվորները 1917 թվականի դեկ-

1. ЦГАОР, ф. 1318, л. 40. л. 50.

2. ԽՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, գ. 670, թ. 1:

տեմբերի 8-ին կայացած ցույցի ժամանակ միաձայն որոշեցին շմտնել նոր կաղմակերպվող ազգային զորամասերի մեջ: «Մենք՝ վրացիներս, հայերս, օսերս և իմերեթցիներս՝ Համադանի կայազորի զինվորներս,— ասվում էր ընդունված որոշման մեջ,— երեք հարյուր հոգով հավաքվելով ցույցի և քննարկելով ազգային գնդեր ստեղծելու վերաբերյալ գենդերալ Պրժևալսկու հեռագիրը, միաձայն որոշեցինք բողոքել ազգային գնդեր կազմավորելու և մարդկանց ըստ ազգությունների բաժանելու դեմ: Մենք ցանկանում ենք միասին լինել ռուսների հետ, ինչպես դա առաջնորդում էր, ուստի և շենք ենթարկվում գեներալ Պրժևալսկու հրամանին և շենք ճանաչում բուժուական Անդրկովկասյան կոմիսարիատը, որը մեզ բաժանում է ազատ Ռուսաստանից: Մենք ճանաչում ենք միայն ժողովրդական կոմիսարների խորհրդի և բանվորական, զինվորական ու գյուղացիական խորհուրդների իշխանությունը...

Խնդրում ենք բոլոր վրացի, հայ, իմերեթցի, օս ընկերներին միանալ մեր կոչին»<sup>1</sup>:

Մերկացնելով ճակատը և քայքայելով բանակը, Անդրկովկասյան կոմիսարիատը միաժամանակ ձգտում էր զինաթափել հեռացող զինվորներին, որպեսզի այդ ճանապարհով կարողանա զինել նորաստեղծ ազգային զորամասերը: Կովկասյա բանակի ռազմահրահարական կոմիտեն այն զորամասերին, որոնք մեկնում էին գերազանցապես Կուբանի ու Թերեքի մարզերը՝ Հյուսիսային Կովկասում հակահեղափոխական ուժերի դեմ պայքարելու համար, կոչ էր անում շճանձնել զենքը և ռազմամթերքը: Հեռանալով ռազմաճակատից, ռուսական զորքերը իրենց հետ տանում էին մարտական տեխնիկան, որի կարիքն այնքան զգում էր երիտասարդ խորհրդային Ռուսաստանը, որն անհավասար պայքար էր մղում սպիտակգլարդիականների ու արտաքին ինտերվենցիայի դեմ: Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեն հեռագրում էր Պրժևալսկուն, որ բանակում «փսիխոզի նոր ձև է երևան եկել. բոլոր ոչ շարքային զորամասերն ու ջոկատները միահամուռ զենք են պահանջում:

1. «Кавказский рабочий», 21. I. 1918, № 15.

Դեռ հիմնավորվում է այն բանով, որ Անդրկովկասյան կառավարութիւնն անջատվել է Ռուսաստանից և քանի որ զինքը ռուսական է, ուստի այն պետք է փոխադրել Ռուսաստան»<sup>1</sup>։

Բոլշևիկներն տրամադրված զինվորներին զինքը ձեռքին խորհրդային Ռուսաստան վերադառնալու հնարավորութիւնից զրկելու և այդ զինքով նոր կազմակերպված ազգային զորամասերը զինելու նպատակով, Անդրկովկասի կոմիսարիատը գաղտնի որոշում էր ընդունել՝ հանձնարարել Գյանջայի մուսուլմանական ազգային կոմիտեին զինաթափ անել թուրքական ռազմաճակատից վերադարձող ռուսական զինվորական էշելոնները։ Համաձայն այդ որոշման և վրացական մենշևիկների պարագլուխ Նոյ Ժորդանիայի գաղտնի ցուցումով Գյանջայի մուսուլմանական ազգային կոմիտեին, որն ամբողջովին բաղկացած էր բեդերից ու խաներից, բացահայտորեն հավաքեց մոտ 10 հազար կրկնահանցագործների, զինեց նրանց և դուրս հանեց կուտակված ռուսական զինվորների էշելոնների դեմ՝ Շամխոր, Դալլար, Խաչմաս, Աղստաֆա կայարաններում։

Մուսավաթական հորդաներին (ղեկավարներն էին Ասլան բեգ Սաֆիքյուրզինսկին, ղոկտոր Խաղատ բեգ՝ Ռուստամբեգովը) օգնութիւն հասավ Անդրկովկասի կոմիսարիատի կողմից ուղարկված զրահապատ գնացքը՝ Արխազավայի գլխավորութիւնով։ 1918 թվականի հունվարի 9-ին նրանք անսպասելիորեն երկաթուղու ուղղութիւնով հարձակվեցին ռուսական զորքերի էշելոնների վրա և զազանաբար գնդակահարեցին Շամխոր կայարանում վազոններում նստած հազարավոր զինվորների։ Երկաթուղագիծը ծածկվել էր զինվորների դիակներով։ էշելոնների ամբողջ զինամթերքը՝ և զինքը մուսավաթական հորդաները խլեցին։ Արյունալի ընդհարումները կրկնվեցին Թիֆլիս, Գյանջա տանող երկաթուղագծի այն կայարաններում, որտեղ կուտակվել էին ռուսական զինվորների էշելոնները և շարունակվեցին մինչև հունվարի 12-ը։

«Մեծագույն ոճրագործութիւնն է կատարվել ուս բանակի դեմ»<sup>1</sup>, — գրել է այդ օրերին Ստ. Շահումյանը:

Անդրկովկասի կոմիսարիատը և ազգայնական կուսակցութիւնները Շահումյանի արյունալի դեպքերով ամբողջովին մերկացրին իրենց: Ստ. Շահումյանը իր «Ճշմարտութիւնը իրադարձութիւնների մասին» հոդվածում ուղղակի նշում է, որ «Ելիզավետպոլի դեպքերի մեղավորների թվում նախ և առաջ պետք է անվանվի... Նոյ Նիկողաւսիչ Ժորդանիան: Երկրային կենտրոնի նախագահութիւնը նրա նախագահութեամբ որոշեց զինաթափ անել մեկնող էշելոնները ու նրանց հաշվին զինել ազգային զնդերը: Նրա ստորագրութեամբ է հեռագիր ուղարկվել Ելիզավետպոլի ու մուսուլմանական ազգային կոմիտեին Շահումյանի մոտ կուսակցված էշելոնները զինաթափ անելու մասին: Նա՝ Նոյ Ժորդանիան, պատվիրակներ էր ուղարկում Քիֆլիսից՝ էշելոնները զինաթափ անելու նույն հանձնարարութեամբ»<sup>2</sup>: «Այն մեղադրանքը, որ մենք նետում ենք Ժորդանիայի կրեպին, — շարունակում է Շահումյանը, — տարածվում է մենշևիկների ամբողջ կուսակցութեան, Երկրային կենտրոնի, Անդրկովկասյան կոմիսարիատի վրա, ուր պարոնների Զիսենկելին ու Գեգեշկորին՝ սերտ և բացահայտ բլոկ կազմած մուսուլման բեգերի ու խաների հետ, ամեն ինչ անում են, որպեսզի կործանեն հեղափոխութիւնը»<sup>3</sup>:

Վրացական մենշևիկների ու մուսավթականների կողմից անցկացվող դավաճանական գիծը ջուր էր լցնում երիտթուրքական շովինիստների ջրաղացին և Անդրկովկասը դրնում թուրք գավթիչների սպառնալիքի տակ:

\*\*\*

Օսմանյան կայսրութեան կառավարող շրջանները որոշեցին օգտվել կովկասյան ռազմաճակատում և ամբողջ Անդրկովկասում ստեղծված իրադրութիւնից՝ թուրքերի կողմից 1914-15 թվականների ձմռանը ձախողված արշավանքը վերսկսելու համար:

1. Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Եր., 1948, էջ 545:

2. Նույն տեղը, էջ 538:

3. Նույն տեղը, էջ 541:

Անդրկովկասում 1918 թվականի թուրքական ինտերվենցիայի մասնակիցներից մեկը՝ գնդապետ Բերքուքը, նշում է, որ այդ արշավանքի նպատակն էր գրավել ողջ Կովկասը, Իրանը և Միջին Ասիան: Բացի դրանից, նրա վկայությամբ, Անդրկովկաս բարեհաջող ներխուժման դեպքում երիտթուրք ղեկավարները հույս ունեին խուսափել ժողովրդական ցասման պոռթկումից երկրի ներսում, ինչպես և վերականգնել իրենց կորցրած հեղինակությունը, ոգեշնչելով բանակին ու ժողովրդին: Նա գրում է. «Համաշխարհային պատերազմի ժամանակ մենք լայնածավալ ու արժեքավոր տարածքներ կորցրեցինք: Ինչպես այդ կորուստների, այնպես էլ հոգնածություն ու անտարբերության հետևանքով բոլորին համակել էր անհոգությունն ու հուսահատությունը: Նման դրությունն այն աստիճան վտանգավոր ու աղետալի էր, որ այն կարող էր հանգեցնել մեր ուժերի կատարյալ քայքայմանն ու կործանմանը: Կովկասյան արշավանքը մասնակիորեն թեթևացնում էր այդ իրավիճակը: Բանակը նորից ոգևորություն ապրեց: Բոլորի մոտ երևացին իրենց ազգային իղձերն իրականացնելու հույսեր»<sup>1</sup>:

Բուլշևիկների հանդեպ տածած ատելությունը և Թուաստանում սոցիալիստական հեղափոխության հաջողությունների նկատմամբ ունեցած վախը երիտթուրքական վերնախավին նույնպես մղում էին դեպի հանցավոր ավանտյուրայի Անդրկովկաս<sup>2</sup>:

Ստամբուլի կառավարական շրջաններում հայտարարում էին, որ այն ժամանակ, երբ ԱՄՆ-ը, Անգլիան ու Ճապոնիան նպատակադրվել էին տիրանալ խորհրդային Հեռավոր արևելքին ու Սիրիին, թուրքերին առաջին հերթին հետաքրքրում է Թուաստանի մահմեդական ազգաբնակչությունը<sup>3</sup>: Անդրկովկասում թուրքական ազրեսիայի ոգեշնչող էնվեր փաշան պարծենում էր, որ «Թուրքիան Ասիայում կխաղա այն դերը, ինչ որ Գերմանիան Եվրոպայում»<sup>4</sup>:

1. Miralay Berkuk. նշվ. աշխ., s. 35.

2. Տե՛ս նույն տեղը, էջ 26.

3. Lepsius J. Der Todesteg des armenischen Volkes. Potsdam, 1919 s. 312.

4. «Cebil-ul-resad», № 353 s. 247.

Այդ նպատակին հասնելու համար էնվերը տակավին 1917 թվականի դեկտեմբերին պատերազմի նոր պլան կազմեց, որը նախատեսում էր թուրքական բանակի հիմնական ուժերը կենտրոնացնել Կովկասյան ռազմաճակատում:

Քանի որ զորահավաքի համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներն արդեն սպառվել էին, Անդրկովկասում իրենց նվաճումները շարունակելու միակ հնարավորությունն այն էր, որ թուրքերը մերկացնեին մնացած ճակատները և այնտեղ գտնվող մարտունակ զորքերը տեղափոխեին Կովկասյան ռազմաճակատ:

Կովկասյան ճակատում թուրքական զորքերի կենտրոնացման հետևանքով Սիրիայի, Պաղեստինի և Իրաքի օսմանյան բանակները այլևս անկարող էին լուրջ դիմադրություն ցույց տալ անգլիացիների ուժերին: Լիման ֆոն Սանդերսի տվյալների համաձայն, անգլիական հետևակային զորամասերը թվական տեսակետից գերակշռում էին թուրքականին 3—4 անգամ, իսկ հեծելազորում՝ 10 անգամ: Նույնպիսի հարաբերակցություն գոյություն ունեւր և հրետանիում:

Խախտելով Բրեստի ու Երզնկայի զինադադարների պայմանները, թուրքական նվաճողները 1918 թվականի փետրվարի կեսերին հարձակման անցան կովկասյան ամբողջ ճակատով: Այդ ուխտադրուժ գործողությունն արդարացնելու համար թուրքական գերագույն հրամանատարությունը վկայակոչում էր մահմեդական ազգաբնակչության նկատմամբ հայերի գործադրած մտացածին «բռնությունները»:

Թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան կովկասյան բանակի հրամանատար Օդիշելիձեին 1918 թվականի փետրվարի 9-ին ուղղված հեռագրում հայտարարեց, որ «հայկական բռնությունները թուրքական զորքերին ստիպելին անցնել դեմարկացիոն գիծը՝ տեղի օսմանյան մահմեդականներին փրկելու ու պաշտպանելու, կարգ ու կանոնն ու հանգրստությունը վերականգնելու նպատակով: Այդ գործողությունները ընդհանուր ոչինչ չունենին թշնամական գործողությունների հետ՝ ռուսական զորքերի դեմ»<sup>1</sup>:

1. 22 ԿԳՊԱ, ֆ. 200, գ. 19, ք. 5—6:

Երիտթուրքական կառավարողներին հատուկ կեղծավորութեամբ Վէհիր փաշան հեռագրում էր ռուսական բանակի հրամանատարին. «Բարեկամաբար և սրտանց հավատացնում եմ Ձեզ, որ Երզնկայի ժամանակավոր պայմանագիրը պահպանում է իր ուժը բացի դեմարկացիոն գծին վերաբերող պարագրաֆից, որը ռուսական զորքերի հեռանալուց հետո ինքնին կորցնում է իր նշանակութունը: Ինչ օպերացիան կատարվում է միայն անհրաժեշտութիւնից և մարդասիրութեան ու քաղաքակրթութեան պարտքի զգացումից ելնելով»<sup>1</sup>:

Կովկասյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Լերեդինսկին\* անմիջապէս հերքեց Վէհիրփաշայի կեղծ փաստարկները «հայկական բռնութիւնների» վերաբերյալ և հայտարարեց նրան, որ կովկասյան բանակի ըստ ազգային հատկանիշի վերակազմութիւնից հետո բոլոր զորամասերը, ինչպիսի ազգութեան էլ նրանք պատկանելիս լինեն, պետք է դիտել որպէս ռուսաստանյան հանրապետութեան լիիրավ զինվորական ստորաբաժանումներ<sup>2</sup>: Դրանով իսկ Լերեդինսկին թուրքական հրամանատարութեանը հասկացնել էր տալիս, որ շնայած ռուսական զորքերի հետ քաշվելուն, թուրքերը ճակատում մնացած հայկական ու վրացական զորամասերը պետք է դիտեն որպէս ռուսական զորքեր՝ Ուտի թուրքական հարձակումը նա գնահատում էր որպէս Երզնկայի զինադադարի բացահայտ խախտում: Սակայն Լերեդինսկու նախազգուշացումը չկասեցրեց թուրքական զորքերի հարձակումը, որոնք փետրվարի 12-ին անցան դեմարկացիոն գիծը:

Հարձակման նախօրյակին թուրքերի ուժերը կազմում էին 1914-17 թվականներին ռուսների կողմից ջախջախված 3-րդ և 2-րդ բանակների մնացորդները: 3-րդ բանակը կանգնած էր Երզնկայից արևմուտք՝ Տիրեբուլուի և Քեմախի միջև: Չնա-

1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 32.

\* 1918 թվականի հունվարի 5-ին Լերեդինսկին այդ պաշտոնում փոխարեննց գեներալ Պրժևալսկուն:

2. Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузинь № 33.

յած այն բանին, որ Թուրքական զորքերի վիճակն այդ ժամանակ մյուս ճակատներում բառացիորեն հուսահատական էր. Թուրքական հրամանատարությունը Անդրկովկասի նկատմամբ իր դավթողական պլաններն իրականացնելու նպատակով շարունակում էր ուժեղացնել 3-րդ բանակը: Վերջինիս միացվեցին 2-րդ բանակի մնացորդները՝ 5-րդ և 21-րդ դիվիզիաները, որոնք միավորվել էին 4-րդ կորպուսի մեջ. վերջինս կանգնած էր Դիարբեքի շրջանում: Պետք է նշել, որ այդ ճակատում գրեթե մեկ տարի տևող դադարի հետևանքով Թուրքական զորքերը կարողացան մի փոքր ըսթափվել նախկինում իրենց հասցված պարտություններից:

Ընդամենը Թուրքական հրամանատարությունը զուրս բերեց հինգ դիվիզիա, չհաշված քրդերի զինված ջոկատները, որոնք գործում էին հայկական զորամասերի թիկունքում: Թուրքական զորքերի դեմ կանգնած էին հայկական ու վրացական ազգային զորամասերը, որոնք փոխարինել էին ճակատը թողած ռուսական զորքերին:

Տակավիճ 1917 թվականի մայիսին Անդրկովկասի հատուկ կոմիտեի ղեկավար Խարլամովը Ա. Ֆ. Կերենսկուն գրած գեկուցագրում, նկարագրելով զորքերի մարտունակությունը, կարգապահության բացակայությունը, առաջարկում է ձեռնարկել մի շարք միջոցառումներ, մասնավորապես թույլ տալ գոյություն ունեցող հայկական զորամասերը համալրել մյուս զորամասերում ծառայող հայ զինվորներով ու սպաներով: Պետրոգրադից ստացվեց դրական պատասխան: Դա ցույց է տալիս, որ «ազգային զորամասերի, մասնավորապես հայկական բանակային կորպուսի ստեղծման նախաձեռնությունը բխում էր ոչ միայն այն բանից, որ հայերը ուրիշ ելք չունեին, բացի ինքնապաշտպանությունից, այլ հենց ռուսական բանակի բարձր հրամանատարությունից, քանզի վերջինս ոչ պակաս շահով շահագրգռված էր կանխելու ռազմաճակատի փլուզումը»<sup>1</sup>: Վեց ամսվա ընթացքում կովկասում հաջողվեց հավաքագրել 35 հազար զինվոր, որոնց միացան նաև կամավորները: Այս զորքերից

1. Ա. Ն. Լաբուրյունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 72:  
18.

կազմավորվեց Հայկական կորպուսը, կովկասյան դիվիզիայի նախկին հրամանատար, ռուսական բանակի գեներալ Քոմապ Նազարբեկյանի (Նազարբեկով) գլխավորությամբ: Կորպուսի կոմիսար նշանակվեց դաշնակցական կուսակցության ղեկավարներին մեկը՝ Գրո Կանայանը: Հայկական կորպուսը բաղկացած էր երեք դիվիզիաներից. առաջին դիվիզիայի հրամանատարն էր գեներալ Արեշյանը: Այդ դիվիզիան բաղկացած էր 4 գնդից և 1 հրետանային բրիգադից, որն իր մեջ ընդգրկում էր վեց մարտկոց: Երկրորդ դիվիզիայի հրամանատարն էր ղնդապես Սիլիկյանը (Սիլիկով): Այդ դիվիզիան առաջինից ավելի ուժեղ էր, քանի որ նրա տրամադրության տակ էր դրված հեծելազորային բրիգադը, բաղկացած երկու գրնդից՝ յուրաքանչյուրում 400 մարդ: Արևմտահայերից կազմավորված երրորդ դիվիզիայի հրամանատարն էր ժողովրդական հերոս գեներալ Անդրանիկը: Գիվիզիայի մեջ էին մըտնում Երզնկայի, Խնուսի, Վանի և Զինթունի գնդերը: Բացի դրանից, Լոռիում, Շուշիում, Ախալքալաքում ու Ղազախում կային 2-ական գումարտակից բաղկացած տեղական զորամասեր, իսկ Նուխիում, Ախալցխայում ու Իգդիրում՝ 1-ական գումարտակ:

Հայկական կորպուսի հետ միասին թուրքական զորքերի դեմ կռվում էին երեք հարյուր ռուս սպաներ, որոնք կազմել էին առանձին գումարտակ:

1917 թվականի դեկտեմբերին կազմավորված վրացական սղզային զորամասերը իրենց շարքերում հաշվում էին 10 հազար մարդ և տեղաբաշխված էին Քութայիսի, Ախալցխայի ու Բաթումի շրջաններում: Վրացական զորքերի հրամանատարն էր գեներալ Գաբաևը:

Ինչպես հայկական, այնպես էլ վրացական զորամասերի կազմը շատ թույլ էր պատրաստված: Եվ այդ զորքերը պետք է կասեցնեին թուրքական մեծաթիվ բանակի հարձակումը շուրջ 700 կմ երկարությամբ ձգվող ճակատում՝ սկսած սևծովյան ափից (Տրապիզոնի շրջանում), ամբողջ Արևմտյան Հայաստանով մինչև թուրք-պարսկական սահմանը:

Մուսավաթական «վայրենի դիվիզան», որն ավելի վաղ էր ստեղծվել ռուսական հրամանատարություն կողմից, տեղափոխվեց Ադրբեջան և փոխանակ օգնելու հայկական ու վրաց-

ցական զորամասերին՝ հետ մղելու թուրքական բանակի հարձակումը, ադրբեջանական ազգային մյուս զորամասերի հետ մեկտեղ պատրաստվում էր աջակցություն ցույց տալ թուրք զավթիչներին:

Թուրքական հարձակման հաջողությունը նպաստում էր հայկական և վրացական զորամասերի միջև համաձայնեցված գործողությունների կատարյալ բացակայությունը: Ազգային բանակներից յուրաքանչյուրը թուրքերին դիմադրություն էր ցույց տալիս միայն իր տարածքի վրա, այդ պատճառով էլ թուրքերը շատ արագ մոտեցան Երզնկային: Նախքան Երզնկայի անկումը, գեներալ Օդիշելիձեն զորքերին հրամայեց թուրքերի գերակշռող ուժերի հարձակման դեպքում նահանջել՝ առանց նրանց հետ մարտի՝ բռնվելու:

Հարձակվող թուրքերի դեմ կանգնած էր հիմնականում հայերից բաղկացած գնդապետ Մորելիի Երզնկայի ջոկատը. որն իր թվական կազմով զգալիորեն զիջում էր թուրքերի առաջին կովկասյան կորպուսին (5-րդ և 36-րդ դիվիզիաներ), որը շարժվում էր Երզնկայի ուղղությամբ՝ Քյաղըմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ: Մորելիի ջոկատը դաժան սառնամանիքի պայմաններում մարտերով նահանջում է դեպի Երզնկա, ճանապարհին կորցնելով իր անձնակազմի գրեթե կեսը: Նահանջող հայկական ջոկատների վրա թիկունքից հարձակվում էին քրդերի ջոկատները՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց: Թուրքական հրամանատարությունը հաջողվել էր Դերսիմի քրդերին կաշռել և գրգռել հայերի դեմ: Դրամական խոստումներով գայթակղված քրդերից թուրքական հրամանատարությունը կաղմել էր միլիցիա, որը թուրքական զորքերին օգնեց գրավելու Երզնկան ու Լարինը<sup>1</sup>:

Թուրքական զորքերը Երզնկա մտան 1918 թվականի փետրվարի 13-ին: Հայկական ջոկատները նահանջեցին Կարին: Նրանց թիկունքում գործող քրդական ջոկատների կողմից կամուրջները քանդելու պատճառով հայկական զորքերը ստիպված էին թողնել ամբողջ գումակը, լիոնային հրանոթները և զնգացիրները: Նահանջող զորքի առջևից գնում էին

1. Տե՛ս Nuri Dersimi, նշվ. աշխ., s. 117.

հայ զազթականները, որոնցից շատերը ուժեղ ցրտի հետեւան-  
բով ճանապարհին սառչում էին:

Թուրքական զորքերի սրընթաց առաջխաղացմանը նպաս-  
տեց դեներայ Օդիշելիձեհի դավաճանութունը: Վերջինս թուր-  
քական հետախույզի միջոցով Վեհիբ փաշային ուղարկել էր  
գաղտնի նամակ, որտեղ նրան հասկացնել էր տալիս, որ  
ռուսական զորքերը շուտով կլքեն ռազմաճակատը<sup>1</sup>, մի բան,  
որին նա ինքը՝ Օդիշելիձեհն, ամեն կերպ նպաստում էր: Գենե-  
րայ Օդիշելիձեհն այդ նույն ժամանակ ցրեց պորուշիկ ժամ-  
կուշյանի լեռնային մարտկոցը, որը կազմ-պատրաստ էր  
թուրքերի դեմ հանդես գալու համար, իսկ մյուս լեռնային  
մարտկոցի կազմին հրամայեց նահանջել Սարիղամիշի շեր-  
ջան: Նա հայկական զորմասերին կարգադրեց Երզնկայից  
ու Կարինից նահանջելու ժամանակ «շոշնջացնել պարենա-  
մթիրքի պաշարները, շայթեցնել պահեստները, այլ այդ  
ամենը պահպանել և հանձնել թուրքերին՝ Կարինում մնալու  
ցանկութուն հայտնած մարզի կոմիսար Գլատովի միջոցով,  
որը... այն կպահի իր մոտ և հաշտութուն կնքելուց անմի-  
ջապես հետո կվերադարձնի Ռուսաստանին»<sup>2</sup>: Դավաճանա-  
կան այս կարգադրության հետեւնքով թուրքական հրամա-  
նատարության ձեռքն ընկավ հսկայական արժեք ներկայաց-  
նող ռազմամթիրք ու պարեն:

Երզնկայի գրավումից հետո թուրքերի առաջին կովկաս-  
յան կորպուսի զորամասերը, հետապնդելով նահանջող հայ-  
կական զորքերին, փետրվարի 26—ին գրավեցին Մամախա-  
թունը, որն ընկած էր Երզնկայի ու Կարինի միջև: Միաժա-  
մանակ հարձակման անցավ երկրորդ թուրքական կովկասյան  
կորպուսը՝ Շեվքեթ փաշայի հրամանատարութեամբ: Նա  
շարժվում էր Գյումուշհանե—Բայբուրթ—Տրապիզոն ուղղու-  
թեամբ, ուր գործում էին վրացական ազգային զորամասերը:  
Փետրվարի 17—ին թուրքերը գրավեցին Տրապիզոնը: Այդ  
նույն ժամանակ Վան—Բայազետ ուղղութեամբ իր հարձա-

1. Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 99, թ. 42—44:

2. Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 99, թ. 42—44:

ետմն էր ծավալում 4-րդ կովկասյան կորպուսը՝ Ալի Իզեթ փաշայի հրամանատարութեամբ\*:

Թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Արևմտ-հայաստանի խորքը իրենց հաշտութեան պայմանագիր կընքելու կողմնակից ձևացնող թուրք դիվանագետներին շէր խանգարում մատի վրա խաղացնելու Անդրկովկասյան կոմիսարիատին՝ հաշտութեան բանակցութեաննորի ժամանակ վերջինիս իրենց պայմանները թելադրելու համար: Հայտնի է, որ 1918 թվականի հունվարի 14-ին կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեին ուղղված նամակում Վեհիբ փաշան հաղորդում էր, որ էնվերը կցանկանար իմանալ, թե «ի՞նչ ճանապարհով հնարավոր կլինի վերականգնել հարաբերութեանները կովկասյան անկախ կառավարութեան հետ և ինչպիսի առաջարկներ կանի վերջինս երկու երկրների միջև խաղաղ հարաբերութեանները վերականգնելու նպատակով»<sup>1</sup>: Թուրքական հրամանատարութեանը գերադասում էր գործ ունենալ ներքին հակասութեաններից բըզկըտված անդրկովկասյան թույլ իշխանութեանների, քան թէ ամբացող ու հաղթանակող խորհրդային պետութեան հետ:

էնվերի առաջարկութեանը քննարկվեց Անդրկովկասյան կոմիսարիատի նիստերում: Զգալով իր անօգնականութեանը թուրքական ներխուժման սպառնալիքի հանդեպ, Անդրկովկասյան կոմիսարիատը ջանում էր ցույց տալ, թե իբր լինը սերտորեն կապված է ռուսական կայսրութեան նախկին այն շրջանների (Ուկրաինա, Հյուսիսային Կովկաս և այլն) հետ, որոնք տեղական հետադիմական ուժերի ժամանակավոր հաղթանակի շնորհիվ նույնպես անջատվել էին Խորհրդային Ռուսաստանից: Հունվարի 28-ին Անդրկովկասյան կոմիսարիատը պատասխանեց Վեհիբ փաշային, որ ինքը պատրաստ է

\* Թուրքական զորքերի հարձակումը և նրանց ռազմական գործողութեանները նկարագրում է Քյադրմ Կարաբեքիր փաշան Կարինի ամերիկյան ռազմական միսիայի ղեկավար գեներալ Հարբորդին ներկայացված 1919 թ. սեպտեմբերի 25-ի ղեկուցազրույթ (Տե՛ս «Birinci Kafkas kolordu-unun 334 senesindeki harekâti ve meshudati hakkında general Harbord riyasetindeki Amerika Heyetine takdim edilen rapor surati», Erzurum, 1335 (1919), s. 1-2).

1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии № 15.

սկսելու հաշտութեան բանակցութիւններ՝ երկու կողմերի միջև վերջնական հաշտութիւն կնքելու համար: Սակայն նա անհրաժեշտ է գտնում իր գործողութիւնները համաձայնեցնել Ռուսաստանում գոյութիւն ունեցող այլ կառավարութիւնների կարծիքների հետ, որոնք, ինչպես և Անդրկովկասի կառավարութիւնը, շահագրգռված են խաղաղութիւն հաստատելու մեջ<sup>1</sup>:

Միաժամանակ Անդրկովկասյան կոմիտարիատի նախագահ Ս. Պ. Գեգեշկորին հեռագրեր հղեց Ուկրաինայի կետրոնական ռադայի նախագահին և Հարավարևելյան միութեան նախագահին, որոնցում նա տեղեկացնում էր վերջիններին էնվեր փաշայի առաջարկութեան մասին: Գեգեշկորին խընդրում էր նրանց շտապ կերպով թիֆլիս ուղարկել իրենց ներկայացուցիչներին՝ փետրվարի 14-ին նշանակված կոնֆերանսում հաշտութեան բանակցութիւններ սկսելու վերաբերյալ: Թուրքական հրամանատարութեան առաջարկները քննարկելու համար: Ուկրաինական ռադայից պատասխան շտացվեց, իսկ Հարավարևելյան միութեանից միայն Կուբանի կառավարութիւնը պատասխան ուղարկեց, որտեղ ասվում էր, որ նախատեսվող կոնֆերանսի հրավիրման ժամկետը իրեն հարմար չէ<sup>2</sup>: Ուստի և կոմիտարիատի փետրվարի 14—ի նիստում Թուրքիայի հետ հաշտութեան բանակցութիւնների մէջ մտնելու հարցը քննարկվում էր առանց ռադայի և Հարավարևելյան միութեան ներկայացուցիչների մասնակցութեան: Այդ նիստում որոշվեց Վեհիբ փաշային հաղորդել, որ Անդրկովկասյան կառավարութիւնը պատրաստ է սկսելու հաշտութեան վերաբերյալ բանակցութիւնները, ընդ որում «հաշտութեան հիմնական դիրեկտիվներն ու պայմանները կմշակվեն Անդրկովկասյան սեյմի կողմից, որպես ամբողջ Անդրկովկասի ներկայացուցչական օրգանի, որը կհաստատի թիֆլիսում փետրվարի 23—ին»<sup>3</sup>:

Անդրկովկասյան կոմիտարիատի նախաձեռնութեամբ

1. Տե՛ս նույն տեղը, № № 23, 24, 25:

2. Տե՛ս նույն տեղը, № 37:

3. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии № 37, 22 к. 83 ф. 300.001. XIII кн. Т. III, 2097 2010 г.

փետրվարի 23—ին Թիֆլիսում հրավիրվեց Անդրկովկասյան սեյմ, որտեղ բացի խորհրդային կառավարության կողմից ցրված Հիմնադիր ժողովի, Անդրկովկասի պատվիրակներից ներկա էին Անդրկովկասյան կոմիսարիատի անդամները և վրացական մենչևիկների, դաշնականների, մուսավաթականների և այլ կուսակցությունների ու խմբերի ներկայացուցիչները:

«Անդրկովկասյան սեյմի հրավիրման շուրջը» հոդվածում Ստ. Շահումյանը գրում էր.

«Կոմիսարատի անժողովրդականությունը, ժողովրդի լայն խավերի կողմից նրա հանդեպ տածած ատելությունն այժմ արդեն անկասկած է. ահա խորամանկ պպ. Ժորդանիան, Գեգեչկորին և Ի—ն դիմեցին պաշտպանողականների համար սովորական միջոցի՝ ժողովրդական զանգվածների նոր հիմարացմանը՝ իրենց խղճուկ գոյությունը երկարաձգելու համար: Այդ պարոնները գիտեն, որ մանր բուրժուական զանգվածները տակավին որոշ պատրանքներ են տածում Հիմնադիր ժողովի ու նրա անդամների նկատմամբ: Հինց այդ պատրանքներն են կազմում այն հողը, որի վրա այժմ ցանկանում են հենվել պարոնայք պաշտպանողականները՝ բեկերի ու աղալարների հետ դաշինք կազմած»<sup>1</sup>: Սեյմի բացման օրը ՌՍԳԲԿ Կովկասյան երկրային կոմիտեն Անդրկովկասի սեյմը բնութագրեց որպես մենչևիկների, դաշնականների, մուսավաթականների և ազգայնական այլ կուսակցությունների հակահեղափոխական բլոկի օրգան, որը ոչնչով չի տարբերվում Անդրկովկասյան կոմիսարիատից: Հիշյալ կոչում մասնավորապես ասվում էր. «Սեյմն իրենից ներկայացնում է մի նոր կեղծիք, ժողովրդի մի նոր խաբուսություն մահմեդական բեկերի ու խաների, վրացական իշխանների և հայ բուրժուազիայի ցանկությունը բավարարող և հեղափոխությունը Անդրկովկասում ճնշելու մի նոր միջոց»<sup>2</sup>:

Իր գոյության առաջին իսկ օրից սեյմը հարձակում գործեց Անդրկովկասի հեղափոխական կազմակերպությունների վրա: Հակահեղափոխական զինված ուժերը կրակ բացեցին: Ալեքսանդրյան այգում հավաքված Թիֆլիսի բանվորների

1. Шаумян С. Г., Избранные произведения, т. 2, с. 172.

2. Архив Груз, ИМЛ при ЦК КПСС Ф, 33, л. 220.



Ֆերանսում մեկը մյուսի հետևից նոր պահանջներ էին առաջարկում: Անդրկովկասի ռազմական տկարությունը, երկպառակություններն ու զգվուտոցը սեյմում, մուսավաթական կուսակցության պարագլուխների դավաճանությունը, որոնք թուրքական գործակալության դեր էին խաղում, արյա ամենը հենց սկզբից կանխորոշում էր սեյմի պատվիրակությունից փորձերի ձախողումը՝ բանակցությունների ժամանակ հասելու իրենց կողմից առաջադրված հաշտության պայմանների իրականացմանը:

Սեյմի պատվիրակության Տրապիզոն մեկնելու օրը Բրեստ-Լիտովսկից ստացվեց Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Լ. Կարախանի ռադիոհեռագիրը,\* որը կոմիսարիատին տեղյակ էր պահում այն մասին, որ նախքան հաշտության պայմանագրի ստորագրումը ռազմական գործողությունները դադարեցնելու խորհրդային առաջարկի մերժումը գերմանացիների կողմից ՌեՍԶ կառավարությանը հարկադրում է համաձայնել նոր պայմանների հետ. «Մենք որոշել ենք, — հաղորդում էր Կարախանը, — ստորագրել պայմանագիրը... փետրվարի 21(8)-ի պայմանների ամենալուրջ փոփոխությունից հետո անգամ»

\* Խոսքը գերմանական նոր վերջնագրի մասին է, որն անհամեմատ ավելի ծանր պայմաններ էր առաջարկում, քան խորհրդային կառավարությանը փետրվարի 21(8)-ին ներկայացված պայմանները: Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսի եզրափակիչ նիստում՝ 1918 թվականի մարտի 3-ին, խորհրդային պատվիրակության կողմից հրապարակված հայտարարության մեջ հօգուտ Թուրքիայի Անդրկովկասի տարածքի ոչնչով շարժարացված անջատման կապակցությամբ ասվում էր. «Եզրվասում, բացահայտորեն խախտելով հենց իր՝ գերմանական կառավարության կողմից ձևակերպված փետրվարի 21(8)-ի վերջնագրի պայմանները և հաշվի չնստելով Արդաստանի, Կարսի ու Բաթումի մարզերի ազգաբնակչության իսկական կամքի հետ, Գերմանիան Թուրքիայի օգտին խլում է այդ մարզերը, որոնք երբևէ նրվաճված չեն եղել թուրքական զորքերի կողմից»: (Տե՛ս Документы внешней политики СССР г. I. док. № 77): Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսի ժամանակ թուրքական պատվիրակությունը, ինչպես նշում է Մարիտտը, ցանկանում էր ստանալ ավելի, քան 1877—78 թվականների պատերազմից հետո հաստատված սահմաններն էին: Գրանուվ էր բացատրվում թուրքական զորքերի հարձակումը դեպի Անդրկովկասի խորքը (Տե՛ս L. A. Mariot. p. 495):

ինքնորոշման ձևի տակ Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը Ռուսաստանից խլելու պայմանով<sup>1</sup>:

Անդրկովկասյան սեյմի նախագահ մենչևիկ Ն. Զխեիձեն անմիջապես հրապարակայնորեն բողոքարկեց Բրեստի հաշտության պայմանները: Նա հայտարարեց, որ «Անդրկովկասին ու նրա սահմաններին վերաբերող ամեն մի պայմանագիր, որը կնքված կլինի առանց ինֆեուրույն Անդրկովկասյան կառավարության կամքի ու հավանության, կհամարվի զրկված միջազգային նշանակությունից ու պարտադիր ուժից, քանի որ Անդրկովկասը երբեք չի ճանաչել բոլշևիկյան իշխանությունն ու ժողովրդական կոմիսարներին խորհուրդ»<sup>2</sup> (ընդգծումները մերն են— Ե. Ս.):

Սեյմի մարտի 11—ի նիստում որոշում ընդունվեց, որ Անդրկովկասը գործում է որպես միանգամայն ինքնուրույն քաղաքական միավոր և մերժում է Բրեստի պայմանագիրը: Այսպիսով, Անդրկովկասի ձևական «ինքնուրույնությունը» պաշտպանելու համար, երկրամասի կուսակցությունների ղեկավարները, արհամարհելով ժողովրդական զանգվածների շահերը, կանգնեցին բախտախնդիր քաղաքականության ուղու վրա, որը ջուր էր լցնում թուրք զավթիչների ջրաղացին: Անդրկովկասյան սեյմի կողմից այն ժամանակ բռնած գիծը միայն հեշտացնում էր Անդրկովկասում ինտերվենցիա կազմակերպելու թուրքական հրամանատարության խնդիրը: Ինչպես հետագայում խոստովանում էր սեյմի պատվիրակության անդամներից մեկը՝ Խատիսովը, Կարախանի հեռագիրը ստանալուց հետո «մենք տատանվում էինք՝ մեկնել, թե ոչ, սակայն մենք վերջի վերջո զգացինք, որ մեր ուղևորությունն անհրաժեշտ է, թեև գլխի էինք ընկնում, որ հարկավոր է հաղթողի գրաստությանը հանձնվել»<sup>3</sup> (ընդգծումը մերն է— Ե. Ս.):

Բրեստի հաշտության պայմանագիրը կնքելուց հետո Տրապիզոնի բանակցությունները կարող էին ձեռնադրվել միայն թուրք ազրեսորներին, քանի որ սեյմի պատվիրակու-

1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии № 47.

2. Նույն տեղը, № 51:

3. «Заря Востока». 1.II.1925. № 79.

թյունը ո՛չ իրավական և ո՛չ էլ ռեալ ուժ ունեւր՝ թուրքերին ստիպելու ընդունել հաշտութեան պայմանագրի ցանկալի պայմանները: Ինչպես տեսանք, այդ բանը հասկանում էին նույնիսկ պատվիրակութեան անդամները՝ նախքան Տրապիզոն մեկնելը:

Անդրկովկասեան կառավարութեան նախագահ Գեգեշչորին ուղղակի հայտարարեց. «Մենք թուրքիային պատերազմ հայտարարեցիւնք Բրեստ-Լիտովսկի խայտառակ պայմանագիրը ձախողելու համար»<sup>1</sup>: «Ձարյա Ռոսսիի» թերթը խոստովանում էր, որ Անդրկովկասը կանգնած է երկընտրանքի առջև. բոլշևիկիների տիրապետութիւն կամ թուրքական ներխուժում: Սեյմը առանց տատանվելու գերագահեց երկրորդը<sup>2</sup>:

Սեյմի հաշտութեան պատվիրակութիւնը բաղկացած էր քառասուն հոգուց: Այն գլխավորում էր Ա. Ի. Չխենկելին: Դաշնակցական կուսակցութեան պատվիրակների խումբը գլխավորող Ա. Խատիսովը նշում էր, որ հաշտութեան պատվիրակութեան նման մեծաքանակ կազմը վառ կիրպով վկայում էր նրա ներսում տարբեր կուսակցութիւնների ներկայացուցիչների միջև գոյութիւն ունեցող սուր հակասութիւնների առկայութեան մասին: Նման դրութիւնը թուրքերի հետ նրա վարած բանակցութիւնների ժամանակ թուլացնում էր սեյմի պատվիրակութեան դիրքերը և, ինչ խոսք, այն օգտագործվեց թուրքերի կողմից՝ իրենց օգտին: «Երբ մենք եկանք Տրապիզոն, — գրում է Խատիսովը, — թուրքական թերթերը շարաինդութեամբ սրամտում էին. «Եթե ժամանել է ուղմական շոկատ, ապա այն սակավաթիվ է, իսկ եթե դա հաշտութեան պատվիրակութիւն է՝ շփազանց մեծ է»<sup>3</sup>:

Թուրքական պատվիրակութեան կազմում կային յոթ հոգի: Նրա նախագահն էր Հուսեին Ռաուֆ բեյը՝ ժովային դիպարտամենտի շտաբի պետը: Մարտի 14-ին բացելով «հաշտութեան» կոնֆերանսը, Հուսեին Ռաուֆ բեյը ճոռոմ խոսքերով

1. Демократическое правительство Грузии и английское командование, Тифлис. 1928, с. 85.

2. Ss'v ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 619. л. 32.

3. «Заря Востока», 5. XI. 1925, № 976.

«բացատրում» էր Օսմանյան կայսրության հատուկ առաքելությունը Անդրկովկասում: «Թուրքիայի պատերազմները Ռուսաստանի դեմ 200 տարվա ընթացքում, — հայտարարեց նա, — պաշտպանական բնույթ էին կրում մեր երկրների համար: Մեր ընդհանուր ճակատագրերը ավելի ու ավելի էին կապվում իրար: Այդ ընդհանուր փառահեղ պատմության ընթացքում Թուրքիան, դժբախտաբար, չէր կարող կատարել իր պատմական պարտքը՝ Անդրկովկասին օգնություն ցույց տալու գործում, այնուամենայնիվ, մեր կողմից ապրած դարաշրջանը ապացուցեց... մեր ճակատագրերի միավորման անհրաժեշտությունը: Մենք գտնում ենք, որ մեզ բաժանող խոչընդոտի խորտակումը արտակարգ կարևորություն ունեցող մի երևույթ է, որովհետև այն կապերը, որոնք կապում են մեզ, միայն պատմական ու աշխարհագրական հարաբերություններ չեն, այլ, ավելի շուտ, ազգակցական»<sup>1</sup>:

Այսպիսով, խեղաթյուրելով իրողությունը, Հուսեին Ռաուֆ բեյը փորձում էր ապացուցել անցյալում անդրկովկասյան ու Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրերի պատմական ընդհանրությունը: Անդրկովկասի «միավորումը» Թուրքիայի հետ, որի մասին խոսում էր նա, կարող էր նշանակել միայն թուրք զավթիչների կողմից անդրկովկասյան ժողովուրդների կլանում:

Ավելի ուշ, Հուսեին Ռաուֆ բեյը Տրապիզոնի կոնֆերանսում ունեցած իր ելույթներից մեկում հայտարարեց. «Ռուսաստանի քաղաքական սահմանները պետք է հետ տարվեն Կովկասյան լեռնաշղթայից այն կողմը, և Ռուսաստանն այլևս չի կարող որևէ պահանջ ներկայացնել Անդրկովկասի նկատմամբ... Ներկայումս հնարավոր է հարցի լուծման երկու եղանակ. կամ Թուրքիան կգրավի Անդրկովկասը՝ ընդհուպ մինչև Սև ու Կասպից ծովերի ափերը, կամ Թուրքիայի խրենամակալության ներքո կկազմավորվեն բուֆերային տիպի անդրկովկասյան զանազան պետություններ»<sup>2</sup>:

Թուրքական զորքերի հաջող առաջխաղացումը գլխապը-

1. ЦГАОР, ф. 1318, оп. 1, д. 318. л. 37.

2. Նույն տեղը, գ. 23, թ. 101:

տույտ առաջ բերեց Օսմանյան կայսրության կառավարողների մոտ: Տրապիզոնի կոնֆերանսի վերջին նիստում Ռաուֆ բեյը բարձրագույն հայտարարեց. «Մենք ցանկանում ենք, որ Բուլղարիան Արևելքի գլուխն անցնի»<sup>1</sup>:

Ամբողջ կոնֆերանսի ընթացքում թուրքերը, տեսնելով անդրկովկասյան պատվիրակության կատարյալ անօգնականությունը, նրանց թելադրում էին իրենց պայմանները: Սեյմի պատվիրակները խղճուկ մի խաղալիք դարձան Ռաուֆ բեյի ձեռքին: Անդրկովկասյան պատվիրակության դրությունն ավելի էր վատանում այն պատճառով, որ նրա Տրապիզոն ժամանելու պահին քաղաքն արդեն գրավված էր թուրքական զորքերի կողմից: Անդրկովկասյան պատվիրակության նիստում (մարտի 21-ին) խառնուրդ, որն իրեն զգում էր որպես թուրքերի գերի, հայտարարեց, որ Տրապիզոնում հետագա բանակցությունները շարունակելու համար անմիտ պայմաններ են ստեղծվել: Խառնուրդ համեմատելով իրեն Բիսմարկի հետ, ասում էր. «Ոչ ես, ոչ իմ նախորդ Բիսմարկը երբեք այդպես չեն վարվել. ինչպե՞ս ես կարող եմ որևէ բանակցություններ վարել, եթե ես այստեղ նստած եմ որպես մի տիկնիկ, որին սուրճ են խմացնում և... որը լրիվ կտրված է աշխարհից... Ես գտնում եմ, որ նման պայմաններում այլևս անհնարին է շարունակել բանակցությունները և անհրաժեշտ է դուրս գալ այդ դժոխային պայմաններից»<sup>2</sup>: Իսկ Չխենկելին անդրկովկասյան պատվիրակության համար ստեղծված դրությունը բնութագրում էր որպես բանտի պայմաններ<sup>3</sup>:

Կոնֆերանսի առաջին իսկ նիստում Ռաուֆ բեյը հասկացնել տվեց, որ թուրքական կառավարությունը Անդրկովկասը շի ճանաչում որպես ինքնուրույն պետություն և սեյմի պատվիրակներին առաջարկեց հայտարարություն անել, թե ո՞րն է անդրկովկասյան հանրապետության քաղաքական ու վարչական ձևի էությունը:

Իր պատասխանում անդրկովկասյան պատվիրակությունը նշեց, որ «Ռուսաստանում կատարված բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ստեղծվել է նոր ինքնուրույն

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7 թ. 183—184:

2. Տե՛ս նույն տեղը, թ. 100—101:

կառավարութիւն, և Անդրկովկասը փաստորեն իրենից ներկայացնում է մի պետութիւն, որն արդեն մտել է միջազգային հարաբերութիւններին ոլորտը, քանի որ այն իր բողոքն է հայտնել Բրեստի պայմանագրի դեմ, որը կնքված է եղել տուանց նրա դիտութեան, թեև անդրկովկասյան կառավարութիւնը տակաւին չի հայտարարել իր անկախութեան մասին և նոտա չի ներկայացրել տերութիւններին»:

Թուրքական պատվիրակութիւնը հայտարարեց, որ ինքը չի կարող Անդրկովկասը ճանաչել որպես ինքնուրույն պետութիւն, ուստի և ուժի մեջ է համարում Բրեստ-Լիտովսկի հաշտութեան պայմանները՝ այն մասում, որը վերաբերում է կովկասին: Ընդ որում, Ռաուֆ բեյը ընդգծեց, որ «ներկա բանակցութիւնների մեջ մտնելը չի հետապնդում որևէ այլ նպատակ, քան տնտեսական ու քուտրական հարաբերութիւնների հիմքի նախապատրաստում և դրանց գործնական ու տեխնիկական մանրամասների մշակում, որոնք դրուա են: մնացել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պարտավորութիւնից»: Թուրքական պատվիրակութիւնը ցանկութիւն հայտնեց, որպեսզի Անդրկովկասը հայտարարի իր անկախութեան ու կառավարման ձևի մասին մինչև որ սկսված բանակցութիւնները կավարտվեն<sup>1</sup>:

Այսպիսով, թուրքերը մի կողմից պահանջում էին անհասպաղ իրազործիլ Բրեստի հաշտութեան՝ Բաթումի, Կարսի ու Արդահանի մարզերին վերաբերող պայմանները, որոնց ճակատագիրը պետք է կանխորոշվեր հանրաքվեի միջոցով: Այս դեպքում նրանք Անդրկովկասը դիտում էին որպես հորհրդային Ռուսաստանի բաղկացուցիչ մասը: Մյուս կողմից՝ թուրքերը պահանջում էին Անդրկովկասն անկախ հայտարարել, որպեսզի կարողանային իրենց համար հող նախապատրաստել Բրեստի հաշտութեան պայմանների կոպիտ խախտման և Անդրկովկասի նկատմամբ իրենց զավթողական պլաններն իրականացնելու համար: Այդպիսին էր թուրքական դիվանագիտութեան երկդիմի ու խարդախ տակտիկան Տրապիզոնի կոնֆերանսում:

1. 22 ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, ք. 178—181:

ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հաշտության համաձայնագիր կնքելու պայմաններին, որոնք սեյմի կողմից առաջադրված էին որպես հիմք Տրապիզոնի բանակցությունների համար, Թուրքերը դրանց մասին լսել անգամ չէին ուզում: Նրանք հենց սկզբից մերժեցին սեյմի պատվիրակության կողմից առաջադրված «Արևելյան Անատոլիայի (հասկացվում էր առաջին հերթին ինքնավարության շնորհում Արևմտյան Հայաստանին— Ծ. Ս) ինքնորոշման մասին» կետը, գնահատելով այն որպես միջամտություն Օսմանյան կայսրության ներքին գործերին:

«Հայաստանի ինքնորոշման հարցը, — հայտարարեց Հուսեյն Ռաուֆ բեյը, — պետք է հանվի, որովհետև Թուրքիան չի կարող հանդուրժել նրա քննարկումը Անդրկովկասի պատվիրակության հետ տարվող բանակցություններում»: Սեյմի պատվիրակներն անմիջապես ղիջեցին, և Արևելյան Անատոլիայի ինքնորոշման հարցը հանվեց կոնֆերանսի օրակարգից: Դրանից հետո սեյմի պատվիրակները փորձ արեցին այն փոխարինելու հայ գաղթականներին հայրենիք վերադառնալու թույլտվության հարցով, սակայն այդ հարցը ևս մերժվեց Թուրքական պատվիրակության կողմից:

Այսպիսով, անդրկովկասյան պատվիրակության կողմից ներկայացված համաձայնագրի պայմանները Թուրքերը մերժեցին:

Մինչդեռ, Տրապիզոնի կոնֆերանսում խոր տարածայնություններ առաջ եկան անդրկովկասյան պատվիրակության անդամների միջև: Պատվիրակության կողմից հրավիրված խորհրդակցություններում, որոնք երբեմն շարունակվում էին վաղ առավոտից մինչև ուշ երեկո, տաք վեճեր էին գնում: Անդրկովկասի ազդություններից յուրաքանչյուրի ներկայացուցիչները փորձում էին Թուրքերի տարածքային պահանջները բավարարել իրենց հարևանների հաշվին: Այսպես, օրինակ, վրաց մենչևիկները համաձայնվում էին Թուրքիային ղիջել Կողզվանի ու Կարսի նահանգները, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով: Դաշնակներն իրենց կողմից պահանջում էին Թուրքիային տալ Արգվինի, Օլթիի ու Բաթումի մարզերը, որտեղ ավելի շատ աջարացիներ ու վրացիներ կային: Իսկ մուսավաթականները, երիտթուրքերի այդ հավա-

տարիմ ժառանգերը, պնդում էին, որ անհրաժեշտ է բավարարել թուրքական պատվիրակութւյան ներկայացրած բոլոր պահանջները:

Մուսավաթական պատվիրակները բացահայտորեն աշակցում էին թուրք ղազլթիշներին: Այսպես, Խաս-Մամեդովը հարձակվում էր պատվիրակութւյան այն անդամների վրա, որոնք գտնում էին, որ թուրքական զորքերի առաջխաղացումը նպատակ ունի գրավելու ողջ Անդրկովկասը: Նա հայտարարեց. «Թուրքական զորքերի առաջխաղացումը և նրանց կողմից վիճելի մարզերի գրավումը պետք է դիտել ոչ թէ որպէս դրանց նվաճում, այլ կարգ ու կանոնի վերականգնում... Հեռացած ռուսական զորքերին փոխարինող կովկասյան ազգային զորամասերը թուրքերի կողմից դիտվում են որպէս շեթնիկներ (պարտիզաններ), քանի որ Անդրկովկասը տակավին կազմում է Ռուսաստանի մի մասը»<sup>1</sup>: Մուսավաթականները փաստորեն երիտթուրքերի գործակալներն էին, և նրանք ամեն կերպ նպաստում էին թուրքական զորքերի առաջխաղացմանը:

Մուսավաթական Ադրբեջանի առաջին ազգային ժողովի նախագահ Մահմեդ էմին Ռասուլ-զադեն «Ադրբեջանական հանրապետութունը» խորագիրը կրող իր գրքում ուղղակի նշում էր, որ Թուրքիան աշխարհի մահմեդականութւյան կենտրոնն է, թուրքալեզու բոլոր ժողովուրդների հույսն ու ապավինը: Խոսելով Տրապիզանի կոնֆերանսում մուսավաթական պատվիրակների խնդիրների մասին, նա շեշտում է, որ նրանց ցուցում էր տրված թուրքական պատվիրակութւյան անդամների հետ ունեցած իրենց զրույցների ժամանակ բացատրել վերջիններին, թե ինչպիսի դժվարութւյունների է հանդիպել Ադրբեջանը, և որ նա Թուրքիայի աշակցութւյան կարիքն ունի՝ այդ դժվարութւյունները հաղթահարելու համար: «Բոլորը հույս էին դրել Թուրքիայի վրա: Միակ ուժը, որն ի վիճակի էր փրկելու ազգը այդ ծանր դրութւյունից՝ Թուրքիան է: Այդ եղբայրական ազգը կգա և մեզ կփրկի թշնամու ձեռքից»: Այնուհետև Ռասուլ-զադեն մեծ գոհունակութւյամբ նշում էր, որ թուրքերն ունկընդրեցին իրենց

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, ք. 140—141:

եղբայրների՝ մուսավաթականների ձայնին և նրանց օգնության եկան: «Կարճ ժամանակվա ընթացքում ամբողջ Ադրբեյջանում, բացի Բաքվի նահանգից (ուր հաստատված էր Բաքվի կոմունայի իշխանությունը— Յ. Ս.), լրիվ վերականգնվեց կարգ ու կանոնը»<sup>1</sup>:

Անդրկովկասյան պատվիրակության նախագահ Ա. Ի. Չխենկելին մարտի 21-ի նիստում ընդունելով հաշտության վերաբերյալ իրենց առաջ քաշած պայմանների կատարյալ ձախողումը, հայտարարեց, որ «գոյություն չունի միասնություն ո՛չ Անդրկովկասում, ո՛չ էլ սեյմում: Ես կրկնում եմ, որ մեր թուլությունը միասնության բացակայության մեջ է: Մեր պատվիրակությունը կոլեկտիվ կարծիք չունեցավ»<sup>2</sup>: Նույն բանն էր խոստովանում նաև Խատիսովը: «Մեզ կործանում է ոչ թե թուրքերի ուժը, այլ ներքին համերաշխության ու համախմբվածության բացակայությունը»<sup>3</sup>:

Այդ բոլորը քաջ հայտնի էր Հուսեյն Ռաուֆ բեյին: Թուրքական կողմը հաջողությամբ օգտագործեց այդ հանգամանքը բանակցությունների ժամանակ: Նա ամեն կերպ ձգձգում էր բանակցությունները, որովհետև ժամանակն աշխատում էր թուրքերի օգտին: Շարունակելով թելադրել հաշտության իրենց պայմանները, թուրքերը նախօրոք գիտեին, որ սեյմի պատվիրակաները ոչինչ ի վիճակի չեն հակադրելու իրենց: Ամենազլխավոր փաստարկը թուրքերի մոտ՝ ուժն էր: Տրապիզոնի բանակցությունների ժամանակ նրանք շարունակում էին իրենց հարձակումը ամբողջ ճակատով: «Բոլոր ղեպքերում, — վկայում է Խատիսովը, — թուրքերի վարքագիծը միևնույնն էր՝ միաժամանակ և՛ բանակցություններ վարել, և՛ պատերազմ մղել՝ ամբողջովին իրենց կամքը պարտադրելու համար»<sup>4</sup>:

Տակավին Տրապիզոնի կոնֆերանսի բացման նախօրյակին, ճակատի գլխավոր՝ Երզնկա—Կարին ուղղությամբ առաջին կովկասյան կորպուսի զորամասերը մոտեցան Կարի-

1. ՄԼԻ. հայկական մանսաճուղի արխիվ, ֆ. 11, գ. 29, ք. 581—582:

2. 22 ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, ք. 95—97:

3. Նույն տեղը, ք. 116—126:

4. «Зоря Востока», 5.XI.1925, № 796.

նին, Մարտի 12—ի գիշերը թուրքական զորքերը գրոհով վերցրին քաղաքը: Հայկական զորամասերը հետ մղվեցին հակառակորդի գերզանցող ուժերի կողմից, և թուրքերը մըտան հրդեհի բոցերով բռնկված քաղաքը, որտեղ նրանց ձեռքըն ընկան մեծ քանակութեամբ թնդանոթներ և ռազմամթերք:

Կարինի գրավումից հետո թուրքական առաջին կովկասյան կորպուսը առաջ շարժվեց Մարիղամիշի ուղղութեամբ. Մարտի 17—ին հիշյալ կորպուսի զորամասերը գրավեցին Քյուփրյու-քյուր և Թորթումը, որոնք ընկած էին Կարինից դեպի արևելք և հյուսիս-արևելք, և հասան սահմանին: Հայկական զորամասերը ապրիլի 5—6—ին թողեցին Մարիղամիշը և նահանջեցին Նովոսելիմ՝ այնտեղ ամրանալու և թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Կարս կասեցնելու համար: Թուրքական 37-րդ դիվիզիան Տրապիզոնը գրավելուց հետո շարունակում էր առաջ շարժել Սև ծովի ափի երկայնքով դեպի Բաթում: 4-րդ կովկասյան կորպուսը 12-րդ դիվիզիայի հետ միասին հարձակվում էր Մանազկերտի ուղղութեամբ: 5-րդ դիվիզիան ապրիլի 7—ին գրավեց Վանը և նույնպես մոտեցավ սահմանին, իսկ ապրիլի 9—ին թուրքական զորքերը, անցնելով սահմանը, մտան Օլթի:

Անդրկովկասյան կառավարութունն ու սեյմը, շարունակելով իրենց հակահեղափոխական քաղաքականութունը, չէին կարող հենվել աշխատավոր զանգվածների վրա՝ թուրք ներխուժողներին հակահարված տալու համար: Ավելին, հուլիսը դնելով Տրապիզոնի հաշտութեան բանակցությունների հաջողութեան վրա, Անդրկովկասյան սեյմը իր հրամաններով լոկ նպաստում էր վրացական ու հայկական զորամասերի կազմալուծմանն ու բարոյալքմանը: Այնինչ, թուրքական հրամանատարութունը, կազմակերպելով իր զորքերի սրբնթաց հարձակումը, նպատակադրվել էր սեյմի պատվիրակութեանը կանգնեցնել կատարված փաստի առջև՝ գրավելով Անդրկովկասի մի շարք մարզերը: Վերջապես, ապրիլի 6—ին թուրքական կողմը անդրկովկասյան պատվիրակութեանը ներկա-

յացրեց վերջնագիրը՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում՝ ճանաչել իրենց կողմից առաջ քաշված հաշտութիւնն պայմանները, այսինքն՝ Թուրքիային զիջել Բաթումի, Կարսի ու Արդահանի մարզերը:

Ապրիլի 8—ին տեղի ունեցավ կոմիսարիատի ու սեյմի բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչների համատեղ նիստ, որտեղ քննարկվում էր թուրքական վերջնագրին ներկայացվելիք պատասխանի նախագիծը: Որոշվեց Թուրքիային զիջել Օլթիի ամբողջ շրջանը, Արդահանի մարզի հարավային մասը, Կարսի մարզի հարավ-արևմտյան շրջանները և Կադզըրվանի մարզի արևմտյան մասը: Բացի դրանից պատրաստակամութուն էր հայտնվում թուրքերի հետ համաձայնագիր կնքել Հայկական հարցի վերաբերյալ՝ թուրքական պատվիրակութիւնի համար ընդունելի պայմաններով: Այդ պատասխանը, որն ըստ էութիւնն նշանակում էր սեյմի լրիվ, անվերապահ կապիտուլյացիա թուրք նվաճողների առջև, նույն օրը ուղարկվեց Ռաուֆ բեյին:

Այդ ժամանակամիջոցում թուրքական զորքերն արդեն հասցրել էին գրավել Արդահանը և Բաթումից 8 կմ հեռավորութիւն վրա էին գտնվում: Իսկ հիմնական ուղղութիւն վրա առաջին կովկասյան կորպուսի զորամասերը մոտենում էին Կարսին:

Թուրքերից պատասխան չստանալով, Չխենկելին ապրիլի 8—ին հեռագրեց Թիֆլիս՝ Բրեստի պայմանագիրը ճանաչելու անհրաժեշտութիւն մասին: Նա հավատացած էր, որ թուրքական կառավարութիւնը չի ընդունի այն պայմանները, որոնք հենց նոր սեյմը ընդունել էր: Նա գիտեր, որ թուրքական զորքերն արդեն գրավել են այն տիրիտորիաները, որոնք անդրկովկասյան կառավարութիւնը համաձայնել էր զիջել Թուրքիային: Իր հեռագրի պատասխանը չստանալով, Չխենկելին, օգտվելով իր արտակարգ լիազորութիւններից, ապրիլի 10—ին պատասխանեց թուրքական վերջնագրին (որի ժամկետն արդեն անցել էր), այն է՝ անդրկովկասյան պատվիրակութիւնը ջրնդունում է Բրեստ-Լիտովսկի պայ-

1. Տե՛ս 22 ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 178—181:

մանագիրը և պատրաստ է նրա հիման վրա շարունակել հետագա բանակցությունները»<sup>1</sup>:

Ապրիլի 13—ին Ռուսի քելը հաղորդեց Չխենկելուն, որ թուրքական կառավարությունը տեղեկանալով այն մասին, որ անդրկովկասյան պատվիրակությունը ճանաչում է Բրեստի պայմանագիրը, անհրաժեշտ է համարում իր դաշնակիցների մասնակցությունը բանակցություններին և Անդրկովկասի կողմից իր անկախության հայտարարումը<sup>2</sup>: Դա նշանակում էր, որ զրավելով Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերը՝ ի խախտումն Բրեստի հաշտության պայմանների, որոնք նախատեսում էին հիշյալ շրջաններում հանրաքվեի անցկացում՝ նրանց ապագա պետական պատկանելության հարցը որոշելու համար, թուրքերն արդեն ձգտում էին, որպեսզի Անդրկովկասը հռչակի իր «անկախությունը»՝ հետագայում նրա նվաճումը դյուրացնելու նպատակով:

Բրեստի հաշտությունը ճանաչելու հարցը քննարկվեց սելմի նիստում ապրիլի 13—ին: Երկար վիճարանություններից ու դատարկ ճառերից հետո (վրացական մենչևիկների պարագլուխ Մերնթելու հայտարարության ոգով՝ «Մենք կկարողանանք մեր սահմաններից այն կողմ նետել թշնամուն և նրանից ազատագրել մեր հողերը»), որոշվեց հետևյալը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի սահմանների վերաբերյալ Թուրքիայի ու Անդրկովկասի միջև հաշտության համաձայնություն չի կայացվել, անդրկովկասյան պատվիրակությունը առաջարկվում է անհապաղ մեկնել Թիֆլիս»<sup>3</sup>:

Այնինչ, թուրքական զորքերը, շարունակելով իրենց հարձակումը, արդեն մոտեցել էին Բաթումին: Ապրիլի 12—ին վեհիք փաշան Բաթումի պարիտին վիրջնագիր ներկայացրեց՝ մինչև ապրիլի 13—ի ժամը 4—ը հանձնել քաղաքը: Նշված ժամկետում պատասխան չստանալով, ապրիլի 14—ին թուրքական 37-րդ դիվիզիայի զորամասերը հարձակում գոր-

1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 77.

2. Տե՛ս նույն տեղը, № 81:

3. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 83.

ժեցին Բաթումի վրա: Ամրոցի պարետ գեներալ Գեդևանովը, առանց մարտն ընդունելու, որոշեց հանձնել քաղաքը, թե՛ նա իր տրամադրութեան տակ ունեւր 10 հազար զինվոր և 100 թնդանոթ: Անշուշտ, եթե չլինեւր Գեդևանովի դավաճանութունը, Բաթումը կարելի էր պահել՝ առավել ևս որ սեւծովյան նավատորմը նրան առաջարկեց իր օգնութիւնը: Թուրքերին կամովին գերի հանձնվեցին Գեդևանովը և վրացական առաջին դիվիզիայի հրամանատար գեներալ Արթմեյաձեն, իրենց շտաբներով: Բաթումը գրավելուց հետո թուրքական զորքերը գրավեցին Աբասթումանը և շարունակեցին իրենց հարձակումը Քուսթայիսի ու Թիֆլիսի նահանգներում:

Թուրքական զավթիչներին հակահարված տալու գործը կազմակերպելու փոխարին, ժողովրդական զանգվածները կամքին հակառակ և թուրքական զավթիչների պահանջով ապրիլի 22-ին Անդրկովկասը հռչակվեց ֆեդերատիվ «անկախ» հանրապետութիւն:

Ռուսաստանից Անդրկովկասի անջատման հարցը սեյմում քննարկելիս առանձին պատգամավորներ, կանխատեսելով այդ քայլի կործանարար հետևանքները, դեմ դուրս եկան այդ որոշմանը: Այսպես, էսեռ Թումանովը ուղղակի հայտարարեց. «Պետք է անկեղծորեն խոստովանել, որ Անդրկովկասի «անկախութեան» գաղափարը գալիս է թուրք իմպերիալիստներից... այդ հարցը Անդրկովկասի կենաց ու մահվան հարցն էր: Ինչո՞ւ դուք չեք դիմում հանրաքվեի օգնութեանը: Հավատացած եք արդյոք դուք, որ եթե այդ հարցը վճռվեր ազատ քվեարկութեան ճանապարհով, ժողովուրդը չէր ասի՝ «չեմ ցանկանում այն անկախութիւնը, որը գալիս է թուրքական սուլթանի մահակի տակից... անկախութիւն, որը հռչակված է այնպիսի պայմաններում, ինչպիսին ներկայումս գոյութիւն ունի Անդրկովկասում, դա նշանակում է անցում դեպի Թուրքիայի կողմից լրիվ ստրկացմանը: Անդրկովկասը շահազանց թույլ տնտեսական ուժեր ունի ներկայումս իր սեփական կողմնորոշումն ունենալու համար: Անդրկովկասն անկախ հռչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնա-»

նորոշում դեպի Թուրքիան, և այդ փաստը դուք ոչ ոքից չեք կարողանա թաքցնել»<sup>1</sup>։

Խորհրդային կառավարությունը կտրուկ բողոք հայտնեց սեյմի նման ապօրինի քայլի դեմ։ Մոսկվայում Թուրքիայի գլխավանդիտական ներկայացուցչի և Ստամբուլում Ռուսաստանի ներկայացուցչի բացակայության պատճառով ՌեՅՈՒՆ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Մոսկվայում դերամանական դեսպան Միրբախին ուղղված 1918 թվականի մայիսի 15 — ի նոտայում իր բողոքը հայտնեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեմ։ Հիշյալ փաստաթղթում նշվում էր, որ «Անդրկովկասի շատ վայրերում այսպես կոչված Անդրկովկասյան կառավարության իշխանությունը բոլորովին չի ճանաչվում և ընդհանրապես ամբողջ Անդրկովկասում նրա դեմ են արտահայտվում ժողովրդական լայն զանգվածները»։ Ի հաստատումն այդ բանի, նոտայում բերվում էին մի շարք կոնկրետ տվյալներ. «Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում բնակչությունը բազմիցս բողոք է հայտնել Ռուսաստանից անջատվելու դեմ։ Սուխումում, Փոթիում, Քութայիսում, Գորիում, Թիֆլիսում, Դուշեթում և վրացական այլ քաղաքներում ու ավաններում կայացած բազմամարդ ցույցերում ընդունվում են որոշումներ, որոնք դատապարտում են սեյմին՝ ապօրինի իշխանությունն իր ձեռքը վերցնելու համար և պահանջում են հանրաքվե անցկացնել։ Այդ որոշումներում ընդգծվում է, որ սեյմի անդամները Համառուսաստանյան գործադիր ժողովի մեջ էին ընտրվում հեղափոխության նվաճումներն ամրապնդելու համար և որ նրանք չունեին և չէին կարող ունենալ որևէ լիազորություններ Ռուսաստանից անջատվելու հարցի վճռման մեջ։ Հայկական գյուղերն ու քաղաքները ավելի մեծ համառությամբ են պահանջում հանրաքվե անցկացնել՝ պնդելով այն բանի վրա, որպեսզի իրենց պատվիրակները հեռանան սեյմից... Բաքուն սեյմի անդամների խմբին հայտարարեց ուզուրպատորներ, նույն ոգով արտահայտվեցին Լենքորանը, Ալյաթը, Դերբենտը, Պետրովսկը, Հաջիկարուլը, Քյուրդամիրը և ընդհանրա-

1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 99.

պես ամբողջ Արևելյան Անդրկովկասը՝ ընդհուպ մինչև Ելիզավետպոլ»<sup>1</sup>:

Անդրկովկասի «անկախութեան» հռչակման մասին նոր էլառավարութեան նախագահ Չխենկելին շտապ կերպով հեռագրեց Վեհիբ փաշային. «Անդրկովկասն արդեն հայտարարվել է անկախ ֆեդերատիվ հանրապետություն, որի մասին հայտնված է տերություններին: Ուստի կատարված է նաև այն պայմանը, որի մասին ասվում է օսմանյան պատվիրակության 1918 թվականի ապրիլի 13—ի դեկլարացիայում» (ընդգծումը մերն է — Ե. Ս.):

Այդ նույն հեռագրում Չխենկելին հաղորդում էր, որ կառավարությունը հավանություն է տալիս անդրկովկասյան հաշտութեան պատվիրակության ապրիլի 10—ի դեկլարացիային՝ Բրեստի հաշտությունը ճանաչելու վերաբերյալ և առաջարկում է վերսկսել հաշտության բանակցությունները՝ Թուրքիայի հետ ամենաարագ ժամկետում հաշտություն կընքելու համար<sup>2</sup>:

Մինչդեռ Թուրք զավթիչները շարունակում էին իրենց ինտերվենցիան դեպի Ադրկովկասի խորքը: Կարսի ուղղությամբ Թուրքական զորքերը Քյազըմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ, հաղթահարելով հայկական զորամասերի համառ դիմադրությունը, որոնք մի քանի անգամ հետ էին մղել Թուրքերի գրոհները, մոտենում էին Անդրկովկասի դարպասին՝ Կարսին: Կարսի բերդը լավ էր ամրացված: Այն պաշտպանում էին հայկական կորպուսի 6 հազար մարտիկներ, թեև Թուրքական ուժերը կրկնակի շափով գերազանցում էին Կարսի կայազորի զորքերին<sup>3</sup>, վերջինս ի վիճակի էր մեկ ամիս պաշտպանել ամրոցը<sup>4</sup>:

Հաշվի առնելով այդ դժվարությունները, և հենվելով սեմյի կողմից Բրեստի պայմանագիրը ճանաչելու վրա, Թուրքական

1. Документы внешней политики СССР. т. 1. № 179.

1. Տե՛ս Դոկումենտներ և մատերիալներ վերաբերյալ Զակավկասի և Գրուզիայի, № 102.

2. Տե՛ս Կադիշև Ա. Բ., Ինտերվենցիա և քաղաքացիական պատերազմը Զակավկասում, 1918 թ. հունիս, № 53.

3. Տե՛ս Դոկումենտներ և մատերիալներ վերաբերյալ Զակավկասի և Գրուզիայի, № 123.

հրամանատարութիւնը անդրկովկասյան կառավարութիւնից անհիմն կերպով պահանջեց առանց մարտի հանձնել նաև ամբողջ Կարսի մարզը: Ի պատասխան Վեհիբ փաշայի այդ վերջնագրին, Չխենկելին հայկական կորպուսի հրամանատարութեանը կարգադրեց դիմադրութիւն ցույց շտալ և Կարսի էվակուացիայի պայմանների շուրջ թուրքական հրամանատարութեան հետ բանակցութիւնների մեջ մտնել: Չխենկելին աղերսում էր Վեհիբ փաշային՝ մեկ ամիս ժամանակ հատկացնել Կարսից զորքերը դուրս բերելու, քրիստոնեական բնակչութիւնը էվակուացնելու և ռազմական գույքն ու նյութական այլ արժեքները քաղաքից փոխադրելու համար: Սակայն թուրքական հրամանատարութիւնը ցանկանում էր գրավել Կարսը այնտեղ եղած բոլոր հարստութիւնների և ռազմական գույքի հետ միասին: Ապրիլի 25-ին Քյազըմ Կարաբեքիր փաշայի զորքերը Կարսի մատուցներից երկու կիլոմետր հեռավորութեան վրա էին գտնվում:

Անդրկովկասյան կառավարութեան կապիտուլյանտական այդ կարգադրութիւնը կազմալուծեց Կարսի պաշտպանների շարքերը: Ապրիլի 25-ին քաղաքն առանց կռիւի հանձնվեց թուրքերին: Կարսի մարզային կոմիսար Չամոնը երկու օր հետո քաղաքը թողնելու հանգամանքների մասին հեռագրում էր հետեյալը. «Մեր բոլորիս համար անսպասելի և շահագործող կարճ ժամկետում Կարսի ամրոցի հանձնումը՝ Թիֆլիսից ստացված կարգադրութեան համաձայն, հանգեցրեց այն բանին, որ Անդրկովկասի այդ պատվարը պաշտպանելու համար լավ նախապատրաստված ազգաբնակչութիւնը ըստիպված էր բառացիորեն ամեն ինչ թողնել և ապրիլի 25-ի երեկոյան ժամը 5-ին լքել Կարսը: Քաղաքը բռնկված էր հրդեհի բոցերով, այրվում էին լավագույն շինքերը: Բնակչութեան նահանջի տեսարանը աննկարագրելի է»<sup>2</sup>:

Բնական է, որ Անդրկովկասի կառավարութեան կողմից Կարսի հանձնումը թուրքերին առաջ բերեց ժողովրդական զանգվածների բուռն զայրույթը: Իր հուշերում Խատիսովը խոստովանում է, որ Կարսի հանձնումը ուժեղ դժգոհութիւն

1. Տե՛ս նույն տեղը:

2. Նույն տեղը:

առաջ բերեց: «Ժողովրդի մեջ առաջ եկած հուզմունքը շեղ»-  
քացնելու համար,— վկայում է նա,— մենք որոշեցինք  
հետաքննություն անցկացնել, իմանալու համար, թե ինչքան  
ժամանակ Կարսը կարող էր պաշտպանվել, եթե շլիներ  
հանձնվելու վերաբերյալ հրամանը»: Ինքնարդարացման  
նպատակով դավաճանները որպես էքսպերտ հրավիրեցին  
կովկասյան բանակի շտաբի պետ գեներալ Լևանդովսկուն,  
Վերջինս պնդում էր, թե իբր Կարսի դրուժյունը ապրիլի 24-  
ին անհուսալի էր, նրա ժամերը հաշվված էին: «Քանի որ  
հասարակայնությունը շարունակում էր հուզել Կարսի անկ-  
ման հարցը,— հաղորդում է այնուհետև Խատիսովը,— կա-  
ռավարությունը 1918 թվականի մայիսի 5-ին մանրամասն և  
փաստական մի հաղորդում հրապարակեց, որտեղ ներկա-  
յացվում էին բոլոր այն հանգամանքները, որոնք Կարսի  
հանձնման պատճառ էին հանդիսացել»<sup>1</sup>:

Այդ հաղորդման մեջ, որը կազմվել էր կառավարության  
ղեկավար Չխենկելու կողմից, բացի ընդհանուր ֆրազներից  
չի բերված և ո՛չ մի կոնկրետ փաստարկ, որը կարողանար  
տրդարացնել Բաթումն ու Կարսը առանց կովի թուրքերին  
հանձնելը: Այսպես, օրինակ, Բաթումի կապիտուլյացիայի  
վերաբերյալ ասվում է, որ մարտի 13-ին Տրապիզոնում  
անդրկովկասյան պատվիրակության նախագահ Չխենկելին  
«երկու անգամ հեռագրել է Բաթում՝ ներքին գործերի նախա-  
րարին այն մասին, որ Բաթումի մատուցների կամավոր  
էվակուացիան ինքն անհրաժեշտ է համարում մի շարք նկա-  
տառումներից ելնելով»<sup>2</sup>, որոնք այդպես էլ անհայտ մնացին:  
Նման ընդհանուր ֆրազներով Չխենկելին փորձում էր «հիմ-  
նավորել» Կարսի հանձնումը թուրքերին:

Կարսը թողնելուց հետո հայկական զորամասերը նա-  
հանջեցին Ալեքսանդրապոլ: Ճանապարհին, շնայած թուրքե-  
րի հետ ապրիլի 25-ին կնքված զինադադարին, նրանք ան-  
սպասելիորեն ենթարկվեցին հակառակորդի հարձակմանը,  
որը նրանց հաջողվեց հետ մղել:

1. «Заря Востока», 15. XI. 1925. № 205.

2. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 144.

Կարսի ու շրջակայքի ամբողջ քրիստոնյա ազգաբնակչու-  
թյունը (188 հազար մարդ), որը հիմնականում բաղկացած  
էր հայերից, վախենալով նոր շարդից, զորքերի հետ միա-  
սին թողեց քաղաքը:

Թուրք նվաճողների նպատակադրումը ժամանակին ճիշտ  
կիրպով բացահայտել է Սարգիս Կասյանը իր «Ո՛ր է ելքը»  
գրքուկում, շեշտելով, որ «տաճկական զինվորական իմպե-  
րիալիզմը ձգտում էր ամբողջապես խեղդել Հայաստանը հայե-  
րի արյան ծովի մեջ»<sup>2</sup>: Դրա ապացույցն էր թուրք զավթիչների  
հետագա առաջխաղացումը Հայաստանի և Անդրկովկասի  
խորքերը:

Շարունակելով իրենց զավթողական քաղաքականությու-  
նը, թուրքերը ոչ միայն խախտեցին Բրեստ-Լիտովսկի պայ-  
մանագրի 4-րդ հոդվածի պայմանները և գրավեցին Կարսի,  
Արդահանի, Արդվինի ու Բաթումի շրջանները, այլև գրավե-  
ցին ուրիշ մարդեր: Թուրքական զավթիչների կողմից այդ  
մարդերի գրավումը ուղեկցվում էր հայ ազգաբնակչության  
նկատմամբ նոր գազանային շարագործություններով և ազ-  
դային երկպառակություն բորբոքելով: Այդ պայմաններում,  
թուրքական իշխանությունների հսկողության տակ, կազ-  
մակերպված հանրաքվեն կոպիտ խեղկատակության վերած-  
վեց:

Խորհրդային Ռուսաստանը, որն այն ժամանակ դժվարին  
պայքար էր մղում օտարերկրյա ինտերվենտների ու ներքին  
հակահեղափոխական ուժերի դեմ, ի վիճակի չէր զինված  
աջակցություն ցույց տալ Անդրկովկասի ժողովրդական  
զանգվածներին՝ թուրք նվաճողների հարձակումը հետ մղելու  
համար: Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական նահանգ-  
ների և Անդրկովկասի միջև ընկած տարածքը այն ժամանակ  
գտնվում էր սպիտակգվարդիականների հսկողության տակ:  
Սակայն խորհրդային կառավարությունը բազմիցս իր բողոքն  
է հայտնել թուրք զավթիչների կողմից հայ ժողովրդի նկատ-  
մամբ գործադրված գազանությունների, ինչպես նաև Բրեստ-  
Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող հոդ-  
վածները խախտելու առթիվ:

1. Ս. Առենյան (Ս. Կասյան), Ո՛ր է ելքը, Եր., 1919, էջ 18:

1918 թվականի սեպտեմբերի 20-ին խորհրդային կառավարության նոտայում մերկացվում էին թուրքական ներխուժողների խարդախ մեթոդները, որոնք ձգտում էին ցույց տալ, թե իբր Կարսը, Արդահանն ու Բաթումը միացվել են Թուրքիային՝ տեղի ազգաբնակչության ազատ կամքի արտահայտման հետևանքով: Խորհրդային կառավարության նոտայում ընդգծվում էր, «Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածը նախկինում ուսական հանրապետության կազմի մեջ մտնող Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերի ազգաբնակչությանը իրավունք էր վերապահում նոր կարգ հաստատել իր հարևան պետությունների և հատկապես Թուրքիայի հետ համաձայնեցված»:

Նշված մարզերի ճակատագիրը, նրանց միջազգային իրավական դրությունը պետք է որոշվեր այդ մարզերի ազգաբնակչության ազատ ինքնորոշման ճանապարհով: Մինչդեռ, պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո, այդ մարզերը գրավվեցին թուրքական ռազմական ուժերի կողմից և նրանց նկատմամբ կիրառվեց ռազմական օկուպացիայի ուժիմ, որն ուղեկցվում էր խաղաղ ազգաբնակչության անթույլատրելի կողոպուտով ու բռնություններով: Միաժամանակ թուրքական վարչությունն մտցնելու հետ մեկտեղ կատարվեց 19 տարեկանից բարձր տղամարդկանց հարկադիր հավաք:

Ազգաբնակչությունը, որի կամքի ազատ արտահայտմամբ միայն պետք է հաստատվեր նոր կարգը, նախապես տեղորի էր ենթարկվել և դրվել այնպիսի պայմանների մեջ, որ երեք մարզերի բնակչությանը տրված իրավունքը վեր էր ածվում բացահայտ ծաղրի նրանց նկատմամբ: Ընտրության նախօրյակին քաղաքի երևելիները, որոնց ազդեցությունը կարող էր լինել ոչ հօգուտ Թուրքիայի, արտաքսվում էին քաղաքից, ձերբակալվում, իսկ շատ դեպքերում՝ նույնիսկ գնդակահարվում: Քվեարկությունը տեղի էր ունենում թուրքական իշխանությունների բացահայտ վերահսկողության ներքո... նման պայմաններում քվեարկության արդյունքները չէին կարող չկանխորոշվել:

«Ռուսաստանից խլված մարզերի ազգաբնակչության նրկատմամբ գործադրված բռնությունը համարելով պայմանա-

գրի 4-րդ հոդվածի էական խախտում, խորհրդային կառավարությունը սույնով հայտարարում է, որ նա չի կարող համաձայնել Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի ազգաբնակչության այսպես կոչված կամքի արտահայտության հետևանքների հետ և գտնում է, որ այդ ազգաբնակչության իրավունքը՝ իրենց մարզերում նոր կարգ հաստատելու, չի օգտագործված և նշված մարզերի նոր իրավիճակի հարցը բաց է մնում»<sup>1</sup>։

Պատասխան նոտայում թուրքական կառավարությունը ամեն կերպ աշխատում էր «արդարացնել» իր գործողությունները։ ՌԽՖՍՀ կառավարությունը 1918 թվականի հոկտեմբերի 10-ի նոտայում նորից մատնանշում էր, որ թուրքիան Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերը գրավել է ապօրինի կերպով՝ ի խախտումն Բրեստի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածի։ «Այն հարցը, թե խորհրդային կառավարությունը արդյոք բոլոր մանրամասներով իրագործել է Բրեստի պայմանագրի որոշումը Կարսի, Բաթումի ու Արդահանի մարզերը թուրքական իշխանություններին հանձնելու մասին, դուրկ է ամեն մի իմաստից թեկուզ այն պատճառով, որ թուրքական ռազմական ուժերը, հաշվի չնստելով պայմանագրային պարտավորությունների հետ, ժամանակից շուտ և ռուսական իշխանությունների հետ համաձայնության չեկած սկսեցին ներխուժել Կարսի, Բաթումի և Արդահանի մարզերը, որ նրանք գազանաբար սկսեցին հաշվեհարդար տեսնել տեղական ազգաբնակչության հետ»<sup>2</sup>։

Թուրքական զորքերը տեռորի ենթարկեցին ոչ միայն Կարսի, Արդահանի ու Բաթումի շրջանների ազգաբնակչության հիմնական մասին, այլև պատժիչ միջոցներ ձեռնարկեցին տեղի մահմեդական ազգաբնակչության այն խավի դեմ, որը հանրաքվեի նախօրյակին պատրաստվում էր թուրքիային միանալու դեմ քվեարկել։ Խորհրդային կառավարության նոտայում այդ մասին ասվում էր. «Տեղական մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչները դիմել են ռուսական կառավարությանը լուրջ հիմնավորված և բազմաթիվ փաս-

1. Документы внешней политики СССР. т. 1. № 346.

2. Документы внешней политики СССР. т. 1. № 363.

տական նյութով խարսխված բողոքներով՝ ժողովրդական կամքի արտահայտման այն անթույլատրելի խեղաթյուրման առթիվ, որն իրենից ներկայացնում էր այդ մարզերի դժբախտ ազգարնակչության այսպես կոչված քվեարկությունը՝ իրենց ապագա ճակատագրի հարցով»<sup>1</sup>։

Այս փաստաթղթերն ու նյութերը անհերքելիորեն վկայում են այն մասին, որ Կարսի, Արդահանի և Բաթումի տարածքները 1918 թվականին ըստ էության գրավվեցին ուղղակի անեքսիայի հետևանքով, ինչը Թուրքիայի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում էր նշանակում։ Բնական է, որ խորհրդային կառավարությունը հենց այն ժամանակ էլ հայտարարեց, որ նա չի ճանաչում Թուրք զավթիչների կողմից Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերում անցկացրած հանրաքվեի արդյունքները, և դրանց միացումը Թուրքիային անօրինական է համարում։

\*\*\*

Ներքին պայքարով ու երկպառակություններով ջլատված անդրկովկասյան կառավարությունը ի վիճակի չէր դիմադրություն կազմակերպել Անդրկովկասի խորքերն առաջխաղացող Թուրք զավթիչներին։ Ուստի, Թուրքիայի հետ շուտափույթ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով, նա որոշեց վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները։ Բանակցությունները վերսկսվեցին Բաթումում՝ 1918 թվականի մայիսի 11-ին։ Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արդարադատության նախարար Խալիլ բեյը, անդրկովկասյան պատվիրակությունը՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի կառավարության նախագահ Չխենկելին։ Թուրքերի համար անսպասելի կոնֆերանս ժամանեց և գերմանական պատվիրակությունը՝ գններալ Ֆոն Լոսովի գլխավորությամբ՝ Անդրկովկասում կայսերական Գերմանիայի շահերը պաշտպանելու պատճառաբանությամբ։ Կոնֆերանսի

1. Նույն տեղը։

աշխատանքներին մասնակցում էին նաև թուրքական նվաճողների գործակալությունը հանդիսացող Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները, որոնց նպատակն էր Հյուսիսային Կովկասը միացնել Օսմանյան կայսրությանը: ՌեՅՍՂ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի մայիսի 15-ի վերը հիշատակված նոտայում նշվում էր, որ առանց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների Բաթումի կոնֆերանսը իրավասու չէ վճռելու տարածքային հարցերը, քանի որ Անդրկովկասյան կառավարությունը, որը հայտարարել է Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին, չի ճանաչվել ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից: Պնդելով Բաթումում ընթացող բանակցություններին ուսսական կառավարության պատվիրակների մասնակցության վրա, — ասվում էր այնուհետև նոտայում, — ժողովրդական կոմիսարիատը ընդգծում է, որ դրանով ամենևին էլ չի նախատեսվում ուսսական կառավարության կողմից այսպես կոչված Անդրկովկասյան կառավարության ճանաչումը, ավելին՝ առանց նրա մասնակցության կնքված պայմանագիրը նա իրեն համար պարտադիր չի գտնի ճանաչելու<sup>1</sup>: Այս նոտային պատասխան չհետևեց:

Բաթումի կոնֆերանսի առաջին իսկ նիստում անդրկովկասյան պատվիրակության նախագահը հայտարարեց, որ սկսվող բանակցությունները պետք է դիտել որպես Տրապիզոնի բանակցությունների ուղղակի շարունակություն և որ դրանց հիմքում՝ օսմանյան պատվիրակության ապրիլի 10-ի սլատասխանի համաձայն, պետք է դրվի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Բայց Խալիլ բեյը տեղնուտեղը և ամենավճճական ձևով մերժեց անդրկովկասյան պատվիրակության կողմից առաջարկված բանակցություններ վարելու հիմքը: Նա հայտարարեց, որ օսմանյան կառավարությունը այլևս չի կարող ղեկավարվել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմաններով, քանի որ Անդրկովկասն արդեն ինքնուրույն պետություն է, որը ճանաչվել է Թուրքայի կողմից՝ մայիսի 27-ին, ուստի և Բրեստ-Լիտովսկի պայմանները չեն կարող տարածվել նրա վրա: Թուրքական պատվիրակությունը ընդ-

գծում էր, որ Տրապիզոնի կոնֆերանսից հետո շատ բան է փոխվել և թուրքական կառավարութունն այլևս չի կարող սահմանափակվել տարածքային այն ձեռքբերումներով, որոնք նախատեսված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով:

Այդ ժամանակամիջոցում թուրքական զորքերը հեշտությամբ գրավելով Բաթումի ու Կարսի մարզերը, 1918 թվականի մայիսին ներխուժեցին Թիֆլիսի ու Երևանի նահանգներ: Այդ հաջողութունը ոգեշնչում էր էնվերին՝ կրկնելու 1914 թվականի ձախողված իր արշավանքը, որը նպատակ ուներ Օսմանյան կայսրությանը միացնել ամբողջ Կովկասը և Իրանական Ադրբեջանը, ներթափանցել Անդրկասպյան երկրամաս և այնուհետև Աֆղանստան, Հարավային Իրան և Հյուսիսային Հնդկաստան՝ այդ երկրների մահմեդական ազգաբնակչությանը անգլիացիների դեմ ապստամբության կոչելու համար:

Բաթումի կոնֆերանսի ընթացքում ամենից ավելի ցայտուն կերպով դրսևորվեցին Թուրքիայի կառավարող վերնախավի նվաճողական ձգտումները: Բաթումի բանակցութունների ընթացքում թուրքական հրամանատարութունը շարունակում էր իրականացնել էնվերի վերը հիշատակված պլանը, որի արագ իրագործման համար թուրքական պատվիրակութունը մայիսի 14-ին վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով թուրքական զորքերի հրամանատարությանը տրամադրել Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղագիծը: Այդ լիտի պահանջը «հիմնավորվում» էր Իրանում անգլիացիների գործողութուններին հակազդելու նպատակով գինված ուժեր փոխադրելու «անհրաժեշտությամբ»: Մինչդեռ իրականում դա նշանակում էր ամբողջ Հայաստանը հանձնել թուրքական նվաճողների հոշոտմանը:

Ահա թե ինչ էր հաղորդել գեներալ Լոսովը մայիսի 15-ին Բեռլին՝ արտաքին գործերի նախարարությանը. «Մաքուր հայկական մարզեր հանդիսացող Ախալքալակի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ թուրքերի շափից դուրս պահանջները ցույց են տալիս, որ նրանք ձգտում են գրավել Բրեստի պայմանագրով շնախատեսված մարզեր, շահագոր-

ծել Կովկասը և իրականացնել հայերի լրիվ ոչնչացումն Անդրկովկասում:

Մայիսի 13-ին թուրքերը վերջնազրով պահանջեցին իրենց հանձնել Կարս—Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթգիծը, նախօրոք այդ մասին շայտնելով ինձ և շտապալով իմ համաձայնությունը<sup>1</sup>: (Ընդգծումը մերն է— Ն. Ս.):

«Քանի որ կովկասցիները շեն ցանկանում, որ թուրքերը մուտք գործեն Ադրկովկաս,— գրել է Լյուդենդորֆը,— իսկ էնվիր փաշան իր ղորամասերին ստիպում է ներխուժել Կովկաս, ըստ Լոսովի, հարկ կա, որ Բեռլինը միջամտի գործին և թույլ չտա, որ թուրքերը գրավեն Կովկասը»<sup>2</sup>:

Իհարկե և՛ Լոսովը և՛ Լյուդենդորֆը մտահոգված էին ոչ թե հայերի և Հայաստանի հարցով, այլ Գերմանիայի շահերով՝ Անդրկովկասում:

«Кавказское слово» թիրթր, անդրադառնալով թուրքերի վարած քաղաքականությանը, գրել է. «Թուրքերի գործունեության ուխտագրուժ բնույթը Անդրկովկասի համար ակնհայտ էր հենց սկզբից, այն օրվանից, երբ նրանք առաջինը փորձեր կատարեցին բանակցություններ վարել ռուսական զորքերի հետ, որոնք այն ժամանակ կանգնած էին Թուրքիայի խորքերում:

Եթե ուշադիր հետևենք իրադարձությունների զարգացման ընթացքին, պարզ կդառնա, որ թուրքերի բոլոր հաջողությունները, որոնք ուղեկցել են նրանց Տրապիզոնի, Երզրնկայի, էրզրումի, Սարիղամիշի, Բաթումի, Կարսի և այժմ էլ Ալեքսանդրապոլի գրավումով, հանդիսանում են ոչ այնքան ռազմական գործողությունների հաջող իրականացման՝ այդ բառի իսկական առումով, որքան դիվանագիտական թակարդների ու միջազգային մի շարք նորմաների, իրավունքների ու զինադադարի պայմանների խախտման արդյունք»<sup>3</sup>:

Թուրքական հորդանները հարձակման անցան Ալեքսան-

1. Из истории иностранной интервенции в Армении в 1918г. Документы. Е., 1970г, с. 16.

2. Людендорф Э. Мои воспоминания о войне 1914—1918гг. М., 1924, с. 215—216.

3. «Кавказское слово» 1918, № 97.

դըրապուլի վրա Բաթումի վերջնագիրը ներկայացնելուց անմիջապես հետո: Մայիսի 15-ի առավոտյան թուրքական զորքերը Ալեքսանդրապուլի շրջանում անսպասելիորեն հարձակում գործեցին հայկական կորպուսի վրա:

Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանը թուրքերի կողմից Ալեքսանդրապուլի գրավման մասին իր հաղորդման մեջ մատնանշում էր, որ թուրքական զորքերը ամենաանամոթ կերպով խախտեցին զինադադարը և, առանց որևէ նախազգուշացման, հարձակման անցնելով մայիսի 15-ին գրավեցին Ալեքսանդրապուլը: Թուրքերի ուխտադրուժ հարձակումը կազմալուծեց հայկական զորամասերի շարքերը և նրանք սկսեցին անկանոն ձևով նահանջել՝ հակառակորդին թողնելով մարտական ողջ տեխնիկան ու պարենի բոլոր պաշարները: Ալեքսանդրապուլի ջոկատի մեջ մտնող զինվորներից շատերը փախան Քիֆլիս<sup>2</sup>:

Ալեքսանդրապուլի ջոկատի հրամանատարի հաշվետվության համաձայն, քաղաքը հանձնելուց հետո, զինվորների զանգվածային դասալքության հետևանքով ճակատում զորքեր գրեթե չէին մնացել: 1-ին, 4-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը լքել էին իրենց դիրքերը: Դրանցից յուրաքանչյուրում հաշվվում էին ընդամենը 20—40 հոգի: Հրաձգային 3-րդ և Կարսի ամրոցի գնդերում կար ընդամենը 100 զինվոր<sup>2</sup>: Սուրմալուսի և էջմիածնի գավառների ազգաբնակչությունը թուրքերի կողմից Ալեքսանդրապուլը գրավելուց հետո շտապ կարգով էվակուացվում էր:

Ալեքսանդրապուլի անկումից հետո, երբ հայկական զորքերը հետ քաշվեցին Արփաշայից ու երկաթուղագծից այս կողմը, հայկական կորպուսի զորքերը կենտրոնացան երեք գլխավոր ուղղութիւնների վրա՝ Լոռվա, Ղարաքիլիսայի ու Երեանի: Նաղարբեկյանի բնորոշմամբ, հայկական զորամասերի վիճակը շարժական ծանր էր: Բանակում իշխում էր կատարյալ անկազմակերպվածութունը: «Իմ տրամադրության տակ դրված կորպուսի ամենասպառնալից հարցը,— հաղորդում էր նա,— ներկայումս զորքերի ապահովումն է

1. Տե՛ս 22 ԿԳՊԱ, ֆ. 200, գ. 19, ք. 19—50;

2. Տե՛ս նույն տեղը, ք. 44—48:

ամեն տեսակի պարենով: էվակուացիան ժամանակին կազմակերպելու անհնարինություն, գաղթականների կուտակման և կարսում ու Ալեքսանդրապոլում շարժական կազմի անբավարար լինելու, ինչպես և այդ երկու կիտերում թուրքերի կողմից հսկայական պաշարներ գրավելու հետևանքով կորսուսի արամադրություն տակ մնացած մարտական, իրային, պարենային ու ֆուրածային պաշարները բոլորովին աննշան են: Մեր զորքերը գրեթե հասել են հնարավոր նահանջի ծայրահեղ կետերին, հարկ է ընդունել, որ մեր դրությունը, առանց դրսից եկող օգնություն, անելանելի է, պատերազմի հետագա շարունակումը թուրքերի հետ անհնարին է դառնում<sup>1</sup>:

Այս բոլորը քաջ հայտնի էր թուրքական զավթիչներին, որոնք մայիսի 26-ին Բաթումում գտնվող անդրկովկասյան հանրապետության պատվիրակությանը նոր վերջնագիր ներկայացրեցին: Ինչպես նախկինում, թեւրքական հրամանատարությունը պատրվակ գտավ իր ագրեսիվ նոր գործողությունները արդարացնելու համար: Երբ նա ցանկանում էր գրավել Ալեքսանդրապոլը և մինչև Զուլֆա գնացող ամբողջ երկաթուղին, նա որպես պատրվակ մատնանշում էր դեպի Իրան՝ անգլիացիների դեմ զորքեր փոխադրելու անհրաժեշտությունը: Բայց հենց որ թուրքերը հասան այդ նպատակին, ոչ մի թուրք զինվոր չուղարկվեց Իրան: Գրավելով Հայաստանի տարածքի մեծ մասը, թուրքերն այժմ ձգտում էին նվաճել ողջ Անդրկովկասը և Հյուսիսային Կովկասը: Հետագա ինտերվենցիայի համար որպես պատրվակ նրանք այժմ հորինեցին հեքիաթ այն մասին, թե «հարյուր հազարավոր թուրքեր ու մահմեդականներ Բաքվում ու նրա շրջակայքում կրում են անխիղճ ավազակների՝ այսպես կոչված հեղափոխականների արյունոտ լուծը»<sup>2</sup>: Իրենց հավատակիցներին «փրկելու» համար թուրքական վերջնագրում առաջ էր քաշվում Անդրկովկասի երկաթուղային ողջ ցանցը թուրքական զորքերի արամադրության տակ դնելու պահանջը և Օս-

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 19, թ. 21—25: Ամբողջ Հայաստանի զավթմանը թուրք ագրեսորներին խանգարեցին Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաբաղի համաժողովրդական հերոսամարտերը: (Այդ մասին մանրամասն տե՛ս երկրորդ գլխում):

2. Նույն տեղը, գ. 11, թ. 32:

մանյան կայսրութեան ու Անդրկովկասյան հանրապետութեան միջև ընկած սահմանի նոր «ճշտման» անհրաժեշտութիւնը:

«Սահմանների ուղղման» տակ ենթադրվում էր Օսմանյան կայսրութեանը անհապաղ միացնել Նախիջևանի գավառը՝ ներառյալ Օրդուբադը, Շարուր-Դարալագյազի գավառի կեսը, Սուրմալուի մրողջ գավառը, էջմիածնի գավառը, Երևանի գավառի կեսը, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ քաղաքով և Ախալքալաքի ողջ նահանգը: Այս վերջնագրին պատասխանելու համար թուրքական պատվիրակութիւնը Բաթումում 72 ժամ ժամանակ տվեց՝ սկսած մայիսի 26-ի երեկոյան ժամը 8-ից:

Թուրքական նոր վերջնագիրը մահացու հարված էր Անդրկովկասյան սեյմին: Այստեղ սուր պայքար բորբոքվեց վերջնագրին պատասխան տալու հարցում: Մուսավաթականները գտնում էին, որ պետք է այն անհապաղ ընդունել, դաշնակները ամբողջովին մերժում էին թուրքական պահանջները, իսկ վրաց մենշևիկները ձգտում էին թուրքիայի հետ իրենց համար ձեռնտու հաշտութեան պայմաններին հասնել հայկական տարածքների հաշվին: Այդ տարաձայնութիւնները երևան եկան Բաթումի կոնֆերանսի հենց սկզբում: Տակավին թուրքերի կողմից նոր վերջնագիր ներկայացնելուց առաջ սեյմի պատվիրակութեան տարբեր ֆրակցիաները իրարից գաղտնի սեպարատ բանակցութիւններ էին վարում Խալիլ բեյի հետ:

Սեյմի արտաքին ու ներքին քաղաքականութեան սնանկութեան հետևանքով վերջինս ստիպված էր մայիսի 26-ին ընդունել որոշում, որտեղ ասված էր հետևյալը. «Քանի որ պատերազմի ու խաղաղութեան հարցում անդրկովկասյան առկա հանրապետութիւնը ստեղծած ժողովուրդների (այսինքն՝ սեյմում ներկայացված կուսակցութիւնների— Ն. Ս.) միջև ի հայտ եկան արմատական տարաձայնութիւններ, որոնց հետևանքով անհնարին է դառնում Անդրկովկասի անունից հանդես եկող մեկ հեղինակավոր իշխանութեան ելույթը,

սկզմը հաստատում է Անդրկովկասի մասնատման փաստը և իր լիազորութիւնները ցած է դնում»<sup>1</sup>։

Օգտավելով Անդրկովկասի անջատումից և առանձին հանրապետութիւնների հանդեա գալուց, թուրքական զորքերը շարունակում էին իրենց հարձակումը Հայաստանի ու Վրաստանի տարածքում։

Վրաց մենշեիկները Վրաստանն անջատ հանրապետութիւն հռչակեցին լոկ այն պատճառով, որպեսզի կարողանան թուրքիայի հետ սեպարատ բանակցութիւններ սկսել։ Այդ կապակցութեամբ Նոյ ժորդանիան ցինիկորեն հայտարարեց, որ «եթե հայերը խեղդվում են, ապա վրացիները պարտավոր չեն նրանց հետ միասին խեղդվել... Վրաստանը սովոր չէ թուրքերի տիրապետութեան տակ գտնվել, իսկ հայերը ընտելացել են դրան և եթե մահմեդականներն անջատվում են Անդրկովկասից, Վրաստանը կգնա նրանց հետևից»<sup>2</sup>։

Այս արտահայտութիւնը խիստ բնորոշ է. այն, վկայում է, որ Անդրկովկասի ազգայնական կուսակցութիւնների՝ մենշեիկների, դաշնականների ու մուսավաթականների միջև ո՛չ մի համերաշխութիւն ու միասնութիւն չկար։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր փրկվել իր հարևանի հաշվին։ Վրացական մենշեիկները հույս ունեին թուրքական զավթիչներից ազատվել՝ ամբողջ Հայաստանը նրանց հանձնելու միջոցով։

Ստ. Շահումյաք բանվորների, զինվորների և նավաստիների Բաքվի խորհրդի և Բաքվի գավառի մուսուլմանական գյուղացիութեան դեպուտատների համագումարի միացյալ հանդիսավոր նիստում 1918 թվականի մայիսի 29-ին արտասանած իր ճառում անարգանքի սյունին գամեց վրացական մենշեիկներին՝ նրանց դավաճանական վարքագծի համար. «Վրաստանի անկախութեան հայտարարումը վկայում

1. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 162. Վրացական ազգային խորհուրդը մայիսի 26-ին Վրաստանը հռչակեց անկախ հանրապետութիւն։ Մայիսի 28-ին Քիֆլիսում գտնվող Հայկական կենտրոնական ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ հանրապետութիւն, և դաշնակցական կառավարութիւնը հունիսի 17-ին մեկնեց Երևան։ Մայիսի 27-ին մուսավաթականները Ադրբեջանը հայտարարեցին անկախ հանրապետութիւն, որի կառավարութիւնը հաստատվել էր Գլանջում։

2. 22 կողմ, ք. 200, գ. 23, թ. 101։

է մենշևիկներին նոր ոճրագործութեան մասին: Դա ընդուն-  
ցիոն ելք չէ ստեղծված դրութիւնից: Դա դավաճանութեան  
մի նոր փորձ է հանդեպ Վրաստանի հարևան հայ ժողովրդ-  
դի, — աներևակայելի, անամոթ դավաճանութիւն: Նրանք  
ժանր վիճակ ստեղծեցին Անդրկովկասում ու այժմ լվանում են  
իրենց ձեռքերը»<sup>1</sup>:

Թուրքական նվաճողներն ամենևին էլ մտադիր չէին բու-  
վարարվել միայն Հայաստանի գրավումով, որի վրա հույս  
էին դրել վրացական մենշևիկները: Էնվիրը գտնում էր, որ  
նրան առանց դժվարութեան կհաջողվի հափշտակել ողջ Կով-  
կասը, այդ թվում և Վրաստանը: Չնայած Չխենկելու (որն  
արդեն սեյմի պատվիրակութեան նախագահը չէր, այլ գըլ-  
խավորում էր Վրաստանի մենշևիկյան կառավարութեան  
պատվիրակութիւնը) հայտարարութեանը այն մասին, որ  
մայիսի 26-ի վերջնագիրը հնարավոր չէ կիրառել այդ նո-  
րաստեղծ կառավարութեան նկատմամբ, իսկիւ բեյը պնդում  
էր, որ վերջնագիրը վերաբերում է Անդրկովկասի ազգայնա-  
կան բոլոր կառավարութիւններին՝ ներառյալ Վրաստանը, և  
նա համաձայնվեց վերջնագրի ժամկետը երկարաձգել միայն  
24 ժամով: Իսկիւ բեյի ու Չխենկելու միջև տեղի ունեցած  
երկարատև զրազրութիւնից հետո մենշևիկյան կառավարու-  
թեան նախագահ Ն. Ռամիշվիլին մայիսի 31-ի նոտայում  
հայտարարեց, որ Վրաստանն ընդունում է թուրքական վերջ-  
նագիրը:

1918 թվականի հունիսի 4-ին Բաթումում երկու կողմերի  
միջև կնքվեց պայմանագիր «հաշտութեան ու բարեկամու-  
թեան մասին»: Այդ պայմանագրի համաձայն, մենշևիկյան  
կառավարութիւնը ճանաչում էր իսկիւ բեյի կողմից մայիսի  
26-ին ներկայացված վերջնագրի մեջ նշված սահմանները՝  
Անդրկովկասի ու Օսմանյան կայսրութեան միջև: Դա նշանա-  
կում էր, որ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հաստատ-  
վում է այն պետական սահմանը, որը գլխութիւն ունի մինչև  
1829 թվականի Ադրիանապոլսի հաշտութեան պայմանագի-  
րը: Այսպիսով, վրացական մենշևիկները Օսմանյան կայս-

1. Ստ. Եսեփյան, Երկեր, հ. 3, էջ 221:

րությանը զիջեցին Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները՝ բացի Աղխուրի, Աբասթումանի ու Ջեքարի շրջաններից:

Նույն օրը՝ հունիսի 4-ին, Օսմանյան կայսրության ու մենշևիկյան Վրաստանի միջև կնքված լրացուցիչ պայմանագրով վերջինս պետք է անհապաղ ձեռնամուխ լիներ իր զորքերի մեծ մասի զորացրմանը: Նույնիսկ այն աննշան զինված ուժերը, որոնք Վրաստանին թույլ էր տրվում պահել, վերջինս պետք է զինվորական կայազորների միջև բաշխեր ըստ թուրքական հրամանատարության հայեցողության: Ընդ որում, Վրաստանի սահմանների «պաշտպանությունը» թուրքական հրամանատարությունն իր վրա էր վերցնում: Վրաստանի կառավարությունը համաձայնում էր այն բանին, որ պետք է թուրքական բանակը ամեն կարգի ռազմական փոխադրումներ ու զորքերի տեղափոխումներ կատարի Վրաստանի երկաթուղագծերով: Այդ փոխադրումները «պահովելու» համար զլխավոր կայաններում թույլատրվում էր թուրքական զորքերի ներկայությունը:

Նույն լրացուցիչ պայմանագրով վրացական կառավարությունը պարտավորվում էր «պատշաճ միճակում պահել և անապարհները, շարժական ու անշարժ կազմը, արագ կերպով նորոգել բոլոր վնասվածքները, որոնք կարող էին առաջ դալ պատահական ձևով կամ կանխամտածված»<sup>1</sup>: Ստրկացուցիչ այս համաձայնագրերը ստորագրելով, վրացական մենշևիկները փաստորեն երկիրը դնում էին քաղաքական ու տնտեսական լրիվ կախվածության մեջ Օսմանյան կայսրությունից և վերածում այն երիտթուրքական դավթիչների պլանցդարմի՝ Բաբուն գրավելու և այնտեղ խորհրդային իշխանությունը վերացնելու համար: Պետք է նշել, որ այդ բանին բացահայտորեն ձգտում էին հենց իրենք՝ վրացական մենշևիկները:

Թուրքական վերջնագիրը ընդունվեց նաև նորակազմ դաշնակցական կառավարության կողմից: Թուրքական դավթիչները Հայաստանի վզին փաթաթեցին նոր, առավել ծանր պայմաններ: Հունիսի 4-ի Բաթումում թուրքական ու դաշ-

1. S6'u Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, № 176.

հակցական կառավարության պատվիրակությունների միջև կնքված «հաշտության և բարեկամության» պայմանագրի համաձայն, բացի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումից հետո զավթած մարզերի, Թուրքիան խլում էր իր օգտին նաև այն տարածքները, որոնք պայմանգիրը կնքելու ժամանակ գրավված էին թուրքական զորքերի կողմից:

Երևանի նահանգից Թուրքիային անցան Սուրմալուի ողջ գավառը, Ալեքսանդրապոլի ու էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Պարալագյազի գավառների փոքր մասը: «Անկախ» Հայաստանի տարածքը կազմելու էր մոտ 11000 քառ. կմ<sup>2</sup> (Նոր Բայազետի շրջանը՝ բացառությամբ Բասարգեշարի հարավ-արևելյան մասի, Երևանի, էջմիածնի ու Ալեքսանդրապոլի շրջանների մի մասը): Այդ տարածքի վրա բնակվում էին մոտ 230 հազար հայեր, 80 հազար մահաճեղականներ (դրանցից՝ 5000 քրդեր), 5000 եզդիներ և 6000 ալլազգիներ, ընդամենը՝ 321 հազար մարդ: Այսպիսով, հայկական ազգաբնակչությունը այդ փոքրիկ «անկախ» Հայաստանում կազմում էր Կովկասի ողջ հայ ազգաբնակչության ընդամենը 1/8 մասը<sup>1</sup>: Ընդ որում, այդ տարածքի վրա հավաքված գաղթականների թիվը գերազանցում էր տեղի ազգաբնակչությանը: Նրանք զուրկ էին ապաստարանից, շունէին գոյության որևէ միջոց և սովամահության եզրին էին գտնվում: Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս փախած գաղթականների ընդհանուր թիվը կազմում էր 300 հազար մարդ:

Այսպիսով, թուրքական զավթիչները Անդրկովկասից պոկեցին 38 հազար քառ. կմ տարածություն՝ մեկ միլիոն 250 հազար ազգաբնակչությամբ: Դրանից վրաստանը կորցնում էր 10 հազար քառ. կմ տարածք՝ 350 հազար ազգաբնակչությամբ, Հայաստանը՝ 28 հազար քառ. կմ՝ 900 հազար ազգաբնակչությամբ: 38 հազար քառ. կմ տարածությունից 12 հազար 421 քառ. կմ կազմող տարածքը՝ 655 հազար ազգաբնակչությամբ Օսմանյան կայսրությանն էր անցնում Բաթումի պայմանագրերով: Ընդամենը երիտթուր-

1. ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 1277, Թ-14:

քերը Անդրկովկասից հասիշտակեցին նրա տարածքի 20,6 տոկոսը և ազգաբնակչության 18,5 տոկոսը<sup>1</sup>։

Սակայն այդքանն էլ չբավարարեց թուրք ղավթիչներին։ Ինչպես վերը նշվեց, նրանք ծրագրել էին նվաճել ողջ Անդրկովկասը և Հյուսիսային Կովկասը։ Այն բանից հետո, երբ թուրքերին հաջողվեց Բաթումում վրացական մենշևիկներին ու դաշնակներին պարտադրել հիշյալ ստրկացուցիչ համաձայնագրերը և դրանց հիման վրա Անդրկովկասի գլխավոր երկաթուղագծերը իրենց ձեռքն առնել, թուրքական նվաճողները գտնում էին, որ ողջ երկրամասի գրավումը արդեն հեշտ իրականացվելիք մի խնդիր է դառնում։ Ուստի թուրքական զորքերը շարունակում էին շարժվել դեպի Անդրկովկասի խորքը՝ երկու ուղղություններով՝ Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա—Թիֆլիս և Ղարաքիլիսա—Դիլիջան—Աղստաֆա—Բաքու։

\* \* \*

Անդրկովկասի նկատմամբ երիտթուրքերի նվաճողական պլանները չէին համընկնում նրանց դաշնակիցների՝ գերմանական իմպերիալիստների մտադրությունների։ Վերջիններս իրենք էին ձգտում իրենց տիրապետությունը հաստատել վրաստանում ու Ադրբեջանում, իրենց ձեռք գցելով, այդպիսով, վրացական մանգանն ու պղինձը և Բաքվի նավթը, որի կարիքն այնքան սուր զգում էր Գերմանիայի ռազմական արդյունաբերությունը։ Հենց դա էր Թիֆլիսում գերմանական ներկայացուցիչ գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտեյնի հիմնական խնդիրներից մեկը\*։

1. Տե՛ս Завриев Д. С. К новейшей истории северо-восточных вилайетов Турции. Тбилиси, 1947. с. 70—71.

\* Կրես ֆոն Կրեսենշտեյնը մինչև 1918 թվականի վերջը Պաղեստինում գործող բանակի հրամանատարն էր։ Մյուսմանի բնորոշմամբ, նա Օսմանյան կայսրությունում 4 տարվա ռազմական ծառայության ընթացքում «բացի ռազմական հմտությունից հանդես բերեց նաև դիվանագիտական ակներև կարողություններ» (Mühlmann C. Das Deutsche-türkische Waiienbündnis im Weltkrieg, Leipzig, 1940, s. 197)։ Ուստի էյուզենզորքը Կրես ֆոն Կրեսենշտեյնի ուղարկեց Թիֆլիս, որտեղ նա եռանդուն գործունեություն ծավալեց գերմանական ազդեցությունն Անդրկովկասում ուժեղացնելու ուղղությամբ։

Քառամյա պատերազմի հետևանքով գերմանական էկո-  
նոմիկայի ուժեղ քայքայման ու գերմանական ռազմական մե-  
քենայի նկատելի թուլացման պայմաններում Բեռլինում ար-  
տակարգ կարևոր նշանակություն էին տալիս Անդրկովկասի  
հումքային ռեսուրսների օգտագործման խնդրին: Այդ իսկ  
պատճառով էլ ողջ Կովկասը նվաճելու հրիտիությունը պա-  
րազուխների ձգտումը ամենևին ձեռնադրել էր նրանց գերմա-  
նական դաշնակիցներին: Դրանով էր բացատրվում Գերմա-  
նիայի ու Թուրքիայի միջև Անդրկովկասի նկատմամբ տար-  
վելիք քաղաքականության հարցում ծագած դիվանագիտա-  
կան այն սուր պայքարը, որ բռնկվեց հատկապես Բաթումի  
կոնֆերանսում:

Բաթումի կոնֆերանսում գերմանական ներկայացուցիչ  
Լոսովի ներկայությունը, Թուրքիայի ու անդրկովկասյան կա-  
ռավարության միջև ընթացող բանակցություններին իբրև  
միջնորդ հանդես գալու նպատակով, բացատրվում էր հենց  
նրանով, որ Գերմանիան ցանկանում էր Թուրքիային խան-  
գարել իրականացնելու Անդրկովկասի նկատմամբ մշակած  
պլանները: Որ այդ հանգամանքը, իրոք, ձեռնադրել էր Վրաս-  
տանի կառավարողներին, անմիջապես նշեց Նոյ Ժորդանիան.  
«Գերմանական պատվիրակության ժամանումը Բաթում,—  
ասաց նա 1918 թվականի մայիսի 25-ի իր ղեկուցման մեջ,  
— թուրքերի համար սոհաճ մի անակնկալ էր, որոնք Անդր-  
կովկասի հետ բանակցությունները դիտում էին որպես  
իրենց մասնավոր գործը»<sup>1</sup>:

Բաթումի կոնֆերանսում գերմանական պատվիրակու-  
թյունը ձգտում էր թուրքերի տարածքային հավակնություն-  
ները սահմանափակել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի  
Անդրկովկասին վերաբերող հոդվածներով: Թուրքական բա-  
նակի գլխավոր շտաբի պետի տեղակալ Ֆոն Սեկտին մայիսի  
15-ին հղած իր հեռագրում Լյուդենդորֆը նրան առաջարկում  
էր «էնվեր փաշային անհապաղ հետ պահել այն պահանջ-  
ներին, որոնք Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված  
տարածքներից այն կողմն են անցնում»<sup>2</sup>:

1. «Ворьба» 26.V. 1918 г.

2. Mühlmann C., նշվ. աշխ., S. 198.

Գերմանացիները պարզորոշ կերպով ցանկանում էին իրենց ազդեցութեան տակ պահել Անդրկովկասի այն տարածքները, որոնք տակավին նվաճված չէին թուրքերի կողմից: Սակայն թուրքական պատմիրակուսթյունը, ղեկավարվելով էնվեր փաշայի ցուցումներով, Բաթումի կոնֆերանսում շարունակում էր պնդել ողջ Անդրկովկասը թուրքական զորքերի կողմից օկուպացիայի ենթարկելու պահանջի վրա<sup>1</sup>: Բացի Անդրկովկասի նկատմամբ ունեցած սեփական զավթողական ձգտումներից, գերմանական բանակի զլխավոր հրամանատարութեան բացասական վերաբերմունքը Կովկասը նվաճելու էնվերի պլանի նկատմամբ բացատարվում էր խորհրդային կառավարութեան կտրուկ բողոքներով: Վերջ մեջ բերվեց 1918 թվականի մայիսի 15-ի ՌեՅՍՂ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի նոտան: Անկասկած է, որ մայիսի 15-ին ֆոն Սեկտին տրված հրահանգը զգալիորեն թելադրված էր խորհրդային կառավարութեան դիվանագիտական այդ ելույթով:

Բացի դրանից, թուրքական խոշոր ուժերի ներխուժումը Անդրկովկաս նկատելիորեն թուլացնում էր գերմանա-թուրքական զորքերի դիրքերը այլ ճակատներում՝ Միջագետքում: Սիրիայում ու Իրանում, ուր անգլիացիների ու արաբ ապստամբների ճնշումը զնալով ուժեղանում էր: Մայիսի 20-ին Լյուդենդորֆը նորից հեռագրեց Սեկտին. «Ես կրկնում եմ իմ պահանջը, այն է՝ թուրքերը իրենց ուշադրութեանը դարձնեն Պարսկաստանի ու Միջագետքի վրա»<sup>2</sup>: Սակայն երիտթուրքերը բացահայտ անհնազանդութեան էին հանդես բերում: Ամբողջովին կլանված լինելով իրենց մեծապետական, զավթողական պլաններով, նրանք ուշադրութեան չէին դարձնում Բեռլինից եկող բողոքների վրա: Բաթումի կոնֆերանսում Գերմանիայի ներկայացուցիչ Լոսովը հաղորդում էր Լյուդենդորֆին. «Թուրքերը հատկապես ձգտում են Բաքվի ու Վլադիկավկազի կողմը, ցանկանում են նվաճել ողջ Կովկասը»<sup>3</sup>: Հետագայում Լյուդենդորֆը իր հիշողութեանն արձանագրում,

1. Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 221:  
2. Mühlmann C. նշվ. աշխ., S. 198.  
3. Նույն տեղը, էջ 199:

ոչ առանց դառնության, գրում էր հետևյալը. «էնվեր փաշան ու բուրճական կառավարությունը ավելի շատ մտածում էին Կովկասում իրենց պանիսլամական նպատակների իրականացման, քան Անգլիայի հետ պատերազմելու մասին: Այդ պատճառով մենք ակամայից հակասություն մեջ գտնվեցինք այն նպատակների հետ, որոնք հետապնդում էին թուրքերը...»<sup>1</sup> (ընդգծում մերն է— Ն. Ս.):

Մայիսի 25-ին Լյուդենդորֆը ստիպված էր նորից դիմել ֆոն Սեկտին, կոչ անելով նրան «իր ազդեցությունն օգտագործել, որպեսզի թուրքիան դադարեցնի իր հետագա ռազմական գործողություններն Անդրկովկասում»: Այնուհետև, հիշատակելով Ուրմիա լճի արմուտքում թուրքական 6-րդ դիվիզիայի և Միջագետքում՝ թուրքական 6-րդ բանակի պարտության մասին, Լյուդենդորֆը նախազգուշացնում էր, որ եթե թուրքական կառավարությունը իր քաղաքական ու տրեսեսական ձգտումներից ելնելով հապաղի պաշտպանելու իր սեփական տարածքը և «մեզ համար դժվարություններ հարուցի Կովկասում, որտեղից մենք կարող էինք հանդես գալ անգլիացիների դեմ, ապա նա շպետք է հուսա, որ մենք կարող ենք մեր հաշվին հետագայում նրան վերադարձնել իր սեփական տարածքը»<sup>2</sup>:

Այդ պահանջներին էնվեր փաշան պատասխանում էր կեղծ բացատրություններով, որ իրր թուրքական զորքերի առաջխաղացումը Անդրկովկասում անհրաժեշտ է բոլշևիզմի ազդեցության տարածման վտանգը կանխելու, ինչպես նաև երկրամասի մահմեդականների նկատմամբ հայկական «դաժանություններին» վերջ դնելու համար, մի բան, որին թուրքիան չի կարող «անտարբեր» նայել<sup>3</sup>: Ըստ որում, թուրքական փոխգնհերալիսիմուսը գերմանա-թուրքական հարաբերությունների սրման ամբողջ մեղքը բարդում էր գերմանական բանակի գլխավոր հրամանատարության վրա:

Չափազանց կտրուկ ու սպառնալից տոնով Լյուդենդորֆը գրում էր էնվեր փաշային հետևյալը. «Զեմ ցանկանում ձեզ-

1. Людендорф, Мои воспоминания о войне 1914—1918 гг. т. 2, М., 1924, с. 187—188.

2. Mühlmann C., նշվ. աշխ., S. 198—199.

3. Տե՛ս նույն տեղը, էջ 199:

նից թաքցնել իմ դարմանքը այն կապակցութեամբ, որ իբր գերմանական հրամանատարութիւնն է դարձել կովկասում ծագած տարածայնութիւնների պատճառը: Թուրքիան իրեն ինքնուրույն ձևով է պահում՝ ուշադրութիւն չդարձնելով դաշնակիցների և Բրեստում կնքված պայմանագրի այն հոդվածների վրա, որոնք վերաբերում են Անդրկովկասին: Գերմանիան արդեն մատնանշել է նման գործողութիւնների հետևանքները... և եթե Թուրքիան շահագի Բրեստի պայմանագրով գծված սահմանները, Գերմանիան իրեն կվերապահի հետագա գործողութիւնների ազատութիւնը: Գերմանիան չի ճանաչում Թուրքիայի ու անդրկովկասյան պետութիւնների միջև կնքված այն պայմանագրերը, որոնք ստորագրվել են՝ շրջանցելով Գերմանիային, Ավստրիային ու Բուլղարիային»<sup>1</sup>:

Էնվերը ոչ մի ղիջողականութիւն հանդես չբերեց, ուստի Լյուդենդորֆը Բաթումի կոնֆերանսից հետ կանչեց գերմանական ներկայացուցիչներին: Բեռլինում ոչ միայն չէին ուղում ճանաչել երիտթուրքական կառավարութեան կողմից Հայաստանին ու Վրաստանին պարտադրված համաձայնագրերը, այլև վրացական մենշևիկներին ու դաշնակներին ամեն կերպ դրդում էին հրաժարվել դրանք վավերացնելուց: Բաթումի կոնֆերանսում հայկական հաշտութեան պատվիրակութեան նախագահ Համո Օհանջանյանը, որը Բեռլին էր ուղարկվել գերմանական կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու նպատակով, այնտեղից հաղորդում էր Երևան հետևյալը. «Գերմանիան արդեն պաշտոնապես տեղեկացրել է Թուրքիային, որ նա Բաթումի պայմանագիրը չեղյալ է համարում, հետևապես ո՛չ մի խոսք չի կարող լինել նրա վավերացման մասին (Հայաստանի կողմից— Ս. Ս.)»<sup>1</sup>:

Ո՛չ Լյուդենդորֆի հեռագրերը, ո՛չ էլ ստեղծված դրութեան լրջութիւնը հիշեցնող դիմումները թուրքական հրամանատարութեանը՝ ի վիճակի չէին խանգարելու թուրքերին՝ նվաճելու ողջ Անդրկովկասը: Հինդենբուրգը ստիպված էր միջամտելու այդ կոնֆլիկտին: Հունիսի 9-ին ուղարկված հեռագրում նա էնվերից կտրականապես պահանջում էր դատար-

1. Mühlmann C., նշվ. աշխ., S. 200.

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 6, թ. 39—55;

կել Անդրկովկասի այն տարածքները, որոնք թուրքական զորքերը գրավել էին ի խախտումն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի և Միջագետք ու Հյուսիսային Պարսկաստան փոխողել Անդրկովկասում գտնվող թուրքական բոլոր ուժերը<sup>1</sup>։

Սակայն այս պահանջն էլ մերժվեց Ստամբուլի կառավարող շրջանների կողմից։ «Առաջին անգամ,— վկայում է Մյուլմանը,— գերմանա-թուրքական քառամյա եղբայրության ընթացքում հարաբերությունների խղման վտանգ առաջացավ՝ կովկասում տարվելիք քաղաքականության հարցերում առկա հակասությունների պատճառով։ Կովկասում գտնվող գերմանական ու թուրքական զորքերը իրար նկատմամբ թրջնամարար էին տրամադրված։ Եղան փոխադարձ հրաձգություն դեպքեր, գերմանական պահակները գերի վերցվեցին թուրքերի կողմից։ Գործը բացահայտ խզման ու պատերազմի շահասակ միայն փոխադարձ զիջումների շնորհիվ, որը բացատրվում էր պատերազմի մյուս ճակատներում ստեղծված լարված իրադրություններով<sup>2</sup>։

Հունիսի վերջին երրորդ բանակի գլխավոր հրամանատար Վեհեր փաշան հետ կանչվեց և նրա տեղը նշանակվեց էսադ փաշան, որը գեներալ Լիման Ֆոն Սանդերսի հրամանատարություն ներքո կռվել էր Գալիպոլիի թերակղզում և սերտորեն համագործակցել այնտեղ գերմանական սպաների հետ։ Սակայն այս միջոցառմամբ դաշնակիցների միջև պառակտման վտանգը չվերացվեց, այլ միայն որոշ ժամանակով հետաձգվեց։ Գերմանացիները, ինչպես և նախկինում, ձրգտում էին իրենց ձեռքը դցել Անդրկովկասի նավթային հարստությունները։ Իսկ թուրքերը բացահայտորեն աչք էին դրել Բաքվի վրա, թեև նրանք խոսքով հայտարարում էին, որ հրաժարվել են այդ քաղաքի նկատմամբ ունեցած հավակնություններից<sup>3</sup>։

Թուրքական հրամանատարությունը, հենվելով կովկասում կենտրոնացված իր ուժերի հսկայական թվական գերակշռություն վրա՝ գերմանական փոքրաթիվ զորքերի նկատմամբ (առ 1918 թվականի օգոստոսի 20-ը Վրաստանում հաշվվում էին ընդամենը 214 գերմանական սպաներ ու 5050 զինվորներ)<sup>4</sup>, շարունակում էր զարգացնել իր հարձակումը

1. Տե՛ս Mühlmann C., նշվ. աշխ., S. 201—202.

2. Mühlmann C., նշվ. աշխ., S. 205.

3. Տե՛ս նույն տեղը։

4. Նույն տեղը, էջ 210։

Գլանջա—Բարու ուղությամբ: Գերմանացիները ըստ հնարավորին ձգտում էին եթե ոչ ուղղակի խոչընդոտել, ապա գոնե ժամանակավորապես կասեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Բաքու:

Թուրքական ուղմական պատմաբանները՝ հետագայում բազմիցս մեղադրել են գերմանացիներին այն բանի համար, որ նրանք 1918 թվականին, թուրքերի Անդրկովկաս ներխուժման ժամանակամիջոցում, վերջիններիս խոչընդոտներ են հարուցել: Այսպես, այդ ինտերվենցիայի մասնակից զնդապետ Ռյուշտյուն իր աշխատության մեջ մանրամասն նկարագրելով թուրքական 5-րդ դիվիզիայի հարձակումը Բաքվի վրա, մատնանշում է հետևյալը. «Գերմանացիները մեր դաշնակիցները չէին իրենց կովկասյան քաղաքականության մեջ: Նրանք կովկասյան գործերում օսմանների համար հատուկ դժվարություններ էին ստեղծում և մեր դեմ գրգռում Կովկասի ժողովուրդներին՝ վրացիների գլխավորությամբ»: «Գերմանիան, — գրում էր այնուհետև Բյուշտյուն, — չէր ցանկանում օսմանների ձեռքին տեսնել Կովկասի ամենահզոր ու նավթով հարուստ քաղաքը՝ Բաքուն»<sup>1</sup>: Նա ընդգծում էր, որ «Գերմանիան իսկապես Կովկասում ինքնուրույն՝ Թուրքայից անջատ քաղաքականություն է վարում: Այդ ինքնուրույնությունը նա հանդես բերեց իր հավատարիմ դաշնակիցների՝ օսմանների համար վերին աստիճանի աննպաստ ու ծանր ժամանակ: Նա խանգարում էր օսմանյան զորամասերի, ուղմական հանդերձանքի, առանձին սպաների և այլ անձնավորությունների անցմանը Բաթում—Թիֆլիս—Գլանջա երկաթուղագծով: Արշավանքը դեպի Բաքու որոշ ժամանակով հետաձգվեց գերմանացիների անհագուրդ ագահության պատճառով»<sup>2</sup>:

Չունենալով բավարար ուժեր Բաքվի գրավման գործում թուրքերից առաջ անցնելու համար, գերմանական գլխավոր հրամատարությունը նոր ճնշման դիմեց: Օգոստոսի 4-ին Լյուդենդորֆը հեռագրում էր էնվեր փաշային, որ եթե նա անմիջապես շղադարեցնի թուրքական զորքերի հարձակումը Բաքվի վրա և նրանք նախկին դիրքերը չվերադառնան, ապա գերմանական հրամանատարությունը ստիպված կլինի կայգերին խնդրել, որ նա գերմանական ներկայացուցիչներին հետ կանչի թուրքական բանակի գլխավոր հրամանատարությունից: «Ծս, — շարունակում էր Լյուդենդորֆը, — չիմ

1. Miralay Rüstü. Büyükharpate Baku yollarında Kafkas piyade fırkasi (Sb'ın «Askeri mecmuanın tarih kısıntı». İstabnül, 1934, sayı 34, s. 221).

2. Նույն տեղը, էջ 41:

հանդուրժի, որպեսզի թուրքական պատասխանատու անձանց բացահայտորեն ուխտադրուժ վարքագծի պատճառով Ռուսաստանի հետ նոր պատերազմի վտանգ առաջ գա»<sup>1</sup>:

Գերմանական ռազմամուկները իսկապես երկյուղ էին կրում արագորեն ամրապնդվող երիտասարդ խորհրդային հանրապետության հետ բախվելու վտանգից, որը, ինչպես տեսանք, վճռականորեն բողոքեց գերմանական իմպերիալիզմի կրտսեր պարտնյորների՝ թուրքական նվաճողների կողմից Անդրկովկասում ձեռնարկած ինտերվենցիայի դեմ: Սակայն, երբ 1918 թվականի հուլիսին Արևմտյան ճակատում Անտանտի զորքերը վճռական հարձակման անցան և համաշխարհային պատերազմի գլխավոր ռազմաճակատում Գերմանիայի համար օրհասական վիճակ ստեղծվեց, գերմանական գլխավոր հրամանատարութունը որոշեց շարել կոնֆլիկտը իր թուրք դաշնակցի հետ:

Երբ Հյուսիսային Պարսկաստանից ժամանած անգլիական ուժերը, օգտվելով էսէնների և մենշևիկների դավաճանութունից, օգոստոսի 4-ին գրավեցին Բաքուն, գերմանական հարամանատարութունն անմիջապես փոխեց իր տակտիկան: Լյուդենդորֆի հրամանով Կրես ֆոն Կրեսենշտեյնի տրամադրության տակ Ուկրաինայից Սև ծովով Կովկաս փոխադրվեց հեծելազորային և հետևակային մեկական բրիգադ: Սեպտեմբերի կեսերին այդ օժանդակ ուժերի մեծ մասը ժամանեց Վրաստան<sup>2</sup>: Ընդամենը՝ Թիֆլիսում մինչ այդ գտնվող 5 հազարանոց ջոկատի հետ միասին այդ ժամանակ Վրաստանում կային շուրջ 15 հազար գերմանական զինվորներ<sup>3</sup>:

Սեպտեմբերի 15-ին Լյուդենդորֆը Կրես ֆոն Կրեսենշտեյնին արձակեց հետևյալ հրամանը. «Անհրաժեշտ է գրոհ նախապատրաստել Բաքվի դեմ և զեկուցել պատրաստ լինելու մասին... Թուրքական զորքերի կամ Ադրբեջանի զորքերի մասնակցութունը պետք է լինի միայն այն շափով, ինչ շափով, որ դա անհրաժեշտ է հաջողութունն ապահովելու համար»<sup>4</sup>:

Մինչ գերմանացիները զբաղված էին այդ պատրաստութուններով, թուրքական զորքերը, արհամարհելով իրենց դաշնակցի պահանջները, շարունակում էին հարձակումը: Սեպտեմբերի 15-ին թուրքերը մտան Բաքու և գերմանական գլխավոր հրամանատարութունը, այդպիսով, կանգնեց կա-

1. Mühlmann C., նշվ. աշխ., S. 297.

2. Տե՛ս Mühlmann C., նշվ. աշխ., S. 210.

3. Տե՛ս История гражданской войны в СССР. т. 3. М., 1958 с.238

4. Mühlmann C., նշվ. աշխ., S. 210.

տարված փաստի առջև: Բաքվի գրավումը թուրքերի կողմից ծանր հարված էր Գերմանիայի հետապնդած շահերին Անդրրկովկասում: Ձախողվեցին Բաքվի նավթին տիրանալու վերջին հույսերը: Մյուսմանը հաստատում է, որ 1918 թվականի աշնանը «նկատելի դարձավ թուրքական հրամանատարության նվազ բարեկամական վերաբերմունքը Կովկասում գտնվող իրենց գերմանական դաշնակիցների նկատմամբ: Նուրի փաշան (Բաքուն օկուպացրած թուրքական զորքերի հրամանատարը— Ս. Ս.) մերժեց գեներալ Ֆոն Կրեսի առաջարկը՝ աջակցել ռազմական շինարարության գործին Բաքվում»: Թուրքերը, բողոքում էր Մյուսմանը, բոլորովին հաշվի չէին նստում գերմանական պլանների հետ Բաքվում<sup>2</sup>:

Անդրկովկասում Թուրքիայի ու Գերմանիայի միջև առկա խոր հակասությունների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը 1918 թվականի սեպտեմբերին Ստամբուլից հաղորդում էր Երևան հետևյալը. «Գերմանիայի ու Թուրքիայի ուղիներն Անդրկովկասում խաչաձևվում են և իրարից բաժանվում: Նրանք, Կոմս Շուկենբուրգի արտահայտությամբ, դաշնակիցներ, բայց և միևնույն ժամանակ մրցակիցներ են»<sup>3</sup>:

Գերմանա-թուրքական պայքարը Անդրկովկասում տիրապետություն հաստատելու համար, ժամանակին լայն արձագանք գտավ ինչպես թուրքական, այնպես էլ գերմանական մամուլում: Թուրքական մամուլը իր դժգոհությունն էր հայտնում Անդրկովկասում Գերմանիայի վարած քաղաքականությունից: Այսպես, Ստամբուլում լույս տեսնող «Վաքըթ» թերթը գրում էր. «Մեր գլխավոր նպատակը Անդրկովկասի սահմանների պահպանումն է, Ռուսաստանի ու մեր միջև այնպիսի ամուր պատենշի ստեղծումը, որը կարողանար կատարել բուֆերի դեր՝ ի դեմս նորաստեղծ անդրկովկասյան անկախ պետությունների: Եթե մեր դաշնակից Գերմանիան չուղղի իր կողմից թույլ տրված սխալը, ապա այն ժամանակ Թուրքիան ուժեղագույն պետություն դարձնելու վերաբերյալ նրա տված երաշխիքները սին խոսքեր

1. Նույն տեղը:

2. Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, (անդամներ Ա. Խատիսյան և Մ. Պապաշանյան) պատվիրակություն ուղարկեց Կ. Պոլիս՝ բանակցելու թուրքական կառավարության հետ Բաթումի դաշնագրի փոխարեն նոր դաշնագրի կնքելու համար: Ամիսներ տևող բանակցությունները դրական արդյունք չտվին, վրա հասավ ընդհանուր զինադադար: Անտանտի հաշտությամբ, հայերի համար ստեղծվեց նոր կացություն, նոր հեռանկարներ ու նոր հույսեր:

կմնան»<sup>1</sup>: Ավելի ուշ, այդ նույն թերթը հաստատում էր, որ «Գերմանիան, ըստ երևույթին, մտադիր է մի հարվածով խորտակել այն վստահությունը, որ նրա կողմից ստեղծվել էր երկար տարիների ընթացքում»<sup>2</sup>:

Նրա թուրքերի օրգան «Բզդամ» թերթը 1918 թվականի սեպտեմբերի 11-ին գրում էր. «Թուրքիան, որը ծանր զոհաբերություններ է կատարել հանուն ընդհանուր գործի, իրավունք ունի պահանջելու՝ այս անգամ դաշնակիցների շահերը հաշվի չառնելով, պաշտպանել իր սեփական շահերը Կովկասում»<sup>3</sup>:

«Ջաման» թերթը «Մեր խաղաղ քաղաքականությունը Կովկասում» հոդվածում կշտամբում էր դաշնակիցներին այն բանի համար, որ նրանք խոչընդոտեն երևցող թուրքերին՝ Կովկասի նկատմամբ նրանց պլաններն իրականացնելու գործում: Հոդվածի հեղինակը նշում էր. «Հարկ չկա, որ Թուրքիան տարվի իր դաշնակիցների մոլորություններով: Նա պետք է աւմեն հնարավոր բան անի Կովկասը գրավելու համար...»<sup>4</sup>:

«Պրավդան» մատնանշում էր, որ Կովկասում գերմանական ու թուրքական քաղաքականության միջև առկա տարաձայնությունները «մինչև ժամանակ ապացուցում են, թե որչափ անկայուն են Կովկասի վերաբերյալ ընդունված սուսանձին համաձայնագրերը»<sup>5</sup>:

«Մշակ» լրագիրը գրում էր, որ «թուրքերի ու գերմանացիների միջև հարաբերությունները բարեկամական չեն, գերմանացիները արհամարհական վերաբերմունք ունեն դեպի թուրքերը, իսկ թուրքերը գտնում են, որ գերմանացիները խանգարում են իրենց հաջողություններին և հավթի պատճառով իրենց թույլ չեն տալիս գրավել Բաքուն»<sup>6</sup>:

Գերմանական «Նյուս պարկեր դանտես ցայտունգ» պարբերականը գրում էր, որ Թուրքիան ձգտում է իր տիրապետությունը տարածել Սև ծովի հյուսիս-արևելյան շրջանների վրա՝ ընդհուպ մինչև Կասպից ծովը: «Նա այնտեղ ուժեր փոխադրեց Սիրիայից ու Միջագետքից: Նույն շրջան ուղարկվեցին նաև Ռուսաստանի հետ կնքված հաշտությունից հետո արատ մնացած զորամասերը... Թուրքիան պետք է փոխի իր

1. «Грузинская республика», 16. XI. 194.

2. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ք. 53 մ, 286-287.

3. «Кавказское слово», 12. X. 1918. № 194.

4. Архив Грузинского филиал ИМЛ, ф. 2, д. 358, л. 15.

5. SL'ն «Правда». 7.VIII.1918 г., № 167.

6. «Մշակ», 21. 9. 1918, № 191.

քաղաքականությունը: Չի՞ մտածում նա արդյոք, որ մենք մեզ վրա կվերցնենք Միրիան ու Միջազետքը հետ նվաճելու բերը, որպեսզի նրան հնարավորություն տանք շարունակել իր վաճումները այլ մարզերում»<sup>1</sup>:

Ինուլինի «Տազեսցայտունգ» թերթը հաստատում էր հետևյալը. «Ոչ ոք Գերմանիայում հավանություն չի տալիս թուրքերի առաջխաղացմանը Կովկասում»<sup>2</sup>:

«Շտուտգարտ տազերլատը» գերմանա-թուրքական հարաբերությունների կապակցությամբ գրում էր. «Եթե մենք, որպես թուրքիայի պաշտպաններ, դեմ դուրս եկանք Օսմանյան կայսրության մասնատմանը, մենք այդ բանն արեցինք Բաղդադի երկաթուղու հարցում մեր շահագրգռվածությունից ելնելով: Թուրքական պետական գործիչները պետք է իմանան, որ թուրքիայի համար ամենավտանգավոր ճակատները Պաղեստինի ու Միջազետքի ճակատներն են և որ անհրաժեշտ է նորից հետ նվաճել Տրիպոլին, Եգիպտոսը և Բասրայի ծովածոցը: Սակայն թուրքիան իր հայացքը հռոել է Կովկասի ու Սև ծովի կողմը, իսկ այժմ, անդրկովկասյան հանրապետությունների հողերը գրավելուց հետո, ներկայացնում է նոր պահանջներ՝ Ղրիմի, Թավրիզի և Ուրմիա լճի շրջանի նկատմամբ... Գերմանիան մտադիր չէ պաշտպանելու բոլոր այն ցանկությունները, որոնք կարող են առաջ գալ մեր դաշնակիցների մեջ»<sup>3</sup>:

Վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ 1918 թվականի ամռանն ու աշնանը գերմանական իմպերիալիստների ու երիտթուրքական պարագլուխների միջև առկա էին սուր տարաձայնություններ Անդրկովկասին տիրապետելու համար մղվող պայքարի, ինչպես նաև Մերձավոր ու Միջին Արևելքի ռազմաճակատներում պատերազմը վարելու հարցերում: Ուստի և միանգամայն անհիմն են խորհրդային առանձին պատմաբանների պնդումներն այն մասին, որ Բաքվի գրավումը թուրքական զորքերի կողմից տեղի ունեցավ «գերմանական իմպերիալիզմի հանձնարարությամբ», իսկ էնվերի փաշան ու Նուրի փաշան լոկ «գերմանական իմպերիալիզմի կամակատարներն էին»<sup>4</sup>:

1. «Кавказкое слово», 12.X.1918 г., № 194.

2. ЦГНОР, ф. 1318. д. 619, л. 30.

3. «Кавказское слово», 12.IX.1918 № 194.

4. Տե՛ս Токарежеский Е. А., Бакинские большевики—организаторы борьбы против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 г., Баку, 1947. ст. 183, Эльчибекан А. М., Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении», 1957. ст. 77, Колесникова Н. Н. Из истории борьбы за Советскую власть в Баку, Баку, 1958. ст. 4, История гражданской войны в СССР, т. 3. ст. 237.

Անդրկովկասի կառավարողների հակահեղափոխական գործունեության հետևանքով Անդրկովկասի մի մասն ընկավ Թուրքիայի տիրապետության տակ: Սեյմում մուսավաթականների պարագլուխներից Ուուրեհկովը իր մի ճառում բացհիբաց ասում էր. «Ոչ միայն մեզ՝ ադրբեջանական թուրքերիս ստո, այլև Անդրկովկասի ամբողջ տարածքում տիրող ահավոր անիշխանությունը չի կարող ճնշվել մեր սեփական ուժերով. դրու՛թյունն է՛լ ավելի է սաստկանում, արևելքից հարձակվող բուլղարիկների գործողությունների պատճառով, որոնք, դաշնակցած մեր դարավոր թշնամիների հետ, ավերածություն ու վերջնական ոչնչացում են բերում թուրք ժողովրդին: Իրերի նման դրու՛թյան, անպաշտպանության պայմաններում մենք այլ ելք չունենք, քան դիմելու օտար միջամտությանը: Տվյալ դեպքում մենք կարող ենք ուրախ լինել հանգամանքների այն երջանիկ դասավարտության համար, որ այստեղ եկող արտաքին ուժը՝ Թուրքիան, մեզ բարեկամ ու եղբայրական ուժ է»<sup>1</sup>:

Դրանով էր հենց բացատրվում անդրկովկասյան կառավարության կապիտուլյանտական քաղաքականությունը Բաթումի կոնֆերանսում և թուրքական ղավթիչներին ամեն կարգի հնարավորությունների ընձեռումը՝ դեպի Բաքու շարժվելու և այնտեղ խորհրդային իշխանությունը տապալելու համար:

Հեղափոխական շարժման պատվարը Անդրկովկասում Բաքու քաղաքն էր, որտեղ տակավին 1917 թվականի հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13-ին) խորհրդային իշխանություն էր հռչակվել: Սակայն Բաքվի խորհուրդը լիիշխան դիրք չէր գրավում քաղաքում, քանի որ նրա հետ կողք կողքի շարունակում էին գործել քաղաքային դուման, մուսավաթական ազգային խորհուրդը: Վերջինս ուներ իր զինված ուժերն ու հակահեղափոխական մարմինները:

Մուսավաթական կուսակցությունը և մահմեդական ազգային խորհուրդը, որն իր ձեռքն էր վերցրել իշխանությունը Կյանջայում և Բաքվի նահանգի մի շարք շրջաններում, ըստ անառով Անդրկովկաս ներխուժած թուրքական ղավթիչների անմիջական աջակցությունը՝ որոշել էին տապալել խորհրդային իշխանությունը Բաքվում և թուրքական հորդաների համար ճանապարհ հարթել Ադրբեջան և ողջ Անդրկովկասը բռնազավելու համար: Ժողովրդական կոմիսարների խորհրդին ուղղված իր նամակում Մտ. Շահումյանը, խոսելով մուսավաթականների և հակահեղափոխական այլ տարրերի գործու-

1. Ставровский А. Закавказье после Октября. Взаимоотношения с Турцией в первой половине 1918 г., М.—Л., 1925, с. 50—51.

նեության մասին, գրում էր. «Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները— Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ենթարկումը թուրքական հովանավորութեանը— պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կտաներ զեպի Անդրկովկասի կորուստը Ռուսաստանի համար»<sup>1</sup>:

Բաքվի բոլշևիկները քաղաքում խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերից եռանդուն աշխատանք էին տանում իրենց զինված ուժերը կազմակերպելու ուղղությամբ՝ մուսավաթական հրոսակախմբերի ելույթները կանխելու համար: Խորհրդային ուժերի և մահմեդական հակահեղափոխական ուժերի միջև զինված բախումն անխուսափելի դարձավ:

Բախումների համար առիթ ծառայեց Բաքվի խորհրդային իշխանության պահանջը՝ զինաթափ անել մահմեդական «վայրենի դիվիզիան», որի զինվորները «էվելինա» նավի վրա զնդակահարել էին կարմիրբանակայիններին: Այդ պահանջը բավարարելու փոխարեն, Բաքվի տարբեր շրջաններում արյունահեղ ըզհարումներ տեղի ունեցան խորհրդային զորքերի (որոնց հարեցին Կասպիական նավատորմի նավաստիները, ավիացիոն գունդը, հայկական ազգային զորամասերը) և մահմեդական ազգային խորհրդի զինված ուժերի միջև, որոնց թվում էին նաև Նարգին կղզու (Բաքվից հարավ արևելք) գերությունից փախած թուրք սպաներն ու ասքյարները: Երկու կողմից քաղաքային մարտերին, որոնք շարունակվում էին 1918 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը, մասնակցություն ունեցավ 20 հազարից ավելի մարդ:

Բաքվի խորհրդի կողմում մարտնչում էին հայկական կամավորական ջոկատներ, դաշնակցական զորամասեր և մոտ 4 հազար հայ զինվորներ, որոնք եկել էին ռուս-գերմանական և պարսկական ճակատներից: Մուսավաթական հրոսակախմբերը փակել էին Քիֆլիս և Երևան գնացող ճանապարհները, և նրանք խմբվել էին Բաքվում, զրկված գոյության միջոցներից: Նման ողբերգական կացության համար զինվորները մեղադրում էին մուսավաթականներին ու մահմեդական «վայրենի դիվիզիային», որոնք նրանց խանգարում

1. Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 144:

էին վերադառնելու իրենց հայրենի օջախները՝ Հայաստան ու Վրաստան:

Բոլշեկիկները և նրանց զինված ուժերը՝ կարմիր զվարդիանը, (որը բաղկացած էր հայ բանվորներից, ռուսներից ու մահմեդականներից) ազգային պատերազմի հրդեհը պահպանելու համար բանվորական ջոկատներ կազմակերպեցին: Քաղաքացիական պատերազմի ընթացքում մուսավաթական հրոսակախմբերն ու «վայրենի գիվիդիան» ջախջախվեցին, իսկ նրանց մնացորդները դուրս շարտվեցին Բաքվից:

Երեք օր տևած արյունալի կռիվներում կողմերը երեք հազարից ավելի մարդ կորցրեցին:

Մուսավաթական ուժերի ջախջախումով ամբողջ իշխանութունը Բաքվում և նրա շրջակայքում կենտրոնացավ Բաքվի խորհրդի ձեռքը:

Հետապնդելով մուսավաթական ջախջախված հրոսակախմբերին, խորհրդային զորքերը գրավեցին Լենքորանը, Շամախին, Ղուբայի ու Սալյանի գավառները: Մուսավաթական այն ջոկատները, որոնց հաջողվել էր փրկվել հետապնդումից, այդ և մյուս գավառներում խորհրդային իշխանության դեմ պարտիզանական պատերազմ էին մղում: Նրանք շարքից դուրս էին բերում երկաթուղագծերը, պայթեցնում կամուրջները, հարձակվում ռուսական ու հայկական գյուղերի վրա՝ սպանելով ու կողոպտելով խաղաղ ազգաբնակչությանը:

Ջախջախված մուսավաթական ուժերը կենտրոնացել էին Գյանջայում և թուրքական գործակալների օգնությամբ պատրաստվում էին նոր արշավանք սկսել Բաքվի խորհրդային իշխանության դեմ: Մուսավաթական հակահեղափոխական ուժերին անմիջական նյութական ու ռազմական օգնություն էր ցույց տալիս նաև անդրկովկասյան սեյմը: Ապրիլի 1-ին սեյմի նիստում հատուկ քննարկվում էին Բաքվում տեղի ունեցած մարտյան իրադարձությունները: Սեյմի մուսավաթական ֆրակցիայի անունից հանդես եկած Սաֆիքյուրդսկին պահանջում էր անհապաղ ինքնապաշտպանական միջոցառումներ ձեռնարկել և վերացնել բոլշեկիզմը:

Սեյմի հետագա նիստերից մեկում որոշվեց ռազմական ու

ներքին գործերի նախարարներին առաջարկել հնարավոր բո-  
լոր միջոցները ձեռք առնել Բաքվի իրադարձութիւններին  
շուտափուլով վերջ դնելու համար՝ Բաքուն գրավելու միջոցով:  
Այդ նպատակով Գլանջա՝ մուսավաթական հրոսակներին ու-  
ղարկվեց Անդրկովկասյան սեյմի զրահապատ դնացքը՝ վրաց  
իշխան Մաղալովի հրամանատարութեամբ: «Վայրենի դիվի-  
զիան» վերադինելու և ամրացնելու համար սեյմը միջոցներ  
ու սպառազինութիւն տրամադրեց:

Բաքվի խորհրդային իշխանութեան դեմ շարժվում էին նաև  
Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական ուժերը, որոնք  
նույնպես ղեկավարվում էին թուրքական գործակալնե-  
րի կողմից: Այդ զորքերը Խուրդալանի մատուցներում  
ապրիլի 7-ին և 8-ին տեղի ունեցած համառ մարտերում  
ջախջախվեցին Բաքվի խորհրդի ուժերի կողմից: Ջար-  
գացնելով հարձակումը, խորհրդային զորամասերը գրոհով  
վերցրեցին Պետրովսկը և Թեմիլ-խան-Շուրան: Իմամ Գո-  
ցինսկին փախավ, իսկ նրա հրոսակախմբերը ցիրուցան եղան:  
Գլանջայի կողմից մահմեդական զորքերի երկու նոր էջելոն-  
ներ շարժվեցին, որոնց հաջողվեց գրավել Հաջիկաբուլ կայա-  
րանը, որտեղ «կուտակվում են մուսուլմանների տեղական  
բանդաները: Խոշոր ուժեր են կուտակվում նաև Բաքվից հա-  
րավ, Սալյանում, ուր եկել էր վայրենի դիվիզիան հրետա-  
նիով կենթորանից»<sup>1</sup>:

Քաղաքացիական պատերազմի դժվարին պայմաններում  
բանվորների, զինվորների ու նավաստիների պատգամավոր-  
ների Բաքվի խորհուրդը 1918 թվականի ապրիլի 25-ի իր նիս-  
տում կազմեց կառավարութիւն՝ Բաքվի ժողովրդական կոմի-  
սարների խորհուրդ: Նախագահ ընտրվեց Անդրկովկասի բու-  
շեիկների ղեկավար և Անդրկովկասում խորհրդային Ռուսաս-  
տանի իշխանութեան ներկայացուցիչ Ստեփան Շահումյանը:

Բաքվի խորհրդային, իշխանութիւնը Անդրկովկասի հեղա-  
փոխական բոլոր ուժերին համախմբեց սեյմի ու համաձայ-  
նողական խորհուրդների դեմ: Նա մերկացնում էր վերջին-  
ներիս հակահեղափոխական էութիւնը և Անդրկովկասի զանգ-  
վածներին մատնացույց անում փրկութեան ուղին՝ Երկրամա-

սում խորհրդային իշխանութիւնի հաստատումը և միավորումը խորհրդային Ռուսաստանի հետ: Բաքվում խորհրդային իշխանութիւնի հաղթանակի առաջին օրերից Մոսկվայի հետ սերտ կապ էր հաստատուել:

Չնայած այն բանին, որ հակահեղափոխական ուժերի և թուրք-մուսաւաթական հորդանքերի շարունակվող արշավանքի հետևանքով ամենուրեք սովն ու ավերվածութիւնն էին իշխում, Բաքվի պրոլետարիատը ուժ ու հռանդ չէր խնայում նաւթի հանույթը ավելացնելու և այն արտահանելու: Խորհրդային Ռուսաստանին վառելիքով ապահովելու համար նաւթի արտահանումը Բաքվից Ռուսաստան ավելացավ օրական 700 հազար փոխից մինչև մեկ միլիոն 400 հազար փոխ: 1918 թվականի գարնան ու ամռան ընթացքում Ռուսաստան արտահանվեց 80 միլիոն փոխից ավելի նաւթ: Բաքվի խորհրդային իշխանութիւնը օգնութիւնը Ռուսաստանին վառելիքով հսկայական դեր խաղաց ինտերվենցիայի ու ներքին հակահեղափոխական ուժերի դեմ մղվող պայքարում: Կէն աշխուժացրեց պատերազմի հետևանքով ավերված երկրի տընտեսութիւնը:

Բաքվի խորհրդային իշխանութիւնը եռանդուն գործունեութիւն ծավալեց իր առջև դրված վերափոխումները կենսագործելու ուղղութիւնով: Ազգայնացմեցին բանկերը, նաւթային ու ձկնարդյունաբերութիւնը, առևտրական նաւատորմը: Ժողկոմխորհուրդը դեկրետ հրատարակեց խաների ու բանկերի հողերը բռնագրավելու և դրանք աշխատավոր գյուղացիութիւնը հանձնելու, 8-ժամյա բանվորական օր սահմանելու մասին և այլն:

Հիշյալ վերափոխումները իրականացնելու և Ադրբեջանում ու ամբողջ Անդրկովկասում խորհրդային իշխանութիւնի հաղթական երթն ապահովելու համար Բաքվի ժողկոմխորհուրդը զինված մեծ ուժերի կարիք ունեւ: Բաքվի բոլշևիկյան կազմակերպութիւնների ղեկավարները քաղաքի արդյունաբերական ձեռնարկութիւններում և այլ կազմակերպութիւններում, ինչպես և Բաքվի շրջաններում, եռանդուն գործունեութիւն էին ծավալել բանվորներին, խորհրդային կազմակերպութիւնների աշխատակիցներին ու նախկին ճակատա-

լինենքին կարմիր բանակի շարքերը ներգրավելու համար: Պատասխանելով բուլղարիկների կողմին, բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը դանդաժաբար մտնում էին կարմիր բանակի շարքերը: Այսպես, Սաբունչի «Տիունո» նավթահանքում կարմիր բանակի մեջ անդամագրվեց նավթագործ բանվորների ամբողջ երրորդ հերթափոխը: Կասպիական նավաշինարարական գործարանում կարմիր բանակի շարքերն ընդունվածների թիվը կազմում էր բանվորների կեսից ավելին<sup>1</sup>:

Այդ օրերին «Իզվեստիա Բակինսկոյու սովետա» թերթը գրում էր. «Ճակատում կովկասյան կարմիր բանակի հանդես գալուց հետո բանվորների և խորհրդային կազմակերպությունների ու հիմնարկների աշխատակիցների մեջ սաստիկ հուզմունք է տիրում, բոլորը ձգտում են դեպի կարմիր բանակի շարքերը, կռվի այս վճռական օրերին բոլորը ցանկանում են նրա գործուն մասնակիցները լինել... Շատերը մեկնեցին ճակատ, մյուսներին... դժվարությամբ է հաջողվում պահել իրենց տեղերում»<sup>2</sup>:

Գյուղացիներից կազմված կարմիրբանակային ջոկատները ղենքի, հանդերձանքի ու զինամթերքի խիստ կարիք ունեին, նրանք բավարարված չէին նաև հրամանատարական կազմով: «Խորհրդային զորքերի կազմակերպումը, — ասում էր Գ. Կորգանովը, — մեծապես դժվարանում էր ղենքի անբավարար լինելու պատճառով. այն մենք ստանում էինք մասամբ զորացրված ջոկատներից, մասամբ Աստրախանից, մի փոքր էլ Տաշքենդից: Զինվորների գրեթե կեսը անզեն է»<sup>3</sup>:

Կամավորական հիմունքներով հապճեպ կերպով ստեղծված կարմիրբանակային այդ ջոկատները, որոնց մեջ հիմնականում ընդգրկված էին բանվորները, խորհրդային ծառայողներն ու աշխատավոր գյուղացիները, խիստ անբավարար էին թուրքական կանոնավոր և լավ զինված զորքերի դեմ պայքարելու համար: Քաղաքացիական պատերազմով զբաղված

1. Տե՛ս Искандаров М. С., Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу Советской власти. Баку, 1958. ст. 257.

2. «Известия бакинского совета», № 142, 20 мая 1918 г.

3. ЦГАКА, ф. 1. оп. 2. д. 8 с, лл. 417—419.

խորհրդային Ռուսաստանը, որը Հյուսիսային Կովկասը Գեներալ-կինի ու Կրասնովի հակահեղափոխական ուժերի կողմից գրավված լինելու պատճառով անջատված էր Անդրկովկասից, հնարավորություն չունեի օգնություն ցույց տալ Բաքվի կոմսունային: Մինչև հունիսի կեսերը Բաքուն խորհրդային Ռուսաստանից ոչ մի զինված օգնություն չէր ստանում: Իսկ թուրքական զավթիչների ու նրանց գործակալների՝ մուսավաթական հրոսակախմբերի դեմ մղված համառ պայքարի օրերին Աստրախանով Ռուսաստանից ստացված օգնությունը խիստ անբավարար էր Բաքուն պահելու համար: Ուստի Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը ստիպված էր Բաքվի խորհրդի կողմում մարտյան կռիվներին մասնակցած հայկական ազգային զորամասերը ևս մտցնել կովկասյան կարմիր բանակի կազմի մեջ: Բաքվի կոմսունայի զինված ուժերի 70 տոկոսից ավելին կազմում էին հայկական զորամասերը: Հրամանատարական կազմի մի զգալի մասը դաշնակցական սպաներն էին, որոնց կցված էին բոլշևիկ կոմիսարներ:

Խոսելով Բաքվի խորհրդային իշխանության կողմում հայկական զինված ուժերի մասնակցության պատճառների մասին, նախկին կովկասյան ճակատի գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Ղորղանյանը գրում է, որ շնայած ներքին, քաղաքականության հարցերում հայկական ղեկավար շրջանների հայացքների տարբերությանը, վերջիններս Բաքվի և նրա շրջանների պաշտպանության գործում բոլշևիկներին դիտում էին որպես իրենց դաշնակիցներ: «Հայերը,— գրում է նա,— տարածքային հավակնություններ չունենին, այլ միայն սահմանափակվում էին Բաքվի մարզի պաշտպանությամբ, քանի որ Բաքուն թուրք-թաթարների կողմից գրավվելու դեպքում հայկական խաղաղ ազգաբնակչությունը անխուսափելիորեն կընչացվեր: Բացի դրանից, թշնամական ուժերի մի մասի զբաղված լինելը Բաքվի ճակատում հեշտացնում էր Հայաստանի ռազմական ընդհանուր դրությունը»<sup>1</sup>:

Բաքվի ժողովրդային խորհրդի զինված ուժերի ընդհանուր թիվը

1. General G. Korganoff, La parricipation des Armeniens à la guerre mondiale sur le front du Caucase (1914—1918). Paris, 1927, p. 180—181.

հունիսի կեսերին կազմում էր մոտավորապես 15 հազար մարդ:

Մուսավաթական կուսակցության պարագլուխները անհամբերությամբ սպասում էին թուրքական հորդանների Գյանջա ժամանելուն, որպեսզի նրանց օգնությամբ ոչնչացնեին Բաքվի խորհրդային իշխանությունը: Այդ տեսակետից բնորոշ է մուսավաթական կուսակցության ականավոր գործիչներից մեկի՝ Ռասուլ Ջադեի անկեղծ խոստովանությունը: Վերջինս, խոսելով սելմի կազմալուծման և «ինքնուրույն» հանրապետությունների ստեղծվելու մասին, գրում էր, որ Թուրքիայի ու Ադրբեջանի միջև կնքված Բաթումի պայմանագրի շորրորդ հոդվածի հիման վրա «Ադրբեջանական հանրապետությունը իրավունք ունի Թուրքիայից պահանջել ռազմական օգնություն երկրի անվտանգությունն ու կարգ ու կանոնը վերականգնելու համար: Այդ նույն հոդվածի հիման վրա ես, Ադրբեջանի ազգային խորհրդի անունից և Մեհմեդ Հասան բեյը՝ արտաքին գործերի նախարարության անունից, դիմեցինք թուրքական կառավարությանը ռազմական օգնություն ցույց տալու պահանջով»<sup>1</sup>:

Վրացական մենշևիկների պարագլուխները ցնծագին դիմավորեցին թուրքական ինտերվենցիան Ադրբեջանում: Թուրքական զորքերի Բաքվին մոտենալու օրերին Վրաստանի մենշևիկյան կառավարության ռազմական նախարար Գեորգաձեն ճաշկերույթի ժամանակ արտասանած իր ճառում նրանց հաջողություն մաղթեց<sup>2</sup>:

Թուրքերի կողմից Ադրբեջանի արագ նվաճմանը և Բաքվում խորհրդային իշխանության տապալմանը խոչընդոտեցին Հայաստանի ժողովրդական ղանգվածների 1918 թվականի մայիսի երկրորդ կեսի Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը, որի հետևանքով թուրքական զորքերը հետ շարտվեցին Սարդարապատից, և նրանց կողմից Երևանի գրավման վտանգը վերացավ: Այդ պարտությունը որոշ ժամանակով ուշացրեց նաև թուրքական արշավանքը Ադրբեջանի վրա: Իրենց այդ հաղթանակով Հա-

1. ՏԵՍ ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 11, գ. 31, թ. 7:

2. ՏԵՍ «Правда», I/X-1918 թ. № 210:

յաստանի ժողովրդական զանգվածներն օգնեցին Բաքվի կոմունային մուսավաթական բանդաների դեմ նրա մղած պայքարում, ինչպես նաև խորհրդային իշխանության հաղթանակին Ադրբեջանի մի շարք շրջաններում:

Երևանի մատուլցներում կրած ծանր պարտությունից հետո ուշքի գալով, թուրքական զավթիչները հունիսի սկզբներին սկսեցին Ալեքսանդրապոլից Ղարաբախի շրջանի, Դիլիջանի, Ղազախի ու Աղստաֆայի վրայով զորքեր փոխադրել Գյանջա: Նախքան թուրքական զորքերի Գյանջա հասնելը, մայիսի 27-ին այստեղ ժամանեց թուրքական բանակի շտաբը էնկերի խորթ եղբայր Նուրի փաշայի գլխավորությամբ: Վերջինիս Գյանջա գալու կապակցությամբ Ռասուլ զադեն գրում էր, որ «գտնվելով բոլշևիկների հարձակման վտանգի տակ, Գյանջան Նուրի փաշային ընդունեց որպես երկնքից իջած իր փրկարար հրեշտակի»<sup>1</sup>:

Թուրքական զավթիչները արտաքուստ ձևացնում էին, որ իբր իրենք «եղբայրակից ադրբեջանցիներին պաշտպանում են բոլշևիկյան սպառնալիքից, իրականում, սակայն, նրանք ձգտում էին գաղութացնել ոչ միայն Ադրբեջանը, այլև ողջ Կովկասը:

Ստամբուլում գերմանական դեսպան Բերնսդորֆը 1918 թվականի հունիսին Ահարոնյանի ու Խատիսովի հետ ունեցած զրույցի ժամանակ, խոսելով Բաքվի վրա թուրքական արշավանքի նպատակների մասին, ուղղակի հայտարարեց, որ Թուրքիան ձգտում է Բաքուն գրավել իր, և ոչ թե Ադրբեջանի համար, որի մասին նա հայտարարել է մուսավաթական կառավարության ղեկավարներին: Բաքվի հետ մեկտեղ նա ձգտում է գրավել ողջ Ադրբեջանը: Այդ դեպքում Թուրքիան կտարածվի մինչև Վլադիկավկազ<sup>2</sup>:

Թուրքական զավթիչների այդ ծրագրի իրականացմանը խանգարեց Բաքվում և Ադրբեջանի մի շարք շրջաններում հաղթանակած խորհրդային իշխանությունը: Հենց այդ պատճառով էլ թուրքական հրամանատարությունը Բաքվի դեմ էր կենտրոնացրել մյուս ռազմաճակատներից փոխադրած լավագույն դիվիզիաները:

1. Տե՛ս ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 11, գ. 29, թ. 577:

2. Տե՛ս 22 ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 9—20:

Անդրկովկասում իր դավթողական պլաններն իրագործելու համար էնվերը Գալիպոլիի, Միջագետքի ու Ռումինական ճակատներից Ադրբեջան փոխադրեց 5-րդ, 9-րդ, 11-րդ և 15-րդ դիվիզիաները: Դրանք Թուրքիայի ընտիր զորամասերն էին: Հիշյալ դիվիզիաները Ադրբեջան եկան Օրդուբադի\* ու Բաթումի վրայով: Այդ շրջա դիվիզիաները մտան կովկասյան առաջին թուրքական կորպուսի մեջ, որին հետագայում, ուժեղացնելու նպատակով, կցվեցին նաև 36-րդ և 10-րդ դիվիզիաները: Թուրքական կովկասյան առաջին կորպուսի բոլոր վեց դիվիզիաները բավարար չափով հագեցված էին հրետանիով, որ ռուսական զորքերը թողել էին Կարինում, Կարում և ամրացված այլ կետերում: Բացի նշված դիվիզիաներից, Ադրբեջան փոխադրվեցին նաև Բաթումիի ճակատի զորքերը՝ թվով 5 հազար մարդ, որոնց թուրքական հրամանատարութունը ներշնչում էր, թե իբր «ճանապարհը դեպի տուն ընկած է միայն Բաքվի վրայով»: Թուրքական բոլոր ուժերի ընդհանուր թիվը 20 հազարից ավելի էր:

Բացի այդ զորքերից, թուրքական հրամանատարութւյան տրամադրութւյան տակ էր գտնվում նաև «խլամի բանակը», որը թուրքական հորդանների կողմից կազմակերպվել էր նախկին «վայրենի դիվիզիայի» մնացորդներից և Ադրբեջանի գրավված շրջանների այն բնակիչներից, որոնց նրանք բռնի բանակ էին զորակոչել:

Թուրքական զորքերի փոխադրումը Ադրբեջան և դրանց կենտրոնացումը Գյանջայի շրջանում ավարտվեց հունիսի առաջին կեսին, և թուրքական հրամանատարութւյունը կարգադրութւյուն արեց Բաքվի վրա ընդհանուր հարձակում ծավալելու մասին: Թուրք-մուսավաթական ուժերի հրամանատարն էր գեներալ Նուրի փաշան, որի շտաբը տեղակայված էր Գյանջայում: Նրա թելադրանքով մահմեդական ազգային խորհուրդը հունիսի 17-ին լուծարքի ենթարկվեց, և դրա փոխարեն կազմավորվեց մուսավաթական կառավարութւյուն՝ իւանների ու բեկերի ներկայացուցիչ խան խոյսկու գլխավորութւյամբ: Վերջինիս կառավարութւյան ողջ գործունեութւյունը ուղղված էր մահմեդական ազգային զորամասեր կազմակեր-

\* Իրանից Օրդուբադի վրայով Գյանջա փոխադրված թուրքական զորքերը, որոնց գլխավորում էր Քյազըմ փաշան, հաշվվում էին 7 հազար մարդ լրիվ սպառազինութւյամբ և 40 թնդանոթներով (տե՛ս «Շորիդոն», 1918, № 104):

\* Տե՛ս Документы фонда «Истории гражданской войны в СССР» т. 11, д. 102, էջ 42—48. Ֆրանսիացի ռազմական պատմաբան Լարշերի ավյաներով թուրքական զինված ուժերի մեջ մտնող 45 դիվիզիաներից թուրքական հրամանատարութւյունը 1918 թվականի ապրիլին 10 դիվիզիա փոխադրել էր Անդրկովկաս (տե՛ս Larcher, նշվ. աշխ., p. 592—593):

պելու և թուրք հորդանների հետ մեկտեղ խորհրդային Բաքու վրա հարձակում նախապատրաստելու նպատակին:

Մինչ թուրք-մուսավաթական զորքերը հարձակման կանցնեին, Բաքվի կոմունայի զինված ուժերը, թվով 10 հազար մարդ, հունիսի 10-ին հանդես եկան կենտրոնական ճակատում և սկսելով հարձակումը Հաջիկարուլից՝ զարգացրին այն Գյանջայի ուղղությամբ: Կարմիր զորքերի հրամանատար նրշանակվեց Բաքվի ժողովխորհրդի ռազմածովային գործերի կոմիսար Գ. Կորգանովը, որն անմիջականորեն էր ղեկավարում ռազմական գործողությունները: Կովկասյան կարմիր բանակի առաջին կորպուսի հրամանատար նշանակվեց գնդապետ Կազարովը, իսկ կորպուսի շտաբի պետ՝ ցարական բանակի նախկին գնդապետ դաշնակ Ավետիսովը:

Կարմիր բանակի ջոկատները համառ մարտերում թշնամուն հետ շարտեցին և հունիսի 11-ին գրավեցին Սաղուլիի երկաթուղային կայարանները, իսկ հունիսի 12-ին՝ Քյուրդամիրը: Նահանջող թուրքական զորամասերը բաց արեցին շլուզները և գրեթե ողջ շրջապատը ողողվեց ջրով: Այս հանգամանքը որոշ ժամանակով կասեցրեց խորհրդային զորքերի առաջխաղացումը կենտրոնական ճակատում:

Հուլիսի 17-ին Անդրկովկասից վերադարձած Վահան Տերյանը Հայկական գործերի կոմիսարիատում զեկուցեց Բաքվի ճակատում տիրող դրուժյան մասին: Խոսելով ռազմաստրատեգիական դրուժյան մասին, Տերյանը նշեց, որ խորհրդային զորքերի մղած կռվի վայրը «մալարիայի բուն է, բուժանձնակազմի ու դեղորայքի հսկայական պակաս է զգացվում: Այդ բոլորի հաղթահարումը անասելի դժվարությունների հետ է կապված»<sup>1</sup>:

Աչ թևում խորհրդային զորքերի մի ջոկատ հաջող կերպով առաջ շարժվելով, Շամախի-Աքսու-Գյոքչայ-Խուզան խճուղու վրա մի շարք գյուղեր ազատագրեց, ջախջախելով թուրքերի, մուսավաթականների ու վրացական մենշեկիկների շուրջ 3 հազար հոգուց բաղկացած միացյալ զինված ուժերը: Ճակատային գիծն անցնում էր Շամախուց հյուսիս: Ձախ թևի պաշտպանական գիծն անցնում էր Քուռ գետով:

Շարունակելով հարձակումը, խորհրդային զորքերը հունիսի 16-ին հայկական Կարմարյան գյուղի մոտ բախվեցին թուրքական կանոնավոր զորամասերի հետ: Յոթժամյա արյունահեղ մարտից հետո թուրքական զորքերը, որոնց թիվը հասնում էր մոտ 2 հազարի, ջախջախվեցին և կարմիր զորամասերը մտան Կարմարյան: Փոխադրելով նոր ուժեր, թուրքե-

<sup>1</sup> Տե՛ս «Правда», № 149, 19/VII—1918 г.:

բը հունիսի 17-ին անցան հակահարձակման, բայց նորից ջախջախվեցին և հետ շարտվեցին Գյոքչայ: Արյունահեղ մարտում թուրքական զորքերը ռազմի դաշտում թողեցին 500-ից ավելի սպանված ու վիրավոր: Կարմարյանի մոտ թուրքական զորքերի կրած պարտությունն այն աստիճան շոշափելի էր, որ կովկասյան թուրքական 5-րդ դիվիզիայի շտաբի պետ Ռյուշտյուն հետագայում իր հուշերում այդ մասին ստիպված էր գրել հետևյալը. «Հունիսի 17-ին կրած մեր պարտությունը բանակի հրամանատարության վրա ճնշող տպավորություն գործեց»<sup>1</sup>:

Թուրքական հորդանների ջախջախումը Կարմարյանի տակ ոչ նվազ ծանր տպավորություն գործեց նաև մուսավաթական կառավարության ղեկավարների վրա: Այսպես, արտաքին գործերի նախարար Գաջինսկին գրում էր Ստամբուլ՝ Ռասուլ գադեին հետևյալը. «Մեր դրությունը ռազմաճակատում բնավ լավ չէ. շենք կարողանում առաջ շարժվել: Բոլշևիկները հոյակապ են կովում, շատ ռումբեր ունեն... այս բոլորի մասին ես մանրամասն հետազոտեմ եմ ուղարկել, խնդրել եմ պնդել, որ էնվերը շուտափույթ կերպով ևս մեկ դիվիզիա ուղարկի, հակառակ դեպքում ամեն ինչ կկորցնենք, Բաքուն մենք շենք ստանա և Թուրքիայի հեղինակությունը կընկնի: Ծթե ուզում եք իմանալ, արդեն սկսել է ընկնել»<sup>2</sup>:

Թուրքական հրամանատարությունը օգտվելով այն բանից, որ Բաթումի պայմանագրերի համաձայն երկաթուղիները դրվել էին իր տրամադրության տակ, արագ կերպով նոր զորամասեր փոխադրեց Ադրբեջան, որի հետևանքով հունիսի 25-ին թուրքական զորքերի թիվը Գյանչայի ուղղությամբ հասավ 15 հազարի՝ չհաշված մուսավաթական ջոկատները, այն դեպքում, երբ կովկասյան կարմիր բանակի թիվը, մարտերում կրած կորուստներից հետո, 15 հազարից նվազել էր մինչև 8 հազար:

Թուրքական զորքերի թվական գերակշռությունը թուրքական հրամանատարությանը հնարավորություն տվեց նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և Գյոքչայի ու Քյուրդամիրի շրջանում հակահարձակման անցնել: Հունիսի 27-ից 30-ը Գյոքչայի տակ համառ կռիվներ էին տեղի ունենում: Այդ մարտերի հետևանքով հակառակորդը իր գերազանց ուժերով նեղեց խորհրդային զորքերի ձախ թևին և ստիպեց նրան

1. Miralay Rüstü, s. նշվ. աշխ., 233.

2. Труды Азербайджанского филиала ИМЛ, т. 6. с. 115.

նահանջել Աքսուի ուղղութիւնը: «Գյոքչայի տակ մղված 4-օր-  
յա մարտերն ավարտված են,— գրում էր Կորգանովը Բաքվի  
ժողովոյ խորհրդին հղած իր ղեկուցագրում,— մի շարք ան-  
բարենպաստ հանգամանքների պատճառով, մեր զորքերը,  
որոնք ճակատային դիրք էին գրավել, նահանջեցին դեպի  
Կարմարյան: Հակառակորդը դուրս եկավ շրջապատումից,  
նրան ջախջախում էր սպառնում և, իր հերթին, սկսեց շրջ-  
ջապատել մեզ... կռիվը շատ համառ էր, գործը հասնում էր  
սվինամարտի: Սարսափելի շոգից նեղվելով, ջուր հասցնելու  
հնարավորութիւնից զրկված, դիմվորները հասնում էին մին-  
չև ուշաթափութիւն աստիճանի, սակայն խիզախորեն պաշտ-  
պանում էին իրենց դիրքերը՝ միաժամանակ գրոհի նետվելով:  
Միայն մի զորամաս ձախ թևում, հակառակորդի մեծաթիվ  
հեծելազորը շրջանցելու պահին, նահանջեց և դրանով իսկ  
ազդեց ողջ ճակատի վրա: Կորուստները երկու կողմից էլ  
զգալի են: Հակառակորդի շարքերում կանոնավոր թուրքա-  
կան զորամասեր են»<sup>1</sup>:

Կովկասյան առաջին կարմիր կորպուսի զորամասերի  
պարտութիւնը Գյոքչայի տակ բեկում մտցրեց ռազմական  
գործողութիւնների հետագա ընթացքի մեջ՝ Բաքվի ճակա-  
տում: Կարմիր բանակը հարձակումից անցավ պաշտպանու-  
թիւն: Նախաձեռնութիւնը վերցնելով իր ձեռքը թուրքական  
հրամանատարութիւնը, օգտվելով իր տրամադրութիւն տակ  
եղած ուժերի ու սպառազինութիւն քանակական գերազանցու-  
թիւնից, շարունակում էր հարձակումը Բաքվի վրա: Քայլ առ  
քայլ, վերին աստիճանի ծանր պայմաններում ընթացող հա-  
մառ մարտերում, թուրքական զորքերը դանդաղորեն հետ էին  
մղում խորհրդային ջոկատներին: Հրետանին ուժեղացնելով  
շնեյդերյան թնդանոթներով և բուլղարական ճակատից ժա-  
մանած նոր գնդերով, թուրքական զորքերը գրոհեցին Քյուր-  
դամիրի վրա: Այդ դժվարին օրերին Բաքվի խորհրդային իշ-  
խանութիւնը ստիպված էր ընդունել թուրքական նվաճողների  
դեմ համատեղ պայքար մղելու վերաբերյալ գնդապետ Բիշե-  
րախովի կողմից արված առաջարկը: Բիշերախովի կազակա-

<sup>1</sup> «Известия бакинского Совета». 2 июля, 1918 г.

կան ջոկատը\*, որը բաղկացած էր 1500 լավ զինված մարտիկներից, հուլիսի 5-ին գալով Հյուսիսային Իրանից, ափ իջավ Ալյաթում՝ և հուլիսի 7-ին հանդես եկավ Քյուրդամիրի ճակատում: Հուլիսի 6-ին Բիշերախովը իր վրա վերցրեց հրամանատարությունը աջ թևում: Ձախ թևի և կենտրոնի հրամանատարությունը առաջվա նման Կորգանովի ձեռքին էր:

Հարձակվելով Քյուրդամիրի վրա, թուրքական զորքերը հանդիպեցին խորհրդային ջոկատների համառ դիմադրությանը և 12-ժամյա դաժան մարտից հետո հետ շարտվեցին, կրելով մեծ կորուստներ: Քյուրդամիրի տակ տեղի ունեցած կռվին մասնակցեցին Մոսկվայից ուղարկված զրահակիրներն ու ինքնաթիռները, որոնք վճռական դեր խաղացին թշնամուն հակահարված տալու գործում:

Հյուսիսային ճակատում, Ղուբան հուլիսի 6-ին պաշարվել էր լեզգիների կողմից: Շուրջ 8 ժամ կռիվներ էին մղվում, ի վերջո, հակառակորդը հետ շարտվեց, և Ղուբայի շուրջ եղած դիրքերը գրավվեցին կարմիր բանակի ուժերի կողմից:

Նոր լրացուցիչ ուժեր ստանալով, թուրքական զորքերը վերջապես հարձակման անցան Քյուրդամիրի վրա և երեք օր տևող արյունահեղ մարտերից հետո հուլիսի 10-ին գրավեցին Քյուրդամիր կայարանը: Թուրքերի մի քանի ստորաբաժանումներ, որոնք առաջ էին շարժվում երկաթգծի ուղղությամբ, մոտեցան Քերար կայարանին, մյուսները, անցնելով Աքսուի այն կողմը, դուրս եկան Շամախու խճուղի, որը նրանց առջև ուղիղ ճանապարհ էր բացում դեպի Բաքու:

Թուրք-մուսավաթական հորդաններին օգնում էին տեղաբնակ հրոսակախմբերը, որոնք շարքից դուրս էին բերում երկաթուղագծերը, թիկունքից անակնկալ հարձակումներ գործում կարմիր բանակի զորամասերի վրա և այլն:

Հուլիսի 13-ին Շահումյանը հեռագրում է Լենինին. «Դրուսթյունը ռազմաճակատում վատանում է: Միայն մեր ուժերը

\* Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակը հեռացավ Հյուսիսային Իրանից: Օգտվելով դրանից, անգլիական զորքերը գրավեցին Հյուսիսային Իրանը և սկսեցին նախապատրաստվել հակախորհրդային ինտերվենցիայի՝ Բաքվի դեմ: Այդ նպատակով անգլիական հրամանատարությունը օգտագործեց ռուսական զորքերի այնտեղ մնացած ջոկատը՝ Բիշերախովի հրամանատարությամբ, որը անցել էր ժառանգության անգլիացիների մոտ: Հյուսիսային Իրանում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Դենստերվիլի հանձնարարությամբ Բիշերախովը կապվեց Բաքվի ժողովխորհրդի հետ և իր ժառանգություններն առաջարկեց թուրքական զորքերի դեմ համատեղ պայքարում, ընդամենի հավատացնելով, որ ինքը ճանաչում է խորհրդային իշխանությունը և ենթարկվում Բաքվի ժողովխորհրդի զինված ուժերի հրամանատարությանը: Իրականում, սակայն, Բիշերախովը անգլիացիների գործակալը դուրս եկավ՝ նա պետք է նպաստեր անգլիացիների կողմից Բաքվի գրավմանը:

բավական չեն: Անհրաժեշտ է լուրջ օգնություն Ռուսաստանից... Սպասում եմ շտապ ռազմական օգնության և Ձեր դեկավար ցուցումներին, անհապաղ ուղարկեցե՛ք»<sup>1</sup>:

1918 թվականի հուլիսին Լենինը ծովային գործերի ժողովրդրական կոմիսարիատին ուղարկել է հետևյալ գրությունը. «Շատ եմ խնդրում բոլոր միջոցները ձեռք առնել Կասպից ծովը ամեն հարմար տիպի ռազմական ու ծովային նավեր փոխադրելու համար»:

1918 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Բաքու ուղարկեց մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք, դրամ, պարեն: Հունիսին Բաքուն Խորհրդային Ռուսաստանից 15 վագոն հաց ստացավ, հուլիսի երկրորդ կեսին՝ 180 վագոն մթերք, 28 հավար տուփ պահածո և շատ ուրիշ ապրանքներ<sup>2</sup>: Հունիսի 23-ին Մոսկվայից ստացվեցին զրահակիր մեքենաներ, իսկ մինչ այդ՝ 13 ինքնաթիռ: Հուլիսի 20-ին Բաքու ժամանեց Պետրովի լավ զինված ջոկատը (շուրջ 800 զինվոր), որը հանվել էր Ռևերանիական ճակատից: Կասպից նավատորմի համար մեծ քանակությամբ սպառազինություն ստացվեց: Հուլիսի կեսերին Բաքուն 300 վագոն ռազմամթերք ստացավ:

Սակայն դեպի Բաքու տանող ճանապարհները գտնվում էին հակահեղափոխական ուժերի ձեռքում, այդ իսկ պատճառով Խորհրդային կառավարության ուղարկած ոչ բոլոր սպառազինությունն ու պարենն էր հասնում զորամասերին: Հիմնական ուղին Կասպից ծովն էր: Այստեղից էր հնարավոր միայն, այն էլ մեծ դժվարություններ հաղթահարելով, Բաքվի Խորհրդային իշխանությունը ռազմական օգնություն հասցնել:

Այդ նույն ժամանակ թուրքական զորքերը, համալրվելով նոր ուժերով և առանց սրևէ արգելքի զենք ու ռազմական հանդերձանք ստանալով Բաթումի ու Ալեքսանդրապոլի վրայով, Խորհրդային զորքերին հետ մղեցին Քյուրդամիրի ու Շամախու ուղղությամբ: Կենտրոնական Քյուրդամիրի ուղղությամբ Խորհրդային զորքերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ հարկադրված էին նահանջել Քերարից Հաջիկարույ, իսկ Շամախու ուղղությամբ նրանք համառ պայքարից հետո թողեցին Մատրասա գյուղը և նահանջեցին դեպի Շամախի քաղաքը:

Շամախու շրջանում տեղի ունեցած կռիվների մասին երրորդ բրիգադի կոմիսար Ա. Միկոյանը գրում էր. «Հուլիսի

1. Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 351:

2. Տե՛ս Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы 1917—1919 гг., ст. 567:

20-ին հակառակորդը մեծ ուժեր կենտրոնացնելով Մատրասա գյուղի վրա, գրավեց Ալթաու լեռը, Քերքենդի բարձունքները և, շարժվելով շրջանցման օղակով Հաջիգարինի բարձունքների վրա, ձգտում էր կտրել Մարազան տանող ճանապարհը... զորամասերի նահանջը մինչև Շամախի ընթանում էր լրիվ կարգապահության պայմաններում: Շամախուց նահանջը շարունակվում էր ամբողջ գիշեր թափվող տեղատարափ անձրևի տակ, մարդիկ ու ձիերը բոլորովին ուժասպառ էին եղել, զրահակիրը խրվեց-մնաց տեղում...»<sup>1</sup>:

Նլինելով ճակատում տիրող ծանր դրությունից, մենշևիկները, աչ էսէռներն ու դաշնակները պահանջում էին, որպեսզի Հյուսիսային Իրանից անհապաղ Բաբու հրավիրվեն անգլիական զորքեր՝ «թուրքերի դեմ իրենց օգնելու համար»: Այդ դժվարին պայմաններում Բաքվի բոլշևիկները ստիպված էին պայքար մղել թուրքական զորքերի դեմ ճակատում և անգլիական իմպերիալիզմի գործակալության դեմ՝ թիկունքում:

Ստ. Շահումյանը Բաքվի խորհրդի արտակարգ նիստում 1918 թվականի հունիսի 25-ին ունեցած իր ելույթում մատնանշում էր. «Մեր առջև ծառայած է քաղաքի և հեղափոխության պաշտպանության հարցը: Դրա համար մենք պետք է գտնենք բոլոր միջոցները... Մենք այնքան էլ ահեղ և ուժեղ թշնամի չունենք մեր առջև, որ չկարողանանք մեր ուժերով ու միջոցներով դնել պաշտպանության հարցը... ես առաջարկում եմ ձեզ հանել անգլիացիների հրավիրման հարցը և քննարկել խորհրդային Ռուսաստանի հետ միասին մեր ընդհանուր ջանքերով ռազմաճակատը պաշտպանելու հարցը»<sup>2</sup>:

Անգլիացիներին հրավիրելու վերաբերյալ Բաքվի խորհրդի 1918 թ. հուլիսի 26-ի ընդունած որոշումը վերջնականապես բարոյալքեց կարմիր բանակը և կազմալուծեց նրա թիկունքը: Չնայած Բաքվի խորհրդային իշխանության կողմից ձեռնարկած բոլոր հնարավոր միջոցներին, թուրք-մուսավաթական զորքերի հարձակումը Բաքվի վրա չհաջողվեց կասեցնել: Հակառակորդի գերազանցող ուժերի ճնշման տակ կարմիր զորամասերը ստիպված էին նահանջել Բաբու՝ հուլիսի 18-ի թուղնելով Շամախին ու Հաջիկարույր, հուլիսի 22-ին՝ Ալայաթը, հուլիսի 28-ին՝ Բալաշարը: Հուլիսի 31-ին ճակատն ընդհուպ մոտեցավ Բաքվին:

Քաղաքում խուճապ սկսվեց: Թուրքերի կողմից գրավված շրջաններից, մասնավորապես Շամախու շրջանից, Բաբու ե-

1 «Известия бакинского Совета», № 44, 23 июля, 1918 г.  
2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 381—382:

կած հայ գաղթականները ավելի ուժեղացրին քաղաքում տիրող իրարանցումը:

Տակավին հուլիսի 30-ին Բաքվում ստացվեց թուրքական զորքերի հրամանատար Շեվքեթ փաշայի կողմ քաղաքը հանձնելու պահանջով: Թուրքական հրամանատարությունը ավեր-բեջանական ազգարնակչության մեջ տարածում էր թուուցիկներ, որտեղ ազդարարվում էր հետևյալը. «Մենք բարբարոսներ չենք, բայց մենք գալիս ենք ձեզ բարբարոսներից փրկելու»:

Թուրքական դահիճների այդ ձևերը վաղուց հայտնի էին այն ժողովուրդներին, որոնք երբևիցե ստիպված էին եղել իրենց մաշկի վրա զգալու թուրքական ասքյարների արյունոտ կրունկը:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը բազմիցս իր բողոքն է հայտնել Անդրկովկասում թուրք-գերմանական զորքերի ձեռնարկած ագրեսիայի դեմ: Դեպի Բաքու թուրքական զորքերի առաջխաղացման կապակցությամբ ՌեՅՍՆ կառավարությունը հուլիսի 25-ին բողոքի երկու նոտաներ է ուղարկել Մոսկվայում Գերմանիայի ժամանակավոր ներկայացուցիչ Ռիցլերին. «Մենք ամենաեռանդուն կերպով բողոքում ենք Բրեստի պայմանագրի այդ խախտման և խորհրդային կառավարությանը մշտապես հավատարիմ Բաքվի մարզի վրա այդ հարձակման դեմ... անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել հարձակումը: Բաքվին լուրջ վտանգ է սպառնում», — ասվում էր նոտաներում:

Թեև գերմանական կառավարությունը խոստացավ թուրքերին ստիպել դադարեցնելու հարձակումը, այդ ուղղությամբ ո՛չ մի կոնկրետ միջոցառում չձեռնարկվեց: Թուրքական զորքերը շարունակում էին առաջ շարժվել, հետ մղելով խորհրդային ուժերին:

Կարմիր զորամասերի նահանջին նպաստում էր նաև Բիշկերախովի դավաճանությունը: Վերջինս օրհասական պահին՝ հուլիսի 30—31-ին, մերկացնելով ռազմաճակատի աջ թևը, չոկատով և հրետանիով քաշվեց Սումգայիթ, իսկ այնտեղից՝ Պետրովսկ: Ճակատը, որը Բաքվից ընդամենը 15 կմ հեռավորության վրա էր գտնվում, բոլորովին մերկացավ: 1600 սվիններից մնացել էին ընդամենը երկու հարյուրը և նույնքան էլ Պետրովի ջոկատից:

Բաքվի ժողովուրդը որևէ կարգի հաշտության բա-

1 Документы внешней политики СССР, т. I. док. 306. с. 429.

2 Նույն տեղը, ձ. 284. 285. с. 410.

նակցություններ վարելու դեմ արտահայտվեց և բոլոր զորամասերին կոչ արեց շարժվել դեպի ճակատ: Հուլիսի 30-ի գիշերը ժողկոմխորհուրդը հանդես եկավ բանվորներին ուղղված մի դիմումով, որտեղ նա կոչ էր անում բոլորին զենք վերցնել և պաշտպանել քաղաքը թշնամուց:

Թեև Բաքվի ժողկոմխորհուրդը հնարավոր բոլոր ջանքերը գործադրեց եղած ուժերը թուրքերի դեմ դուրս բերելու համար, այնուամենայնիվ անգլիական գործակալութունը՝ ի դեմս մենշևիկների և էսէռների, շարունակում էր ագիտացիա ծավալել հոգուտ անգլիական զորքերի հրավիրման, համարելով այն միակ միջոցը Բաքուն թուրքական արշավանքից պաշտպանելու գործում:

«Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը, — ասում է Ստեփան Շահումյանը, — կրկնակի դավաճանության փաստի առջև էր կանգնած: Նա չէր կարող անգլիական իմպերիալիզմի հետ համաձայնության մեջ մտնել այնպես, ինչպես չէր կարող հաշտության բանակցությունների մեջ մըտնել գերմանա-թուրքական իմպերիալիզմի հետ: Նա կարող էր դիմել միայն պրոլետարիատին՝ նրան ոտքի հանելու համար, սակայն ակներև է, որ աչ կուսակցությունների ու բանակի հրամանատարական կազմի այդպիսի վարքագծի պայմաններում արդեն ուշ է, որ այդ այլևս չի փրկի Բաքուն հակառակորդի ներխուժումից»<sup>1</sup>:

1918 թվականի հուլիսի 31-ին, Բաքվի խորհրդի նիստում, ժողկոմխորհուրդը վայր դրեց իր լիազորությունները:

Այսպիսով, Բաքվի խորհրդային իշխանության անկման գործում մճռական դեր խաղաց թուրքական արշավանքը, որի հիմնական նպատակը խորհրդային իշխանության տապալումն էր և Ադրբեջանի, ինչպես նաև ողջ Կովկասի զավթումը:

Բաքվի կոմունայի անկումից հետո իշխանութունը քաղաքում անցավ էսէռների և մենշևիկների ձեռքը, որը կազմեց «Ցենտրոկասպիի դիկտատուրայի» կառավարությունը: Վերջինս առանց հապաղելու Բաքու հրավիրեց անգլիացիներին:

1. Большевики в борьбе за победу социалистической революции  
Азербайджане, документы и материалы 1917-1919, с. 618.

Թուրքական դավթիշները օղակել էին Բաքուն և արդեն գրավել Շիրվան, Բիրի-էյբաթ և Վոլչի Վարոտայի բարձունքները: Օրհասական այդ պահին, երբ թվում էր, որ այլևս անհնարին է քաղաքը պաշտպանել հակառակորդից, բուշեվիկների կոշով քաղաքը պաշտպանելու համար ոտքի ելան Բաքվի բանվորները: Բանվորական ջոկատները, արագորին զինվելով, կովում էին թուրքական հորդանների դեմ քաղաքի մատույցներում: Բաքվի աշխատողների անձնագոհ ու հերոսական պայքարի շնորհիվ թուրք-մուսավաթական զորքերին չհաջողվեց ներխուժել քաղաք:

Բաքվի պաշտպանութան գործում մեծ դեր խաղացին խորհրդային զորքերը և, հատկապես, Պետրովի ջոկատը, որի մարտիկները Պետրովյան հրապարակից հրետանային դիպուկ կրակով խանգարում էին թուրքական զորքերի առաջխաղացմանը Վոլչի Վարոտայի շրջանում և Բիրի-էյբաթի կողմից: Պետրովի ջոկատի հրետանին երկու օր տևող անընդհատ կրակով կասեցրից հակառակորդի հարձակումը: Օգոստոսի 6-ին թուրք-մուսավաթական զորքերը դուրս շարտվեցին իրենց գրաված դիրքերից և ստպիված եղան նահանջել Բալաչարիից այն կողմ: Օգոստոսի 5-6-ին տեղի ունեցած կռիվների ընթացքում հակառակորդը մեծ կորուստներ կրեց:

Բաքվի տակ օգոստոսի 5—6-ին թուրքական զորքերի կրած պարտութան մասին այդ կռիվների անմիջական մասնակից գնդապետ Մյուշտյուն իր հուշերում գրում էր հետևյալը. «Հրետանային, գնդացրային ու հրացանային ուժեղ կրակի պաշտպանութան տակ հակառակորդը հակահարձակման անցավ և 10-րդ ու 13-րդ գնդերի զինվորներին ստիպեց նահանջել: Հակառակորդի կրակը ոչնչացնելու համար հրետանային զորամասերը բավարար չափով ուժերը շունչին իրենց տրամադրութան տակ: Մեր կրած կորուստները զգալի էին: Այդպիսով, 1918 թվականի օգոստոսի 5-ին հյուսիսային խմբի ձեռնարկած հարձակումը հետ մղվեց հակառակորդի կողմից... զինվորները հոգնել էին, կորուստները գնալով մեծա-

նում էին, բարոյական վիճակը խախտվել էր: Գիվիզիայի հրացանների թիվը կրճատվել էր 50 տոկոսով<sup>1</sup>:

Բաքվի տակ թուրք-մուսավաթական զորքերի կրած պարտութունը ժամանակավորապես կասեցրեց նրանց նոր հարձակումը: Ժամանակ էր հարկավոր Միջագետքի ճակատից ռազմական նոր ուժեր փոխադրելու համար: Հիշյալ ճակատում Անտանտի զորքերը, արաբ ապստամբների հետ միասին, մի շարք լուրջ հարվածներ հասցրեցին թուրքական զորքերին:

Գերմանական հրամանատարութունը խիստ դժգոհ էր էնվերից, որը թուրքական լավագույն դիվիզիաները Սիրիայի ու Միջագետքի ճակատներից փոխադրել էր Կովկասյան ռազմաճակատ: Թուրքիայի դաշնակից Գերմանիան չէր ցանկանում, որպեսզի էնվերը Սիրիայի ու Արևելագետքի ճակատները թուլացնելու գնով ուժեղացնի Կովկասյան ռազմաճակատը և գրավի Բաքուն, որը հենց ինքը Գերմանիան էր ձգտում նվաճել: Չնայած գերմանական հրամանատարութւյան բազմաթիվ բողոքներին, էնվերը, Անդրկովկասում իր զավթողական պլաններն իրականացնելու ձգտումով տարված, փութով նոր զորքեր տեղափոխեց Բաքվի ճակատ՝ գերմանական զորքերի կողմից Բաքվի գրավումը կանխելու համար: Այդ կապակցութւյամբ Լյուդենդորֆը գրում էր. «Գերագույն հրամանատարութւյունը ձեռնամուխ եղավ Բաքվի վրա գրոհ նախապատրաստելու գործին և այդ նպատակով հեծելազորային մի բրիգադ և մի քանի գումարտակ ուղարկեց... Նուրին Բաքուն գրավեց ավելի շուտ, քան մենք հասցրեցինք զորքեր փոխադրել, իսկ այնուհետև Բուդղարիայում տեղի ունեցած իրադարձութւյնները մեզ ստիպեցին այդ զորամասերն ուղարկել Ռումինիա»<sup>2</sup>:

Ստեղծված պայմաններում, հրք Բաքվի համար կովում էին իմպերիալիստական երկու խմբավորումներ՝ թուրք-գերմանական և Անտանտի, օգոստոսի 10—ին, բոլշևիկյան կազմակերպութւյան կուսակցական կոնֆերանսում որոշում ըն-

1. Rüstü, նշվ. աշխ., s. 85.

2. Людендорф Э., Мои воспоминания о войне 1914—1918 гг. с. 219—220.

դունվեց կարմիր բանակի ջոկատները, խորհրդային ու կուսակցական աշխատողներին քաղաքից դուրս բերելու մասին: Խոսելով Բաքուն թողնելու պատճառների մասին, Ստ. Շահումյանը մատնանշում էր. «Մենք չէինք կարող լինել ոչ այն մարդկանց թվում, ովքեր անձնատուր են լինում թուրքական փաշաների ողորմածությանը, փրկում են իրենց կաշին, բուշակիներին ու ուսական զորքերին մատնելով թուրքական բանդաների ձեռքը՝ հողոտելու, և ոչ էլ նրանց թվում, ովքեր, շնայած հայրենասիրության վերաբերյալ կեղծավոր ֆրազներին, պատրաստ են Բաքուն հանձնել անգլիացիներին: Մենք որոշեցինք փրկել Ռուսաստանի խորհրդային իշխանությանը հավատարիմ հեղափոխական զորքերը, որպեսզի, սպասելով Աստրախանից եկող զորքերին, նրանց հետ միասին կռիվ հայտարարենք երկու ճակատում՝ թուրքական ու անգլիական իմպերիալիզմին և պաշտպանենք Բաքուն հեղափոխական խորհրդային Ռուսաստանի համար»:

Օգոստոսի 14-ին Պետրովի ջոկատը և խորհրդային այլ զորամասերի Շահումյանի և մյուս կոմիսարների գլխավորությամբ, 17 նավերով, լրիվ սպառազինված և ռազմական հանդերձանքի անհրաժեշտ պաշարով դուրս եկան Բաքվից՝ ուղղություն վերցնելով դեպի Աստրախան: Ժիլովո կղզուց ոչ շատ հեռու, օգոստոսի 16-ին նրանց վրա հարձակվեցին «Ցենտրոկասպիի» կառավարության «Աստրաբադ», «Արզահան» և «Գյոքթոփե» ռազմանավերը և կտրուկ կերպով պահանջեցին հետ վերադառնալ Բաքու: Կոմիսարները կտրակա՛նապես հրաժարվեցին կատարելու այդ պահանջը, որից հետո նրանց նավերի վրա կրակ բացեցին: Դրանից հետո Բաքվի խորհրդային նավատորմը ստիպված էր տեղի տալ: Հենց որ խորհրդային նավերը հասան Բաքու, Բաքվի կոմիսարները ձերբակալվեցին և նետվեցին Բայիլովի բանտը, իսկ խորհրդային զինված ջոկատները, թվով 3 հազարից ավելի մարդ, զինաթափ արվեցին և քսոսովեցին Աստրախան:

«Ցենտրոկասպիի» կառավարության հուսադրումներն այն առթիվ, որ անգլիացիներին հրավիրելով Բաքու, նրանց օգ-

նությամբ կհաշողվի թուրքերին հետ մղել, ռեալ շէր, որովհետև էնզելիից եկած անգլիական փոքրաթիվ զորքերը (մոտ 1000 մարդ), գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ, անկարող էին քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքերին: Անգլիական իմպերիալիստները ամենևին էլ մըտահոգված չէին Բաքվի պաշտպանությամբ, ինչպես այդ փորձում էին ներկայացնել քաղաքի աշխատավորությանը մենշևիկները, էսէններն ու դաշնականները:

Բաքուն գրավելու համար շունենալով բավարար ուժեր, անգլիացիները նախքան քաղաք մտնելը իրենց հյուպատոս Մակ-Դոնելի միջոցով սերտ կապ էին հաստատել մենշևիկների, էսէնների ու դաշնականների հետ և վերջիններիս օգնությամբ, Բաքուն թուրքական զորքերից պաշտպանելու քողի տակ, խորհրդային իշխանության անկումից հետո փաստորեն դարձան քաղաքի տերերը:

Առաջին քայլը, որին ձեռնամուխ եղան անգլիացիները Բաքու գալուց հետո, ոչ թե ճակատի պաշտպանությունն էր, այլ բենդինի արտահանումը էնզելի, այնտեղից Միշագետքում գտնվող անգլիական բանակին հասցնելու համար:

Որ անգլիական իմպերիալիստները իսկպպես չէին նպատակադրվել Բաքուն պաշտպանել թուրքական արշավանքից, երևում է նաև «Յենտրոկասպիի դիկտատուրայի» իշխանության ժամանակաշրջանում Բաքվի խորհրդի քարտուղարի վկայութունից: Վերջինս Ֆունտիկովի գործի քննության ժամանակ\* դատարանում հայտարարել էր, որ «Յենտրոկասպիի դիկտատուրայի» նիստերից մեկում, որին մասնակցում էին

---

\* Թուրքական հորդանների կողմից Բաքուն գրավելու նախօրյակին (սեպտեմբերի 15-ին), Ա. Միկոյանի գլխավորությամբ, մի խումբ բոլշևիկների հաշողվեց բանտարկված Բաքվի կոմիսարներին ազատել և «Թուրքմեն» նավով ճանապարհել ղեպի խորհրդային Աստրախան: Սակայն նավի հրամանատարությունը փոխեց ուղղությունը ղեպի Կրասնովոդսկ, որտեղ իշխում էին անգլիական իմպերիալիստները և էսէնները, որոնք Բաքվի կոմիսարներին նորից բանտ նետեցին: Անդրկասպյան էսեռական կառավարության պարագլուխներ Ֆ. Ֆունտիկովը, Ս. Դրոմիկինը Վ. Կունը անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Տիգ-Ջոնսոնի հետ միասին սեպտեմբերի 19-ին Կրասնովոդսկի բանտից դուրս տարան Բաքվի 26 կոմիսարներին և հաջորդ օրը նրանց հրամանով Ախշա-Կումա ու Պերիվալ կայարանների միջև ընկած ավազուտներում զազանարար սպանեցին:

անգլիական ռազմական միսիայի ներկայացուցիչները, Սա-  
դովսկին անգլիացիներին հետևյալ հարցն էր տվել. «Որտե՞ղ  
է ձեր իրական օգնությունը զորքով, որ դուք խոստացել էիք  
մեր պատվիրակներին էնզելիում»։ Անգլիական ներկայացու-  
ցիչը պատասխանել էր, որ իրենք երբեք ոչ մի տեղ, և ոչ  
ոքի նման օգնության խոստում չեն տվել և նույնիսկ ծիծա-  
ղելի կլինեի մտածել, որ մենք կարող էինք Միջագետքից  
այստեղ զորքեր տեղափոխել»<sup>1</sup>։

«Ցենթրոկասպիի» կառավարության և նրա տերերի՝ ան-  
գլիացիների կարճատև տիրապետության շրջանում ամենու-  
րեք քաղցն էր մոլեգնում։ Քաղաքում կյանքը մարել էր։ Բաք-  
վի ազգաբնակչությունը բոլորովին կորցրեց հավատը «Ցենտ-  
րոկասպիի» կառավարության նկատմամբ, որն իր գործու-  
նեությունամբ, անգլիացիների հետ սերտ դաշինքի մեջ մտած,  
վերջնականապես մերկացրել էր իրեն Բաքվի աշխատավոր  
զանգվածների շրջանում։ Ուստի բնական է, որ երբ թուրքա-  
կան զորքերը, այլ ռազմաճակատներից ժամանած նոր թարմ  
ուժերի միջոցով ամրացնելով իրենց դիրքերը, անցան հար-  
ձակման, «Ցենտրոկասպիի» կառավարության ողորմելի ուժե-  
րը և անգլիական զավթիչները շկարողացան նրանց էական  
դիմադրություն ցույց տալ։

Նոր կառավարության հիմնական զորքերը հայկական ջո-  
կատներն էին, որոնց գլխավորում էր գեներալ Բագրատու-  
նին։ Ռազմաճակատում կային նաև անգլիական զինվորներ  
գեներալ Գենստերվիլի հրամանատարությամբ, որը խնայում  
էր իր զինվորներին և շատ սակավ դեպքերում էր թողնում  
մարտերին մասնակցելու։ Խորհրդային Ռուսաստանի կառա-  
վարությունը, մտահոգված Բաքվում ստեղծված իրադրու-  
թյամբ, օգոստոսի 19—ին մեկ անգամ ևս իր վճռական բո-  
ղոքը հայտնեց գերմանական ու թուրքական կառավարու-  
թյուններին, որոնք բազմիցս խախտել էին Բրեստի պայմա-  
նագրի կետերը, ինչպես նաև Բաքվի վրա հարձակումը դա-  
դարեցնելու վերաբերյալ բազմիցս տրված իրենց հավաս-  
տիացումները<sup>2</sup>։

1. Партархив Азерб. филиала ИМЛ, ф. 303, оп. 1, д. 23, ст. 33.

2. *Sel's* Документы внешней политики СССР, т. 1, док. № 306,

Խորհրդային կառավարութիւնն ամեն ինչ անում էր Բարուն թուրքական զավթիչներին ներխուժումից փրկելու համար: Նա նույնիսկ համաձայնվեց Գերմանիայի պահանջին, այն է՝ Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ պայմանագրի (որը կընթելէ էր 1918 թվականի օգոստոսի 27-ին) մեջ հատուկ կետ մտցնել, որի համաձայն Խորհրդային Ռուսաստանը համաձայնում էր, որպէսզի Գերմանիան Վրաստանը ճանաչի որպէս ինքնուրույն պետական մարմին, և Ռուսաստանը Գերմանիային տրամադրի Բաքվի նավթի մեկ քառորդը: Այդ հարկադիր զիջումների դիմաց Գերմանիան խոստանում էր թույլ շտալ, որպէսի թուրքերը գրավեն Բաքուն<sup>1</sup>:

Սակայն ինչպէս միշտ, այս անգամ ևս գերմանական ռազմամոլները, հավատարիմ մնալով իրենց նվաճողական քաղաքականութիւնը, գործնական ոչ մի քայլի չդիմեցին թուրքական զորքերի հարձակումը դադարեցնելու համար: Հարկ է նշել, որ թուրքական բանակի շարքերում գերմանական բազմաթիվ հրահանգիչներ կային:

1918 թվականի օգոստոսի վերջին թուրք-մուսավաթական զորքերը, որոնք համալրվել էին Միջագետքի ու Սիրայի ռազմաճակատներից ժամանած ուժերով, անցան հարձակման և ամսի 29-ին գրավեցին «Գրյազնի Վուլկանի» ամրացված դիրքերը: Լեռը պաշտպանող անգլիական վաշտը հետ շարտվեց:

Սեպտեմբերի 1-ին թուրքական զորքերը հարձակում գործեցին Բաքվի ուժերի աջ թևի վրա և գրավեցին Բինագադը, Դըղայա և Մահոմեդլի գյուղերը, որի հետևանքով Բաքուն ցամաքից ամբողջովին շրջապատվեց հակառակորդի ուժերով: Արտաքին աշխարհի հետ կապը այժմ կարող էր պահպանվել միայն Կասպից ծովով:

Սեպտեմբերի 13-ի առավոտյան թուրք-մուսավաթական զորքերը քաղաքի արվարձաններում անցան հարձակման: Մինչև ուշ գիշեր համառ մարտեր էին տեղի ունենում, որոնց հետևանքով հակառակորդը հետ շարտվեց իր նախկին դիրքերից: Սակայն ձախ թևում թուրքական զորքերին սեպտեմ-

1. См. в Документы внешней политики СССР. т. 1, док. № 306 ст. 443—444.

բերի 13-ին հաջողվեց, ճեղքելով պաշտպանութունը, հասնել Վոլշի վարոտային և ամրանալ այնտեղ: Թուրքական զորամասերը հարձակման անցան նաև կենտրոնական թևում, որտեղ Բաքվի պաշտպանողական ուժերը սպառել էին իրենց բոլոր պաշարները և այլևս ի վիճակի չէին շարունակելու կռիվը:

Թուրքական զորքերի այդ ճնշումը բավական եղավ, որպեսզի գեներալ Գենստերվիլը, բնավ հաշվի չնստելով «Ցենտրոկասպիի» կառավարության հետ, կուլի ամենաթեթ պահին իր ջոկատը հանեց առանց հայկական ուժերի հրամանատարությանը տեղյակ պահելու այդ մասին: Գեներալը այդ նահանջը հիմնավորում էր նրանով, որ Բաքվի ճակատագիրն արդեն կանխորոշված էր և այլևս անհնարին էր պաշտպանել քաղաքը\*:

Սեպտեմբերի 14-ի հրեկոյան անգլիական զորքերը նավերով վերադարձան էնզելի:

«Ցենտրոկասպիի դիկտատուրայի» էսեռա-մենշեկյան ղեկավարները, իրենց դաշնակից անգլիացիների «պաշտպանությունից» հրասթափված, Գենստերվիլին ուղղած նամակում ցավով, նշում էին հետևյալը. «Դժբախտաբար մենք սխալվեցինք. ամբողջ այդ ժամանակվա ընթացքում՝ մինչև սեպտեմբերի 3-ը (մեկ ամսից ավելի) դուք Բաքու փոխադրեցիք ընդամենը հազարից մի փոքր ավելի մարդ՝ 16 թնդանոթով և որոշ քանակությամբ տիխնիկական նյութերով... Ձեր զորքերը ոչ թե ավելացրին, այլ նույնիսկ նվազեցրին Բաքվի պաշտպանների ուժերը, որովհետև մենք կարող էինք զգալիորեն համալրել նրանց շարքերը, եթե մենք ընդունեինք բոլշևիկների կուսակցության պայմանները»\*: Գեներալ Գի-

\* Գեներալ Գ. Ղորղանյանի վկայությամբ, Գենստերվիլը տակավին սեպտեմբերի սկզբին գտնում էր, որ Բաքուն այլևս անհնարին է փրկել և առաջարկում էր Թուրքական հրամանատարության հետ բանակցություններ սկսել քաղաքը հանձնելու վերաբերյալ: Նա այդ ժամանակ արդեն ուղում էր իր զորքերը հանել ճակատից: Սակայն գեներալ Բազրատունին խանգարեց այդ բանին և որոշում ընդունեց շարունակել պայքարը:

\* Խորհրդային Ռուսաստանի առաջարկեց կազմել կոալիցիոն կառավարություն և միաժամանակ իր օգնությունը՝ անգլիացիներին Բաքվից հեռացնելու պայմանով (Տե՛ս Денстервил. Британский империализм в Баку и в Персии в 1917—1918 гг.. (воспоминания). Тифлис. 1925, ст. 255).

նստերվիլը նույնիսկ անհրաժեշտ չգտավ պատասխանել այդ նամակին: Խորհրդային իշխանությունն զավաճանները Բաքվում հիասթափվեցին իրենց անգլիական «բարերարներին», սակայն արդեն ուշ էր. թուրք-մահմեդական հորդանները Բաքվի մատուցներում էին գտնվում:

Անգլիացիներին հետո, սեպտեմբերի 15-ի առավոտյան շտապ կարգով լցվիցին նավերը և հեռացան «Ցենտրոկասպիի դիկտատուրայի» սնանկացած կառավարության անդամները՝ իրենց զորքերի մնացորդների հետ միասին: Քաղաքում անիշխանություն էր տիրում, Բաքվի պաշտպանության մասին այլևս ոչ ոք չէր մտածում:

Սեպտեմբերի 14-ի գիշերը սկսվեց Բաքվի ումբակոծումը: Քաղաքի ծայրամասերում մարտերը դեռ շարունակվում էին: Հրետանային կրակով թուրքերը գնդակոծում էին նավահանգիստը, ուր քաղաքի բնակիչները պատրաստվում էին նավ նստել: Նավթի ու բենզինի պահեստները պայթեցվեցին, ամբողջ ծովափը կրակի բոցի մեջ էր: Սեպտեմբերի 15-ի առավոտյան քաղաքում խուճապն ավելի մեծացավ: Հազարավոր հայեր խմբվել էին նավահանգստում, ուր այլևս ոչ մի նավ չկար: «Հայերը, — գրում էր 1918 թվականի սեպտեմբերի 21-ի համարում «Պրավդա» թերթը, — շփոթության մեջ ընկած, նետվում էին ուռսական ընտանիքները: Նրանց պահում են նկուղներում, տանիքներում՝ ուրիշ փրկություն չկա: Փախչել հնարավոր չէ, թուրքերը գրավեցին քաղաքի բոլոր արվարձանները: Չեմբելիքենդում ասքյարները արդեն թալանում են տները: Բիրի-էյրաթում վառվում էին նավթահանքերը և նավթային հրդեհի սև քուլաները երկինք էին բարձանում»:

Սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը մուսավաթական հրոսակախմբերի հետ մեկտեղ ներխուժեցին Բաքու: Հաջորդ օրը ամբողջ քաղաքն անցավ նրանց ձեռքը:

Բնորոշ է այն, որ Բաքվի գրավման առաջին օրն իսկ Գովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատարը պաշտոնապես հայտարարեց, որ Ադրբեջանը բնակեցնող բոլոր քաղաքացիները, անկախ ազգությունից ու դավանանքից, թուրքական ռազմական իշխանությունների կողմից միևնույն վերաբերմունքին կարժանանան, որոնք հա-

վասար շափով կպաշտպանեն բոլոր քաղաքացիներին կյանքը, ունեցվածքն ու իրավունքները<sup>1</sup>։

Այս հանդիսավոր ու պաշտոնական խոստումները, ինչպես և թերթերում տպագրված նույնանման հաղորդումներն ու հոդվածները հայերի նկատմամբ լոկ անհրաժեշտ դիվանագիտական մի հնարք էր, այնքան բնորոշ թուրքական դահիճներին։ Այդ ձևով նրանք փորձում էին ճշմարտութունը թաքցնել արտաքին աշխարհից։ Իրականում, սակայն, հայտնի է, որ թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումը ուղեկցվում էր հայերի զանգվածային ջարդերով, որոնք շարունակվում էին երեք օր անընդհատ։ Հազարավոր տներ կողոպտվեցին ու հրկիզվեցին։ Փողոցներում անհամար քանակությամբ դիակներ էին թափված։ Սրի էին քաշում անխտիր բոլոր հայերին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, ծերերին, առողջներին ու տկարներին, նույնիսկ ծծկեր երեխաներին։ Չորս օր անընդհատ, գիշեր-ցերեկ, տասնյակ բեռնատար մեքենաներ ու հարյուրավոր սայլեր քաղաքից դուրս էին բերում սպանվածների դիակները։ Չանգվածային կոտորածների հետքերը ծածկելու համար դիակների մեծ մասը Սալյանիի զորանոցների շրջակայքում հրկիզվեց։ Եղած տրվյալների համաձայն, Բաքվում զոհված հայերի թիվը հասնում էր 30 հազարի։

«Պրավդան» 1918 թվականի սեպտեմբերի 21-ին «Բաքվի ողբերգությունը» հոդվածում մանրամասն նկարագրելով խաղաղ հայ ազգաբնակչության ոչնչացումը թուրք-մուսավաթական դահիճների կողմից, ընդգծում էր, որ թուրքական ու մուսավաթական զինվորները հայերի կոտորածը սկսեցին քաղաքի արվարձաններում՝ էրմենիքենդում և Սև քաղաքում, ուր հայ ազգաբնակչությունը լրիվ ոչնչացված է։ Այնուհետև ջարդերը տարածվեցին քաղաքի կենտրոնական փողոցներում։ Հազարավոր թուրք զինվորներ վխտում էին քաղաքում, ներխուժում տագնապով ու սարսափով համակված տները, սպանում դաշույններով, ատրճանակներով, գնդակահարում տեղ-

1. Տե՛ս 22 կողմ, ք. 200, գ. 145, թթ. 13—18։

նուտեղը փողոցում, վայր նետում բարձրահարկ շենքերի վերին հարկերից:

Ռուս ընտանիքները նույնպես տուժեցին: Թուրքերը նրանց մեղադրում էին հայերի նկատմամբ կարեկցանք հանդես բերելու և նրանց ապաստանելու մեջ: Հաջորդ օրը առավոտյան հավաքեցին քաղաքի փողոցներում թափված դիակները և մեքենաներով դուրս տարան: Մյուս օրը առավոտյան ջարդը վերսկսվեց:

Թուրքական իշխանությունները, ցնծություն ապրող թուրք սպաները, ռեստորաններում հարբեցողությամբ զբաղված փաշաները (Նուրի փաշան, Նազրմը և մյուսները) դիտավորյալ կերպով անգործունեության էին մատնված և ոչ մի փորձ չէին անում գազանություններին վերջ դնելու համար:

«Այդ ժամանակ,— ասվում էր այնուհետև հոգվածում,— շքեղ լույսերով ողողված միլիոնատեր Գաջինսկու տանը Բաքվի բուրժուազիան մեծարում էր Նուրի-փաշային և թուրքական սպաներին»:

Հրեշավոր այդ ջարդին զուգընթաց թուրքական զորքերը, ինչպես նաև մուսավաթական հրոսակները խաղաղ քաղաքացիների գույքի նույնպիսի հրեշավոր թալան կազմակերպեցին: Կողոպուտի ժամանակ հաճախ տարբերություն չէին դնում հայերի և մյուս ազգությունների միջև:

Հայերի կողմից լքված բնակարաններից, որոնց տերերը կամ սպանված էին կամ թաքնվել էին ուրիշների մոտ կամ էլ փախել էին քաղաքից, օր ու գիշեր, շրջապատի բնակչության աչքի առջև, բեռնատար մեքենաներով ու սայլերով թուրքական ու մուսավաթական իշխանությունները դուրս էին բերում տնային բոլոր իրերը:

Կողոպուտը պարբերաբար շարունակվում էր ամբողջ երկու ամիս, մինչև թուրքական զավթիչների վտարումը Անդրբուսիան:

«Մարդասպաններն ու կողոպուտիչները,— գրում է ակադեմիկոսներից մեկը,— բացիբաց հայտարարում էին, որ քաղաքը 3 օրով ամբողջովին իրենց տրամադրության տակ է դրված: Գազանային ջարդերը երբեմն այնպիսի դաժանու-

թյամբ էին կատարվում, որ նույնիսկ գծվար էր հավատալ, որ այդպիսի վայրագություն հնարավոր է»<sup>1</sup>:

Մուսավաթական կառավարութեան ղեկավար Խան-Խոյսկին ցնծութեան մեջ էր: Նա իր երախտագիտութիւնը հայտնեց թուրքական զորքերի հրամանատար Նուրի փաշային «Ադրբեջանի մայրաքաղաքը գրավելու համար», իսկ Արևելյան ռազմաճակատի հրամանատար Խալիլ փաշային շնորհավորեց «թուրքական աշխարհի երկրորդ Ստամբուլը հանդիսացող խոշոր կենտրոնը գրավելու կապակցութեամբ»<sup>2</sup>:

Ադրբեջանական նավթարդյունաբերողների ու բեկերի խոսափողը՝ «Կասպի» թերթը, թուրքիան ու նրա «փառապանծ բանակը» համարելով միակ ուժը, որն ընդունակ է ամբողջ աշխարհի մահմեդականներին «ազատագրել տարբեր կեղեքիչներից», գրում էր, որ ինքը «ամեն կերպ կաջակցի նրա հերոսական հաղթարշավին այդ ուղղութեամբ, առավել ևս, որ թուրքական բանակը գալով Կովկաս, դրանով իսկ ապացուցեց իր անսահման անշահախնդրութիւնը, մեծագույն զոհաբերութիւններ կատարելու իր պատրաստակամութիւնը և լոյալ վերաբերմունքը՝ մեր հայրենիքը բնակեցնող բոլոր ժողովուրդների նկատմամբ»<sup>3</sup>:

Երիտթուրքական դահիճների գործողութիւնների փառաբանմանը և փաստերի նենգափոխմանն էր նվիրում իր էջերը նաև մուսավաթական «Ադրբեջան» լրագիրը: Թուրքական զավթիչների ու մուսավաթական դահիճների շարագործութիւնները արտաքին աշխարհից թաքցնելու համար հիշյալ թերթը Բաքվի հայերի զանգվածային ջարդը որակեց որպես «որոշ ծայրահեղութիւններ», որոնք իբր թի «անհապաղ դադարեցվել էին» թուրքական հրամանատարութեան կողմից: «Կարգը վերականգնվեց և շուտով հանստութիւն տիրեց քաղաքում», — գրում էր պարբերականը<sup>4</sup>:

Գոյութիւն ունեցող փաստաթղթերը, սակայն, ինչպես ցույց տրվեց, բոլորովին հակառակն են վկայում: Բերենք ևս

1. 22 ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 145, թթ. 13—18.

2. ՏԼ՝ «Тифлисскай листок», 18.IX—1918 г., № 189.

3. 22 ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53բ., ց. 1, թթ. 276—277.

4. «Азербайджан», 25 сентября 1918, № 4.

մի փաստ: Ականատեսներին մեկի՝ Իրանում խորհրդային միտիայի աշխատակցի ՌԿ(Բ)Կ կենտկոմին ներկայացրած զեկուցման մեջ տրվում էր Բաքվի թուրքական օկուպացիայի հետևյալ նկարագիրը. «Բաքվում թուրքական բաշիրոզուկներին տնօրինության շրջանում քաղաքը սարսափելի տեսք ուներ. սպանություններին, կողոպուտներին, բռնություններին վերջ չկար: Բանվորական բոլոր կազամակերպությունները ցրվեցին... մի խոսքով, թուրքական փաշաների երկամսյա տիրապետությունը ադրբեջանական խաների հետ մեկտեղ, համատարած բռնությունների, կողոպուտի ու սպանությունների մի շրջան էր: Չեղյալ հայտարարվեցին ոչ միայն խորհրդային իշխանության, այլև ժամանակավոր կառավարության բոլոր դեկրետներն ու որոշումները»<sup>1</sup>:

Բաքվի գրավումը թուրքական զորքերի կողմից և մուսավաթական հրոսակախմբերի հետ միասին կատարված բռնությունները անհամատեղելի էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հողվածներին: Խորհրդային Ռուսաստանը 1918 թվականի սեպտեմբերի 20-ի իր նոտայում շեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Թուրքիային վերաբերող հողվածները: «Օսմանյան կառավարությունը, — ասված էր նոտայում, — անցած կես տարվա ընթացքում, շնայած խորհրդային կառավարության բազմաթիվ բողոքներին, անընդհատ խախտում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այժմ, վերջապես, ի լրումն այդ բողոքի, նա գրավեց և սարսափելի ավերման ենթարկեց ռուսական հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը... դրանով օսմանյան կառավարությունը ցույց տվեց, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև այլևս գյուլություն չունի»<sup>2</sup>:

Գրավելով Բաքուն, թուրքական զավթիչները շարունակեցին իրենց հարձակումը Հյուսիսային Կովկասի ուղղությամբ, որտեղ վաղուց ի վեր հաստատված նրանց գործակալությունը

1. ЦГАОР СССР. ф. 120. оп. 3. д. 184, лл. 11—16.

2. Документы внешней политики СССР. т. I, док. № 346, с. 490—492.

նը, լեռնականների հակահեղափոխական ուժերի հետ մեկտեղ, տակավին օգոստոսի երկրորդ կեսին գրավել էր Հարավային Դաղստանը:

Թուրքական դիվիզիան գեներալ Յուսուֆ Իզեթ փաշայի գլխավորությամբ, առաջ շարժվելով երկաթգծի ուղղությամբ, հոկտեմբերի 6-ին անսպասելիորեն հարձակվեց Դերբենդ քաղաքի վրա, որը գտնվում էր Բաքվի ռազմաճակատը լքած Բիշերախովի ջրկատնների ձեռքին: Զկարողանալով դիմադրել թուրքական զորքերի գրոհին, Բիշերախովը ստիպված էր նահանջել հյուսիս: Հոկտեմբերի 24-ին թուրքական հորդանները և Դաղստանի հակահեղափոխական ջրկատները համառ կռիվներից հետո գրավեցին Քիմիրխան-Շուրան: Նոյեմբերի 8-ին թուրքական զորքերը նվաճեցին Բիշերախովի վերջին ամրացված կետը՝ Պետրովսկ նավահանգիստը:

Թուրքական զավթիչների հետ միասին Թիֆլիսից ժամանած լեռային «կառավարությունը» Դաղստանում իշխանությունը իր ձեռքը վերցրեց: Սակայն ինչպես Ադրբեջանում, Դաղստանում ևս տեղ ու տնօրինություն էին անում թուրքական նվաճողները:

«... Այսպես կոչված լեռնային կառավարությունը (կամ «Օրխանտ» հյուրանոցի կառավարությունը), — գրում էր Ս. Կիրովը, — «խաղաղության ու բարեկամության» պայմանագրով Հյուսիսային Կովկասը վաճառելով Վեհիբ փաշային, հեղափոխական Դաղստանի դեմ ուղղված թուրք ասթյարների սվինների օգնությամբ հաստատվեց Շուրայում՝ քայլելով լեռնական-հեղափոխականների դիակների վրայով...»<sup>1</sup>:

Դաղստանը զավթելուց հետո թուրքական հորդանները և լեռնային կառավարության հրոսակախմբերը շարունակեցին հարձակումը Թերեքի խորհրդային հանրապետության դեմ:

Հյուսիսային Կովկասի աշխատավորների հիմնական զանգվածը գնում էր բոլշևիկների հետևից, և նրանք խոչընդոտեցին թուրքական նվաճողներին՝ շարժվելու դեպի երկրի խորքը: Դրանով վերջ տրվեց թուրքերի հետագա նվաճումներին Կովկասում:

Ադրբեջանում, ինչպես և Հայաստանում, թուրքական զավ-

1. «Пролетарская революция». 1940, № 2, с. 205—206.

թիշները՝ գաղութարարական-ոստիկանական ռեժիմ հաստատեցին:

Հաղորդելով Բաքվում թուրքական գազանությունների ու թալանի մասին, «Պրավդա» թերթը մատնանշում էր, որ քաղաքը գրավելուց անմիջապես հետո թուրքերը սկսեցին առաջին հերթին որսալ բոլշևիկներին, որոնք նրանց մեջ հատուկ ատելութուն էին առաջ բերում: Թուրք ոստիկանների կողմից բանվորների շրջանում կատարվող բազմաթիվ խուզարկություններն ու ձերբակալությունները նպատակ ունեին կանխել պրոլետարիատի ապստամբութունը թուրքական տիրապետության դեմ:

Թուրքական զավթիշների գումակի հետ Բաքու ժամանեց մուսավաթական «կառավարութունը», որը ստեղծվել էր 1918 թվականի հունիսին Գյանջայում մոլի նացիոնալիստ Խան-խոյսկու գլխավորությամբ՝ թուրքական սվինների հովանավորության ներքո: Այդ կառավարութունը ոչ մի իրական իշխանութուն չունի և կատարում էր լոկ թուրքական հրամանատարության կամակատարի դերը:

Թուրքական զավթիշները տեր ու տնօրինություն էին անում Ադրբեջանում, ինչպես իրենց սեփական գաղութում: Նրանք ամբողջովին իրենց ձեռքը վերցրին երկրի տնտեսության կարևորագույն ճյուղերը՝ Բաքվի նավթարդյունաբերությունը, կասպիական նավատորմիղը, երկաթուղային տրանսպորտը, այն ամենը, ինչը շահացրեցին կամ շկարողացան թալանել և արտահանել նրանց նախորդները՝ անգլիական իմպերիալիստները: Թուրքերը Ադրբեջանից միլիոնավոր փութ նավթ և զանազան նավթամթերքներ, պղինձ, բամբակ, բրդրինձ, հաց և գյուղատնտեսական այլ ապրանքներ էին արտահանում:

Ադրբեջանցիների նկատմամբ անօրինականության ու բռնություններ գործադրելուն զուգընթաց թուրքական զավթիշները միաժամանակ նրանց անվանում էին իրենց «արյունակից եղբայրներ», որ եկել են նրանց «ազատագրելու բոլշևիզմի սպառնալիքից»: Թուրք ռազմական պատմաբան գնդապետ

Բերքուրը գրում էր. «Մեր կառավարությունը... խոստացել էր ճանաչել ու հաստատել այդ ժողովուրդների անկախությունը...»<sup>1</sup> (նկատի ունի Ադրբեջանի ու Հյուսիսային Կովկասի մահմեդական ազգաբնակչությանը — Ծ. Ս.): Այդ «անկախություն» տակ թուրք նվաճողները հասկանում էին Կովկասի ուղղակի միացումը Թուրքիային:

Իրենց իսկական նպատակները քողարկելու համար երիտթուրքերը տակավին 1918 թվականի մայիսին մուսավաթական կուսակցության մեջ եղած իրենց գործակալներին ցուցում տվեցին՝ սկսել կամպանիա հանուն «անկախ Ադրբեջանի»: Բաթումի կոնֆերանսին ներկա մուսավաթական պատվիրակությունը էնվեր փաշային հղեց հետևյալ նամակը. «Չնայած Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչություն ունեցող հատվածը Թուրքիային լրիվ միացնելու վերաբերյալ մեր խնդրանքին, մեզ փաստարկելով բացատրեցին, որ Թուրքիայի «մեծ քաղաքականությունը» պահանջում է, որպեսզի մենք առայժմ անկախ ու ուժեղ լինենք... Մենք ընդունեցինք այդ ցուցումները՝ գիտակցորեն համաձայնելով դրանց հետ»<sup>2</sup>: Եթե երիտթուրքական ղեկավարները «մեծ քաղաքականություն» նպատակներից, այսինքն՝ ամբողջ Կովկասը գրավելու խնդրից ելնելով, միառժամանակ քողարկում էին իրենց նվաճողական ձգտումները, ապա թուրք զինվորները, իրենց երևակայական հաջողություններից արբեցած, առանց քաշվելու խոսում էին Անդրկովկասում կատարված ինտերվենցիայի իսկական պատճառների մասին:

Նազրմ փաշան, որը Անդրկովկասում թուրքական զորքերի հրամանատարի պաշտոնում նախորդել էր Նուրի փաշային, Գյանջայի գրավումից հետո տեղի բնակիչներին հայտարարեց հետևյալը. «... Իր կրոնակից ու ազգակից ժողովուրդների հետ միավորվելու Թուրքիայի վաղեմի երազանքը, վերջապես, իրականացավ... Այժմ զինաթափվե՛ք, հրացաններն այլևս հարկավոր չեն խաղաղ ազգաբնակչությանը: Իմ ասքյարները ձեր հանգստությունը կապահովեն»<sup>3</sup>:

1. Berkuk, նշվ. աշխ., s. 31.

2. «Труды Азербайджанского филиала ИМЛ при ЦК КПСС» VIII, Баку. с. 70.

3. «Бакинский рабочий». 29. VI 1918 г.

1918 թվականի թուրքական արշավանքի մասնակից զինդապետ Ռյուշտյուն Թուրքիայի ու մուսավաթականների միջև բաժնուժամ կնքված պայմանագրի կապակցությամբ գրում է, որ այդ փաստաթղթով նախատեսվում էր «թուրքական օգնություն Ադրբեջանին՝ բոլշևիկների դեմ պայքարելու համար»<sup>1</sup>:

Այդ «միսիայի» իրագործումը ուղեկցվում էր սարսափելի շարդերով ու կողոպուտով, որը, սակայն, թուրքական զավթիչներին չէր խանգարում աղմկելու այն մասին, որ իրենք օգնում են մահմեդականներին ազատագրվելու ռուսական լծից: Պահպանվել են թուրքական հրամանատարության մի շարք թուղթիկներ, որոնցում նա Անդրկովկասի գրաված շրջանների ազգաբնակչությանը կոչ էր անում «հնազանդության ու հպատակության»: Այսպես, Զանգեզուրում գտնվող թուրքական զորքերի պարետի՝ Իզեթ-բեյի 1918 թվականի օգոստոսի 1-ի կոչում մատնանշվում էր, որ տեղական մահմեդականները երկար ժամանակ գտնվում էին ցարիզմի անտանելի ճնշման տակ և որ այժմ, թուրքերի օգնությամբ, նրանց հաջողվեց «ազատագրվել»: «Մենք,— ասվում էր կոչում,— եղբայրական ձեռք ենք մեկնում ձեզ, վերցրեք այն: Եթե մենք իրար ձեռք մեկնենք, մենք ճանապարհ կբանանք դեպի անսահման երջանկությունը: Մառայակամությունն ու հեզությունը սիրո են արժանի»<sup>2</sup>: Իսկ Ստամբուլում լույս տեսնող «Թասֆիրի էֆթյար» թերթը 1918 թվականի մարտի 6-ի համարում գրում էր, որ Թուրքիայի միակ ձգտումն է միավորվել իր եղբայրակիցների՝ կովկասյան թուրքերի հետ և ազատել նրանց «դարավոր լծից»<sup>3</sup>:

Թուրքական զավթիչների նվաճողական պլանները մուսավաթականները պաշտպանում էին ամբողջովին: 1918 թվականի հուլիսի սկզբին մուսավաթական կառավարությունը իր հավատարմության զգացմունքներն արտահայտելու համար հատուկ պատվիրակություն ուղարկեց Ստամբուլ: Պատվիրա-

1. (Տե՛ս Rustu, Büyük harpte Baku yollarında 5 Kafkas piyade firkası Տե՛ս «Askeri tarih, mécmuanin kısmı», İstanbul, 1934, Say 34, s. 7):

2. ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, գ. 1256, Թ. 34:

3. Նույն տեղում:

կուսիցան դեկավար Ռասուլ-զադեն էնվերի ներկայութեամբ սուլթանին խնդրեց իր «բարձր հովանավորութեան» տակ վերցնել ինչպես Ադրբեջանը, այնպես էլ բոլոր մահմեդական ժողովուրդներին, ստեղծել հզոր մահմեդական պետութիւն թուրքիայի՝ մահմեդական աշխարհի կենտրոնի գլխավորութեամբ<sup>1</sup>:

Մուսավաթական կուսակցութեան մյուս պարագլուխը՝ Ալի Մուրադ-բեյ Թոփչիբաշևը, որը նույնպես պատվիրակութեան կազմում էր, գրում էր. «Աստժո ողորմածութեամբ ինձ հաջողվեց հասնել նպատակին՝ տեսնել բոլոր մահմեդականների խալիֆին ու թուրքերի փադիշահին... Մենք, ադրբեջանական թուրքերս, միշտ կլինենք և ցանկանում ենք ապրել բոլոր մահմեդականների խալիֆի՝ օսմանների փադիշահի ողորմածութեամբ...»<sup>2</sup>:

\*\*\*

Անդրկովկասում թուրքական ինտերվենցիայից հատկապես տուժեց հայ ազգաբնակչութիւնը: Անդրկովկասի բոլոր նվաճված շրջաններում երիտթուրքերը շարունակում էին կիրառել հայ ժողովրդի բնաջնջման իրենց քաղաքականութիւնը: Տրապիզոնի կոնֆերանսում, ի պատասխան Արևմտյան Հայաստանին ինքնավարութիւն տալու վերաբերյալ անդրկովկասյան պատվիրակութեան ներկայացրած պահանջին, թուրքական ներկայացուցիչները լկտիորեն հայտարարեցին. «Այնտեղ հայեր չկան և չեն լինի, որովհետև այն տեղերում, որով անցնում է թուրք գիւնվորը, հայեր չեն մնա»<sup>3</sup>:

Երիտթուրքերը այդպես էլ վարվում էին: Արդահանի շրջանի գրավման ժամանակ ոչնչացվեց մի քանի հազար հայ: «Հաշվեհարդար տեսնելով տղամարդկանց հետ, — պատմում էր այդ շարագործութիւնների վկաներից մեկը, — թուրքերը մեզ լրիվ կողոպտեցին, և մերկացնելով մինչև ներքնաշապիկը, ուղարկեցին Ախալքալաք, ուր մենք մի քանի հազար

1. Տե՛ս ԱԳԱՕՐ Առ. ՀՀՐ, փ. 211 Ե. օր. 1, Ժ. 30, Լ. 1—2:

2. Նույն տեղը:

3. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, Գ. 53, Թ. 78:

կանայք ու երեխաներ, գնում էինք ոտքով ամբողջ մի ամս-  
վա րնթացքում, տառապելով սովից ու ցրտից»<sup>1</sup>։

Մի այլ ականատես գրում է, որ Արդահանի վրա թուրքե-  
րի հարձակման ժամանակ շրջակայքի բոլոր հայկական գյու-  
ղերը հրկիզվել էին, իսկ նրանց բնակիչները՝ ղնդակահարվել։  
Թուրքերը կրակի էին մատնում ամբողջ գյուղերը՝ նախօրոք  
առանձնացնելով գեղեցիկ աղջիկներին ու կանանց, որոնց  
բռնաբարելուց հետո, նույնպես սպանում էին։ Արդահանը  
զրավելուց անմիջապես հետո թուրքերը ձեռնամուխ եղան  
հայ ազգաբնակչության գլխովին բնաջնջմանը<sup>2</sup>։

Կարսի մարզում թուրքական զորքերի ներխուժումը նույն-  
պես ուղեկցվում էր հայերի շարժերով ու նրանց գույքի  
բռնագրավմամբ։ «Ամբողջ մարզում ներկայումս չի մնացել  
և ոչ մի կենդանի հայ,— հաղորդում էր ականատեսը։—  
Թուրքական զորքերի հարձակման ժամանակ Արդահանի ու  
Օլթիի մարզերից հայերի փախուստի բոլոր ճանապարհները  
փակվել էին... ուստի և այդ մարզերի ամբողջ հայ ազգա-  
բնակչությունը մնաց տեղում և սրի քաշվեց»<sup>3</sup>։

Ռուսաստանի կառավարությունը իր բողոքի ձայնը բարձ-  
րացրեց երիտթուրքերի կողմից կիրառվող զազանություննե-  
րի դեմ։ 1918 թվականի ապրիլի 13-ին Թիֆլիսի գերմանա-  
կան դեսպանին ուղարկվեց ՌեՅՍՂ արտաքին գործերի ժո-  
ղովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի և նրա տեղակալ Լ. Մ.  
Կարախանի հեռագիրը՝ «Թուրքական զորքերի Հայաստան  
շարժվելու և Գերմանիայի պատասխանատվության մասին»,  
որտեղ ասված էր հետևյալը. «Թուրքական բանակը առաջ է  
շարժվում դեպի Բաթում, Կարս, Արդահան, ավերելով երկի-  
րը և ոչնչացնելով գյուղացիական բնակչությանը։ Հայերի  
հետագա ճակատագրի համար պատասխանատվությունն  
ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև նրա պնդմամբ ու-  
սական զորքերը դուրս բերվեցին հայկական մարզերից, և  
այժմ Գերմանիայից է կախված թուրքական բանակի հետ  
ուսահումը վրեժի ու շարություն հողի վրա ծագող սովորական  
էքսցեսներից։ Դժվար է հաշտվել այն մտքին, որ մի այնպի-  
սի կուլտուրական պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը  
հնարավորություն ունի ազդելու իր դաշնակից Թուրքիայի  
վրա, թույլ կտա, որ իր կամքից անկախ այս համաշխարհա-  
յին պատերազմի մեջ ներքաշված հայ ժողովրդի համար  
Բրեստի հաշտության պայմանագիրը ծառայի անթիվ թշվա-

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 53, թ. 78։

2. Տե՛ս նույն տեղը, թ. 85, 91։

3. Документы и материалы, л. 281.

ուսթյունների աղբյուր: Ուստի խորհուրդը հավատացած է, որ Դուք ձեռք կառնեք միայն ձեզանից կախված անհրաժեշտ միջոցները, ազդելու թուրքական իշխանություն վրա՝ խաղաղ բնակչության ոչնչացումը, ինչպես այդ տեղի ունեցավ Արդահանում, կանխելու նպատակով»<sup>1</sup>:

Ստանալով նոտան, գերմանական կառավարությունը ոչինչ չձեռնարկեց թուրք ջարդարանների կողմից հայերի նրկատմամբ կիրառվող շարագործություններին վերջ դնելու համար: Թուրքական զորքերը շարունակում էին անխնա կոտորել խաղաղ հայ ազգաբնակչությանը:

Կարսի մերձակայքի ու Կաղզվանի շրջանի հայ ազգաբնակչությունը հասցրեց պատսպարվել Կարսում: Քաղաքի անսպասելի հանձնումը թուրքերին (1918 թվականի ապրիլի 24-ին) այնտեղ խուճապ առաջ բերեց: Կարսի հայ և ռուս բնակչությունը, թողնելով իր ամբողջ գույքը, փախավ Ալեքսանդրապոլ<sup>2</sup>: Սակայն թուրքերը այստեղ էլ արյունալի ջարդ կազմակերպեցին: Ահա թե ինչ էր հաղորդում «Կավկասական սլովո» կեբերթի թղթակիցը. «Քաղաքում սարսափելի մի բան էր կատարվում. դա միայն կարելի է զգալ, սակայն հնարավոր չէ նկարագրել: Կանայք հիստերիկայի մեջ էին... Կրտսերներից շատերը, միայն ներքնաշապիկով, գրկած երեխաներին, թողնելով ամեն ինչ, փախչում էին... Ալեքսանդրապոլը ընկավ գիշերվան մոտ»<sup>3</sup>:

Գրավելով Ալեքսանդրապոլը, թուրքական զավթիչները քաղաքից դուրս տարան պարենի բոլոր պաշարները, անասունները, կտորեղենը<sup>4</sup>: Թուրքական զորքերի ձեռքն ընկան կովկասյան բանակի թիկունքի խոշորագույն պահեստները, որոնցում պահվում էին հսկայական քանակությամբ ռազմամթերք ու զինվորական հանդերձանք՝ մոտավորապես մի քանի միլիոն ոսկի ռուբլի արժողությամբ<sup>5</sup>:

Ալեքսանդրապոլի հայրենակցական վարչության նախագահի 1918 թվականի դեկտեմբերի 1-ի զեկույցում թվարկվում էին այն ծանր կորուստներն ու ավերածությունները, որոնք թուրքերը պատճառել էին Ալեքսանդրապոլին ու նրա գավառին: Արթիկ, Բաշգյուղ, Ղփչաղ, Արխավալի գյուղերը ամբողջովին թալանվել էին: Արթիկում ջարդի ժամանակ սրի էին

1. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 211—212:

2. Տե՛ս «Документы и материалы», л. 390.

3. «Кавказское слово». 8.VI.1918 г., № 116.

4. Տե՛ս «Աշխատավոր», 18.6.1918, № 86:

5. Տե՛ս ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 20, գ. 81, Բ. 1:

քաշվել բոլոր տղամարդիկ, բռնաբարվել ու գերի տարվել գյուղի կանայք: Նույն բախտին էին արժանացել Զուխայի, Իլխարբի, Թոմառտաշի, Հոռոմի և մի շարք այլ գյուղերի բնակիչները:

«Ընդհանրապես, Ալեքսանդրապոլի շրջանի ավելի քան 120 բարեկարգ ու բազմամարդ, հարուստ ու ծաղկող հայկական գյուղերից և ոչ մեկը զերծ չմնաց թուրքական սրի ու յաթաղանի ավերիչ ու կործանարար գործողությունից... Հայկական գյուղերի ծաղկուն ողջ երիտասարդությունը, — ասվում էր այդ փաստաթղթում, — աշնան տերևների նման, իր դիակներով ծածկեց սարերի գագաթներն ու լանջերը: Բոլոր այդ գյուղերում թուրքերը հին ասորացիներին հատուկ դաժանություն հանդես բերեցին»<sup>1</sup>:

Հայերի զանգվածային ջարդեր տեղի ունեցան նաև Ղարաքիլիսայում, Լոռի-Փամբակի, Ախալքալաքի ու Ախլցխայի գավառների ամբողջ տարածքում՝ ամենուրեք, որտեղ երևում էին թուրքական զորքերը: Ղարաքիլիսայում թուրքական զորքերի գազանությունների մասին փաստաթղթերից մեկում ասվում է. «... Տրված գաղտնի հրամանի համաձայն, սկսվեց հայ ռազմագերիների ու խաղաղ բնակիչների գլխովին կոտորածը... հայ գերիներին, որոնք իրար հետ կապված էին պարաններով, խմբերով տանում էին մերձակա անտառը: Գրնդակահարում էին տասնյակ ու հարյուրավոր սպաների ու զինվորների: Միաժամանակ, հենց գյուղի ներսում, սրի էին քաշում նրա բոլոր հայ բնակիչներին: Շատ ընտանիքներ լրիվ ոչնչացվել են: Տղամարդիկ գյուղում գրեթե չեն մնացել»<sup>2</sup>:

Թուրքական զավթիչները Ղարաքիլիսայից ու շրջակայքի գյուղերից արտահանեցին ամբողջ հացահատիկը, անասունները, եկեղեցիներից ու հիմնարկներից կողոպտված թանկարժեք իրերը: «Թուրքական իշխանությունները, — հաղորդում էր Թիֆլիսի «Բարբա» թերթը, — բնակչությունից խլում են հացահատիկն ու անասունները՝ դրանց դիմաց ինչ-որ պարտաթղթեր տալով: Բերքի մեկ քառորդը թուրքերը վերցնում են առանց որևէ վճարի, ասելով՝ այդ հասնում է մեզ շարիաթի համաձայն»<sup>3</sup>:

Ախալքալաքի գավառում թուրքական զորքերի կողմից ավերվեցին 62 հայկական գյուղեր: Քաղաքի ու գյուղի բնակիչները, թողնելով իրենց-ամբողջ գույքը, թաքնվեցին անտառ-

1. «Документы и материалы», л. 352—355.

2. Նույն տեղը, թ. 347:

3. «Ворьба», 21. VI, 1918 г., № 123.

երում և պարտիզանական պայքար սկսեցին թուրք նվաճող-  
ների դեմ<sup>1</sup>:

1914—1918 թվականների համաշխարհային պատերազ-  
մում հայ ժողովրդին պատճառած վնասները որոշելու նպա-  
տակով կազմված հանձնաժողովի ղեկուցազրում նշվում էր.  
Թե ինչպիսի խժժուկություններ էին կատարել թուրքական զոր-  
քերը Լոռի-Փամբակի գավառում: Անհավասար մարտում  
ջախջախելով պայքարի ելած տեղական բնակչությանը,  
թուրքերը ներխուժեցին Զալալօղլի (Ստեփանավան) և այն-  
տեղ սարսափելի ջարդ կազմակերպեցին: Զավթիչները գա-  
վառից դուրս տարան մթերքի բոլոր պաշարներն ու անասուն-  
ները:

«Երբ բնակչությունը հետ վերադարձավ Զալալօղլի,—  
գրում էր ականատեսներից մեկը,— այն իրենից ներկայաց-  
նում էր ինչ-որ մեռյալ քաղաք, ուր միայն շների հաշոցն էր  
լսվում»<sup>2</sup>:

Հայաստանի գրավված շրջաններից թուրքերը քշեցին տա-  
րան բոլոր պատանիներին ու աշխատունակ տղամարդկանց:  
Նրանց մեծամասնությունը ճանապարհին զոհվեց գազանային  
տանջանքներից, միայն շատ քշերը փրկվեցին: Համաշխար-  
հային պատերազմում թուրքիայի կրած պարտությունից  
հետո հետ վերադառնալով, նրանք պատմում էին, որ իրենց  
օգտագործում էին տաժանակիր աշխատանքներում, լծում  
էին սալլերին, քշում մետաղյա մտրակներով: Հայերի մեծա-  
մասնությունը շէր կարողանում տանել թուրքական աքսորի  
անմարդկային պայմանները և զոհվում էր խոշտանգումնե-  
րից ու քաղցից:

Դժվար է որոշել աքսորված հայերի ընդհանուր թիվը:  
Բավական է նշել, որ միայն Ալեքսանդրապոլի գավառից  
թուրքական զինվորական իշխանությունները թուրքիա քշե-  
ցին 6 հազարից ավելի մարդ, իսկ Շիրակից ու Փամբակից  
8 հազար մարդ: Հետ վերադարձավ նրանց միայն  $\frac{1}{10}$  մասը:  
Այդ դեպքերի ականատեսներից մեկը պատմում էր, թե ինչ  
վիճակում էին վերադառնում թուրքական գերութայն մեջ  
գտնվող հայերը. «Նրանց բոլորի մարմինները պատված էին  
ծեծից առաջ եկած վերքերով: Հլուծված. նրանք հազիվ էին  
ոտքի վրա կանգնում, նրանց վրա նույնիսկ հագուստ չկար,  
և իրենց մարմնի մերկությունը նրանք ծածկում էին մեծ գոգ-

1. Տե՛ս «Документы и материалы», ст. 357.

2. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 95, թ. 36:

3. Տե՛ս նույն տեղը, թ. 22, 128:

նոցի ձև ունեցող քաթանի մի կտորով: Վերադարձածներից շատերը մահանում էին ուժասպառութիւնից»<sup>1</sup>:

Ձգտելով Արևելյան Հայաստանի նվաճված շրջանները մաքրել բուն ազգաբնակչութիւնից, թուրքական իշխանութիւնները հայերի ֆիզիկական ոչնչացման հետ մեկտեղ կիրառում էին նաև Արևմտյան Հայաստանում նրանց կողմից անցկացվող մեթոդը՝ կենդանի մնացած հայերին ղրկելով գոյութիւն տնտեսական հիմքերից: Այդ բոլոր շարագործութիւնները տարհրային բնույթ չէին կրում, դրանք չի կարելի որակել որպէս դիակապտութիւն կամ թուրքական գինավորների կողմից հանդես բերված սանձարձակութիւն: Խոսքը վաղօրոք մշակված պարբերաբար իրականացվող ծրագրերի մասին է: Թուրքական հրամանատարութիւնը հետապնդում էր որոշակի, գիտակցորեն առաջադրված նպատակ՝ ոչնչացնել հայ ազգաբնակչության առավել աշխատունակ մասը և քայքայել նրա տնտեսական ուժերը:

## Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ե Ր Ր Ղ

### ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎՈՒՄ

Անդրկովկասի ժողովուրդները իրենց դառը փորձով համոզվեցին, որ թուրքական զավթիչների վճռումը երկրամասի ազատագրման նախնական պայմանն է հանդիսանում:

ՌՍԴԲ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի կողմից 1918 թ. ապրիլի 13-ին «Ընթացիկ մոմենտի առթիվ» ընդունված որոշման մեջ ասվում է. «Թուրքական քայքայված իմպերիալիզմը հարձակման է անցել գերմանական իմպերիալիզմի հետ համաձայնության եկած: Երկյուղելով, որ հեղափոխությունը կարող է տարածվել Թուրքիա, կարող է արձագանք գտնել տանջված, սովյալ ու մերկ թուրք ժողովրդի սրտերում, կարող է ազատագրել կեղեքված ու նրա լծի տակ տքնող ժողովուրդներին, թուրքական գիշատիչ փաշաները կենսականորեն շահագրգռված են ոչ միայն բեկական հակահեղափոխության վերջնական հաղթանակին Անդրկովկասում, այլև Կովկասում սոցալիստական հեղափոխական շարժումը խեղդելուն:

«Թուրքական արշավանքը դեպի Անդրկովկասի խորքը և նրա նվաճումը կհանգեցնի ոչ միայն սև, դաժան ռեակցիայի հաղթանակին, այլև երկրի վրայից կարբի ամեն տեսակի կուլտուրայի բոլոր հետքերը և հիանալի Կովկասը կվերածվի մոխրի ու փլատակների: Թուրքերի հաղթանակը Անդրկովկասի ժողովուրդներին մի քանի հարյուրամյակ հետ կշարտի»<sup>1</sup>:  
Օտարերկրյա ինտերվենտներին հակահարված տալու գործում կարևոր դեր խաղաց Բաքվի խորհուրդը: Վերջինս էլ

1. «Известия Бакинского Совета», 21.V.1918, № 94.

լայն պրոպագանդա ծավալեց երկրամասի աշխատավորների շրջանում՝ կոչ անելով պայքարի հլնել թուրքական նվաճողների դեմ:

«Կովկասի լեռներն ու ձորերը, դաշտերն ու մարգագետինները,— գրում էր Բաքվի «Տեղակատու» թերթը,— կղապանան թուրքական ասքյարների ու գերմական յունկերների գերեզմանը: Անդրկովկասի աշխատավորները զգոն են, նրանց կատաղությունը մեծ է, ատելությունը՝ անսահման: Ուրեմն, լավ դիտցեք, որ ամեն մի մարդ, կին թե տղամարդ, ծեր թե պատանի, պատրաստ է մեռնելու իր ազատության համար...»<sup>1</sup>:

Օտարերկրյա դավթիչներին դիմադրություն ցույց տալու հիմնական եղանակը այդ շրջանում պարտիզանական պատերազմն էր: Պարտիզանական ջոկատները անակնկալ հարձակումներով ոչնչացնում էին թշնամու պահեստները, ըսպառազինությունը, պարենի ամբարները, շարքից հանում երկաթուղազծերը, հարձակում գործում ռազմական կայազորների վրա, ոչնչացնում սպաներին ու զինվորներին:

Պարտիզանական պատերազմը լայն ծավալ գտավ Հայաստանում: «Ամենուրեք Կովկասում,— հաղորդում էր «Լյա վուա դը լ'Արմենի» ամսագիրը,— հայերը կազմակերպում են ջոկատներ՝ թուրքական զորքերի դեմ պայքարելու համար»<sup>2</sup>:

Չնայած Հայաստանի նվաճված շրջաններում թուրքական դավթիչների կեղմից հաստատված տեռորի ռեժիմին, հազարավոր մարդիկ թաքնվելով լեռներում ու անտառներում, անընդհատ հարձակումներ էին գործում թշնամու վրա և ջլատում նրա ուժերը:

Հայաստանի շատ վայրերում թուրքական ջարդարարների գաղտնությունները աղգարնակչության շրջանում դիմադրության տարերային պոռթկումներ էին առաջ բերում: Այսպես, Շիրվանջուղ գյուղում, երբ թուրք զինվորները գյուղացիներից պահանջեցին անվճար մթերքներ տալ իրենց, նրանք այդ բանը կատարեցին: Սակայն, երբ ասքյարները գյուղացիներից պահանջեցին իրենց հանձնել գեղեցիկ կանանց ու աղջիկներին, այդ հրամանը գյուղի բնակիչները վճռականորեն հրաժարվեցին կատարել: Այն ժամանակ թուրքական ասքյարները կրակ բացեցին գյուղացիների վրա, որին պատասխան վերջիններս զենք վերցրին և, դիմելով պաշտպանության, ըսպանեցին թուրքական 6 զինվոր: Կենդանի մնացած ասքյարները փախան Ալեքսանդրապոլ և կատարվածի մասին տեղի-

1. «Տեղակատու», 1918, № 43:

2. «La voix de l'Arménie», 15. X. 1918, № 10, p. 354.

կացրին զինչ: րական իշխանություններին. Շիրվանշուկ ուղարկվեց պատժիչ արշավախումբ, որը կազմակերպված հակահարված ստացավ տեղի և մերձակա գյուղերի բնակիչներին կողմից: Թեժ մարտում երկու կողմից էլ մեծ թվով սպանվածներ ու վերավորներ կային<sup>1</sup>:

Ալեքսանդրապոլի շրջանի թուրքական պարետ Մեհմեդ Թեջիրը իր գաղտնի հրամանում նշում էր, որ հայկական Արթիկ, Շիրվանշուկ, Մահուշուկ գյուղերի բնակչությունը «Հինվորական օրենքների ամենայն խստութեամբ պատրվեց»՝ թուրքական զորքերի դիմ զինված ելույթներ ունենալու համար: Նա իր ենթականերից պահանջում էր ազգաբնակչությանը նորից տեղեկացնել այն մասին, որ թուրքերի դիմ զենք բարձրացրած բոլոր գյուղերը անհապաղ կոչնչացվեն<sup>2</sup>:

Հայ գյուղացիների համառ պայքարի մասին վկայում էր ինքը՝ Կարաբեքիր-փաշան. «Ալեքսանդրապոլից դեպի հարավ, Շիրվանշուկի ու Մահմուդշուղի շրջաններում, գյուղական բնակչությունը, ոչնչացնելով թուրքական պահեստները և սպանելով դրանք հսկող զինվորներին, զենքը ձեռքին անցավ սարերը»<sup>3</sup>:

Թուրքական զավթիչներին հայ ժողովուրդը հերոսական դիմադրություն ցույց տվեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում:

1918 թվականի մայիսի 15-ին գրավելով Ալեքսանդրապոլը, թուրքերը հավատացած էին, որ իրենց կհաջողվի մի քանի օրվա ընթացքում գրավել ողջ Հայաստանն ու Վրաստանը, քանի որ Ալեքսանդրապոլի անկումը քայքայեց հայկական զորքերը: Հայկական կորպուսի հրամանատար զենեբուլ Նադարբեկյանը կազմալուծված զորքերով նահանջեց դեպի Դիլիջան և այնտեղից հեռագրեց Թիֆլիս՝ հայոց Ազգային խորհրդին\*, որ իր տրամադրության տակ ընդամենը 300 զինվոր կա և ինքը գտնում է, որ այսուհետև թուրքերին դիմադրելը անհնարին է և անիմաստ:

1. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 95, թ. 104:

2. Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 38, թ. 126:

3. Karabekir pasa, Birinci Kafkas Kclordusunun 334 senestndeki harekätive meshudati hakkinda general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor süreti, Erzurum, 1335 (1919), s. 9.

\* 1917 թ. աշնանը Թիֆլիսում գումարվեց Ռուսաստանի հայերի Ազգային համագումարը Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ: Համագումարը կազմեց Ազգային խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը: Ազգային խորհուրդը դարձավ կովկասահայերի անսպաշտոն կառավարությունը և մինչև Հայաստանի Հանրապետության ստեղծումը, ղեկավարում էր հայկական զորքերը:

նույն կարծիքին էր նաև Երևանի զորաբաժնի հրամանատար գեներալ Սիլիկյանը: Նա Ազգային խորհրդին ուղղած իր հեռագրում նշելով Երևանի զորաբաժնի ողբերգական դրություն մասին, շեշտում էր, որ թուրքերին դիմադրելը այլևս անհնարին է դառնում: Դրությունն այնպիսին է, որ պետք է անհապաղ վերջնական հաշտություն կնքել թշնամու հետ՝:

Նույն տեսակետին էին նաև հայկական Ազգային խորհուրդը ու նրա ներկայացուցիչները Բաթումի կոնֆերանսում և դաշնակցական կուսակցության ղեկավարությունը: Այդ մասին է հավաստում դաշնակցական կուսակցության ղեկավարներից մեկը՝ Սիմոն Վրացյանը: «Դիմադրությունը, — գրում է նա, — շատերին թվում էր անհնար և անիմաստ: Հաղթության վստահություն չէին ներշնչում և մինչև այդ բանակից հասնող տեղեկությունները. զորավար Սիլիկյանի հազորդազորությունները մոռալ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը»<sup>2</sup>: Եվ բոլորովին պատահական էր, երբ հանկարծ տեղի ունեցավ «Սարգարապատի հրաշքը», ինչպես Վրացյանը<sup>3</sup> անվանում է Սարգարապատի հերոսամարտը: «... Կատարվում է հրաշքը, — գրում է նա, — մեկը այն հրաշքներից, որոնք գալիս են բոլորովին շսպասված և փրկում անհույս համարված կացությունը... Եվ Արարատյան դաշտի ժողովուրդը մի մարդու պես ոտքի է կանգնում»<sup>4</sup>:

Թուրքական զորքերը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո համոզված լինելով, որ իրենք այլևս լուրջ դիմադրության չեն հանդիպի, առաջ էին շարժվում երեք ուղղություններով՝ Ալեքսանդրապոլ—Երևան, Ալեքսանդրապոլ—Ղարաբաղիսա—Դիլիջան—Ղաղախ—Գյանջա—Բաքու:

Հարձակվելով Երևանի ուղղությամբ, թուրքական զորքերը հրկաթուղու ընթացքով մայիսի 21—22-ին գրոհեցին Սարգարապատի վրա: Մայիսի 21-ին մարտում սպանված թուրք սպայի գրպանում հայտնաբերված հրամանից երևում էր, որ Սարգարապատի շրջանում գրոհի է անցել 108-րդ թուրքական հետևազորային գունդը՝ բաղկացած 3 հազար ասկյարներից<sup>5</sup>: Հայկական զորքերի նահանջի և թուրքերի սրընթաց հար-

1. Տե՛ս 22 կողմ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 1-14:

2. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Փարիզ, 1928, էջ 118:

3. Տե՛ս Ս. Վրացյան, նույն տեղը և նրա առաջնորդող հոդվածը՝ «Սարգարապատի հրաշքը»՝ «Հուլիսի», 1962, հունիսի 5:

4. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 118:

5. Տե՛ս 22 կողմ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 1-14:

նակման այդ օրհասական պահին իրենց հայրենիքի և Երևանի պաշտպանություն համար հայկական զորքերին օգնություն եկավ ոտքի ելած Երևանի և շրջակա գյուղերի ողջ հայ բնակչությունը: Զինվելով ինչով հնարավոր էր, նրանք, զորամասերի հետ միասին, Սարգարապատի տակ անցան հակազուհի, որը թուրք ջարդարարների համար բոլորովին անըսպասելի էր: Այդ ժողովրդական հերոսամարտի շնորհիվ, մայիսի 22—26-ին, թվով գերազանցող թուրք զավթիչները ևս շարտվեցին Սարգարապատից, կռվի դաշտում թողնելով 3500 դիակ<sup>1</sup>: «Դա այնպիսի մեծ կորուստ էր թուրքական առանց այն էլ նոսր բանակի համար,— գրում է Ն. Գ. Թուրքյանը,— որ շղայնացած էնվերը Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Ֆերիկ Վեհիբին անմիջապես հանեց իր պաշտոնից և, հարկադրաբար հայասիրական կուրս ընդունելով, հայ զորքի հետ գինակցություն կնքելու առաջարկություն անելով, Կովկասյան ռազմաճակատի նոր հրամանատար նըշանակեց Միջագետքի ռազմաճակատի հրամանատար Խալիլ փաշային»<sup>2</sup>:

Գեներալ Նազարբեկյանի հրամանով հայկական երկրորդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանի վրա էր դրված Սարգարապատի պաշտպանությունը: Նրան էր վիճակված գլխավոր դեր խաղալու Սարգարապատի ճակատամարտում:

Սարգարապատի պաշտպանությունից բացի գեներալ Սիլիկյանը հոգում էր նաև թիկունքի ու թևերի ապահովության մասին, և ըստ էության դա ոչ թե տարերայնորեն ինքնապաշտպանության դուրս եկած աշխարհազորի դիմադրությունն էր ընդդեմ թուրք ջարդարարների, այլ նախապատրաստված ճակատամարտ<sup>3</sup>, իրենց հրամանատարի ռազմական գործունեության մասին գրել են Սարգարապատի ճակատամարտի մասնակիցները: Այսպես, 5-րդ զնդի 3-րդ գումարտակի դասակի հրամանատար Մարտին Մարտիրոսյանը իր հուշերում գրում է. «Սիլիկովը Երևանի զորաբաժանի հրամանատարն էր, նա էր հոգում թե՛ Սարգարապատում և թե՛ Բաշ-Ապարանում մեր զորքերի ռազմական, պարենային և համալըրման կարիքները: Զե՞ որ էջմիածնի և Բաշ-Ապարանի զորքերի թիկունքը Երևանն էր, և Սիլիկովը շէր կարող կարվել իր թիկունքից: Մի ոտքով նա Երևանում էր, մյուսով՝ էջմիածնում և ճակատում: Ես իմ սեփական աչքերով եմ տեսել, թե ինչպես գեներալ Սիլիկովը գալիս էր մեր առաջավոր դիր-

1. Տե՛ս նույն տեղը, ֆ. 200, ց. 1, գ. 132, թ. 940—910:

2. Ա. Գ. Թուրքյան, Սարգարապատի հերոսամարտը, Եր., 1965, էջ 138:

քերը դիտելու, իսկ մեկ օր էլ ես նրան տեսա երկու օգնականներով, ձի հեծած, Արագածի փեղեկներում շրջելիս, մեր դորքերի աջ թևում և մեզանից առաջ թշնամու դիրքերը և ռազմադաշտի տեղանքը ուսումնասիրելիս»<sup>1</sup>

Մարշալ Բաղրամյանը բարձր է գնահատել զեներալ Սիլիկյանի ռազմական մտահղացումները թևերի և թիկունքի ապահովումից սկսած մինչև գործողութիւններին վերջնական, հետևողական ղեկավարութիւնը: «Հարկավոր է ասել,— գրում է զորավարը,— որ զեներալ Սիլիկովը այդ բավականին բարդ իրադրութիւնում ընդունել է, կասեի, տաղանդավոր որոշում»<sup>2</sup>:

Այդ օրհասական պահին Սիլիկյանը կոչ էր անում. «Հայե՛ր, շտապեցեք հայրենիքն ազատելու, հասել է ըոպեն, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, հայրենիքի փրկութեան և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանութեան պիտի գործի զնի իր վերջին ճիգը թշնամուն հարվածելու համար: ...Հայե՛ր, ժամանակը չի գանդաղելու... Ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց զենքով՝ հայրենիքի պաշտպանութեան համար»<sup>3</sup>:

Սարգարապատի ճակատամարտում հերոսական սըխրանքներ գործեց նաև հինգերորդ հետևակ գունդը՝ Սիլիկյանի տեղակալ, գնդապետ Դանիել բեկ Փիրումյանի հրամանատարութեամբ:

Սարգարապատի հաղթանակի ապահովման գործում զգալի դեր խաղաց Արամ Մանուկյանը, որը Սարգարապատի օրերին, 1915 թ. Վանի ինքնապաշտպանութեան օրերի նրման, հմտորեն ղեկավարեց թիկունքը: Նա քիչ ջանքեր չթափեց Երևանի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու և նորանոր ջոկատներ զինելու ու ճակատ ուղարկելու գործում:

Զինվորների հետ կողք-կողքի կռվում էին Երևանի և շրջակա գյուղերի զինված բնակիչները, որոնք նույնպես Սարգարապատի մոտ անցան հակագրոհի: Դա թուրք ջարդարանների համար բոլորովին անսպասելի էր: Այդ հերոսամարտի շնորհիվ թվով գերազանցող թուրք զավթիչները հետ շրպըրտվեցին Սարգարապատից: «8 օրյա մարտերը (մայիսի 22—29-ը),— գրում է զեներալ Սիլիկյանը,— ավարտվեցին թուրքերի լիակատար պարտութեամբ և նրանց նահանջով մինչև Ալեքսանդրապոլ»<sup>4</sup>:

1. «Բաները Հայաստանի արխիվներէ», 1969, № 1, էջ 161:

2. Баграмян С. Х. Мои воспоминания, Е., 1979, с. 80.

3. ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 263, թ. 1:

4. Նույն տեղը, թ. 18:

Ճակատամարտի օրերին հայերի մեջ տիրում էր միասնություն և, անկախ քաղաքական համոզմունքներից, բոլորը գործում էին ընդդեմ թուրք զավթիչների: Հայկական զորքերի և աշխարհազորային ջոկատների հանդես բերած հերոսության ու տոկունության շնորհիվ Երևանը և հարող շրջանները ազատվեցին թուրքական զավթիչների արյունոտ լծի տակ ընկնելու վտանգից:

Յրանսիացի կապիտան Պուա դը Բարը, նկարագրելով Սարդարապատի հերոսամարտը, նշում է, որ հայկական զորամասերը այնպիսի ուժով գրոհեցին թուրքերի վրա, որ կատարելապես ջախջախեցին նրանց և հետապնդեցին մինչև Ալեքսանդրապոլի բարձունքները<sup>1</sup>:

Սարդարապատի հաղթանակը ամենուրեք ընդհանուր ոգևորություն առաջ բերեց: Երևանում բնակչությունը հանուն հայրենիքի փրկության ամեն ինչ զոհարեցում էր: Կանայք ուտելիք, ծխախոտ, վիրակապեր էին պատարաստում, թիկունքից սայլերով ուղղամթերք էին հասցնում ուղղադաշտ: «Դասավրեքները ինքնակամ ներկայանում և զորքի մեջ էին մտնում: Մեծ քանակությամբ կամավորներ են գրվում և զենավ ճակատ: Զորքի տրամադրությունը բարձր է» — գրում է ակադեմիկոսը<sup>2</sup>:

Սարդարապատում տարած փայլուն հաղթանակից հետո Նազարբեկյանը մայիսի 26-ին դիմեց «Ի լուր համայն հայության» կոչով, որում նշում էր, որ «Երևանի քաջարի զորամասը, վանելով հակառակորդի հարձակումները, ինքը դիմեց առաջխաղացման և երկօրյա կռվի մեջ հետ շարտեց թուրքերին և ներկայումս հետապնդում է նրանց: Երևանի զորամասի հաջողությունը ոգևորել է Ալեքսանդրապոլի զորաբաժնի զինվորներին, որոնք արագությամբ վերադարձան ճակատ մի ցանկությամբ՝ հաղթել կամ մեռնել»<sup>3</sup>:

Սարդարապատի ճակատամարտին ակտիվ մասնակցեցին են գնդապետ Կարաքեշիշյանի, կապիտան Կլիշի մարտկոցները, Միշինի և Պերեկրեստովի զորամասերը, գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը, Աթանեսյանի մարտկոցը և այլ զորամասեր: Անշուշտ, Սարդարապատի ճակատամարտում հիմնական կռվող ուժերը եղել են հայկական զորամասերը, որոնց միացել էին գյուղացիները, հոգևորականները, բանակը լքած նախկին սպաները և զինվորները: «Սարդարապատի

1. «Մշակ» 26/13 մայիսի, 1918, № 96, գեհ. Սիլիկովի հաղորդմից

2. Տե՛ս նաև «Бакинский рабочий», 1918, № 96:

3. «Մշակ», 1918, մայիսի 28 (15), № 97:

ճակատամարտում,— գրում է Աշոտ Հարությունյանը,—  
թուրքական կանոնավոր զորքերի դեմ առաջին հերթին կըր-  
վում էին հայկական բանակային կորպուսի կանոնավոր զըն-  
դերն ու զումարտակները, որոնց գլուխ կանգնած էին հայ  
սպաներ, ի դեմս կորպուսի հրամանատար գեներալ Նազար-  
բեկովի և դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկովի ու  
նրա շտաբի պետ, փոխգնդապետ Վեբիլովի»<sup>1</sup>

Սարդարապատի հերոսական հաղթանակն ընդհանուր ոգե-  
վորություն առաջ բերեց Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսիայի  
ուղղություններում:

Թուրքական հրամանատարութունը Սարդարապատի թեժ  
կովի ժամանակ՝ մայիսի 23-ին, 36-րդ դիվիզիայի ողջ մար-  
տական կազմն ուղղեց Բաշ-Ապարանի ուժի վրա, փորձելով  
Նրևանը գրոհել նրա հյուսիսից և դուրս գալ Սարդարապատի  
շրջանում հակահարձակման անցած հայկական զորամասերի  
թիկունքը՝ կտրելով նրանց Նրևանից: Թուրքական զորքերի  
այդ մտադրութունը խափանելու համար Սարդարապատի  
ճակատից շտապ կերպով ուժեր տեղափոխվեցին Բաշ-Ապա-  
րանի ճակատ, ուր կատաղի մարտերը շարունակվեցին մինչև  
մայիսի 29-ը: Թուրքական զավթիչները գլխովին շախշախվե-  
ցին և հետ շարավեցին դեպի Դյուլքջանդ գյուղը՝ Բաշ-Ապա-  
րանից արևմուտք: Կովի դաշտում թշնամին թողեց 200  
դիակ և բավականին դեմք ու զինամթերք: «Զորքի տրամա-  
դրութունը,— հաղորդում է Սիլիկովը,— գերազանցորեն  
բարձր է, ներկայումս զորքերը բռնում են ուժեղ դիրք: Դա-  
սալիքները մասսայաբար իրենց հրացաններով ու փամ-  
փուշտներով վերադառնում են ռազմաճակատ»<sup>2</sup>:

Բնակչութունը բանակի զինվորների ու սպաների հետ  
միասին Ղարաքիլիսիայի տակ մայիսի 25-28-ը տեւած արյու-  
նահեղ մարտերում կարողացավ կասեցնել թուրքական զավ-  
թիչների գրոհը նաև այդ ուղղությամբ: Մայիսի 28-ին ամ-  
բողջ ճակատով թուրքական զորքերը խուճապի մատնված  
նահանջում էին՝ ռազմադաշտում թողնելով մեծ թվով սպան-  
վածներ և ռազմամթերք: «Кавказское слово թերթը, հիմք

1. Ա. Ն. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում  
1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, էջ 181:

2. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 35, թ. 1—14:

ընդունելով թուրքական տվյալները, ընդգծել է, որ Ղարաքի-  
լիսայի արյունահեղ ճակատամարտը, որը սկսվել է մայիսի  
25-ին և տևել շորս օր, «հայերի կողմից՝ 1.500 սպանված ու  
վիրավոր և 1.000 գերի է եղել: Թուրքերի կորուստները ևս  
զգալի են»<sup>1</sup>:

Ահոն իր հուշերում անդրադառնալով Սարդարապատի և  
Ղարաքիլիսայի ճակատամարտերին, գրում է, որ թուրքերի  
հարձակման հետևանքով Երևանի համար ստեղծված «կրի-  
տիկական ըուպեին ժողովրդական երկու գրոհ հասկացնում  
էին շահի ու սահման կորցրած օսմանցիներին, թե նրանք  
այնքան էլ ամենակարող չեն այս փոքրիկ ազգությունների  
մեջ (խոսքը հայերի և վրացիների մասին է—Ե. Ս.): Մի գրոհը  
սկսվում է Երևանից և նրա շրջակա գյուղերից տարերային  
հոսանքով դեպի Սարդարապատ, ուր թուրք զորքերը ջարդ-  
վում են և ետ քաշվում: Մյուս գրոհը Դիլիջանից է սկսվում:  
Ալեքսանդրապոլից նահանջած մի քանի թնդանոթաձիգ հայ  
օֆիցերները փորձում են դիմել ղազախեցի քաջարի գյուղացի-  
ներին, որոնք տաքանալով խրախուսանքներից, լավայի պես  
դիմում են դեպի Ղարաքիլիսա, նույնիսկ առանց զենքի,  
ճանապարհին իրենց հետ քշելով-տանելով պատահած  
դյուղերը: Իսկ հրացաններ և փամփուշտներ նրանք զրտ-  
նում էին Կարսի և Ալեքսանդրապոլի փախստականների սայ-  
լերում», որոնք «լցրել էին Փամբակի ձորը: Կազմվելով ու  
կազմակերպվելով իբրև զորք՝ օֆիցերների ղեկավարության  
տակ, այդ բազմությունը մի ճակատամարտ է տալիս օսման-  
յան բանակին, որը տևում է երեք օր»<sup>2</sup>:

Ղարաքիլիսայի հերոսամարտի մասին Բաթումի բանակ-  
ցությունների ժամանակ Կովկասում թուրքական զորքերի  
հրամանատար Վեհիբ փաշան մի առիթով խոստովանել է, որ  
թուրքերը մեծ կորուստներ տվեցին այդ ճակատամարտում:  
«Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմու-  
թյան մեջ,— ասել է Վեհիբ փաշան:— Ղարաքիլիսայի մոտ  
հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են լավ դիմվորներ  
լինել»<sup>3</sup>: Իսկ Կարաբեքիր փաշան այդ ճակատամարտի մա-  
սին գրել է. «Մայիսի 26-ին 2-րդ կորպուսի 11-րդ դիվիզիան  
հաջողություն չունեցավ Ղարաքիլիսայի շրջանում, որտեղ հա-  
յերը ավելի ուժեղ դտնվեցին: Թուրքական դիվիզիան շորս

1. Տե՛ս «Кавказское слово», 1918, № 332.

2. Ահ, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925,  
399—400.

3. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, դ. 11, Բ. 63.

կիրումներ նահանջեց և այդ նահանջի ժամանակ հարձակման ենթարկվեց կացիններով դինված գյուղացիների կողմից»<sup>1</sup>:

Յավալի է, բայց փաստ, որ հայ ժողովրդի այդ ճակատագրական հաղթանակի մասին տեղյակ չէր Բաթումում գրտնրվող հայկական պատվիրակությունը, որը շտապում էր պայմանագիր կնքել թուրքերի հետ: Այդ մասին է վկայում իր հուշերում Դանիել բեկ Փիրումյանի օգնական կապիտան Շենուրը. «Դժբախտաբար, հայ պատվիրակները Բաթումում անտեղյակ էին Սարդարապատում տարած փայլուն հաղթանակի մասին, այլապես հաշտության պայմանները կլինեին ավելի բարենպաստ Հայաստանի համար»: Այդ մասին է վկայում նաև աղգությամբ հայ ժակ Կայալոֆը (մայիսյան կռիվների անմիջական մասնակից) գրել է. «Սարդարապատի հաղթանակի լուրը Թիֆլիսում հայտնի դարձավ Ղարաքիլիսայի ճակատամարտի երկրորդ փուլից հետո միայն, երբ թուրքերը, համալրում ստանալով, նորից գրավեցին քաղաքը»:

Եթե հայկական պատվիրակությունը տեղյակ լիներ Սարդարապատի ճակատամարտի դրական ելքին և բռնեք հաղթողին վայել դիրք, ապա պատմական կացությունը բոլորովին այլ կերպ կլիներ:

«Հենց Սարդարաբադի ու Ղարաքիլիսիայի ճակատամարտերի հետևանքով,— գրել է Դ. Անանունը,— Թուրքիան հայերին թույլ տվեց նստել բանակցությունների սեղանի շուրջը Բաթումի կոնֆերանսում»: Թուրք պատվիրակությունը, որը քաջատեղյակ էր Հայաստանում իրենց դորքերի կրած պարտություններին, ջանում էր որքան կարելի է շուտ պայմանագիր կնքել, որպեսզի կասեցնեք հայերի առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ և Կարս:

Քանի որ թուրքական զորքերին հասցված պարտությունն այնքան ծանր էր, որ հետագայում Վեհիբ փաշան խոստովանել է, որ «կալատրաստվինք հետ քաշվել, լքել Ալեքսանդրապոլը, նույնիսկ Կարսը հայ ժողովրդի դիմադրության առաջ»<sup>2</sup>:

Ժամանակակից թուրք պատմաբանները, ընդհակառակը, լռության են մատնում թուրքական զորքերի պարտությունը

1. Karabek, Դ, նշվ. աշխ., էջ 9:

2. Տե՛ս Մ. Ավետիսյան, Հուշամատեն զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 198:

Սարգարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում: Նրանք, խոսելով թուրքերի հաղթանակների մասին, ամեն կերպ ճգնում են «արդարացնել» թուրքերի ազրեսիան Անդրկովկասում: Այսպես, եթե Կամուրան Գյուրյունը «արդարացնում է» Հայաստանի քաղաքների զավթումը թուրքական զորքերի կողմից ստրատեգիական նկատառումով<sup>1</sup>, ապա Դոդան Ավչի օղլուն թուրքական զորքերի արշավանքը Հայաստան և նրանց հետագա առաջխաղացումը Բաքվի ուղղությամբ պատճառաբանում է «Կովկասի թուրքերին հայկական ջարդերից պաշտպանելու անհրաժեշտությունից»<sup>2</sup>:

Երևանի զորամասերի ընդհանուր հրամանատար Սիլիկյանը մայիսի 29—ին հայ ժողովրդին դիմեց կոչով, ուր նշում էր, որ հայերի ջախջախիչ հարվածներից թուրք զորքերը ամբողջ ճակատով նահանջում են և հայկական զորամասերի սրբազան խնդիրն է շարունակել հետապնդել թշնամուն, ազատագրել Ալեքսանդրապոլն ու Կարսը և այդ դեպքում միայն թուրքերի հետ բանակցությունների մեջ մտնել՝ հաշտություն կնքելու համար:

Հաղթանակի այդ պայմաններում Սարգարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսները, հետ մղելով թշնամու հարձակումները, հետապնդում էին նրան Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Սակայն հայկական զորամասերի առաջխաղացումը խափանվեց Հայաստանի պատվիրակության կողմից Բաթումում թուրքական պատվիրակության հետ հունիսի 4-ին ստորագրված ստրկացուցիչ պայմանագրով: Դիլիջանից ստացվեց Նազարբեկյանի հեռագիրը Բաթումում կնքված հաշտության մասին, որի համաձայն հայկական զորամասերը պետք է հետ քաշվեին ոչ միայն այն տարածքներից, որ ներանք աղատագրել էին հերոսական մարտերի օրերին, այլև այն, որոնք թուրքերի կողմից երբեք զրախված չէին եղել, ինչպես Ղամարլուն, Երևանի և էջմիածնի շրջանների որոշ մասեր: Բացի այդ, Բաթումի պայմանագրի 5-րդ հոդվածով դեռևս մայիսի 28-ին ստեղծված Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվել էր «գործուն կերպով

1. Տե՛ս Kamuran Gürün, Ze dossier Armenian Paris 1984՝ p. 273:

2. Տե՛ս Dogan Avcioğlu, Milli, Kurtulus Tarihi, 1838-den 1995-e, I-tanbul, 1974 s 1153:

հակադդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չզինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել և ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»<sup>1</sup>։

Թուրքերի հետ պայմանագրի կնքման լուրը խոր զայրույթ առաջ բերեց ամբողջ ճակատում և թիկունքում։ Բազմաճակատից զինվորները իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում Բաթումի պայմանագրի կնքման դեմ։ «Աշխատանք» թերթի հունիսի 8-ի համարում «Գործող բանակին» հաղորդման մեջ ասված է. «Իմանալով հաշտության կնքման մասին, մենք միաձայնությամբ կհայտարարենք.— ոչ թիֆլիսը, ոչ ալ Բաթումը լիազորված չեն հայերու անունեն վերջնական բանակցություն վարելու թուրքերու հետ։ Հաշտության պայմանների կատարումը ամոթալի և ստորացուցիչ են հայերու համար։ Ինչ եղրակացության ալ որ հանգեն այս կամ այն աղզային կազմակերպությունները, քանի դեռ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը կսպառնա ահավոր վտանգը, մենք ղենքը շենք թողնել և կկռվենք մինչև մեր արյան վերջին կաթիլը։ Կորչի՛ ամոթալի հաշտությունը»։

Այդ օրերին Երևանում Ազգային խորհրդի շենքի առջև տեղի էին ունենում ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին շճանաչել Բաթումի պայմանագիրը և շարունակել պայքարը թուրք զավթիչների դեմ։ Սակայն նորաստեղծ Հայկական Հանրապետության ղեկավարները, հակառակ թուրքական նվաճողների դեմ ոտքի ելած ժողովրդի պահանջի՝ շարունակել պայքարը, կարգադրեցին վայր դնել ղենքը և ընդունել Բաթումում թուրքերի կողմից թելադրված պայմանները։

Այնուամենայնիվ, հայ ժողովրդի հերոսական դիմադրությունը թուրքական հրամանատարությանը ստիպեց հրաժարվել Երևանի գրավման մտադրությունից և Բաքվի վրա արշավելու համար ժամանակավորապես դադարեցնել զորքերի փոխադրումը Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղով։ Հայ ժողովրդի հերոսական պայքարը թուրք զավթիչների դեմ Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաբախում իր բնույթով ազգային-աղատագրական համաժողովրդական պայքար էր և դրա արգասիքը եղավ այն, որ վերականգնվեց հայ ժողովրդի ազգային պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը։ Հայտնի է, որ թուրքական զորքերի պարտության հետևանքով էր, որ Թուրքիան հարկադրված ստորագրեց

Հայաստանի անկախությունը ճանաչող Բաթումի պայմանագիրը:

«Սարգարապատի և Ղարաքիլիսայի ճակատամարտերն էին, որ կերտեցին Հայաստանի ազատությունը, որովհետև վեհ՛իբ փաշան, որը Բաթումեն հեռագրական հաղորդակցություն մեջ էր ուղղակի ճակտին հետ, կսպասեր տաճկական բանակի հաղթանակի լուրին, որպեսզի իր պայմանները ավելի խստացներ, բայց լուրը կուշանար, որովհետև մինչև այդ ընդհանրապես անկարգապահ կարծուած հայկական բանակը, շնորհիվ իր ժողովրդական հերոսներու ղեկավարներուն, ցույց էր տուած անընկճելի հոգի մը և շարաշար պարտություն մատնած՝ Ղարաքիլիսայի և Սարգարապատի տաճկական բանակը:

Հայ ազատության պատմության մեջ անջնջելի պիտի մնան անունները Արամին, Դրօին, զոր. Սիլիկյանին, զոր. Փիրումյանին և զոր. Նազարբեկյանին, որոնք կղեկավարեին մեր հերոսամարտը»<sup>1</sup>:

Թուրքական զավթիչները ստիպված էին էական փոփոխություններ մտցնել Հայաստանի նվաճման իրենց ծրագրի մեջ: Այդ հարցի վերաբերյալ Թուրքիայի կառավարական շերջաններում ուժեղ վիճաբանություններ առաջ եկան: Հաշմի առնելով այն, որ հայերը ավելի համառ դիմադրություն կարող են ցույց տալ, որոշ նախարարներ առաջարկում էին հրաժարվել հարձակողական հետագա գործողություններից Հայաստանում: Նրանք առաջին հերթին անհրաժեշտ էին համարում գրավել Բաքուն, տապալել այնտեղ խորհրդային իշխանությունը և Կովկասում իրագործել իրենց պանթուրքական պլանները: Նրանց թվում էր, որ Ադրբեջանը նվաճելուց հետո Հայաստանի մնացած շրջանների գրավումը կապված չի լինի առանձին դժվարությունների հետ: «Մենք հայերին մատնների վրա կխաղացնենք այնքան ժամանակ, քանի դեռ մեզ դիմադրողներ են հարկավոր ճակատի համար, — ասում էր վեհ՛իբ փաշան, — իսկ հետո քրդերի ու թաթարների օգնությամբ նրանց կստիպենք խեղդվել այդ տոպրակում, որի մեջ նրանք նստած են»<sup>2</sup>: «Տուպրակ» ասելով վեհ՛իբ փաշան հասկանում էր փոքրիկ Հայաստանը:

Երիտթուրքերի համաձայնությունը՝ ստեղծելու «ինքնուրույն» Հայաստան, ինչպես տեսնում ենք, հարկադրված քայլ էր, որին նրանք ստիպված էին դիմել՝ հանդիպելով հայ ժողովրդի կատաղի հակահարվածին: Իրականում «անկախու-

1. «Հայրենիք», 1920, № 3:

2. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, դ. 11, ք. 79:

Թյան» հռչակումը սոսկ տակտիկական մի մանևր էր, որի օգնությամբ էնվերբը հույս ունեւր մոտ ապագայում Թուրքերի համար դուրացնել Հայաստանի մնացած մասի նվաճումը»<sup>1</sup>:

Հետեւելով Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոս պաշտպանների օրինակին, Հայաստանի աշխատավորները շարունակում էին պարտիզանական պայքար մղել՝ հսկայական վնասներ հասցնելով Թուրքական զավթիչներին: Անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթը 1918 թ. հոկտեմբերի 7—ին հաղորդում էր, որ Հայաստանում բռնկված պարտիզանական պատերազմի բոցը կաշկանդել է Թուրքական զորքերի խոշոր ուժերը, որոնք կարող էին օգտագործվել մյուս ռազմաճակատներում:

Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարութունը, հենվելով Թուրքիայի ու Հայաստանի միջև Բաթումում կնքված հաշտության պայմանագրի 5-րդ հոդվածի վրա, Հայաստանի կառավարութունից ու հայկական բանակի հրամանատար գեներալ Նազարբեկյանից պահանջում էր հայերի դինաթափում և պարտիզանական ջոկատների (որոնց երիտթուրքերը անվանում էին «հրոսակներ») մարտական գործողութունների դադարեցում<sup>2</sup>: Այսպես, Քյազըմ Կարաբեքիրփաշան Հայաստանի կառավարությանը բողոք էր ներկայացրել այն առթիվ, որ շնայած մինչև Զուլֆա գնացող երկաթուղին Թուրքերին է տրամադրվել, Աղամզալու, Իմանշալու և Քյուլջիսարա գյուղերի գյուղացիները անընդհատ գնդակոծում էին այդ երկաթուղագիծը հսկող հեծելազորային Թուրքական խմբի զինվորներին:

էնվերբ փաշան Լոսովի անունով ուղարկված հեռագրում հաղորդում էր, որ «Երևանի գծի վրա մինչև այժմ գործում են հրոսակախմբեր, որոնք խանգարում են Թուրքական առաջխաղացմանը դեպի Զուլֆա»<sup>3</sup>:

1918 թվականի հունիսին Քյազըմ Կարաբեքիր փաշան Ալեքսանդրապոլում բողոքում էր Հայաստանի կառավարության ներկայացուցիչներին. «Երևանից դեպի հարավ հայերը հարձակումներ են գործել մեր զորքերի վրա, որոնց հետևան-

1. Այդ բանը անուղղակի կերպով հաստատում են էնվերբ այն խոսքերը, որ նա ասել էր 1918 թվականին Ստամբուլում դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին. «Թուրքական միևիստրները 2 շաբաթ մտածում էին ստեղծել թե շտեղծել Հայաստան և, վերջպես, որոշեցին ստեղծել, որովհետև այդպես ավելի ձեռնտու էր ինչպես հայերին, այնպես էլ Թուրքերին» («Ձանգ», 1918, № 58-74):

2. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 20, թ. 160:

3. Նույն տեղը, գ. 53ա, թ. 113:

քով զոհվել են մեր բանակի հսկայական թվով զինվորներ ու սպաներ»<sup>1</sup>: Այդ նույն ժամանակ արված մի այլ հայտարարության մեջ նա հայերին մատնանշում էր հետևյալը. «Հունիսի 5-ի առավոտյան հայկական զինված ուժերը, որոնց կազմում կային 80 հեծելազորայիններ ու 400 հետևակ զինվորներ՝ մեկ գնդացիով, հարձակում գործեցին Սարդարապատի մոտ՝ Գեշերլուում գտնվող մեր զորքերի վրա»<sup>2</sup>:

Հայաստանի կառավարությանը ուղղված 1918 թվականի հուլիսի 10-ի իր դիմումում Քյազըմ Կարաբեքիրը նշում էր, որ թուրքական զորքերը, շարժվելով դեմարկացիոն գծի երկայնքով, տեղական ազգաբնակչության կողմից համառ դիմադրության են հանդիպում<sup>3</sup>, իսկ հայկական բանակի հրամանատար Նազարբեկյանին տեղեկացնում էր, որ Ղամարլուի ու Շախթախթիի միջև ընկած շրջանում զինված հայերը հարձակում գործելով թուրքական հետախույզների վրա, նրանց լրիվ զինաթափ էին արել<sup>4</sup>:

Պարտիզանական ջոկատները պայթեցնում էին երկաթգծի կամուրջներն ու երկաթուղու պաստառները, զառիվայրից գլորում թուրքական էշերները: Հայերին ուղղած բողոքում Քյազըմ Կարաբեքիրը գրում էր. «Ջուլֆայի կողմն ուղարկված օսմանյան գնացքի Նախիջևան հասնելու օրը լսվում էին պայթյուններ երկաթգծից դեպի հարավ ու արևմուտք ընկած ուղղությանը: Հետաքննությունից պարզվեց, որ երկաթուղու ճանապարհին ընկած բոլոր կամուրջները պայթեցված են»<sup>5</sup>:

Թուրքական հրամանատարության հաղորդման համաձայն, հունիսի 17-ին էջմիածին կայսրանի շրջակայքում նրեվացին հայկական զինված ջոկատներ, որոնք հրաձգություն սկսեցին<sup>6</sup>: Այդ նույն ժամանակ Համամլու գյուղի բնակիչները զինված հարձակում գործեցին թուրքական հեծելազորային էսկադրոնի վրա: Մարտի ընթացքում սպանվեցին մեկ սպա և 23 հեծյալներ:

Ղամարլուի շրջանի բնակչությունը հրաժարվեց կատարել դեներ հանձնելու և Բաթումի պայմանագրի համաձայն Թուրքիային անցած տարածքը մաքրելու թուրքական հրամանատարության պահանջը, շնայած սպառնալիքին, որ չհնազանդվելու դեպքում բոլոր հայկական գյուղերը կոչնչացվեն<sup>7</sup>:

1. Նույն տեղը, գ. 20, թ. 74:

2. Նույն տեղը, թ. 152:

3. Տե՛ս նույն տեղը, թ. 48:

4. Տե՛ս 22 ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 14, թ. 93:

5. Նույն տեղը, թ. 131:

6. Տե՛ս նույն տեղը, թ. 163:

7. Տե՛ս նույն տեղը, գ. 20, թ. 173:

Հունիսի 28—29-ին ապստամբեցին Սարգարապատի ու Ալեքսանդրապոլի միջև ընկած գյուղերի բնակիչները: Հարձակվելով թուրքական պահեստների պահակախմբի վրա, նրանք սպանեցին բոլորին և ոչնչացրին պահեստները: Հայ գյուղացիները հաճախ հարձակումներ էին գործում Բաշ-Ապարանի ու էջմիածնի շրջաններում տեղակայված թուրքական զորքերի վրա<sup>1</sup>:

Բերված փաստերը վկայում են, որ հայ ժողովրդական զանգվածները չէին ընդունում Բաթումի ստրկացուցիչ պայմանագիրը և հանուն հայրենիքի ազատագրման պայքար էին մղում թուրք զավթիչների դեմ:

Այդ կապակցությամբ թուրքական զորքերի հրամանատար էսադ բեյը 1918 թվականի հունիսի 3-ին հայկական կառավարությանը բողոք ներկայացրեց, որտեղ նշվում էր որ երբ երիտթուրքական զորամասերը Բաթումի պայմանագրի հիման վրա փորձեցին գրավել Նախիջևանը, Զուլֆան, Ուլուխանլուն ու Ղամարլուն, նրանք ենթարկվեցին հայ ապստամբական ջոկատների հարձակմանը՝ կրելով մեծ կորուստներ<sup>2</sup>: Մի փոքր ավելի ուշ էսադ բեյը հատուկ գրությամբ ուղարկեց հայկական զորքերի հրամանատար Նազարբեկյանին այն կապակցությամբ, որ հունիսի 14-ին հայ պարտիզանները Ուլուխանլուից հարավ հարձակվել են թուրքական ջոկատի վրա և սպանել 22 ասքյարի<sup>3</sup>: Հայ ժողովրդի պայքարը թուրքական զավթիչների դեմ այնպիսի լայն թափ ստացավ, որ այդ մասին ստիպված էին գրել նույնիսկ թուրքական թերթերը: Այսպես, Ստամբուլում լույս տեսնող «Քանինը» 1918 թվականի հունիսի 1-ին հաղորդում էր, որ «Հայերի հրոսակախմբերը... կռվում են թուրքական զորքերի դեմ: Այդ հրոսակախմբերը, զինված լինելով հրանոթներով ու գնդացիներով, գործում են Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի ու Շիրվանի շրջաններում»<sup>4</sup>:

Թուրք ջարդարարների դեմ մղված հերոսական պայքարի պատմության մեջ վառ էջ գրեցին Լոռվա շրջանի գյուղացիական զանգվածները: Շրջանում հայտարարվեց բոլոր տղամարդկանց զինակոչ՝ թուրքերի դեմ պայքարելու համար:

1. ՏԵՍ 22 ՊԿՊԱ, գ. 627, թ. 40:

2. ՏԵՍ նույն տեղը, գ. 79, թ. 60:

3. ՏԵՍ նույն տեղը, գ. 33, թ. 5:

4. 22 ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 20, թ. 131:

1918 թվականի մայիսի 22-ին Զալալօղլիում կայացավ շրջանի հայկական բոլոր գյուղերի ներկայացուցիչների արտակարգ ժողով, որտեղ որոշում ընդունվեց կովել մինչև վերջին ուժերը:

Մայիսի 24-ի լուսաբացին Զալալօղլի ու Զիրուխլու գյուղերի հատվածում ճակատամարտ սկսվեց թուրքական զորքերի ու հիշյալ ջոկատների միջև: Թուրքերը ստիպված էին նահանջել, սակայն հայկական զորքերի նահանջը Համալուից ու Ղարաքիլիսայից թուրքական հրամանատարութանը հնարավորութուն տվեց ազատ մնացած ուժերը կենտրոնացնել Զալալօղլու վրա և մայիսի 26-ի առավոտյան ապստամբներին հետ մղել: «Մտնելով Զալալօղլի,— գրում է ականատեսներից մեկը,— թուրքերը գնդակահարեցին բոլոր այն սր դամարդկանց, որոնք շէին հասցրել հեռանալ գյուղից... Թուրքերը ավերեցին իրենց ճանապարհին ընկած հայկական Սարմասխլու, Բզովդալ, Ղշլաղ, Դարաբաղ և այլ հայկական գյուղերը, հրկիզելով դրանք ևսրի քաշելով բնակիչներին»:

1918 թվականի հոկտեմբերի 12-ին Գ. Կ. Օրբոնիկիձեն հեռագրում էր Լենինին. Հայաստանի դրուսթյունը ողբերգական է. Երևանի նահանգի երկու գավառների մի պատռոտ արածության վրա կուտակվել են 600 հազար գաղթականներ, որոնք զանգվածներով մեռնում են սովից ու խուլբրայից: Գրաված գավառներում թուրքերը սրի են քաշել բնակչության կեսին: Բնակչությունը համառ դիմադրություն է ցույց տալիս (ընդգծումը մերն է— Ե. Ս.): Հայ ազգաբնակչությունը օգնություն է սպասում Խորհրդային Ռուսաստանից»<sup>1</sup>:

Խորհրդային Ռուսաստանը Անդրկովկասից անջատված էր օտարերկրյա ինտերվենտների ու սպիտակ գվարդիականների խիտ օղակով: Ուստի և երկրամասի ժողովուրդներին օգնություն ցույց տալու համար ռուսական կառավարությունը ստիպված էր դիմելու դիվանագիտական ներգործության միջոցներին:

Կայսերական Գերմանիայի կառավարությանն ուղղված Խորհրդային Ռուսաստանի կառավարության 1918 թվականի ապրիլի 12-ի բողոքի նոտայում մատնանշվում էր, որ թուրքական զորքերի հարձակումը Կովկասյան ռազմաճակատում ուղեկցվում է հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածներով ու նրա գույքի կողոպտումով: «Այն պայմանագիրը, որ մենք ստիպված էինք ստորագրել Բրեստում,— աս-

1. Орджоникидзе Г. К., Статьи в речи, т. I., М., 1956, с. 45.

վում էր նոտայում,— Արդահանի, Կարսի ու Բաթումի նահանգների ազդարնակչութիւնն էր թողնում որոշելու հիշյալ նահանգների բնակչութիւն ճակատագիրը: Այդ նահանգներում տեղի ունեցած դեպքերը վկայում են, որ տասնյակ տարիների ընթացքում կիրառվող հայ ժողովրդի բնաշնչման քաղաքականութիւնը շարունակվում է և ներկայումս...

Թուրքական զորքերի կողմից այժմ գրավված մարզերում հայ ազգարնակչութիւնն նկատմամբ կիրառվող սարսափների պատասխանատվութիւնը ընկնում է գերմանական կառավարութիւն վրա, որի ուղղակի օգնութիւն շնորհիվ Թուրքիան իր ձեռքում պահեց այդ մարզերը»<sup>1</sup>:

Խորհրդային կառավարութիւնը միաժամանակ միջոցներ էր ձեռք առնում թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած պայքարում նրան ուղղակի աջակցութիւն ցույց տալու համար: Մասնավորապես, օժանդակում էր Ռուսաստանի տարբեր շրջաններում բնակվող հայերից կամավորական ջոկատներ ստեղծելու գործին, որոնք զանազան ճանապարհներով փոխադրվում էին Հայաստան: Խորհրդային բոլոր կազմակերպութիւնների վրա պարտականութիւն էր դրվում խոշոր դոտներ շահուցել հայկական կամավորների առաջ շարժելուն, որոնք կոչված էին պաշտպանել իրենց հայրենիքը թուրքական կեղեքիչներից: Ջոկատների կազմում կային նաև ռուս կարմիրզավարդիական կամավորներ<sup>2</sup>:

Հայկական կամավորական ու պարտիզանական ջոկատների հետ միասին թուրքական զորքերի դեմ կռվում էին նաև զորացրված բազմաթիվ ռուս կամավորներ՝ կովկասյան բանակի անձնակազմի նախկին մարտիկներ ու հրամանատարներ: Այսպես, Կարսի մոտ հերոսաբար մարտնչում էր գընդապետ Նֆրեմովի ռուսական կամավորական ջոկատը<sup>3</sup>:

Թիֆլիսի «Զարյա Ռոսսիի» թերթը 1918 թվականի հունիսին գրում էր, որ 250 խորհրդային զինվորներ օգնեցին հայերին Նախիջևանի շրջակայքում ջախջախելու թուրքական ջոկատին:

Հայ ժողովրդի զինված պայքարը հսկայական վնասներ հասցրեց թուրքական զավթիչներին: «Թուրքերին 9 ամիս

1. Документы внешней политики СССР, т. I., № 127.

2. Տե՛ս ԿՊՊԱ, Հայաստանի գործերի կոմիսարիատի Սարատովի բաժանմունք, ց. 6, ք. 1:

3. «Известия Совета рабочих, красноармейских матросских и крестьянских депутатов Бакинского района», 1918, № 112.

4. Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ք. 45, գ. 42, ք. 27—37:

պետք եղավ,— գրել է էլեն Գիրոնսը.— որպեսզի հաղթահարեն հայերի դիմադրությունը և տիրանային Բաքվին՝ թուրքական արշավանքի հիմնական նպատակին»:

\* \* \*

Թուրքական զավթիչներին ու նրանց մուսավաթական գործակալներին համառ դիմադրություն ցույց տվեց Ղարաբաղի հայ բնակչությունը, որտեղ հայերը ճնշող մեծամասնություն էին կազմում: Ղարաբաղ մտած թուրքական դիվիզիայի հրամանատար Ջավադ Ջամիլ բեյը բնակչությունից պահանջեց ճանաչել թուրքական իշխանությունը՝ սպառնալով ոչնչացնել բոլոր այն գյուղերը, որոնք չեն ենթարկվի թուրքերին: Այդ վերջնագիրը ամենուրեք մերժվեց: Բնակչությունը չվախեցավ լավ զինված թշնամու թվական գերակշռությունից և միահամուռ ոտքի ելավ պայքարի: Թուրքական զորքերը ստիպված էին մարտով վերցնել ամեն մի բնակիչի կետ<sup>1</sup>: Սկսվեց Ղարաբաղի հայ բնակչության հերոսական ընդվզումը թուրք նվաճողների դեմ:

Այդ իրադարձությունների կապակցությամբ Ջավանշիրի գավառի հարյուրավոր գյուղացիներ հետագայում վկայում էին. «Երբ սեպտեմբերին թուրքական զորքերը շարժվեցին Շուշի, մենք միահամուռ կերպով որոշեցինք կռվել մինչև արյան վերջին կաթիլը, ոչ մի դեպքում չզի նախափվել, անձնատուր չլինել բարբարոսներին, որոնք զլխովին բնաջնջում էին իրենց ձեռքն ընկած հայերին՝ հաշվի չառնելով ոչ սեռը, ոչ էլ տարիքը, կողոպտելով նրանց ունեցվածքը, ավերելով մշակութային օջախները, դրանք կրակի մատնելով...»<sup>2</sup>:

Մավալված մարտերի ընթացքում թուրքերին հաջողվեց ընկճել հայերի անջատ-անջատ ջոկատների դիմադրությունը և գրավել Ասկերանի շրջանի հայկական ութ գյուղեր: Այնուհետև թուրքական զորքերը սեպտեմբերի 25-ին ներխուժեցին Շուշի: Քաղաքի գրավումն ուղեկցվում էր զանգվածային կոտորածներով: «Հաստատվեց մի այնպիսի ռեժիմ,— գրում է ականատեսներից մեկը,— որը ստիպում էր երազել նիկոլայի ժամանակների ռեժիմի ամենամռայլ օրերի մասին: Յուրաքանչյուր փողոցի վրա կախաղաններ էին պատրաստել: Հայ բնակիչները տեղորի էին ենթարկված»<sup>3</sup>:

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 251, ք. 94-95:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 251, ք. 22-23:

3. Նույն տեղը, գ. 70, ք. 46:

Շուշու անկումը շքարայլքեց հայ ապստամբներին, որոնք շարունակում էին խոչընդոտել թուրքերին՝ ներթափանցելու դեպի մարզի խորքը: Մարզակերտ գյուղի մոտ տեղի ունեցած համառ ճակատամարտում հայկական ջոկատները շարգեցին թուրքերին և ստիպեցին նրանց նահաջել՝ դրանով իսկ խանգարելով թուրքական զորքերին ամբողջովին գրավել Ղարաբաղը<sup>1</sup>:

\*\*\*

Վրաստանի գրավված շրջաններում ևս թուրքական զավթիչները գաղութարարական-նստիկանական ուժերի հաստատեղին:

Կովկասյան մամուլը ղետեղում էր հողվածներ, որոնցում նկարագրվում էին թուրքական զավթիչների անկարգությունները: Այսպես, «Տիֆլիսակի լիստոկ» թերթը 1918 թվականի հունիսի 27-ին գրում էր. «Թուրքական զորքերի հեռանալուց հետո Սղուրգեթը իրենից ներկայացնում է ամբողջովին ավերված մի տեսարան: Այն քաղաքացիները, որոնք աստիճանաբար վերադառնում են իրենց հարազատ օջախները, տեղում գտնում են իրենց տների միայն մերկ պատերը: Ծգիպտացորենի պաշարները, տնային կահ-կարասին, թռչուններն ու այն ամենը, ինչ որ թողնվել էր թուրքերի հարձակման ժամանակ, ոչնչացվել է... իրենից որևէ արժեք ներկայցնող ամեն բան արտահանվել է կամ ոչնչացվել... Կողոպտված է միլիոնի հասնող գույքը, այդ թվում և Ջվանիի պետական թեյի պլանտացիայի անշարժ ողջ գյուղը...»: Իսկ «Սաքարթվիլոս սոսպորիկան» 1918 թվականի սեպտեմբերի 8-ին հաղորդում էր, որ «գյուղերը սարսափելի վիճակում են գտնվում. թուրքերը բռնի կեպով վերցնում են ալյուրը, հացահատիկը, գարին, յուղը, պանիրը»՝ բնակչությանը տառաջիտրեն ոչինչ չթողնելով:

Վրաստանի ազգաբնակչությունը համառ պայքար էր մղում թուրք զավթիչների դեմ: «Պրավդա» թերթը հաղորդում էր, որ հուլիսի 13-ին Աբխազիայի Գուդաուտի շրջանում խոշոր ապստամբություն բռնկվեց՝ ուղղված թուրքական նվաճողների ու վրացական իշխանների դեմ: Թուրքական ջոկատը զինաթափ արվեց ապստամբների կողմից: Կարճ ժամանակամիջոցում ապստամբությունը տարածվեց Բորչալուի գավառում, Հարավային Օսեթիայում ու Գորիի շրջա-

1. Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, գ. 251, թ. 31:

նում: Մյխեթից մինչև Կազբեկ գյուղն ընկած ողջ ճանապարհը գրավված էր ապստամբ գյուղացիների կողմից: Հուլիսի 20-ին բռնկվեց Գուշեթի գյուղացիների խռչող ապստամբությունը: Գյուղացիներին հաջողվեց հետ շարտել թուրքական զորքերին<sup>1</sup>:

1918 թվականի թուրքական արշավանքի մասնակից գնդապետ Ռյուշտյուն ստիպված էր խոստովանել, որ Վրաստանի ազգաբնակչությունը թշնամարար էր վերաբերվում թուրքական զորքերին<sup>2</sup>:

Այդ ժամանակ Վրաստան ներխուժած գերմանական զորքերը ևս իրենց կողմից գրավված շրջաններում հաստատեցին այնպիսի կարգեր, որոնք շատ քիչ էին տարբերվում թուրքական ռեժիմից: Գերմանական ինտերվենցիային նպաստեցին նաև վրացական մենշևիկները, որոնք տակավին 1917 թվականի վերջին գերմանական ռազմամույնների հետ գաղտնի բանակցություններ էին վարում Անդրկովկասը խորհրդային Ռուսաստանից անջատելու և Վրաստանի նկատմամբ Գերմանիայի խնամակալությունը հաստատելու վերաբերյալ:

Վրաստանում գնալով աճող հեղափոխական շարժումը սպառնում էր տապալել մենշևիկների տիրապետությունը, ուստի վերջիններս իրենց իշխանությունն ամրապնդելու նրաւատակով 1918 թվականին նորից փորձեցին նախապես ըստանալ գերմանական իմպերիալիստների աջակցությունը:

Բաթումի կոնֆերանսի ժամանակ Վրացական ազգային խորհուրդը 1918 թվականի մայիսի 14-ին դիմեց գերմանական պատվիրակության ղեկավար Լոսովին, խնդրելով նրանից օգնություն ցույց տալ «ներքին կարգ ու կանոնը հաստատելու և անարխիայի դեմ պայքարելու համար»<sup>3</sup>: Լյուդենդորֆը ողջունեց գերմանական խնամակալություն հաստատելու հարցով մենշևիկների դիմումը: Նրա խոսքերով՝ «մենշևիկները գերմանացիներին հնարավորություն էին տալիս Թուրքիայից անկախ իրեց ձեռքը գցել կովկասյան հումքը և ազդեցություն ունենալ Թիֆլիսով անցնող երկաթուղու շահագործման վրա»<sup>4</sup>:

Ինչպես արդեն նշվեց, գերմանացիները Անդրկովկաս էին ձգտում գլխավորապես ստրատեգիական հումքին և, ա-

1. «Правда», 18. VII. 1918, № 148.

2. Տե՛ս Miralay Rüstü, նշվ. աշխ., s. 19.

3. Տե՛ս ЦГАОР Грузия, ф. 153, л. 87.

4. Людендорф նշվ. աշխ., т. 2, с. 188.

ռաջին հերթին, Բաքվի նավթին տիրանալու համար: Մակայն հենց այստեղ նրանց ցանկությունները բախվեցին թուրքերի հակազդեցությանը, որոնք իրենք էին ձգտում միասնական տիրապետություն հաստատել Անդրկովկասում: Այդ կապակցությամբ կյուրեղոսյանը գրում էր. «Որ մենք... չէինք կարող հենվել Թուրքիայի վրա, այդ բանը մեկ անգամ ևս նա հաստատեց իր վարվելու կերպով՝ Բաթումում: Նա իր ձեռքը գցեց բոլոր հայտնաբերված մթերքները: Բաքվի նավթը մենք կարող էինք ստանալ միայն այն դեպքում, եթե հույս դնեինք միայն մեր սեփական ուժերի վրա»<sup>1</sup>: Փաստորեն գերմանական զորքերի փոխադրումը Վրաստան, որը տեղի ունեցավ վրացական մենշևիկների նախաձեռնությամբ, ինքնանպատակ չէր: Գերմանական ռազմամոլները հույս ունեին Վրաստանի տարածքով ներուխժել Բաքու:

Վրացական մենշևիկների համագործակցությունը գերմանական իմպերիալիզմի հետ սպառնում էր Անդրկովկասը լիովին անջատել Ռուսաստանից և երկրամասը վերածել օտարեկրյա զավթիչների մի գաղութի, նրանց փոխադարձ կատաղի պայքարի մի թատերաբեմի:

Բողոքելով վրացական մենշևիկների հակազդային քաղաքականության դեմ, խորհրդային կառավարությունը Վրաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված 1918 թվականի հուլիսի 1-ի իր նոտայում մատնանշում էր. «Ժորդանիայի կառավարությունն ինքը Վրաստան հրավիրեց գերմանական իմպերիալիզմի ռազմական ուժերին և նրանց ձեռքին հլու գործիք էր հանդիսանում: Նա օգնում էր նրան իր տիրապետությունը դեպի հյուսիս տարածելու համար, նա բացում էր խորհրդային իշխանության դեմ պայքարող հյուսիս-կովկասյան լեռնականների ճանապարհներն ու մարդերը»<sup>2</sup>:

Այդ նույն ժամանակ Ուկրաինայի գրավված շրջաններից Փոթի փոխադրվող գերմանական զորքերը, որոնց թիկունքը այդ նավահանգստում ապահովում էր սուղանավերի նավատորմիզը, 1918 թվականի սեպտեմբերի կեսերին սկսեցին առաջ շարժվել դեպի Վրաստանի խորքը՝ Թիֆլիսի ուղղությամբ<sup>3</sup>: Ավելի վաղ, նույն թվականի ամռանը, Թիֆլիսում կենտրոնացվել էին թնդանոթային ու ավիացիոն ստորաբաժանումներ և զանազան տեխնիկական զորամասեր<sup>4</sup>: Գեր-

1. Людендорф, *նշվ. աշխ.*, т. 2, с. 119.

2. ЦГАОР Грузии, ф. 13, д. 81, л. 23.

3. *Տե՛ս* Германские оккупанты в Грузии в 1918 г., стр. 112—113.

4. *Տե՛ս* «Ворьба», 1918, № 149.

մանացիները հզոր մի արշավախումբ էին պատրաստում Բաքուն գրավելու համար: Միաժամանակ, գերմանական իմպերիալիստները ձգտում էին հենց Վրաստանի գրավման փաստից, իրենց համար հնարավորին շափ մեծ օգուտ բաղել:

«Գերմանական կառավարությունը,— խոստովանում էր մենշևեկյան «Բորբա» թերթը,— իր գործերն ուղարկելով Վրաստան, իր սեփական նպատակներն էր հետապնդում, ձգտում էր պաշտպանել ու ապահովել իր պետության շահերը... Միամտություն կլինեք սպասել, որ Գերմանիան անշահախնդիր աջակցություն ցույց տա վրացական սոցիալ-դեմոկրատիային... գերմանական քաղաքականությունը հենվում է ոչ թե անշահախնդիր համակրանքի վրա դեպի այս կամ այն կուսակցությունը, այլ հաշվի է առնում նրանց տեսակարար կշիռը: Այսպիսով, ամեն ինչ հանգում է Վրաստանում Գերմանիայի ունեցած շահերի հարցին»<sup>1</sup>:

«Գերմանացիները,— նշում էր նույն թերթը,— Վրաստան եկան ոչ թե սոցիալ-դեմոկրատների կամ նացիոնալ-դեմոկրատների համար, այլ մանգանի, պղնձի, անտառանյութի ու երկրամասի այլ բնական հարստությունների համար»<sup>2</sup>:

Գերմանական ռազմամոլները Վրաստանը վերածելով իրենց գաղութի, տեր ու տնօրինություն էին անում այնտեղ՝ հաշվի չնստելով մենշևեկյան իշխանությունների հետ: Վրաստանի բոլոր քաղաքներում ու գավառներում գերմանական ջոկատներ կային, որոնք զինաթափ անելով աղգարնակչությունը, դաժանորեն ճնշում էին երկրամասում ծայր առած շարժումները: Գերմանացիների պատժիչ գործողություններին հավանություն էին տալիս մենշևեկյան իշխանությունների պաշտոնյաները: Այսպես, Թիֆլիսի նահանգային կոմիսարը Իորջալուի գավառային կոմիսարին «բացատրում էր», որ գերմանական ռազմական ջոկատը իրավունք ունի զինաթափելու բնակիչներին «ինքնուրույն կերպով», այսինքն՝ առանց տեղական իշխանություններին հայտնելու<sup>3</sup>: Կոդինի կոմիսարը 1918 թվականի հուլիսի 10-ին հաղորդում էր, որ գյուղ «ժամանեց 50 հոգուց բաղկացած գերմանական ջոկատը... որը բնակչությանը հայտարարեց, որ եթե որևէ մեկը շրթերի և չհանձնի ղենքը, ապա իրենք կոչնչացնեն ամբողջ գյուղը... զինվորներն իրենք սկսեցին խուզարկել տները և վերցնել այն ամենը, ինչ նրանց ձեռքն էր ընկնում...»<sup>4</sup>:

1. «Борьба», 1918, № 206.

2. Նույն տեղը, № 96:

3. ՏԵՍ ЦГАОР Грузии, ф. 28, д. 206, л. 2.

4. Германские оккупанты в Грузии в 1918 г., № 27.

Բիֆլիսի արվարձանային շրջանի կոմիսարի 1918 թվականի հուլիսի 15-ի ղեկուցագրում նկարագրվում էին գերմանական զորքերի բարբարոսական գործողությունները Բելաչա կյուլչի շրջանում: Գերմանական զինվորները «զինաթափ էին անում մի շարք գյուղեր... ընդ որում զինթափման ընթացքում գյուղացիների նկատմամբ կիրառվում էին ամենակարուկ միջոցները. կանանց ու տղամարդկանց ծեծում էին մահակներով... ներխուժում էին տները և այնտեղ խուզարկություն կատարում: Գյուղացիները տեղորի են ենթարկված: Գերմանացիները բոլորովին հաշվի չեն նստում վարչություն հետ և հայտարարում են, որ իրենք գործում են վրացական կառավարության հետ համաձայնեցված և այդ մասին հայտնի է բոլորին: Ես ինքս ականատես եմ եղել այն բանին, թե ինչպես գերմանացիները զենքը թաքցնելու համար ոտքերով ծեծում էին գյուղացիներին մինչև այն աստիճան, որ նրանք անզգա վայր էին ընկնում... խոշտանգված գյուղացիները, չկարողանալով տանել նման տանջանքները, մահանում էին»<sup>1</sup>: Գերմանական զորքերի բարբարոսական գործողությունների վերաբերյալ նույնանման բողոքներ էին ստացվում նաև Վրաստանի այլ շրջաններից:

Գերմանական զավթիչները գյուղացիներից խլում էին ամբողջ բերքը, բնակչությանը լծում դրամական տուրքերով, և դրանք չվճարելու դեպքում նրանցից խոշոր տուգանքներ էին գանձում: Փաստաթղթերից մեկը վկայում է, որ «զալով Սարվանի (Բորչալու) գյուղը, գերմանական ջոկատը պահանջեց երեք ժամվա ընթացքում իրեն վճարել 150 հազար ռուբլի... սպառնալով հակառակ դեպքում հրկիզել ողջ գյուղը»<sup>2</sup>: Մի այլ փաստաթղթում խոսվում էր այն մասին, որ գերմանական զինվորները Կոսալարի շրջանում բռնի կերպով գյուղացիներից գանձել էին 2600 խուրձ չկալսած ցորեն<sup>3</sup>: Գերմանական զորքերի կողմից Վրաստանում կատարված նման անկարգությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր կան: Այսպես, գերմանական ջոկատը Մուխրանի գյուղի բնակիչների վրա 35 հազար ռուբլի տուգանք էր նշանակել: Միայն Վորոնցովկայի (Դուշեթի գավառ) գյուղացիական համայնքից գերմանացիները դուրս տարան 38 հազար ռուբլու արժողությամբ կողոպտված գույք<sup>4</sup>:

«Էրթորա» մենշևիկյան թերթը ստիպված էր հաղորդել, որ Վրաստանի տարբեր ծայրամասերից հսկայական քանա-

1. ЦГАОР Грузии, ф. 206, д. 28, л. 24.

2. Տե՛ս նույն տեղը, թ. 10:

3. Տե՛ս Германские оккупанты в Грузии в 1918 г., էջ 23.

4. Տե՛ս նույն տեղը:

կուլթյամբ բողոքներ են ստացվում, որոնցում բնակիչները իրենց գայրույթն են հայտնում գյուղերում տեղաբաշխված գերմանական զորքերի կոպիտ վերաբերմունքի դեմ: Գերմանական զինվորները «իրենց ուժով դատաստան են տեսնում, ոչնչացում վրացական, հայկական, կամ թաթարական գյուղերը... զորքն ինքն է դատաստան տեսնում և տուգանքներ գանձում: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ նույնիսկ կոմիսարի միջամտութունը չի կարողացել վրացական գյուղացիներին փրկել ֆիզիկական վիրավորանքից»<sup>1</sup>:

Սակայն Վրաստանի գյուղացիական զանգվածները ոտքի էին ելնում պայքարի գերմանացիների կողմից հաստատված ռաստիկանական-գաղութարարական ռեժիմի ու մենշևիկյան լծի դեմ: Այսպես, Բելայա Կլյուչի շրջանի ազգաբնակչութունը, զայրացած գերմանական զորքերի վերաբերմունքից, հայտարարեց, որ ինքը «զենքի ուժով կպաշտպանի իր պատիվը և ազատ գյուղացու իր անունը»<sup>2</sup>:

Սեպտեմբերի 14-ին Կրես ֆոն Կրեսենշտեյնը մենշևիկյան կառավարության ներքին գործերի նախարարին հաղորդում էր, որ ինքը պատրաստ է «գերմանական զորքեր տրամադրել՝ Արախլո և Կիզիլսլո գյուղերում շարիքը արմատախիլ անելու համար... Սա գտնում եմ... որ հանցագործութուններ երևան բերելու դեպքում անհրաժեշտ է ռազմական միջոցառումներ ձեռնարկել՝ ելույթներ ունենալու հակված բնակչությանը սարսափեցնող օրինակ տալու համար»<sup>3</sup>:

Մենշևիկյան կառավարության արտաքին գործերի նախարարին ուղղված Կրես ֆոն Կրեսենշտեյնի օգոստոսի 29-ի գրության մեջ վերջինս պահանջում էր Փոթիի, Նովոսենակի, Զուգդիդիի և Անաքալայի շրջանները «մաքրել քաղաքականապես անվստահելի տարրերից» և այդ նպատակով նա առաջարկում էր օգտագործել գերմանական զորքերը: «Ավագակախմբերը (այդպես էին գերմանացիները կոչում գյուղացիների պարտիզանական ջոկատները— Ն. Ս.) և բուլշևիկները... անընդհատ խանգարում ու խոչընդոտում են հաղորդակցությանը... ես ծայրահեղորեն անհրաժեշտ եմ համարում, որպեսզի շուտափույթ կերպով այդ շրջանը հիմնովին մաքրվի ու դինամիկա արվի... Սա պատրաստ եմ վրացական գլխավոր հրամանատարի տրամադրության տակ դնել Փոթիում, Նովոսենակիում ու Օչեմշիրեում գտնվող գերմանական զորքերը»<sup>4</sup>:

1. Германские оккупанты в Грузии в 1918 г., № 70.

2. Տե՛ս Գերմանские оккупанты в Грузии в 1918 г., № 30.

3. Նույն տեղը, № 62:

4. Նույն տեղը, № 30:

Գերմանական դավթիչների դեմ պայքարի ելան նաև Դու-  
շեթի գավառի, Մինգրեթիայի, Լեչխումիի, Ռաշի, Վերին ու  
Ներքին Իմերեթիայի, Գուրիայի, Գորիի, Թելավի ու Սիզնա-  
խի գավառների գյուղացիները<sup>1</sup>։

Գորիի գավառային կոմիսարը 1918 թվականի հունիսի  
26-ին հեռագրում էր Թիֆլիս, որ խմորումները գյուղացի-  
ների մեջ գնալով աճում են։ Կարելի շրջանում գաղտնի ժո-  
ղովներ են գումարվում։ Ապստամբները քանդում են երկա-  
թուղաղծերը։ Կոմիսարը խնդրել է արագացնել ջոկատի ու-  
ղարկումը՝ ապստամբութունը ճնշելու համար<sup>2</sup>։

Տազնուպալից լուրեր էին ստացվում նաև Վրաստանի  
մյուս մարզերի մենշևիկյան իշխանութուններից։ Քուծայիսի  
նահանգային կոմիսարը օգոստոսի 10-ին հաղորդում էր, որ  
գյուղացիական ապստամբութունները Սաշխերի, Լեչխումի և  
այլ շրջաններում լայն թափ են ստացել և կառավարական  
զորքերը համառ մարտեր են մղում ապստամբների դեմ,  
որոնք նեղել էին մենշևիկյան կանոնավոր զորամասերին։  
«Սուխումն ու Զուգդիդին,— գրում էր նա,— կտրված են  
մեզնից։ Այդ ճակատում ապստամբները խոշոր ուժեր են  
կենտրոնացնում, և այստեղ մենք օժանդակ ուժերի կարիք  
ունենք։ Ընդհանրապես, զորքերը բոլոր ճակատներում ծայ-  
րահեղորեն ուժասպառ են եղել և անհրաժեշտ է նրանց փո-  
խարինել և զորքերն ուժեղացնել Զուգդիդիի ճակատում, ո-  
րովհետև ապստամբութունը կարող է տարածվել նաև մյուս  
գավառներում»<sup>3</sup>։

Խոշոր ապստամբութուն բռնկվեց նաև Դուշեթի գավա-  
ռում։ Ապստամբության համար առիթ ծառայեց մենշևիկյան  
կառավարության 1918 թվականի հունիսի 15-ի հրամանը՝  
բնակչությանը զինաթափ անելու մասին։ 4 հազար զինված  
գյուղացիներ երկու օրվա ընթացքում համառ պայքար էին  
մղում կառավարական զորքերի դեմ, որն ավարտվեց վեր-  
ջիններիս կատարյալ ջախջախումով։ Մենշևիկյան կառավա-  
րության լիազոր ն. Կախիանին գրում էր, որ «հունիսի 19-ին  
զինված գյուղացիները լայն օղակով շարժվեցին Դուշեթի  
վրա, աիրացան քաղաքին և գրավեցին պետական բոլոր  
հիմնարկները, ռազմական ու մասնավոր պահեստները»<sup>4</sup>։  
Ապստամբութունը ճնշելու համար կառավարութունը չիմեց  
Կրես ֆոն Կրեսենշտեյնին՝ խնդրելով նրանից գերմանական  
զորամասեր ուղարկել Դուշեթի գավառ։

1. Տե՛ս *Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы* (1917—1921), № 312.

2. Տե՛ս *ЦГАОР Грузии*, ֆ. 28, ձ. 66, լ. 14.

3. *ЦГАОР Грузии*, ֆ. 24, ձ. 213, լ. 1.

4. *Նույն տեղը*, ֆ. 408, գ. 51, ք. 170—172։

Հունիսի վերջերին ապստամբեցին նաև Թիանեթի դավա-  
ռի գյուղացիները, որոնց դեմ պայքարելու համար Թիֆլիսից  
անմիջապես ուղարկվեցին մենշևիկյան ու գերմանական զոր-  
քեր: Մենշևիկյան իշխանութունների խնդրանքով գերմանա-  
կան ջոկատ ուղարկվեց նաև Բելալա Վլադի շրջան<sup>1</sup>, բայց և  
այնպես ոչ գերմանական զորքերին, ո՛չ կառավարող մենշե-  
վիկյան իշխանութուններին չհաջողվեց ճնշել Վրաստանում  
սկիզբ առած գյուղացիական զանգվածների պայքարը:

\*\*\*

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին  
Անտանտի տերութունները Օսմանյան կայսրության բա-  
ժանման վերաբերյալ մի շարք համաձայնագրեր կնքեցին:  
1919 թ. Փարիզի հաղաղության կոնֆերանսում մշակվեցին  
կայսրության մասնատման մանրամասն պլաններ, որոնց  
արգասիքը եղավ Սևրի պայմանագրի կնքումը 1920 թ. օգոս-  
տոսի 10-ին: Սևրի պայմանագիրը կնքվեց, մի կողմից, Օս-  
մանյան կայսրության կառավարության, իսկ մյուս կողմից՝  
Մեծ Բրիտանիայի Ֆրանսիայի, Իտալիայի Ճապոնիայի, Բել-  
գիայի, Հունաստանի, Հայաստանի, Հիջազի, Լեհաստանի,  
Պորտուգալիայի, Ռումինիայի, Սերբ-խորվաթա-Սլավոնյան  
պետության (Հարավսլավիայի) և Զեխոսլովակիայի միջև:  
Սևրի հաշտության պայմանագրի հիմքում ընկած էին Սալբս-  
Պիկոյի համաձայնագիրը և Սան-Ռեմոյի կոնֆերանսում  
մշակած թուրքական պայմանագրի նախագիծը:

Սևրի պայմանագրի 88-93 հոդվածները վերաբերում էին  
Հայաստանին, ուր Թուրքիան հայտարարում էր, որ ճանա-  
չում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն:  
89-րդ հոդվածում ասված է. «Թուրքիան և Հայաստանը ինչ-  
պես և բարձր պայմանավորվող կողմերը համաձայնվում են  
էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում  
Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը թողնել Ամերի-  
կայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի որոշմանը»: Սևրի  
պայմանագրով արաբական վիլայեթները անցնում էին  
Անգլիայի և Ֆրանսիայի տնօրինությանը, որոնք հետագա-  
յում ձեռք բերեցին պետական անկախություն: Նեղուցների  
գոտին առանձնացվում էր որպես հատուկ շրջան միջազգա-  
յին վարչությամբ: Ստամբուլը մնում էր Թուրքիային պայ-  
մանական՝ պայմանագիրը «լույալ» կառավարելու պար-  
տավորությամբ:

Անատոլիայի արևելքում Հայաստանից բացի նախատեսու-

1. Տե՛ս նույն տեղը, ֆ. 11, գ. 715, թ. 1:

վում էր ստեղծել նաև Քրդստան: Անատոլիայի մնացած ըզ-  
զայի մասը բաժանվում էր «մեծ տերութիւնների միջև որ-  
պես ազգեցութեան ոլորտներ»: Թուրքիային մնում էր Անկա-  
րայի և Սև ծովի միջև ընկած տարածքը, այսինքն՝ Կենտրո-  
նական Անատոլիան: Թուրքիան զրկվում էր իր ռազմական  
ուժերից, վերականգնվում էր կապիտուլիացիաների ռեժիմը:

Սերի պայմանագրի պատմական նշանակութիւնն այն  
է, որ դարեր շարունակ ժողովուրդների բանտ հան-  
դիսացող Օսմանյան կայսրութիւնը անդամահատվեց և  
զրկվեց հարյուրամյակների ընթացքում իր զավթած տա-  
րածքի 3/4-ից, ազատագրվեցին թուրք կեղեքիչներից բոլոր  
աբաբական երկրները: «Թուրքիան վերջնականապես բաժան-  
ված է,— ասաց Լյուդ Ջորջը,— և մենք ոչ մի հիմք չունենք  
տիստասալու դրա համար»<sup>1</sup>:

Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանների մի այլ ներ-  
կայացուցիչ՝ Ասկվիտը նույնիսկ կազմեց էպիտաֆիա (տա-  
պանագիր), որը պետք է «զարդարեր Թուրքիայի պատմա-  
կան գերեզմանը»<sup>2</sup>:

Սակայն կյանքը ցույց տվեց, որ Անտանտի պետութիւն-  
ները Թուրքիայում, հետապնդելով իրենց շահերը, հետա-  
մուտ չեղան իրենց խիստ ստորագրած Սերի պայմանագրի  
հոդվածների կատարմանը, այդ թվում և Արևմտյան Հայաս-  
տանում հայկական պետութիւն ստեղծելու վերաբերյալ  
հոդվածների իրականացմանը: Սերի պայմանագիրը խա-  
փանվեց քեմալական շարժման և Սերի պայմանագրի շուրջ  
Անտանտի պետութիւնների միջև գոյութիւն ունեցող սուր  
հակասութիւնների հետևանքով:

Սերի պայմանագրի լրիվ չիրագործվելու հիմնական  
պատճառներից մեկն էլ Խորհրդային Ռուսաստանի բացասա-  
կան դիրքորոշումն էր պայմանագրի նկատմամբ և քեմալա-  
կան շարժմանը նրա ցույց տված օգնութիւնը:

Չնայած նրան, որ Սերի պայմանագրի Արևմտյան Հա-  
յաստանին վերաբերող հոդվածները մնացին թղթի վրա,  
սակայն նշված հոդվածները հաստատում էին հայ ժողովրդի  
արդարացի պահանջներն ու իրավունքները իր բնօրրանի՝  
Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Քեմալականները պայքարեցին Սերի պայմանագրի իրա-  
դործման դեմ՝ շարունակելով երիտթուրքերի հայահալած,  
ջարդարարական քաղաքականութիւնը Արևելյան Հայաստա-  
նում:

1. «Жизнь национальностей», 1921, № 7.

2. Sht'v K. Юст, Письма из Турции, «Красная новь», 1926, № 5,  
էջ 175.

Գ Լ Ո Ւ Խ Ե Ե Ր Ր Ո Ր Դ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ  
1920 թ. ԱՇՆԱՆՆ ՈՒ 1921 թ. ՁՄՌԱՆԸ ԵՎ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ո՞ւմ ապավինեի

Թուրքիայի «նոր» ղեկավարները, մեծ մասամբ նախկին իթթիհադականներ, որոնք «անկախության համար ազգային պատերազմ»-ում զգալի օգնություն էին ստացել Ռուսաստանի խորհրդային դաշնակցային ընկերավարական հանրապետությունից, Անդրկովկասում ստեղծված իրադրությունից օգտուելիով ըստ էության շարունակեցին երիտթուրքերի համաթուրքական, նվաճողական, քաղաքականությունը:

Անդրկովկասի նկատմամբ թուրք ազգայնականների ծավալապաշտ-նվաճողական քաղաքականությունը դրսևորվեց տակավին 1919 թ., էրզրումի (հուլիսի 28 օգոստոսի 6) և Սըվազի (սեպտեմբերի 4-12) համագումարներում: Դրանց որոշումներում 1918 թ. թուրքական զորքերի կողմից բռնախլված հայկական և վրացական հողատարածքները (որոնք Մուղրոսի պայմանագրով մաքրվել էին թուրքական զորքերից) դիտվում էին որպես Թուրքիայի հողատարածք: Ավելին. այդ համագումարներում որոշվում էր ոչ միայն ցեղասպանությունը մեկուկես միլիոն զոհ տված հայությունը վերջնականապես զրկել Արևմտյան Հայաստանի նկատմամբ ամեն մի իրավունքից, այլև վճռական պայքար մղել՝ Անդրկովկասում անկախ Հայաստանի ստեղծմանը նպատակամղված ամեն մի շարժման դեմ:

Այս որոշումները հիմք դարձան Ստամբուլում 1920 թ.

հունվարին համաթուրքական խորհրդարանում հռչակված «Ազգային ուխտին», որը նախատեսում էր Բաթումի մարզի, Կարսի, Արդահանի և Հայաստանի ու Վրաստանի մի քանի այլ շրջանների ընդգրկումը թուրքական նոր պետականության կազմում: Անկարայի (Անգորա) կառավարությունը վճռեց վերստին խլել այն տարածքները, որոնք Թուրքիային էին անցել Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների կառավարությունների հետ 1918 թ. Բաթումում կնքված պայմանագրերով:

Քյազիմ Կարաբեքիրի հուշերից երևում է, որ Հայաստանի հանրապետության վրա նախահարձակման նախապատրաստություններն սկսվել էին դեռ 1919 թ. կեսերին: Նա գրում է. «Մայիսի 3-ին ժամանեցի սիրելի էրզրում: Ինձ միացավ 9-րդ զորաբանակի հրամանատար գնդապետ Ռյուշտի բեյը: Այդ օրը մենք նրա հետ երես առ երես զրուցեցինք: ... Նրան ասացի. «... Որպեսզի երկրում ամուր խաղաղություն ապահովենք, առաջին իսկ պատեհ առիթի որպես պատանդ պետք է գրավենք նույնիսկ ամբողջ Հայաստանը: Ընդհանուր իրադրությունը դրա համար նպաստավոր է դարձել... Ինչ էլ որ լինի, պետք է հայերի և հույների հետ հաշիվները մաքրենք: Անտանտի հետ պատերազմող բոլշևիկյան Ռուսաստանն իր գործողություններն ուղղել է Կովկաս: Մոտ ժամանակներս ո՛չ Կարսում, ո՛չ էլ Բաթումում անգլիական զորք չի մնա: Իմ որոշումը հետևյալն է. առանց ժամանակ կորցնելու զգալի շափով վերակազմակերպել իրավունքների պաշտպանության ընկերությունը և փաստական որոշումները էրզրումի համագումարում վերածել ազգային նկրտումների, միաժամանակ մեր զորքերին նախապատրաստելով երկարատև գործողությունների:

... Եթե որևէ կողմից մեր շրջանի վրա հարձակում գործվի, ապա պատասխանատվությունը բարդել Հայաստանի վրա»<sup>1</sup>:

1920 թ. սկզբին Մ. Քեմալի գլխավորած ներկայացուցչական կոմիտեի նիստում ընդունվեց հետևյալ որոշումը. «Արևելյան ճակատում պաշտոնական կամ կիսապաշտոնական զորաշարժ անցակացնել և սկսել զորքերի կենտրոնացումը՝ կովկասյան արգելապատնեշները թիկունքից լուծարել ենթարկելու համար»<sup>2</sup>: Քեմալը փետրվարի 6-ի այս որոշման մասին գրեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրին, որ գարնանն արդեն ավարտի իր զինյալ ու-

1. Կագրմ Կարաբեքիր, նշվ. աշխ., էջ 22:

2. Мустафа Кемаль, Муть новой Турция, Т. 3, с. 313.

ժերի համալրումն ու վերադիմումը՝ Հայաստանի վրա հարձակվելու համար: Ապրիլի կեսերին Կարաբերքիրը հեռագրեց Անկարայի դեկավար շրջաններին. «Մոտ օրերս ես պետք է հաղորդեմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»<sup>1</sup>:

Սակայն Անկարայի կառավարությունը տվյալ պահին տակավին հույս ուներ գործարքի մեջ մտնել Անտանտի երկրների հետ և այդ պատճառով միաժամանակ հետաձգեց Հայաստանի վրա նախահարձակումը: Քեմալը Կարաբերքիրին հեռագրեց. «Քանի դեռ խաղաղության համաժողովում մեր նկատմամբ ընդունվելիք որոշումը վերջնականապես պարզված չէ, ներքին և արտաքին իրադրությունից ելնելով ներկայումս ձեռնտու չէ զրկվել դաշնակից տերությունների հետ համաձայնության գալու հնարավորությունից: Հայաստանի վրա հարձակումը առիթ կծառայի, որ դաշնակից տերություններն ու Ամերիկան պատերազմ հայտարարեն»<sup>2</sup>:

Անկարայի կառավարությունը շէր կարող Հայաստանի դեմ զինարշավն սկսել՝ նաև շարադաբանած Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Այդ նպատակով, միաժամանակ Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար, Քեմալը 1919 թ. հոկտեմբերին Մոսկվա ուղարկեց 1918 թ. Անդրկովկաս ներխուժած երիտթուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշային: Վերջինս, Չիչերինի և Կարախանի հետ զրուցելուց հետո, Հայաստանի վրա նախահարձակման համար Կարաբերքիրի զորքերի բուռն նախապատրաստությունների օրերին՝ 1920 թ. հունիսի 4-ին, Մոսկվայից գրում էր Քեմալին. «Մեզ ի դիտություն հայտնեցին, որ անհրաժեշտ է հրաժարվել Հայաստանի դեմ (զինակա) գործողությունից»<sup>3</sup>:

Անդրկովկասի նկատմամբ թուրք ազգայնականների նըվաճողական-ծավալապաշտ քաղաքականությունը հրեում էր նաև Քեմալի կողմից 1920 թ. ապրիլի 26-ին Խորհրդային կառավարությանը հղած նամակից, որում խնդրվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել և Թուրքիային նյութապես և ռազմամթերքով օգնել: Քեմալի նամակի երկրորդ կետն այսպիսին էր. «Ըթե Խորհրդային ուժերը ծրագրում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության միջոցով, Վրաստանին հարկադրել Միության մեջ

1. Ջեմալ Կուտայ, նշվ. աշխ., էջ 36:

2. Տե՛ս Ջեքսոն, Ֆուար, նշվ. աշխ., էջ 482 (թուրք.):

3. Կարաբերքիր Կազըմ, Մեր անկախության պատերազմը, Ստամբուլ, 1960, էջ 799-800 (թուրք.):

մտնելու և ձեռնամուխ լինելու Կովկասի տարածքից անգլիացիների վտարմանը, ապա թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում կաշսերասպաշտ (իմպերիալիստական) Հայաստանի դեմ ռազմական գործողությունները և հանձն է առնում հարկադրել Ադրբեջանի հանրապետությունը՝ մտնելու խորհրդային պետության կազմում»<sup>1</sup>:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, հասկանալով Քեմալի առաջարկի հետին միտքը, հունիսի 3-ի իր պատասխանում բավականին որոշակի գրեց, որ համաձայն է Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել և պատրաստ է Անտանտի ռազմական միջամբտություն դեմ պայքարում օժանդակություն ցույց տալ, պայմանով, որ Անգարայի կառավարությունը բարիդրացիական հարաբերություններ պահպանի Անդրկովկասի հանրապետությունների հետ և արդարորեն լուծի նրանց հետ հողատարածքային վեճերը, ըստ որում՝ տվյալ հարցում առաջարկվում էր Մոսկվայի միջնորդությունը<sup>2</sup>: Հունիսի 20-ի իր պատասխանում Քեմալն ընդգծում էր, որ իր «կառավարությունն ընդունում է Ռուսաստանի խորհրդային հանրապետության միջնորդությունը և հետաձգում իր ռազմական գործողությունները Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում»<sup>3</sup>: Ժնևի միջազգային հարաբերությունների ինստիտուտի պրոֆեսոր, Արևելքի երկրների հետ Խորհրդային Միության փոխհարաբերությունների հարցերի մասնագետ Գարիշ Կապուրը այս կապակցությամբ գրել է, որ խորհրդային հուշագիրը «շարադրված էր բավականին խիստ շեշտով և ակնարկում էր տվյալ հարցում խորհրդային միջամտությանը, իսկ Քեմալ փաշան հաստատում էր, որ իր կառավարությունը... ռազմական գործողությունները հետաձգում է խորհրդային հուշագրի ստացման պատճառով»<sup>4</sup>:

Այն, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, ելնելով առաջին հերթին իր իսկ սեփական ռազմաքաղաքական շահերից, դեմ էր թուրք ազգայնականների Անդրկովկասում նախահարձակողական ծրագրերին, երևում է նաև համամիութենական Կենտգործկոմի հունիսի 17-ի նիստին Չիչերինի տված ղեկուցումից: Խոսելով քեմալական Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման մա-

1. АВП СССР. Ф. 132, оп. 3, п. 2, д. I, л. II,

2. *Сб'я Документы внешней политики СССР*, т. 2, док. № 372. էջ 555.

3. Գարիշ Կապուր, Սովետական Ռուսաստանը և Արևելքը 1917-1927: Սովետական քաղաքականության ուսումնասիրություն Թուրքիայի, Իրանի և Ավդանիստանի նկատմամբ, Ժնև, 1966, էջ 96 (Անգ.):

սին, նա ընդգծում էր. «Սակայն մենք Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների մեջ մտնում ենք այն պայմանով, որ ընդմեջ Թուրքիայի և հարևան ժողովուրդների, ինչպիսին հայ ժողովուրդն է, հաստատվի փոխադարձ սահմանազատում և դադարեցվեն փոխադարձ կոտորածները»<sup>1</sup>:

Հենց Խորհրդային Ռուսաստանի վճռական դիրքորոշումն էր, որ Անկարայի ղեկավար շրջաններին հարկադրեց հետաձգել հուլիսի 23-ի համար ծրագրված դեպի Հայաստան զինարշավը<sup>2</sup>: Դա պարզորոշ երևում է Ազգային մեծ ժողովում Քեմալի արտասանած ճառից, որում շեշտված էր, որ Մոսկվան վճռականորեն հանդես է եկել դեպի Հայաստան զինարշավի դեմ և իրենք հենց այդ պատճառով են որոշել ժամանակավորապես դադարեցնել Արևելյան զորաբանակի հարձակողական նախապատրաստությունները: «Ինչ վերաբերում է Հայաստանի նվաճմանը,— ասել է Քեմալն իր այդ նույն ճառում,— ապա տվյալ հարցը պետք չէ դիտել մեկուսի. Հայաստանի հետ հարաբերությունները կազմում են մի աննշան մասը, միայն մի կողմը Արևելքում ընդհանուր իրադրություն և այն փոխհարաբերությունների, որոնք Թուրքիան պահպանում է բոլշևիկյան կառավարության հետ»<sup>3</sup>: Իր հերթին Զիչերինը, հունիսի 19-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին հղած հեռագրում ուղղակի շեշտել է, որ «Բացառապես Խորհրդային կառավարության խաղաղասիրական նկրտումների ազդեցության ներքո է, որ թուրք ազգայնականները կանգնեցրին իրենց կողմից սկսված զորաշարժը, որի նպատակն էր նոր հարվածներ հասցնել հայ ժողովուրդին»<sup>4</sup>:

Ընդունելով Խորհրդային Ռուսաստանի միջնորդության առաջարկը, Անկարայի կառավարությունը համաձայնեց Մոսկվա ուղարկել հատուկ մի պատվիրակություն, ջանալով ցույց տալ, որ իբր կողմնակից է հողատարածքային վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելուն: Իրականում քեմալականները երբևէ չհրաժարվեցին և պատրաստ պատեհ առիթի էին սալասում՝ հայասպանությունն ավարտին հասցնելու միտող իրենց ծրագրերը գործնականացնելու համար:

Արտաքին գործերի նախարար Բեքիր Սամի բեյի պիսավո-

1. Документы внешней политики СССР, т. 2, с. 658.

2. Նույն տեղը:

3. Տե՛ս Աթաթյուրքի ճառերը և առաջադրանքները հատ. 1 (1918-1919), Ստամբուլ, 1945, էջ 65, (Թուրք.):

4. ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 276, գ. 219, ք. 264:

բաժ թուրքական պատվիրակութիւնը հուլիսի 19-ին ժամանեց Մոսկվա և մի շարք հանդիպումներ ունեցաւ արտաքին գործերի ժողովոմ Կ. Վ. Չիչերինի ու նրա տեղակալ Լ. Մ. Կարախանի հետ, ապա և ընդունվեց Վ. Ի. Լենինի կողմից: Չիչերինը մոսկովյան բանակցութիւններում առաջ քաշեց ազգապրական սահմանների սկզբունքը, որը հիմնվում էր մինչև համաշխարհային պատերազմը դոյութիւն ունեցած ազգամիջյան փոխհարաբերութիւնների իրողութիւնների վրա: Իրանից Լյենիով, նա առաջարկեց «կազմակերպել (ազգաբնակչութիւն) փոխադարձ վերաբնակեցում այնպես, որ (սահմանի) երկու կողմերում ստեղծվի ազգագրականորեն միատարր ազգապրական հողատարածք»: Կարճ ասած, Չիչերինը առաջ քաշեց թուրքական հին սահմանի այնպիսի ճշգրրաում, որի շնորհիվ մի կողմից գերակշռաբար մահմեդական ազգաբնակչութիւնը հողատարածքներն անցնեին թուրքերին, իսկ (մյուս կողմից) Հայաստանին անցնեին այն հողատարածքները, որտեղ մինչև 1914 թ. հայկական մեծամասնութիւն էր առկա:

Բերքեր Սամիի պատվիրակութիւնը սեղանին դրեց բոլորովին այլ պահանջներ: Նա ոչ միայն շքանկացաւ լսել այն մասին, որ արևմտահայկական նահանգներից մեկի իսկ Վիշելը, այլև պնդեց հաստատել Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագրի հիման վրա ճշտորոշված հյուսիսարևմտյան սահմանները: Այլ խոսքով, Հայաստանի Հանրապետութիւնը հարկադրված պետք է լիներ թուրքերին «վերադարձնել» Կարսի մարզը: Ուստի զարմանալի չէ, որ բանակցութիւնները 1920 թ. ամռանը ձախողվեցին:

Ժամանակակից թուրք պատմաբանները փորձում են մեղքը բարդել Մոսկվայի վրա, իբր Մոսկվան «պահանջել է թուրքական հողատարածքները զիջել Հայաստանին»: Որոշ պատմաբաններ նույնիսկ մատնանշում են որոշակի «մեղավորին»՝ արտաքին գործերի ժողովոմ Չիչերինին: Տեֆիկ Բըլբըբըօղլուն, օրինակ, գրում է. «1920 թ. օգոստոսի 28-ի գրույցի ժամանակ Չիչերինը վերստինն պնդեց Վանի և Բիթլիսի վիլայեթների որոշ մասեր Թուրքիայից անջատելու վրա»: Նույն հեղինակն այնուհետև նշում է, որ «Բարեկամական պայմանագրի» ստորագրումը «ձգձգվել է այն պատճառով, որ Չիչերինը Թուրքիային ընծեովելիք օժանդակու-

թյունը պայմանավորեց Վանի, Բիթլիսի և Մուշի շրջանները հայերին դիջելով»<sup>1</sup>:

Եվ սակայն թուրք ղեկավարները, հակառակ իրենց հռչակած սկզբունքներին և ամբողջ Հայաստանի նկատմամբ իրենց ստոր ախորժակների դրդմամբ մերժեցին արդարացի առաջարկությունները և դրանով իսկ 1920 թ. մոսկովյան բանակցությունները ձախողման դատապարտեցին: Բանակցությունների ընթացքում մշակվեց բարեկամության թուրք-բուլղարիկյան պայմանագրի նախագիծը, սակայն նա չվավերացվեց, որի ձախողման պատճառների մասին խոսվեց վերևվում: Այն ընդունվեց վեց ամսից հետո խորհրդա-թուրքական մոսկովյան երկրորդ բանակցությունների ժամանակ (1921 թ. փետրվար-մարտ ամիսներին): Պայմանագրի նախագիծը կազմված էր հակահայկական ոգով և ուղղված էր 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի դեմ: Պայմանագրի նախագիծը քողարկված թուրք-բուլղարիկյան դավադիր գործարք էր Հայաստանի դեմ, որը լրիվ բացահայտվեց խորհրդա-թուրքական երկրորդ բանակցությունների ժամանակ: Եվ պատահական չէր, որ այդ պայմանագրի նախագիծը հիմք հանդիսացավ քեմալական ղորքերի սեպտեմբերի 23-ի հարձակմանը Հայաստանի վրա:

Մոսկովյան 1920 թ. մայիս-հուլիս ամիսներին տեղի ունեցան նաև խորհրդա-հայկական բանակցություններ: Հայկական Հանրապետության պատվիրակությունը ղեկավարում էր Լևոն Շանթը:

Խորհրդա-հայկական բանակցությունների նախաձեռնողը խորհրդային Ռուսաստանի կառավարությունն էր, որը երկու կողմերի համաձայնությամբ միջնորդի դեր էր խաղում: Ռուսաստանը ամեն կերպ ձգտում էր վերջ տալ հայ-թուրքական ընդհարումներին և Հայաստանի ու Թուրքիայի միջև գոյություն ունեցող սահմանային վեճերին:

Արտաքին գործերի ժողկոմ Զիչերինը, խոսելով հայ-թուրքական հարաբերությունների մասին, ընդգծում էր, որ «խորհրդային Ռուսաստանը, շնորհիվ իր հեղինակության, շնորհիվ թե՛ մեկ, թե՛ մյուս ժողովրդի ժողովրդական զանգվածների վրա իր ազդեցության, միայն նա է ի վիճակի զբաղվել և՛ մեկ, և՛ մյուս կողմին՝ ազգային կոտորածից, մյուս ազգին կոտորելու ձգտումից»<sup>2</sup>:

Սակայն, խորհրդային Ռուսաստանի միջնորդելու նպա-

1. Տեֆիկ Բլյբլբլոզյու, Աթաթուրքը Անատոլիայում, 1919-1921, Անկարա, 1959, էջ 20-21 (Թուրք.):

2. АВП СССР, т. II, с. 657-658.

տակները շարակվեցին հաջողությամբ՝ ազգայնական Թուրքիայի երկդիմի ու զավթողական քաղաքականության հետեւում։ Բեքիր Սամի բեյը լսել անգամ չուզեց Արևմտյան Հայաստանի որևէ վիլայեթ «գիջելու» մասին, ավելին, նա ընդգծեց, որ երկու կառավարությունների միջև որպես հարաբերությունների հիմք ծառայում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և նրան լրացնող Բաթումի պայմանագիրը։ Բեքիր Սամի բեյի բերված փաստարկները հիմնադրով էին, քանի որ նշված պայմանագրերը կնքվել էին սուլթանական կառավարության կողմից, կառավարություն, որին քեմալական կառավարությունը չի ճանաչել։

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն էլ չէր բավարարվում վանի, Մուշի, Բիթլիսի վիլայեթներով, ինչպես այդ առաջարկում էր խորհրդային կառավարությունը, այլ պահանջում էր նաև Թուրքահայաստանի մյուս վիլայեթները։

Լևոն Շանթի պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանը իր հուշերում գրում է Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լևոն Կարախանի հետ ունեցած իր հանդիպման մասին։ Կարախանը, Տերտերյանին ցույց տալով Հայաստանի Հանրապետության քարտեզը, ասել է. «Դուք դաշնակցական եք, իսկ ես՝ կոմունիստ, բայց մենք երկուսս էլ հայ ենք. մեզ համար թանկ է հայ ժողովրդի շահերը, այժմ համաձայնեք ձեր հանրապետությանը միացնելու այդ երեք վիլայեթները, հետո կտեսնենք»<sup>1</sup>։ Հայաստանի պատվիրակությունը չընդունեց այդ առաջարկը. բանակցությունները ձախողվեցին։

Բանակցությունների օրերին խորհրդային կողմը այնքան վստահությամբ էր վերաբերվում թուրքական պատվիրակությանը, որ նրա ղեկավար Բեքիր Սամի բեյը Թուրքիա մեկնելու սլոտովակով հղավ Ադրբեջանում, Ինգուլեթիայում, Գաղստանում, զբաղվելով հակախորհրդային պրոպագանդայով։ Նրան օժանդակում էին մուսավաթականները։

Թուրքական պատվիրակության անդամ, հետագայում Մոսկվայում քեմալական առաջին ղեկավար Ալի Ֆուադ Զեքեոյը իր «Մոսկովյան հուշերում» փորձում է քղաթափվել Անկարայի կառավարության նախահարձակողական մտադրությունները և բանն այնպես ներկայացնել, որ իբր իրենց ահանջները քացարձակապես օրինական էին, քանի որ իբր վերաբերում էին պատմականորեն թուրքական տարածքների։ Նա գրել է. «Անկարայի կառավարությունը հարևան երկրներ-

1. Մ. Ավետյան, Հուլամատեան զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 193։

րի նկատմամբ որևէ թշնամական մտադրություն չուներ և ազգային սահմանների շրջանակներում սեփական անկախություն և ազատություն նվաճումից բացի ուրիշ նպատակ չէր հետապնդում»<sup>1</sup>:

Աղավաղելով փաստերը, թուրք հեղինակները, ինչպես, օրինակ, պրոֆեսոր էնվեր Բեհնան Շապուլոն, իր «Թուրքական հանրապետության պատմություն» գրքում խորհրդային Ռուսաստանի կառավարությանը մեղադրում է որպես իր դիրքորոշմամբ մոսկովյան բանակցությունների ձախողանքի պատասխանատու<sup>2</sup>: Մի այլ հեղինակ «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 1919-1965 թթ.» աշխատության էջերում չարկադրաբար ընդունում է, որ այն բանից հետո, երբ հունական զորքերը, հունիսի 22-ին սկսված հաղթական առաջընթացով հուլիսի 8-ին Բրուսան, 20-ին Թեքիրդաղը, 25-ին էդիրնեն և օգոստոսի 29-ին Ուշաքը գրավեցին, «Անկարայի կառավարությունը շափազանց դժվարին դրության առաջ կանգնեց և կառավարության որոշ անդամներ առաջարկեցին ընդունել խորհրդային կողմի պահանջերը, սակայն Մ. Քեմալի պնդմամբ Թուրքիայի ազգային ժողովը մերժեց այդ առաջարկությունը» ինչի մասին էլ անմիջապես հաղորդվեց Մոսկվա, թուրքական պատվիրակությանը<sup>3</sup>: Նույնն են կրկընում Մ. Քեմալ Սուն<sup>4</sup>, Ահմեդ Շյուքրու էսմերը<sup>5</sup>, Տեֆիկ Բըլբըլօղլուն<sup>6</sup> և ուրիշներ: Բըլբըլօղլուն, օրինակ գրել է, «1920 թվականի օգոստոսի 24-ին Մոսկվայում բարեկամության նախնական պայմանագրի շնորհիվ հիմնական պատճառն այն էր, որ խորհրդային կողմը մտադրվել էր մեր արևելյան նահանգների հողերը տալ հայ դաշնակներին»<sup>7</sup>:

Այնուհետև, խեղաթյուրելով, նա փորձում է արդարացնել Հայաստանի դեմ քեմալական նախահարձակումը, այն ներկայացնելով որպես «խաղաղասիրական քայլ»։ Դաշնակցա-

1. Ջերեսուլ, նշվ. աշխ. էջ 90-91 (Թուրք.):

2. է. Բ. Շապուլո, Թուրքական հանրապետության պատմություն, Ստամբուլ, 1951, էջ 67 (Թուրք.):

3. Տե՛ս «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 1919-1965, էջ 28 (Թուրք.):

4. Մյուկերիմ Քեմալ Սու և Քեմալ Սու, Թուրքական հանրապետության պատմությունը, Ստամբուլ, 1957, էջ 77-78 (Թուրք.):

5. Ախմեդ Շյուքրու էսմեր, Թուրքական դիվանագիտությունը 1920-1955, Ստամբուլ, 1959, էջ 69 (Թուրք.):

6. Տեֆիկ Բըլբըլօղլու, Աթաթյուրքը Անատոլիայում, էջ 22 (Թուրք.): Այդ մասին տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան— հայ ժողովուրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 44-49:

7. Տեֆիկ Բըլբըլօղլու, նշվ. աշխ., էջ 20:

կան Հայաստանի դեմ 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ձեռնարկված ոչ տեղական պատերազմական գործողությունների նպատակն էր խաղաղություն ու անդորր հաստատել այդ շրջանում և կենսագործել մեր ազգային ուխտը»<sup>1</sup>:

Ի դեպ, Մուսթաֆա Քեմալն ինքը բազմիցս հաստատել է Հայաստանի վրա նախահարձակման նախապատրաստությունների իրողությունը: Այսպես, 1920 թ. օգոստոսի 14-ի իր ճառում նա ընդգծել է. «Ազգային մեծ ժողովը նախարարաց խորհրդին լիազորել է գրավել երեք նահանգները (խոսքը Կարսի, Արդահանի և Բաթումի մասին է.— Ծ. Ս.), հենց որ հնարավորություն ստեղծվի: Այդ իսկ պատճառով հունիսի 6-ին մենք արևելյան զորաբանակին հրամայեցինք դրոհի նախապատրաստվել»<sup>2</sup>: Այս հարցին նա անդրադարձել է նաև 1927 թ. Ազգային ժողովում արտասանած իր ճառերից մեկում, որում վերլուծելով 1920 թ. Արևելյան ռազմաճակատում ստեղծված իրադրությունը, ասել է. «Մենք որոշեցինք արշավել Հայաստանի վրա: 1920 թ. հունիսի 9-ին մենք հրամայեցինք արևելյան նահանգներում նախնական զորահավաք կատարել: 15-րդ զորաբանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան նշանակվեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար»<sup>3</sup>:

Եվ այսպես, ուրեմն, տակավին 1920 թ. հունիսին, երբ հունական զորքերը Թրակիայում ու Անատոլիայում խոշոր հարձակման էին ձեռնամուխ եղել և տիրել Ադրիանոպոլսին, Բրուսային, Բալիքեսերին ու մի շարք այլ քաղաքների, Անկարայի կառավարությունը իր հիմական ուժերը կենտրոնացրել էր ոչ թե Արևմտյան ճակատում, ընդդեմ հույների, այլ Հայաստանի սահմանազլխին, ծավալուն նախահարձակում ձեռնարկելու նպատակով: Եվ դա պարզ էր ու հասկանալի: Քեմալական ղեկավար շրջանները, «անթույլատրելի» համարելով անկախ Հայաստանի գոյության փաստը, սկզբից ևեթ իրենց կենսական նպատակ էին դարձրել Հայաստանի ոչնչացումը, որից հետո միայն, նրանց կարծիքով, հնարավոր կլիներ պայքարը հույների դեմ արևմտյան ճակատում: Թե ինչ նշանակություն էին քեմալականները տալիս հայկական պետականության դեմ նախապատրաստվող հարձակողականին, երևում է թուրք ռազմական պատմաբան, գլխավոր շտաբի նախկին գնդապետ Զեզետ Քերիմի կողմից «Դասախոսություններ անկախության համար

1. «Բեկետեն», հուլիս, 1961, էջ 489 (Թուրք.):

2. «Աթաթյուրքի ճառերի և առաջադրանքները, հատ. 1 էջ 90 (Թուրք.):

3. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, с. 313.

մղված պայքարի մասին» գրքում բերված վկայություններին: «Քաղաքական նկատառումներով Անատոլիայի ղեկավարները իրադրությունն Արևելքում ավելի լուրջ էին համարում: Այնքանով, որքանով սկզբնական շրջանում հույներին և ֆրանսիացիներին դիմադրելու (մեր զորքերին լոկ) պաշտպանական առաջադրանքներ էին տրված, ապա այդ ճակատներում ջանում էինք ղինվորական աննշան ուժերով ամեն կերպ խոչընդոտել թշնամու հետագա առաջխաղացքը և միաժամանակ լրացնել ու հանդերձավորել զորամասերը: Գլխավոր ուշադրությունը կենտրոնացած էր Արևելյան ռազմաճակատի վրա, քանի որ այստեղ հաջողությունն նվաճումը պետք է լիներ ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը, որը թարախապալարի տեսքով շարունակում էր մնալ մեր երկրի մարմնի վրա»<sup>1</sup>: Նույն ոգով և նույնքան բացահայտ գրել են նաև թուրք շատ այլ պատմաբաններ և ռազմական գործիչներ (պրոֆեսոր էնվեր Զիա Կարալը, զորավար Ալի Ֆուադ Զեբեսոյը, ռազմական դպրոցում քաղաքական պատմության դասախոս Թահսին Յունալը և ուրիշներ):

Նշանակում է, որ արխիվային փաստաթղթերից, թուրք ղեկավարների (այդ թվում նույն Քեմալի) աներկբա խոստովանություններից և թուրք ժամանակակից հեղինակների աշխատություններում արձանագրված փաստերից բխում է անհերքելի մի իրողություն, որ քեմալական կառավարությունը կանխօրոք նախապատրաստել և հանգամանորեն մշակել էր Հայաստանի, որպես պետության, ոչնչացման ծրագիրը և սեփական նախաձեռնությունամբ էլ սկսել այդ ծրագրի գործադրումը:

Մեզ թվում է, որ լոկ արգահատանքի են արժանի այն վայ-պատմաբանները, որոնք այս կամ այն կերպ զարդացրել են են Ստալինի (տե՛ս նրա «Երկերի» ռուսերեն հրատարակության 4-րդ հատորը, էջ 411) այն եղկելի տեսակետը, թե «դաշնակները պատերազմ շղթայազերծեցին Թուր-

1. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1934, с. 314. Այդ մասին տե՛ս Ծ. Սարգսյան, Ռ. Սահակյան, — Հայ ժողովուրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 46-49:

բիայի դեմ»։ Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ որոշ պատմաբաններ, արձանագրելով թուրքական ղեկավար շրջանների նախահարձակողական «մտադրությունները» իրադությունը, դրանք առնչում են բացառապես Քեմալի քաղաքական հակառակորդների հետ։ «Համաշխարհային պատմութուն» ռուսերեն աշխատության 8-րդ հատորում (Մոսկվա, 1961, էջ 452), օրինակ, կարդում ենք. «Անատոլիական քաղաքական և ռազմական գործիչների շարքում կային Քեմալի թաքուն և նույնիսկ բացահայտ թշնամիներ, կայսերապաշտների հետ լեզու գտնելու կողմնակիցներ։ Նրանք ցանկանում էին թուրքական ազգային շարժումը շեղել կայսերապաշտական ռազմական միջամտության դեմ պայքարից և գցել ծայրահեղ ազգայնական հունի մեջ, ուղղել Կովկասի ժողովուրդների դեմ»։ Ստացվում է, որ 1920 թ. թուրքական ներխուժումը Հայաստան ոչ թե քեմալականների, այլ նրանց քաղաքական հակառակորդների գործն էր։ Դրանով իսկ «հերքվում» է այն անուրանալի իրողությունը, որ քեմալականներն իրենք վերջին հաշվով հետևում էին շովինիստական ուղուն։

Հարկ է նշել, որ ժամանակակից թուրք հեղինակները, փորձելով 1920 թ. աշնանը Հայաստանի դեմ նախահարձակումը ներկայացնել որպես «ազատագրական պայքարի կարեւոր նախադրյալ», բացեիբաց գրում են քեմալականների կողմից այդ պատերազմի նախապատրաստման, հարձակողականի ժամանակի, ռազմական ուժերի համակենտրոնացման և հարակից հարցերի մասին։ Այս տեսակետից հետաքրքրական է քեմալական երևելի գործիչներից մեկի՝ զորավար Ալի Ֆուադ փաշա Զեբեսոյի խոստովանությունը։

Իր «Ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ հուշեր» գրքում Զեբեսոյը, անդրադառնալով Հայաստան արշավելուց առաջ Արևելյան ռազմաճակատում ձեռք առնված նախապատրաստական միջոցառումներին, հաստատում է, որ նախահարձակումը տեղի չի ունեցել զարնանը և պարզապես հետաձգվել է. «Մթե Քյազիմ Կարաբեքիր փաշայի Հայաստան շարժվելու առաջարկությունը մայիս ամսին առարկության չհանդիպեր, ապա 1920 թվականի աշնանը, Արևմուտքում տեղի ունեցած կարևոր փոփոխությունների ժամանակաշրջանում, (հուլյանի դեմ) Արևմտյան ռազմաճակատը կրկնակի ուժեղ կլիներ»<sup>1</sup>։ Հեղինակի կարծիքով, հենց մայիսին էր առկա «առավել բարենպաստ» այն իրադրությունը, որն անհրա-

1. Ալի Ֆուադ Զեբեսոյ, Ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ հուշեր, էջ 474 (Թուրք.)։

ժեշտ էր Բուրժուական գրոհն սկսելու համար»։ 1920 թ. մայիսին հայկական բանակը զբաղված էր բոլշևիկյան ներքին խռովությունը ճնշելու և հյուսիսում ադրբեջանցիներին կասեցնելու գործով։ Մենշևիկյան Վրաստանը ի վիճակի չէր օգնելու Հայաստանին։ Եվ ահա այդպիսի դժվարին կացություն մեջ գտնվող հայերի դեմ կանգնած էին երեք կանոնավոր զորաբանակներ և 15-րդ զորաբանակի կամավորական զնդերը։ Այդ զորքն ի վիճակի էր հայերին արագորեն պարտության մատնելու<sup>1</sup>։

Կարաբեքիրն ինքը իր հուշերում դժգոհություն է հայտնել, որ Քեմալը, հավանություն տալով Հայաստանի վրա հարձակմանը իր «համար առաջին ռազմական պատրաստականությունը», խնդրել է փոքր-ինչ սպասել. «Ազգային մեծ ժողովի մայիսի 6-ի պատասխանը ահավոր մի նահանջ էր։ ...Ապրիլի կեսերին հարձակման անցնելու իմ գաղափարը հավանություն գտավ։ Բացի դրանից, բոլշևիկներին մեր առաջին իսկ առաջարկության մեջ հաղորդվեց հայերի դեմ գործողությունների մասին։ Ավելի բացահայտ ասած՝ արևելյան ուժմանների վրա զորքերի համակենտրոնացմանը ես ձեռնարկեցի ապրիլի 26-ին, ըստ որում Ազգային մեծ ժողովի նախագահ Մ. Քեմալի համամտությամբ։ Ուրիշ խոսքով, թե՛ ներկայացուցչական, թե՛ Ազգային մեծ ժողովները հանդես եկան որպես գործողությունների կողմնակից։ Հարցը լուկ հետևյալն էր. գործողության անցնելու հրամանը Անկարայի՞ց պիտի տրվեր, թե, ժամանակ շահելու համար, ես կարող էի սեփական լիազորություններով ղեկավարվել։ Ես ցանկանում էի, որպեսզի ինձ այդպիսի լիազորություն տրվեր։ Այնինչ ինձ հասած պատասխանը սաստիկ ցավ պատճառեց»<sup>2</sup>։

Մոսկովյան բանակցությունները ձախողումից հետո Անկարայի կառավարողները, օգտվելով այն հանգամանքից, որ Խորհրդային Ռուսաստանը հարկադրված էր լեհական ներխուժման դեմ պայքարելու նպատակով որոշ զորամասեր հտ կանչել Կովկասից, ձեռնարկեցին Անդրկովկասի նկատմամբ իրենց հարձակողական ծրագրերի կենսագործմանը։

Սեպտեմբերի 8-ին Մ. Քեմալի նախագահությունը կայացավ Ռազմական գերագույն խորհրդի նիստ, որին ներկա էին զորավարներ Քյազիմ Կարաբեքիր, Ահմեդ Ֆեզի, Մուհիբդդին, Ալի Ֆուադ և Նիհադ փաշաները, Մուհեդդին բեյը և սպայակուլտի պետ զեդապետ Իսմեթ բեյը։ Նիստում լավեց

1. Կազրմ Կարաբեքիր, Մեր ազատագրական պատերազմը, Ստամբուլ, 1960, էջ 90 (Քուրթ)։

2. Նույն տեղում։

կարարեքերի հաղորդումը՝ Արևելյան ռազմաճակատում թուրքական զորքերի Հայաստանին բռնատիրելու նախապատրաստությունների վերաբերյալ: Զեկուցողը ժողովականներին վստահեցրեց, որ հրամանատարությունն ենթադրեց 4 զորարանակները, յուրաքանչյուրում 8-9 հազար զինվոր, նաև մի քանի հազար բաշիրոզուկները լիուլի բավարար են՝ իր առաքելությունը գլուխ բերելու:

Եվ սակայն Մ. Քեմալի համար մի հարց այնուամենայնիվ պարզ չեղավ. նախահարձակման դեպքում Հայաստանի նկատմամբ ի՞նչ դիրքորոշում է գրավելու Վրաստանը, որը, ինչպես հայտնի է, ուներ թվականորեն ոչ մեծ, սակայն լավ կազմակերպված բանակ: Այդ նպատակով Յուսուֆ Քեմալ բեյի գլխավորությամբ մի առաքելություն գաղտնորեն ուղևորվեց Թիֆլիս, որտեղ բանակցություններ վարեց վրացական նախարարաց խորհրդի նախագահ Նոյ ժողդանիայի և արտաքին գործերի նախարար Գեգեչկոբիի հետ: Վերջիններս Անկարայի պատվիրակներին վստահեցրին, որ «Հայ-քեմալական պատերազմի դեպքում Վրաստանը խստիվ շեղոքություն է պահպանելու»<sup>1</sup>: Ինչպես նշված է արխիվային գաղտնի մի փաստաթղթում, «մնում էր միայն համաձայնություն գալ խորհրդային իշխանության հետ և դա էլ արվեց: Բաքուն այդ ժամանակ Անկարա ուղարկեց հետևյալ լակոնիկ հեռագիրը— «Ճանապարհն ազատ է»<sup>2</sup>:

Մենշևիկյան Վրաստանի և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը պարզելուց հետո, Անկարայի կառավարող շերջանները Հայաստանի Հանրապետության թույլ և փոքրաթիվ զորքերի դեմ կենտրոնացրեցին 50 հազարանոց բանակ, այն դեպքում, երբ հունիս-օգոստոսին Թրակիայի և Անատոլիայի խորքը թափանցած և Բալիքեսիրը, Բանդրման, էրզելին, Բրուսան, Թեքիրդաղը, Ադրիանապոլիսը (էդիրենն), Ուշաքը և այլն գրաված 60 հազարանոց հունական զորքերի դեմ դասավորվելու էին 15 հազար ասքյարներ: Դա ցույց է տալիս, որ Անկարայի համար հիմնականը Արևելյան ռազմաճակատն էր:

Թուրք մարդակեր ծավալապաշտների ծրագրերում ոչ միայն Հայաստանի կործանումն էր, այլև՝ Խորհրդային Ադրբեջանի նվաճումը: Մ. Քեմալը Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուադին 1920 թ. սեպտեմբերի 14-ին հեռագրով ուղղակի ցուցմունք էր տալիս. հայերի հետ սկսել

1. ՀՀ ՊԿՊ, № 200, ց. 1, գ. 443, ք. 36-37.

2. АВП СССР, ф. 132, референтура по Турция, п. 3. оп. 3, д. 7. л. 42-43.

բարենպաստ պատերազմ այն հաշվով, որ Թուրքիային միավորենք նաև Ադրբեջանը<sup>1</sup>: Սերգո Օրջոնիկիձեն Անդրկովկասի դրուձյան շուրջ մի զեկուցագրում շեշտում էր, որ «Թուրքեր արդեն այժմ ջանում են կապ հաստատել ադրբեջանական դժգոհ տարրերի հետ, նրանց պատվիրակություններին են ընդունում և նկրտում են Ադրբեջանի հետ ունենալ ընդհանուր սահման, ինչը հատկապես վտանգավոր է ներկայումս»<sup>2</sup>:

Այս ամենը վկայում է այն մասին, որ շարունակելով երիտթուրքերի ծավալապաշտ քողաքականությունը, քեմալականները պատրաստվում էին Պվաճելու Անդրկովկասը: մասին բացահայտորեն գրել են թուրք հեղինակներ էնվեր Ջիա Քարալը, Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, Ջեմալ Քութայը, զորավար Ալի Ֆուադ Ջեբեսույը և այլոք:

Անկարայի կառավարության զորքերը Անդրկովկասի դեմ զինվորական գործողությունները սկսեցին 1920 թ. հունիսի վերջերին, երբ Բայազետի 9 հազար սվին հաշվվող զորաբաժինը Ջավիդ բեյի հրամանատարությամբ ձեռնամուխ եղավ Նախիջևան-Ջուլֆա-Օրդուբադի գրավմանը: Թուրքական հրամանատարությունը դեպի Նախիջևան առաջխաղացքը պատճառաբանեց «Դաշնակցական Հայաստանի դեմ համատեղ պայքարելու համար Նախիջևանի շրջանում խորհրդային և թուրքական զորքերի միավորման անհրաժեշտությամբ»: Եվ սակայն ռուսական բանակի հրամանատարությունը, կռահելով թուրքերի նվաճողական մտադրությունները, մերժեց նրանց առաջարկությունը և հուլիսի վերջերին շտապ կարգով Ղարաբաղից ու Ջանգեղուրից Նախիջևան ուղարկեց առանձին գումարտակներ՝ դրանով իսկ վերոհիշյալ շրջանները պատվարելով թուրքական զորքերի ներթափանցումից:

Խորհրդային պատմագրության մեջ շրջանցվել կամ հասկանալի պատճառներով լուրթյան է մատնվել 1920 թ. սեպտեմբերին բռնկած հայ-թուրքական պատերազմին Ստալինի կողմից տրված այն թյուր գնահատականը, թե իբր «դաշնակները սանձազերծեցին պատերազմ Թուրքիայի դեմ»: Ծիշտ է, այս գնահատականը հերքվել է խորհրդային պատմաբանների կողմից<sup>3</sup>, սակայն ցայսօր սխալը կրկնում են որոշ

1. Տե՛ս էնվեր Ջիա Կարալ, Թուրքական հանրապետության պատմությունը (1918-1953), Ստամբուլ, 1958, էջ 97, (Թուրք.):

2. ЦПА ИМЛ, ф. 558, оп. 1, д. 1989, л. 1.

3. Տե՛ս Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխում թուրք պատմագրության մեջ (հեղ. Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան Եր. 1963:

Յուրքագետներ<sup>1</sup>: Եվ դա այն ժամանակ, երբ իրենք Յուրքերը՝ ռազմական գործիչներ ու պատմաբաններ, աներկիմաստ խոստովանում են, որ հենց Յուրքեիան է հարձակվել Հայաստանի վրա:

Տակավին 1919 թ. ամռանը Քյազիմ Կարաբեքիրի պատվիրակները մշտական կապ էին պահպանում Բաքվի մուսավաթական կառավարության հետ, ըստ որում կապի գլխավոր խոզովակները իթթիհադականներից ժառանգություն մնացածներն էին: 1919-ի վերջին Բաքու ժամանեց Յուրքական զորավարներից մեկը՝ նախկին հրամանատար Խալիլ փաշան: Քեմալի կողմից նրան առաջադրանք էր տրվում ապահովել խորհրդային իշխանության ռազմական, նյութական և բարոյական աջակցություն հօգուտ իր շարժման: Այդ ժամանակ Ադրբեջանում ազատ գործողության իրավունքից արդեն իսկ օգտվում էր Նուրի փաշան, որը ղեկավարում էր մուսավաթականների հետ սերտորեն շաղկապված և համա-Յուրքական քարոզչություն ծավալած «Յուրքական ժողովրդական պատվիրակություն» կոմիտեն: Բաքվում էր գտնվում նաև մուխեմանդ պանթուրքիստ, դոկտոր Ֆուադ Սաբիթը՝ էրզրումի համագումարի կազմակերպիչներից մեկը:

Խալիլ փաշան կոչ արեց Յուրքական ղորքեր ուղարկել րացելու Յուրքեիայի համար կենսական նշանակություն ունեցող նախիջևան—Ջանգեղուրյան ուղին: Ինքը՝ Խալիլ փաշան, ինչպես նաև Նուրի փաշան և Յուրք այլ սպաներ, զենքը ձեռքին մարտնչեցին Ղարաբաղում և Ջանգեղուրում, իսկ ավելի ուշ՝ նաև Դաղստանում: Նրանք Հյուսիսային Կովկասի լեռնականներին կոչ արեցին համախմբվել «Միացյալ լեռնականների միության» մեջ և իրենց կազմակերպությունը միացնել Ադրբեջանական հանրապետության հետ: Յուրք պատվիրակները նկատում էին միավորել Հյուսիսային Կովկասի բոլոր մահմեդական տարրերին՝ Յուրքեիայի հոգատարությունը (պրոտեկտորատը) ճանաչելու պարտադիր պայմանով:

1920 թվականի գարնանը դոկտոր Ֆուադ Սաբիթ-օղլուն իրեն հայտարարեց Բաքվում Յուրքական գլխավոր ներկայացուցիչ: Այդ տարվա առաջին ամիսներին Յուրքական գործակալներն արդեն ամրապնդել էին կապը ընդմեջ Անատոլիայի ու Բաքվի և Յուրք ազգայնականների կողմից Հայաստանի բռնագրավվածը համարում էին մոտալուտ «Հրաշալի գործ»:

Իրականում Բաքվի և Անկարայի միջև գլխավոր միջնորդը Քյազիմ Կարաբեքիրն էր: Նա խորհուրդ տվեց Յուրքական պաշտոնական ներկայացուցիչ նշանակել՝ Մոսկվայի հետ

բանակցութիւններ վարելու համար: Կարաբեքիրի կարծիքով, խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի համագործակցութիւնը պետք է իրականացվեր հետևյալ շրջանակներում. Թուրքական բանակի կողմից «կայսերապաշտ Հայաստանի» շախչախում, իսկ բոլշևիկյան ուժերի կողմից Վրաստանի գրավում ու անգլիացիների վտարում, ըստ որում նախատեսվում էր, որ Թուրքիային խորհրդային նյութական, պարենային և ռազմական օժանդակութիւնը միաժամանակ կհեշտացնէր բոլշևիկների պայքարը ինտերվենտների դեմ:

Պարզվում է, որ «դեռևս» գարնան ամիսներին Կարաբեքիրը լիովին ավարտել էր ուժերի միավորումն ու դիմումը հայերի դեմ հարձակվելու համար<sup>1</sup>: Այդ ժամանակ Կարսի և Բայազետի սահմաններին կենտրոնացած քեմալական զորքերի իսկական նպատակների մասին է վկայում նաև ապրելի կեսերին Անկարայի ղեկավար շրջաններին ուղարկած Կարաբեքիրի հետևյալ հեռագիրը. «Մոտ օրերս պիտի ավետեմ, որ Հայաստանը սրբված է աշխարհի քարտեզից»<sup>2</sup>:

Թուրքերը իրենց ցեղասպան-նվաճողական գործողութիւնները իրականացնում էին Անտանտի դեմ պայքարի ստապատիր լողունգով, իսկ բուն Հայաստանի դեմ պատերազմը ներկայացնում որպէս «Անտանտի դաշնակից հայկական իմպերիալիզմի դեմ պայքար»: Քեմալական հրամանատարութիւնը, հայտարարեց, որ իր զորքերը մարտնչում են «Անտանտի գործակալ դաշնակիցների» դեմ, ի խնդիր «դաշնակիցների լծից հայ ժողովրդի ազատութեան»: Ամենուրեք և ոչ առանց հաջողութեան տարածայնվում էին շշուկներ այն մասին, որ քեմալականները իբր ճիշտ ու ճիշտ այնպիսի հեղափոխականներ են, ինչպիսիք բոլշևիկներն են: Իսկ թե ինչպիսի բոլշևիկներ էին քեմալականները, այդ մասին ինքը Մ. Քեմալը ասել է 1919 թ. սեպտեմբերի 22-ին Սվազի համագումարում. «Ինչ վերաբերում է բոլշևիզմին, ապա նկատի ունենալով մեր կրոնը, մեր ավանդույթներն ու մեր ընկերային կարգը, ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ վարդապետութիւնը հաջողութեան որևէ հեռանկար չունի մեր երկրում: Թուրք ժողովուրդը պատրաստ է անհրաժեշտութեան դեպքում նույնիսկ պայքարելու նրա դեմ<sup>3</sup>: Իսկ 1920 թ. օգոստոսի 14-ին Անկարայում արտասանած ճառում ասել է. «Բոլորին հայտնի է, որ մեր տեսակետը և սկզբունքները բոլշևիկյան շեն և առ այսօր մենք բացարձակապէս ու երբևէ

1. Տե՛ս Ջեմալ, Քութայ, նշվ. աշխ., էջ 36:

2. Նույն տեղը, էջ 25-26:

3. «Նոր Ստամբուլ», 10. XI. 1965 (Թուրք.):

չենք մտածել և որևէ շանք էլ չենք գործադրում, որպեսզի մեր ժողովրդին հարկադրենք ընդունելու բոլշևիկյան սկզբունքները: Մենք համոզված ենք, որ մեր ազգի, կյանքի ու ապագայի երաշխիքները կապված են ազգային իդեալների և սկզբունքների հետ»<sup>1</sup>:

Թուրք պատմաբան Յահյա Օքչուն իր «Թուրք-ոսուական պայքարի պատմություն» գրքում ընդգծել է. «Մեծագույն թուրքի, մեր Աթաթուրքի բառերով ասած, թուրք ժողովրդի մեծագույն թշնամին բոլշևիկն է, որին պետք է ոչնչացնել այնտեղ, որտեղ կհայտնվի»<sup>2</sup>: Իսկ այս խոսքերը վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ հորհրդային Ռուսաստանը նշանակալից օգնություն էր ցույց տալիս Թուրքիային, հասկանալի է՝ զենքով ու ոսկով: Այդ ավելի քան կենսական օժանդակությունը քեմալականները հատուցելու էին հորհրդային Ռուսաստանի նկատմամբ «բարեկամական» վերաբերմունքով, որի մասին Իրանում Թուրքիայի ներկայացուցիչը հայտարարել է. «Բոլշևիկներին հետ մեր բարեկամական հարաբերությունները սոսկ ձևական (երևութական) ընդլսթ են կրում»<sup>3</sup>:

Հակառակ այդ ամենին, հորհրդային Ռուսաստանի պաշտոնական շրջանները փառաբանում էին քեմալական շարժումը, «չտեսնելու» տալով նրա հակախորհրդայնությունն ու ծավալապաշտ նկրտումները: Քեմալական Թուրքիան դիտվում էր որպես Արևելքում սոցիալիստական հեղափոխության դրոշակակիր: Բոլշևիկյան կուսակցության համար փոքր ժողովուրդների հարց դոյություն չունեի: Ահա թե ինչ է գրել «Իդեալիստիա» թերթը 1920 թ. նոյեմբերի 22-ին. «Անդրկովկասի կոմունիստական կուսակցությունը, որի համար դոյություն չունեն ազգային հարցեր, որպես այդպիսիք, պետք է իրադարձությունները զնահատի համաշխարհային հեղափոխության հիմքերի ամրապնդման տեսակետից: Ինչպես Հայաստանի դաշնակցականները, այնպես էլ Վրաստանի մենշևիկները մեզ համար այն խոչընդոտող քարակույտն են, որից հարկ է մաքրել հեղափոխության դեպի Արևելք ձգվող ճանապարհը: Կուսակցության բոլոր ուժերը ներդրված են այդ խոչընդոտը վերացնելու գործին: Նույն նպատակն է հետապնդում նաև խորհրդային կենտրոնական իշխանությունը»:

1. М. Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1934, ст. 314.

2. Օքչու Յահյա, Թուրք-ոսուական պայքարի պատմությունը, Անկարա, 1949, էջ 239 (Թուրք.):

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, դ. 16 թ. 43:

Բոլոր դեպքերում միամիտները և նրանք, ովքեր ուզում էին խաբւել, հրապուրվեցին քեմալականների «հեղափոխականութեան» խաբեպատիր խայծով և ընկան Թուրքերի թակար. դը: Քեմալականների քարոզչութեանը քիչ չնպաստեցին հեղկոմից ղեկավարվող հայ բոլշևիկները, որոնք դաշնակների հեղինակութունը ամեն գնով գցելու իրենց ջանքերում մինչև կոկորդները խրվեցին ազգավնաս դիրքորոշման մեջ: Այսպես, Հայաստանի հեղկոմի հուլիսի 1-ի գաղտնի փաստաթուղթը ուղղված հայ կոմունիստներին և, հատկապես, Հայաստանի Հանրապետութեան քեմալական զավթիչների դեմ պայքարող զորքերին, կոչ էր անում. «Հայաստանի կոմունիստների, (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցական բոլոր կազմակերպութուններին, թե թիկունքում, թե ռազմաճակատներում և հատկապես Կարսի կայազոր մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե այդ հնարավոր է, ինչպես նաև գրավոր թուղթիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝

1. Որ ներկա Թուրքիան այլևս նախկին սուլթանական Թուրքիան չէ և Հայաստանի հանդեպ ագրեսիվ նպատակներ չունի.

2. Քեմալական Թուրքիան խորհրդային Ռուսաստանի հետ դաշնակից է և պայքարում է իր ազատութեան համար ընդդեմ իմպերիալիստական տերութունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Հունաստանի.

3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի նկատմամբ կնշանակի իմպերիալիզմի սաստկացում Մերձավոր արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխութեան հաղթանակը Անդրկովկասում, իսկ ընդհակառակը, Հանրապետական Հայաստանի պարտութեամբ կարագացվի ողջ Անդրկովկասի, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը.

4. Հայ բոլշևիկ-կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել Հանրապետական Հայաստանի պարտութունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը:

Այս նպատակի համար պետք է 1. կազմալուծել հայկական կոմիտեի բանակը բոլոր միջոցներով, այն է՝ ա) դասալքութուն և ամեն կերպ խանգարել զորահավաքին, բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ, լքելով դիրքերը, վերադառնան թիկունք, գ) շենթարկվել սպանների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

2. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել Հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուր-

քական ասքյարները հեղափոխական ասքյար են, որոնք ոչ միայն իրենց թույլ չեն տա որևէ բռնի գործողութիւն պարտւած երկրի հանդեպ, չեն վնասի խաղաղ ազգաբնակչութեանը, այլև կօծանդակեն աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստների գործակալ դաշնակցականների տիրապետութիւնից:

3. Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետութիւնից ազատվելով, Հայաստանն անմիջապես կկապվի Խորհրդային Ռուսաստանի հետ, ընդմիջտ վերջ կտրվի պատերազմին, և սովից ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխութեան մեծ դործին»:

Մանոթագրութիւնում ասված է. «գրութիւնը կարգալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել»: Այս փաստաթուղթը ստորագրել են Հայաստանի կոմունիստական բոլշևիկների կուսակցութեան կենտրոնական կոմիտեի անդամներ Սարգիս Կասյանը, Ասքանազ Մոսվյանը, Ավիս Նուրիջանյանը, Շավարշ Ամիրխանյանը, Իսահակ Գոսվյանը և Աշոտ Հովհաննիսյանը:

Այդ հրահանգի համարն է 218, Բաքու, 1920 թ. սեպտեմբերի 20»<sup>1</sup>:

Ինչպես ցույց է տալիս փաստաթուղթը, հայ բոլշևիկ ղեկավարները իրենց քաղաքական ձգտումներին հասնելու համար պատրաստ էին դավաճանելու ազգային շահերը, միայն թե անցնեին իշխանութեան գլուխ:

Դա իհարկե, նորութիւն չէր կոմունիստների համար: Նրանց հայտնի էր Լենինի՝ առաջին աշխարհամարտի օրերին հռչակած «Սեփական հայրենիքի պարտութեան» լոզունգը, որը մեկնարանելու անհրաժեշտութիւն չի պահանջում:

Շատ շանցած հեղկոմի ղեկավարները համոզվեցին, որ քեմալականները ոչնչով չեն տարբերվում երիտթուրքերից: Նոր Թուրքիայի ղեկավարները՝ քեմալականները, շարունակում էին Օսմանյան Թուրքիայի զավթողական, գենոցիդի քաղաքականութիւնը: Այդ է վկայում նույն հեղկոմի անդամ Ասքանազ Մոսվյանի 1920 թ. հոկտեմբերի 19-ին Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կենտկոմին հղած գրութիւնը, որտեղ նա նշում է. «Քեմալականներն ասում են, որ թուրքական ազգային զորքերի Հայաստան ներխուժումն իբր ձեռնարկված է Խորհրդային Ռուսաստանի հետ անմիջական կապ հաստատելու նպատակով: Իրականում այդ հարձակումը

վեր է ածվել Հայաստանի Հանրապետության ուղիղ կեսի նվաճման, Սարիղամիշից Կարսի վրայով մինչև Ալեքսանդրոպոլ, Ղարաքիլիսա և Ղազախ, հենց այն հողատարածքը, որը 1918 թ. ընկավ երիտթուրքական ջարդարարների լծի ներքո: Չե՞ն կրկնվի, արդյոք, 1918-ի սարսափները, երբ Հայաստանի լավագույն մասը ավերվեց, իսպառ թալանվեց և տասնյակ ու հարյուր հազարավոր ազգաբնակչությունը զոհվեց անխնա կոտորածից, սովից և համաճարակներից: ...Շատ ցավալի է, որ թուրքական ազգային զորքերի վերնախավը մինչև այժմ չի ազատվել փաշաների պայքարի արյունոտ մեթոդներից»<sup>1</sup>:

Մեկ այլ փաստաթղթում դրա հեղինակները Հայաստանը ներկայացնում են որպես «Լուրջ վտանգ Արևելքի հեղափոխության դրոշակակիր քեմալական Թուրքիայի համար», կոմիտեերնին կից ստեղծվել էր Արևելքի ժողովուրդների քարոզչական ու զործողության խորհուրդ:

Բացվում ընթացող Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի նախագահությունն ընդունեց «Եզրակացություն» խիստ զաղտնի փաստաթուղթը, որը սկզբից մինչև վերջ լի էր հակահայկական ոգով: Հայաստանի Հանրապետությունն այնտեղ ներկայացավ թէ որպես ագրեսիվ ուժերի կենտրոն, հարևան երկրների համար մշտական վտանգ հանդիսացող աղբյուր: «Ներկա պահին դաշնակցական կառավարությունը՝ եռանդազին պատրաստվում է մեր դեմ պատերազմելու» (Խորհրդային Ռուսաստանի-Ս. Ս.), հաստատորեն նշվում է «Եզրակացությունում»: «Անգլիական կառավարությունը, նշվում է այդ փաստաթղթում, պատրաստվում է անգլոպարսկական պատերազմի և կարող է Վրաստանի ու Հայաստանի միացյալ զորքերով հարվածել Խորհրդային Ադրբեջանին»: Դա արվում էր «Ադրբեջանը բոլշևիկյան ճնշումից ազատագրելու» դրոշի ներքո և Բաքուն Խորհրդային Ռուսաստանից պոկելու նպատակով: «Հարվածը կհասցվի մոտ ժամանակներում, և ռազմական զործողությունները կսկսվեն հենց որ անգլո-շահական զորքերը կմոտենան ռուսական հին սահմանին ու կապ կհաստատեն Հայաստանի հետ: Հայկական զորքերի հետ Ադրբեջան մուտք կգործի նաև ներկա պահին Վրաստանում պատասպարվող մուսավաթական կառավարությունը»:

«Եզրակացություն» փաստաթղթի հեղինակները ավելի շատ մտահոգված էին նրանով, որ «ուժերի ու միջոցների

սպառնան հետևանքով Թուրքիայում մարում է ազգային-հեղափոխական շարժումը... Թուրքական ազգային շարժման բնկճումը միաժամանակ կհանգեցնի բոլոր հեղափոխությունների ձախողմանը Արևելքում»:

Այդ փաստաթղթում Բաքուն, հմտորեն կողմնորոշվելով «պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականություն» հարցերում, հաճախ է հանդես եկել Մոսկվային թելադրողի դերում, որով հայ ժողովրդի շահերը, ըստ էության, զոհարելով էին «համաշխարհային հեղափոխության հաղթանակին»:

Ամբողջական պատկերացում կազմելու համար ավելորդ չենք համարում բերել այդ թունոտ հակահայկական քաղաքական պասկվիլից առանձին մեջբերումներ.

Ամբողջական պատկերացում կազմելու համար ավելորդ չենք համարում բերել այդ թունոտ հակահայկական քաղաքական պասկվիլից առանձին մեջբերումներ.

«Խորհրդային Ռուսաստանի ու համաշխարհային հեղափոխության համար կործանարար այդ հետևանքներից խուսափելու նպատակով մեզ անհրաժեշտ է՝ ա) ինչ գնով էլ լինի և ամենայն արտակարգությամբ աջակցել մարող ազգային շարժմանը Թուրքիայում և բ) կանխել անգլո-շահական, հայկական ու վրացական գինվորական ուժերի միավորումը: Ինչպես մեկը, այնպես էլ մյուսը կարող են ձեռք բերվել միայն թուրքական ազգայնամոլ գործերի հետ միավորված, սեփական ժողովրդին ճնշող դաշնակցության լծից ազատվելու և հեղափոխական Թուրքիայի հետ միավորվելու դրոշի ներքո Հայաստանի վրա հարձակվելով»:

Այս միավորումը մեզ ու հեղափոխական Թուրքիային թշնամի, դաշնակցական կառավարության ոչնչացումը, նույնիսկ այն պարագայում, եթե մեզ չընձեռեն Մուստաֆա Քեմալի կառավարությանը նյութապես անհապաղ օգնելու հնարավորություն, նրան կաջակցեն այնքանով, որ առաջին հերթին հնարավորություն կտան Հայաստանի սահմանից հանել և դեպի արևմուտք նետել էրզրումի կորպուսը: Երկրորդ՝ կվերացնեն վտանգն ազգայնականների թիկունքում, նրանց հնարավորություն կտան Անտանտի գործերից առաջ թափանցել ընդհուպ մինչև Կովկաս, չկորցնելով կազմակերպվածությունն ու պայքարը շարունակելու մի վերջնական հաջողության հասնելու հույսերը: Երրորդ՝ կբարձրացնեն Քեմալ փաշայի հեղինակությունը, կբորբոքեն ազգային շարժումը, անգրլիացիների դրածո սուլթանին թույլ չեն տա իրեն հայտարարելու միակ իշխանությունը Թուրքիայում:

Հարձակումը Հայաստանի վրա, թուրքական ազգային շարժումը փրկելուց զատ, մեզ կբերի նաև այն օգուտը, որ մեզ կընձեռի միասին մեր դեմ հլած թշնամիներին առանձին առանձին ջարդելու հնարավորություն: Հայաստանը պետք է շարքից հանվի ավելի վաղ, քան կմոտենան անգլո-շահական զորքերը, իսկ Վրաստանը, որին այս արշավանքի ժամանակ մենք շենք բախվելու, կվախենա խառնվել պայքարին: Բացի այդ, հարձակումը Հայաստանի վրա կլինի ավելի դուրին, քան նրանից պաշտպանվելը, քանզի Ադրբեջանը բոլշևիկներից ազատագրվելու դրոշի ներքո մեզ վրա դաշնակցականների հարձակման պարագայում բնակչության մի մասը մեր դեմ կլինի, իսկ դաշնակցականներից ազատագրելու դրոշի ներքո Հայաստանի վրա մեր հարձակման դեպքում մեզ հետ կլինի ոչ միայն ադրբեջանական ողջ բնակչությունը, այլև հայերի մի մասը... Այս ամենից բացի, դաշնակցական Հայաստանի դեմ պատերազմը կամրապնդի մեր դրությունը Ադրբեջանում, կխլի հողը մուսավաթական հակահեղափոխականների ոտքի տակից:

Դիվանագիտական առումով Արևմտյան Եվրոպայում հասարակական զայրութի փոթորիկը կանխելու համար Հայաստանի վրա հարձակումը պետք է իրականացվի հետևյալ կերպ. թուրքական զորքերը կսկսեն հարձակվել Հայաստանի վրա, իսկ մենք մեր ամբողջ մամուլով և Եվրոպայում հրապակայնության մեր բոլոր օրգանների օգնությամբ հսկայական աղմուկ կբարձրացնենք հայ-թուրքական կոտորածների և դրանց մեկընդմիջտ վերջ տալու անհրաժեշտության մասին, և այդ կոտորածները դադարեցնելու պատրվակով մեր զորքերը կմտնեն Հայաստան՝ նրա զորքերից ամայացած արևելյան սահմանից... և փոխարենը կհաստատվի խորհրդային իշխանություն: Ապա մենք թուրքական զորքերը դուրս կբերենք Հայաստանի սահմաններից... Այսպիսով, արևմտա-եվրոպական պրոլետարիատի աչքին մենք կբրևանք այն հաշտարար արտակարգ ազնվաբարո դերում, որը Հայաստանի կողմն է շարժվում միայն այն բանի համար, որ վերջ տա կոտորածին և հայ ժողովրդի մնացորդները փրկի վերջնական ոչնչացումից:

Վկայակոչված բոլոր նկատառումներից ամենազխալորն այն է, որ պատերազմն անխուսափելի է. եթե մենք չնախաձեռնենք հարձակումը Հայաստանի վրա, ապա երկու շաբաթ հետո նա կձեռնարկի հարձակում հորհրդային Ադրբեջանի վրա, որը մեզ համար կնշանակի Բաքվի կորուստը:

Մեր ծավոր արևելքում մեր դրուժյունն այժմ այնքան անբարենպաստ է, որ մենք շենք կարող կանգնել տեղում և որպեսզի շնահանջենք, պետք է առաջ գնանք, պետք է արագ շարժվենք, քանզի ևս մեկ ամսվա հապաղում, և հեղափոխությունը Արևելքում լիովին կծախողվի: Արևելքում հեղափոխությունը փրկելու համար անհրաժեշտ են խորհրդային զորքերի անհապաղ հարձակում Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատում:

Արևելքի ժողովուրդների խորհրդի նախագահությունն իր այս «եղրակացությունը» ներկայացնում է երրորդ ինտերնացյոնալի գործադիր կոմիտեի նախագահությանը և ՌԿԿ-ին և ԿԿ-ին՝ պատճենը հաղորդելով ՌԽՖՍՀ արդարօժկոմատին:

Սույն «եղրակացությունը» վերադաս կուսակցական մարմիններից դուրս ոչ մի հրապարակման ենթակա չէ:

1920 թ. սեպտեմբերի 17, ք. Բաքու<sup>1</sup>:

Բաքվում հավաքված «ինտերնացյոնալիստները» խորամանկություն ամեն կերպ ձգտում էին նենգ միջոցներով արդարացնել այնքան ակնհայտ նրանց հետապնդած նպատակը, որ հարկ չկա վերլուծելու և հերքելու այս փաստաթուղթը: Այս փաստաթղթերից անհերքելիորեն բխում է այն, որ քեմալականների Հայաստանի վրա հարձակման պլանը վաղորդք համաձայնեցված է եղել խորհրդային կառավարության հետ և նրա կողմից պաշտպանություն ու աջակցություն է ստացել:

«Եզրակացություն» հիմնական դրույթները արձագանք էին գտնում, ինչպես տեսանք, Հայաստանի հեղկոմի գաղտնի հրահանգում:

Հարկ է ընդունել, որ կոմունիստների գործուն պրոպագանդիստական ջանքը անհետևանք չմնաց: Տեղին է վկայակոչել Վրաստանում խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչության կողմից Չիչերինին հասցեագրված մի հեռագիր. «Հայ զինվորները, մեծամասնությամբ խորհրդային իշխանության համակիրներ են, այդ իսկ պատճառով քեմալականներին անձնատուր եղան: Հակառակ իր հարաբերական մեծաթիվության և անզլիական ընտիր ղենքերին, հայկական բանակը շատ թույլ դիմադրություն ցույց տվեց: Կարսի, Իգդիրի շերջանում արձանագրվեցին ամբողջ գնդերի կոպիլուց հրաժարման և քեմալականներին անձնատուր լինելու դեպքեր<sup>2</sup>: Հայաստանի դրուժյան մասին 1920 թ. նոյեմբերին ՀԿԿ անդամ Շավարշ Ամիրխանյանը կուսակցության կովկասյան բյուրոյին հղած իր հաղորդման մեջ նշել է. «Լինում էր, երբ հայ-

1. 22 ԿՊՊԱ, ք. 133, ր՝ 3, գ. 7, թ. 1-3:

2. АВП СССР. ю. 132-референтура по Турции, л. 2, оп. 3, л. 6.

կական զորամասերը առանց մարտերի ամբողջովին հանձնրվում էին Քեմալին, ընդունելով նրան բուլղարի տեղ»<sup>1</sup>:

Քեմալական զավթիչների օգտին էին զործում քաղաքայնությունի որոշ անդամներ, հատկապես Ստալինը և Տրոցկին: Միայն վերջերս մատչելի դարձած արխիվային փաստաթղթերը վկայում են ու հաստատում, թե Ստալինն ինչ շարագուշակ դեր է խաղացել Հայկական հարցում, ինչպիսի աղետալի հետևանքներ են ունեցել նրա ապակողմնորոշող հեռագրերն ու նամակները: 1920 թ. նոյեմբերի 5-ին, օրինակ, երբ թուրքերն արդեն իսկ տիրել էին Սարիղամիշին ու Կարսին և ընդհուպ մոտեցել Ալեքսանդրապոլին, նա Բաքվից հեռագրել է Լենինին. «Ձեզ կողմնորոշելու համար հաղորդում եմ... դրուձյունը թուրքիայում պարզ չէ. այն կարող է վտանգավոր դառնալ, եթե ս.եղի ունենա Քեմալի համաձայնությունը Անտանտի հետ, քանի որ Քեմալի շեղոքացումը կդյուրացնի դեպի Բաքու Անտանտի գինարշավը: Հետևաբար, առանց մանրակրկիտ հետազոտության և թուրքիայում իրադարձության պարզաբանման պետք չէ Հայաստանի հետ կնքել պայմանագիր, որը Հայաստանին, նշանակում է՝ Անտանտին, կհանձնի մուսուլման ազգաբնակչությանը ստրատեգիական կարևորագույն մի շրջան և որը մեզ կներքաշի թուրքիայի հետ առձակատման մեջ: Անհրաժեշտ է առայժմ ձգձգել Հայաստանի հետ պայմանագրի կնքումը, ձևացնելով, որ Հայաստանի համար ձեռնտու խաղաղություն ենք ցանկանում, իսկ հետագայում ամեն ինչ պարզ կլինի»<sup>2</sup>:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ջանում էր հնարավորին չափ շուտ պայմանագիր կնքել խորհրդային Ռուսաստանի հետ, որպեսզի վերջինս, քեմալական թուրքիայի հետ բարեկամական կապերի մեջ լինելով, նպաստեր Անկարայի հետ Երևանի հարաբերությունների բնականոնացման: Երևանից թիֆլիսի Հայաստանի լիազոր ներկայացուցչին ուղարկված հեռագրում ասված էր. «Արտաքին գործերի ժողովում Չիչերինի հուլիսի 20-ի հեռագրից պարզվում է, որ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ցանկանում է Ռուսաստանի և Հայաստանի միջև խաղաղ բարեկամական հարաբերությունների պայմանագրի կնքման բանակցությունները Մոսկվայից Հայաստան տեղափոխել: Կառավարությունս խոր ցավով պետք է հաստատի, որ հա-

1. Партархив ИМЛ при ЦК ПС, Ф. 64, оп. 2-3, л. 169, л. 58.

2. ЦПА ИМЛ, Ф. 558, оп. 1., л. 198 д, л. 1.

կառակ իր անկեղծ ցանկության ու ջանքերի՝ նպաստել խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամության պայմանագրի արագ և հաջող կնքման, մեր պատվիրակության և խորհրդային կառավարության Մոսկվայի երկամսյա բանակցությունները շտապ աջն արդյունքները, որոնք հայ ժողովուրդն ակնկալում էր, հենվելով Մոսկվայի բարեկամական հավաստիացումների վրա: Այնուամենայնիվ, ընդհանուրապես խորհրդային կառավարության ցանկությանը, Հայաստանի կառավարությունը բնավ էլ դեմ չէր Ռուսաստանի խորհրդային կառավարության ներկայացուցիչ կեդրանի հետ հիշյալ բանակցությունները Յրևան տեղափոխելու և Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությանը Մոսկվա կարգադրություն է ուղարկված՝ շտապ տեղափոխելու Յրևան: Հայկական կառավարությունը պատրաստ է հետագա բանակցությունների համար Հայաստանում ընդունելու Ռուսաստանի խորհրդային կառավարության պատվիրակներին:»<sup>1</sup>

Ստալինի մտադրությունները պարզ էին, նա ցանկանում էր, որ նախքան Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագրի կնքումը թուրքերը հնարավորին շտապ շատ հայկական հողատարածքներ զավթեին:

Թուրքական զորքերը իրար հետևից գրավեցին Կարսի մարզը մարզը, Ալեքսանդրոպոլը, Սուրմալուի գավառը և երկաթուղու Ալեքսանդրոպոլ-Վարաքիլիսա հատվածը, կտրելով Հայաստանի արտաքին աշխարհի հետ հաղորդակցման միակ ճանապարհը:

Նոյեմբերի 7-ին դարձյալ Ստալինը Բաքվից հեռագրում է Լենինին և Զիչերինին. «Կարսը իրոք գրավված է, Ալեքսանդրոպոլը հավանական է կգրավվի, ըստ որում թուրքերն իբր ավելի հեռու չեն գնալու այն գծից, որը հայտնի է Մոսկվային: Կարծում եմ, որ այս տեղեկություններն ուշացած է, քանի որ թուրքերը արդեն գիծն անցել են և բացի դրանից ցանկանում ու հետապնդում են իրենց սեփական նպատակները, ուրիշ խոսքով՝ ըստ երևույթին ցանկանում են Հայաստանին հարկադրել հրաժարվելու Սևրի պայմանագրից և Անտանտին էլ կատարված իրողությունն առաջ դնել քեմալականների Կոստանդնուպոլսում նախատեսվող բանակցությունների կապակցությամբ»<sup>2</sup>:

Դեռ մինչև Հայաստան ներխուժումը Անկարայի և խորհրդային Ռուսաստանի կառավարությունները պայմա-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 69/200, ց. 1. գ. 360, ք. 26.  
2. ЦПА ИМЛ, Ф. 558, оп. I, д. 1989, л. I.

նավորվել էին այն բանի շուրջ, որ հարձակման անցնելու դեպքում թուրքերը Սարիղամիշի գծից այս կողմ շանցնեն: Այդ են վհայում, հատկապես, թուրքիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնի պետ Հիքմեթի: Հաղորդագրություններից մեկի հետևյալ տողերը՝ «Իրադրությունների ճնշման ներքո հարկադրվեցինք հարձակողականի անցնել Հայաստանի դեմ, հնարավորություն չունենալով մեր առաջխաղացքը քննարկել խորհրդային Ռուսաստանի հետ: Համաձայն խորհրդային Ռուսաստանի հետ մեր համատեղ որոշման, հարձակման դեպքում մենք Սարիղամիշից այն կողմ չպետք է անց կենայինք»<sup>1</sup>:

Անկարայի և Մոսկվայի միջև նման պայմանավորվածության գոյությունը հաստատել է նաև Ստալինը 1920 թ. նոյեմբերի 4-ին Կովկասյան բյուրոյի նիստում. «Քեմալի համար հարցը դրված է այնպես, որ նա պիտի հարձակվի մինչև Սարիղամիշ: Մոսկվայից Քեմալին հեռագիր է ուղարկված, սակայն հայտնի չէ՝ ստացել է, նա թե ոչ»<sup>2</sup>: Այն, որ այդպիսի պայմանավորվածություն իրոք եղել է, հաստատում է նաև 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին Ա. Մոավյանի և Աղբբեջանում խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Աթարբեկյանի հանդիպումը Լենինի, Տրոցկու, Չիչերինի և Կարախանի հետ, որտեղ Մոավյանը ներկայացրել է խորհրդային Հայաստանի կառավարության դիմումը՝ թուրք զավթիչների դեմ ռազմական օժանդակություն բնձնելու խնդրանքը: Հանդիպման արդյունքների մասին Մոավյանը հեռախոսով դեկտեմբերի 26-ին հաղորդել է Հայաստանի արտաքին գործերի նախարար Ալ. Բեկզադյանին: Մոավյանը ասել է, որ մեր խնդրանքին Լենինը պատասխանեց. «Ռուսաստանը պատրաստ է Հայաստանում կարգն ու անվտանգությունը պահպանելու համար զորք ուղարկել», ավելացնելով, թե՛ «Հասկացեք ընկերներ, նույնիսկ եթե չլինեք այս պարագան, այս պահին Ռուսաստանը չի ուզի և չի էլ կարող կռվել մասնավորաբար Կարսի համար»: Մոավյանը հայտնում է նաև, թե Լենինը չէր զլանում Կարսի հարցում հայ ժողովրդին խորհուրդ տալ՝ «Մոռանալու իր հավակնությունները, քանի որ Կարսի մարզը երբևէ հայկական չի եղել»: Այնուհետև Մոավյանը հայտնում է, «Թե երբ շեշտեցինք հայ ժողովրդի սարսափելի կացությունը և որ հայ աշխատավոր դասակարգերի առջև կոմունիստական կուսակցություն

1. ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 144, ց. 2, գ. 25, թ. 94.

2. ЦПА ИМЛ, Ф. 558, оп. 1, д. 1986, л. 1-2.

նը կարող է վարկաբեկվել», Լենինը հայտնեց, որ պատրաստ է դրան և ավելացրեց, թե ժամանակավորապես պարտավորված ենք զոհելու հայ աշխատավոր դասակարգերի շահերը «համաշխարհային հեղափոխության շահերուն»<sup>1</sup>:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարների մեջ կային ազնիվ, տեղի ունեցող երևույթներն ու դեպքերը օբյեկտիվորեն գնահատող, համաշխարհային հեղափոխության սին երազանքներից հեռու կանգնած մարդիկ: Դրանցից էին Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Կ. Զիշերինը, նրա տեղակալ Լ. Կարախանը և Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը, որոնք ամեն կերպ ձգտում էին ցույց տալ, որ քեմալականները, որոնց Խորհրդային Ռուսաստանի քաղաքացիության և կենտրոնական կոմիտեի ղեկավարները ներկայացնում էին որպես «հեղափոխության դրոշակակիրներ Արևելքում», իրականում Անդրկովկասի նկատմամբ շարունակում են երիտթուրքերի զավթողական, ջարդարարական, պանթուրքական քաղաքականությունը: Այդ մասին ժամանակին հաղորդել է Բ. Լեգրանը. «Եւանի դեռ թուրքերը կշարունակեն իրենց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, պետք չէ նրանց ընդհանրապես հավատալ և այդ մասին հարկ է հաստատապես հաշիվ տալ ինքն իրեն»: Եվ հետո. «Թուրքերի նվաճողական-աղագայնամուլական նկրտումների առկայությունը Կարս-Ալեքսանդրապոլի, իսկ գուցե և Աջարիա-Բաթումի նկատմամբ, առավել կամ նվազ անկասկածելի է»<sup>2</sup>:

Թուրքական հրամանատարությունը որոշեց հիմնական հարվածը հասցնել Սարիղամիշի կողմից: 1920 թ. սեպտեմբերի 23-ին թուրքերը ներխուժեցին Հայաստանի սահմաններից ներս, սեպտեմբերի 29-ին գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, նոյեմբերին 7-ին՝ Ալեքսանդրապոլը, նոյեմբերի 12-ին՝ Ադինը և երկու ուղղություններով գրոհը զարգացրեցին դեպի Ծրեան:

Դեպի Հայաստան իրենց զինարշավով քեմալականները հետապնդում էին և ուրիշ նպատակներ. Հայաստանը ռազմականորեն ջախջախելուց ու կուլ տալուց հետո՝ ռազմական միակողմանի ակտով պատառոտել Սևրի պայմանագիրը և դրանով իսկ ներգործել Թուրքիայի նկատմամբ Անտանտի երկրների քաղաքականության վրա: Անգլիական «Թայմս» թերթը 1920 թ. դեկտեմբերի 22-ի համարում այս կապակ-

1. Տե՛ս Զ. Մբուրեա, Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը, 1920-1921 թթ.) Պէյրոս, 1979, էջ 95:

2. АВП СССР, Ф. 32, д. 7, л. 100, 104.

ցությամբ գրում էր. «Մուստաֆա Քեմալը Հայաստան ներ-  
խուժեց Կարսն ու Արդահանը բռնագրավելու համար: Նրան  
ի վաց, թե Հայաստանն իր ձեռքերում պահելով, կկարողանա  
ձեռնում բանեցնել Թուրքիայի նկատմամբ Անտանտի և ԱՄՆ-ի  
քաղաքականության վրա»:

Մինչ Թուրքական զորքերը շարունակում էին իրենց ավե-  
րիչ արշավը դեպի Հայաստանի խորքը, Հայաստանի Հանրա-  
պետության կառավարողները հույսները դրել էին Անտանտի  
օգնության վրա: Տակավին սեպտեմբերի 30-ին, Վրաստանում  
Հայաստանի Հանրապետության լիազորը դիմում էր դաշնա-  
կից երկրների ներկայացուցիչներին՝ խնդրելով ռազմական և  
նյութական օժանդակություն ցույց տալ: Խնդրանքը կրկնվում  
է նաև հոկտեմբերի 1-ին, 8-ին, 14-ին, 17-ին և 27-ին: Սա-  
կայն դաշնակից տերությունները ամեն անգամ պատասխա-  
նում էին, որ «վլալ պահին իրենք ի վիճակի չեն շոշափելի  
օգնություն հասցնել և որ հայերը պետք է հույսներն իրենց  
սեփական ուժերի վրա դնեն ու գործեն ինքնուրույն: Թիֆլի-  
սում Մեծ՝ Բրիտանիայի ներկայացուցիչ զնդապետ Ստոկոսն  
ստում էր Խատիսովին. «Անգլիան ներկայումս անզոր է Հա-  
յաստանին իսկական օգնություն ցույց տալու»<sup>1</sup>: Իսկ Թիֆլի-  
սում Հայաստանի ներկայացուցիչ Տ. Բեզգադյանի հետ զրույ-  
ցի ժամանակ էլ խորհուրդ էր տալիս անձնական հայեցողու-  
թյամբ գործել, ընդգծելով, որ «Ծվրոպան կամ չի ցանկանում,  
Կամ էլ չի կարող օժանդակել և հայերը պետք է իրենք  
իրենց ապավինեն»<sup>2</sup>: Ամերիկայի վրաստանյան պատվի-  
րակը, իր հերթին հայտարարում էր. «Միացյալ Նահանգները  
մասնակցություն չունեցան Սևրի պայմանագրին և թեկուզ  
մեր կառավարությունը ճանաչել է Հայկական Հանրապետու-  
թյունը, սակայն երբևէ իր վրա որևէ պարտավորություն չի  
վերցրել՝ հայ ժողովրդին պաշտպանելու կամ ռազմական  
աջակցություն ցույց տալու իմաստով: Դրա համար էլ չի կա-  
րող ներկա պայմաններում իր վրա պատասխանատվություն  
վերցնել»: Հայաստանի «դաշնակիցները», «փոքր դաշնակ-  
ցին», թողնելով թուրք ջարդարարների հողոտմանը, հույս ու-  
նեին, որ հայ-թուրքական պատերազմում հաղթանակին կհա-  
ջորդի թուրքական ազրեսիայի ընդլայնումը Անդրկովկասում,  
ինչը կհանգեցնի Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի  
միջև պատերազմին:

Ծվրոպական մամուլը զայրույթով էր անդրադառնում Հա-  
յաստանի նկատմամբ Անտանտի քաղաքականությանը: Այս-

1. ՀՀ ՊԿՊԱ ֆ. 200, գ. 532, թ. 4:

2. Նույն տեղը:

պես, անդլիական ազատականների օրգան «Մանչեստեր Գար-  
դիանը» 1920 թ. հունիսի 15-ին «Հայաստանի ճակատագիրը»  
խորագրված առաջնորդողում անսովոր կտրուկությամբ քննա-  
դատում էր Յրանսիայի և Անգլիայի կողմից հայերի նկատ-  
մամբ վարվող քաղաքականությունը: Իրենց «բարձր հովանա-  
վորներից» բախտի քմայքին նեւված, հայերն իր վերջո երկու  
հասավածի կիսվեցին,— շեշտում էր թերթը և շարունակում,—  
մի հասավածը ստեղծեց սեփական՝ Ծրանի հանրապետությու-  
նը, մնացած հայերը սփռվեցին Փոքր Ասիայի լայնարձակ  
սովիտներում: Մի այլ՝ «Նեշընըլ» թերթը 1920 թ. նոյեմբերի  
27-ին ուղղակի գրում էր. «Դաշնակիցները սահմանափակվե-  
ցին այն բանով, որ ապահովեցին իրենց շահերը: Նրանք  
զավթեցին Սիրիան ու Միջագետքը, և Հայաստանը թողեցին  
բախտի քմահաճույքին: Իսկ երբ «անպաշտոնական» խիղճը  
բողոքեց, նրանք իրենց պարտավորությունները Ազգերի Լի-  
գայի վրա գցեցին»: Եվ շարունակում էր. Հայաստանին ստի-  
պեցին դաշնակիցների կողմում կանգնելու, և նա հայտնվեց  
Ռուսաստանի և Թուրքիայի միջև...»: «Մոսկվան իր բարյա-  
ցակամ միջնորդությունն առաջարկեց և ամենայն հավանա-  
կանությամբ ոչ միայն անկեղծորեն ցանկանում էր, այլև կա-  
րող էր նրան փրկել, սակայն դաշնակիցները Հայաստանի  
փրկության այդ ճանապարհի առաջ վետո դրեցին»: «Այս-  
պես, ուրեմն,— եզրափակում էր թերթը,— մեր դժբախտ  
«սլաշտպանյալին» օրինապահության մղելով, մենք նրան  
թուրքերի հետ գժտեցրինք և հեռացրեցինք Ռուսաստանից,  
ասպա և թողեցինք սեփական ճակատագրի դեմ-հանդիման»:   
Նույնիսկ միլյուկովյան «Նովայա Ռոսիա» թերթը գրում էր, որ  
բուլղեիկյան Ռուսաստանը Հայաստանի համար Թուրքիայի դեմ  
ավելի լավ է, քան նրա՝ Անտանտի պաշտոնական հովանա-  
վորները: ... Հայաստանն անկասկած կօգտվի այդ դասից և  
թող... է, թե այն հասկացել է ավելի շուտ, քան գործնական  
կիրառման փորձ ձեռք բերելը: Իսկ Անտանտն էլ կհասկանա՞,  
արդյոք, դա»: 1920 թվականի հոկտեմբերի 28-ին Խորհրդա-  
յին Ռուսաստանի հետ խաղաղության պայմանագիր կնքելուց  
հետո էլ դաշնակցական կառավարությունը ամեն կերպ ջա-  
նաց թուրքական հրամանատարության հետ բանակցություն-  
ներ վարել առանց Մոսկվայի գիտություն ու միջնորդության:  
Բեկզադյանի հետ ուղղակի հեռախոսակապով զրույցի ժա-  
մանակ կառավարությունը նրան ի գիտություն էր հայտ-  
նում, որ ուղարկում է «Ներկայացուցիչներ Կարաբեքիր Քյա-  
ղիմի մոտ՝ փորձելու քեմալականների հետ անմիջական հա-  
մաձայնության դալ, առանց հատուկ միջնորդի»: Նույն այդ

զրույցում դաշնակցական կառավարութիւնը հետեւյալ ցուցմունքն էր տալիս. «Զեր կողմից բանակցութիւնները շարունակեք առանձին՝ ինչպես թուրքերի, այնպես էլ բուլղարիկներու անգլիացիներին հետ»<sup>1</sup>:

Վարչապետ Հ. Օհանջանյանի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հետ 1920 թ. նոյեմբերի 19-ին հանդիպման ժամանակ կշտամբելով նրանց, Լեզրանը հայտարարում էր. «Երևան գալու ճանապարհին մենք իմացանք, որ դուք թուրքերի հետ զինադադար եք ստորագրել: Մեզ համար հետաքրքրական է իմանալ, թե ճշգրտիվ որո՞նք են այդ զինադադարի պայմանները, նաև պատճառները, որոնք Հայաստանի կառավարութիւնը մղել են դրանք ընդունելու»<sup>2</sup>:

Դաշնակցական վարչապետը, ջանալով արդարանալ, պատասխանում էր, որ «Հայաստանի կառավարութիւնը հարկադրվեց թուրքերի կողմից նոյեմբերի 8-ին առաջարկված զինադադարի պայմաններն ընդունել՝ ելնելով Զաջուռի բարձունքներից հայկական զորքերի նահանջից հետո ռազմաճակատում ստեղծված ծայրաստիճան դժվարին դրութիւնից»:  
«Մենք իմացանք, — շարունակում է Օհանջանյանը, — որ թուրքերի հետագա զրոհը կանգնեցնելու հարցում ձեր միջնորդութիւնից իրական արդյունքներ դուք չեք ակնկալում»<sup>3</sup>: Դրան Լեզրանը պատասխանում է. «Ես դեռ սեպտեմբերի 29-ին Բեկդադյանին հայտնեցին, որ եթե Հայաստանի կառավարութիւնը բացահայտորեն հրաժարվի Թուրքահայաստանի հարցը Սևրի պայմանագրով լուծելու մտադրութիւնից և դիմի Խորհրդային Ռուսաստանի միջնորդութիւնը, ապա դա կարող է հսկայական դեր խաղալ Թուրքահայաստանի հարցը բարվոք լուծելու գործում: Ներկայումս Սևրի պայմանագրի այդ տեսակետից իրական նշանակութիւնը զրոյի է հավասարված, և Հայաստանի կառավարութիւնը, իմ կարծիքով, սխալ թույլ տվեց ժամկետը բաց թողնելու իմաստով: Ներկա պահին Սևրի պայմանագրից հրաժարումը արդեն կորցրել է իր երբեմնի գինը»<sup>4</sup>: Ստեղծված ճգնաժամային վիճակից ելքը Լեզրանը տեսնում էր Խորհրդային Ռուսաստանի օգնութիւն մեջ: Նա ասում էր. «Ես արդեն իսկ հայտնել եմ Վրաստանում ձեր դիվանագիտական ներկայացուցիչ Բեկդադյանին, որ եթե Հայաստանի կառավարութիւնը ռազմական օգնութիւն խրճի-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, Գ. 19, թ. 60:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թթ., 129-134:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թթ., 129-134:

4. Նույն տեղը:

բանքով դիմի խորհրդային Ռուսաստանին, ապա ես վստահեմ, որ այդ օգնությունը պիտի ցուցաբերվի: Ինչպես հայտնի է, արդեն իսկ դիվանագիտական օգնություն համաձայնություն արված է»<sup>1</sup>: Զրույցների ընթացքում Լեզրանը ջանաց պարզել, թե թուրքերը նույնմբերի 8—ի դինագադարով ի՞նչ պայմաններ են առաջ քաշել, որպեսզի կարողանար որոշել, թե որքան արդյունավետ է լինելու միջնորդությունը և ռազմական ուշացած օգնությունը: Նա հայտարարեց. «Եթե Հայաստանի կառավարությունը համաձայնվել է Կարսը թուրքերին հանձնել, ապա ռազմաճակատի հետագա զորացման կամ ռազմական օգնության համար Ռուսաստանին դիմելու ամեն մի անհրաժեշտություն վերանում է, քանի որ թուրքերն այս պայմաններում միշտ էլ խաղաղություն կկնքեն Հայաստանի հետ»<sup>2</sup>:

Նույնիսկ Հայաստանի համար այդ ճգնաժամային պահին, երբ թուրքերը գրավել էին Կարսն ու Ալեքսանդրապոլը և Հանրապետության զորքը նահանջում էր բոլոր ճակատներում, Օճանջանյանը հրաժարվում էր խորհրդային Ռուսաստանի ռազմական օգնությունից, Լեզրանին հայտարարելով. «...Մեր դինական ուժերը լրիվ բավարար են՝ թուրքիայի ժայրահեղ պահանջներին հակադրելու համար»<sup>3</sup>: Լեզրանը հերքելով դա, նշում էր, որ կարմիրբանակայինների Հայաստանում երևալու փաստն իսկ բավարար երաշխիք է լինելու այն բանի համար, որ թուրքիան չհամարձակվի շարունակել ռազմական գործողությունները: «Թուրքիան այդպիսի քայլի կարող է դիմել միայն ու միայն Բաքվին տիրելու հաստատ որոշման դեպքում: Հայաստանի համար նա չի պատերազմի Ռուսաստանի հետ: Մյուս կողմից էլ թուրքիայի համար լրիվ ակնհայտ պետք է լինի, որ Ռուսաստանը Բաքուն պաշտպանելու է մինչև վերջին կարմիրբանակայինը»<sup>4</sup>: Խոսելով խորհրդային Ռուսաստանի շահագրգռվածության մասին, Լեզրանն ընդգծում էր, որ «Ռուսաստանը չի կարող անտարբեր մնալ Հայաստանի վրա Քեմալի հարձակողականի նկատմամբ, քանի որ այդ հարձակողականն սկսում է ստանալ թուրքերի նկրտումների բավարարման զուտ իմպերիալիստական բնույթ, սպառնում է քեմալականների միջավայրում իմպերիալիստական նկրտումների հետագա աճով...»

1. Նույն տեղը:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թթ. 129-134:

3. Նույն տեղը:

4. Նույն տեղը:

Կարսը Հայաստանի ձեռքում՝ Հայաստանը չի վերածի իմ-  
պերիալիստական երկրի: Իսկ Թուրքիայի ձեռքին, քեմալա-  
կաններին փոփոխվող տրամադրությունների պայմաններում,  
կարող է խաղալ այդ հիմքի դերը: Կատարելապես ակնհայտ  
է, որ այդպիսի հիմք-խարսխի ստեղծումը Ռուսաստանի  
համար որոշակի սպառնալիք է ներկայացնում և չի համա-  
պատասխանում Խորհրդային Ռուսաստանի շահերին»<sup>1</sup>:

Զրույցի վերջում Լեգրանը մեկ անգամ ևս շեշտում էր, որ  
լեհական ճակատի վերացման և Վրանգելի դեմ հաղթանակի  
կապակցությամբ, Խորհրդային Ռուսաստանն ազատ ուժեր  
ունի և կարող է կարմիր բանակի զորամասեր ուղարկել Հա-  
յաստան՝ Թուրքական զորքերին դիմակայելու համար»<sup>2</sup>: Դաշ-  
նակցական կառավարությունը, սակայն, հրաժարվեց կարմիր  
բանակի զորամասերի մուտքից և ընդունեց հաշտության  
նվաստացուցիչ ու հեղձուցիչ պայմանները:

Հայտնի է, որ էրզրումում Զելալեդդին Արիֆ բեյի հակա-  
քեմալական ապստամբության կապակցությամբ Թուրքական  
զորքերը հոկտեմբերի 1-ից 20-ը ստիպված դադարեցրին  
ուզմական զործողությունները Հայաստանի տարածքում:  
Հատկանշական է այդ առթիվ Մուստաֆա Քեմալի հետևյալ  
խոսքերը. «Հայերը հաջողացրին ընդհանուր անակնկալ հար-  
ձակում մեր դեմ, որը ձեռնարկեցին Բարդիսի վրա սեպ-  
տեմբերի 26-ին առավոտյան: Երբ ես կրկարդայի այս հա-  
զիվ թէ հաճոյալի լուրը՝ ստացա Զելալեդդին Արիֆ բեյի վերջ-  
նագիրը, որը նա պատրաստած էր սեպտեմբերի 24-ին, հայ-  
կական հարձակման օրը: Հայերը ետ մղվեցան և սեպտեմբե-  
րի 28-ին մեր ուժերը սկսեցին հառաջանալ: Նույն օրը, էրզ-  
րումի (ապստամբների) հեռագիրը ստորագրողներն սկսեցին  
իրենց հարձակողականը Անգորայի դեմ: Այս ինչ անբախտ  
դժգոհություն: Այն տպավորությունը տվավ, թէ այս  
մարդիկ հայերի հետ համաձայնվել են մեր վրա հարձակվե-  
լու համար: Թուրքական բանակը Մարըղամիշ մտավ սեպ-  
տեմբերի 29-ին: Մարդինը գրավեցին սեպտեմբերի 30-ին:  
Ասա որոշ պատճառներով մեր բանակը մի ամիս չզործեց,  
մինչև հոկտեմբերի 23-ը՝ Մարըղամիշ-Լալոզլու ճակատին  
վրա: Պիտի գուշակէք թէ պատճառներից մեկը՝ էրզրումի մեջ  
Զելալեդդին Արիֆ բեյի և նրա մեղսակիցների ստեղծած կա-  
ցությունն էր»: Քեմալը շարունակում է, թե Քյազըմ Կարա-

1. Նույն տեղը:

2. ՀՀ ՊԿԱ Ֆ, 113, ց. 3, գ. 7, թ. 1-3:

րեքիրը «հեռադրով Զելալէդզին Արիֆին տեղեկացրած էր, թե ապստամբական հեռադիրը արտաքին վտանգէն ավելի սպառնալից կը նկատեմ իր հետեւանքներով, ավելի մեծ՝ քան (հայկական) ճակատի կացութիւնը և ներկայումս կիմացնեմ թէ՛ վաղը էրդրում պիտի գամ»<sup>1</sup>:

Քեմալի տաղնապը ցույց է տալիս, որ նա ավելի մտահոգված էր ապստամբութեան վերացմամբ, որի համար նա ստիպված եղավ ամբողջ 20 օր դադարեցնել Հայաստանում ռազմական գործողութիւնները:

Յավոթ, Հայաստանի Հանրապետութեան բանակը, «որը,— ինչպէս նշում է Հայաստանի նախկին վարչապետ Հովհ. Քաջաղնունին,— լավ դինված էր անգլիական ղեկքերով ու մարտը հազնված անգլիական հագուստներով, ուներ բավականաչափ ռազմապաշար, մեր ձեռքին էր Ղարսի պես կարևոր բերդը»<sup>2</sup>: Փոխարեն շարունակելու ռազմական գործողութիւնները, հանրապետութեան ղեկավարները ամբողջ հուլիսը կապել էին Սևրի պայմանագրի հետ և համոզված էին, որ նրա իրագործմամբ հայերը կստանան ամբողջ Արևմտյան Հայաստանը: Մինչդեռ քեմալական բանակը էրդրումի ապստամբութիւնը ճնշելուց հետո անցավ հարձակման և հոկտեմբերի 30-ին գրավեց Կարսը, նոյեմբերի 7-ին, առանց դիմադրելու հանձնեցին Գյումրին, նոյեմբերի 12-ին Արզախը, Ջաջուրը, Իգդիրը և շարժվում էր դեպի Երևան, նոյեմբերի 16-ին հայկական կառավարութիւնը ստիպված ընդունեց թուրքերի պայմանները:

Բանակցութիւններն ընթացան թուրքական զորքերի կողմից գրավված Ալեքսանդրապոլում: Թուրքական պատվիրակութեան ղեկավարը Քյաղիմ Կարաբեքիր փաշան էր, հայկականինը՝ Խատիսյանը: Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բուդու Մդիվիանին բանակցութիւններից հեռու պահվեց: Թուրքական պատվիրակութիւնը դա պատճառաբանեց այն բանով, որ Մդիվիանին «ուղարկվել է լոկ ռազմական գործողութիւնները դադարեցնելու համար»: Դաշնակների պատվիրակութիւնը ևս «ավելորդ համարեց Մդիվիանիի մասնակցութիւնը»:

Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը, իմանալով Անկարայի տարածքային պահանջների մասին և մտա-

1. Մոսթափա Քեմալի ելույթը, Լայպցիգ, 1929, թ. 417-418, տե՛ս Զ. Մարտիան, Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը, 1920-1921 թթ.), Պէտրոպ, 1979, էջ 87-88:

2. Յ. Քալազնունի, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք լուծի ալևա, Վիեննա, 1923, էջ 7:

հոգված Հայաստանի ճակատագրով, Լեզրանի միջոցով դաշ-  
նակցական կառավարությունը հասկացրեց, որ «... ինչպես  
Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այնպես էլ Բաթումի հա-  
մաձայնագիրը, որոնք մենք դիտում ենք որպես Բրեստի  
պայմանագրի իրավական շարունակություն, համարում ենք  
չեղյալ հայտարարված: Դրա համար թուրքերի այդօրինակ  
պահանջները մեր կողմից կտրականապես մերժվելու են»<sup>1</sup>:

Լոնդոնի «Թայմս» թերթը, 1920 թ. նոյեմբերի 29-ի հա-  
մարում, շոշափելով Ալեքսանդրապոլի թուրք-հայկական բա-  
նակցությունների հարցը, վստահարժան աղբյուրներ վկայա-  
կոչելով, հաղորդում էր, որ մոսկովյան կառավարությունը  
Մուսթաֆա Քեմալին ի գիտություն հաղորդել է, թե թույլ չի  
տա Հայաստանի վրա հետագա հարձակումը: Չիչերինը պա-  
հանջել է թուրքական զորքերը հետ քաշել Ալեքսանդրապոլից  
արևմուտք հոսող Արփա գետի այն ափը: «Մոսկովյաի կառա-  
վարությունը միաժամանակ պաշտոնապես տեղեկացրեց Ան-  
կարայի թուրքական ազգային կառավարությանը, որ  
Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը այլևս չի կարող ի  
զորու համարվել: Երևանում խորհրդային իշխանու-  
թյան ներկայացուցիչ Լեզրանը հայերին վստահեցրեց, որ  
բոլշևիկները որևէ մտադրություն չունեն իրենց դեմ թշնամա-  
կան գործողություններ ձեռնարկելու և դրա համար էլ հա-  
յերը կարող են հանգիստ իրենց ուժերը կենտրոնացնել արև-  
մուտքում՝ թուրքերի դեմ»: Թերթն այսպես էր եզրափակում.  
«Բոլշևիկները տագնապահարված են թուրքերի Հայաստանի  
վրայով դեպի Ադրբեջան արագ առաջխաղացքով»:

Խորհրդային Ռուսաստանն, ուրեմն, պատրաստ էր միջ-  
նորդ հանդիսանալ պատերազմի դադարեցման համար և  
կամ, նույնիսկ, զինյալ օգնություն ցույց տալ Հայաստանին:  
Եթե Հայաստանի կառավարությունը համաձայնած լիներ  
Խորհրդային Ռուսաստանի միջնորդությանը և կամ թույլա-  
տրեր 11-րդ կարմիր բանակի զորամասերին Ղարաբաղից և  
Ջանգեղուրից Հայաստանի համապատասխան շրջաններ  
մտնել, ապա, միողցե, թուրքական զորքերի ասպատակու-  
թյունները ավելի պակաս կլինեին և հայ ժողովուրդը խու-  
սափած կլիներ նորանոր զոհերից:

Անկարայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ահ-  
մեդ Մուսթարը հետևյալ պատվիրանը տվեց Քազըմ Կարա-  
բեքիրին. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած  
մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևարար ան-  
հրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ

1. ՀՀ, ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թթ. 129-134:

փաստականորեն ոչնչացնել: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար: Այս պատճառով էլ մենք հաշտության սովորական պայմանագիր չպետք է կնքենք ու մեր զորքերը դուրս բերենք Հայաստանից: Հայերին խեղդամահ անելով, միաժամանակ մենք պետք է ջանանք շարել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակներին: Այժմ մենք պետք է նկրտենք վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, զենքերը հայերից բռնախլել և բաժանել մուսուլմաններին հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական կապ հաստատել ադրբեջանական թուրքերի ու նրանց կառավարության հետ: Ահա այն հիմնական կետերը, որոնք պետք է դրվեն հաշտության պայմանագրի հիմքում: Ահմեդ Մուխթարը վերջում ընդգծում էր, որ այս բոլորի մասին պետք է տեղեկացվեն միայն ու միայն պատվիրական անդամները<sup>1</sup>:

Հայաստանի կառավարությունը, հրաժարվելով խորհրդային Ռուսաստանի միջնորդությունից, հույսը դրել էր թուրք զավթիչների բարյացակամ ողորմածության վրա: Դա երևում է խառնուրդի կողմից ներկայացված «Հայաստանի նախագծից», որն ընդգրկում էր ամբողջ Արևմտյան Հայաստանը. վանի նահանգը, Մանազկերտի շրջանը և ծովափնյա մի շերտ մինչև Ռիզե, «100 հազար քառակուսի վերստ տարածքով և երեք միլիոն բնակչությամբ»: Իսկ թուրք ջարդարարների նախագիծը՝ «Հայաստանին վերջ տալն էր»: Այդ է վկայում Ահմեդ Մուխթարի 1920 թ. նոյեմբերի 8-ի գաղտնի հրահանգը՝ Արևելյան ռազմակատի հրամանատար Կարաբեքիրին:

«Ողորմած» Կարաբեքիր փաշան ի պատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության նախագծի, թելադրեց խաղաղության պայմանագրի թուրքական նախագիծը, որի հիման վրա Թուրքիային պետք է անցնեի համարյա ամբողջ Հայաստանը՝ բացի Երևանի և Սևանա լճի շրջաններից: Նախիջևանի Շարուրի և Շախթախթի շրջանները հայտարարվում էին «ժամանակավորապես» Թուրքիայի պաշտպանության ներքո անցած: Փաստորեն Թուրքիայի «հոգատարությունը» (պրոտեկտորատը) հաստատվում էր նաև ձևականորեն Հայաստանին թողնված 10 հազար քառ. կմ հողատարածքի վրա: Այս նախագիծն ու Ահմեդ Մուխթարի պատվիրանը

գրվեցին 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված Ալեքսանդրրապոլի «խաղաղության» պայմանագրի հիմքում: Ն. Լ. Ռուբինշտեյնը գրել է. «Այդ պայմանագիրը բացարձակապես բնութագրում էր Անդրկովկասում քեմալականների թալանչիական, զավթողական նկրտումները»<sup>1</sup>:

Բանակցությունների ժամանակ Լեզրանը նոյեմբերի 29-ին դաշնակցական կառավարությանը ներկայացրեց վերջնագիր, որով պահանջում էր ռուսական զորքերին թույլ տալ մտնել Հայաստանի տարածքը: Թուրքական և Խորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից Հայաստանի Հանրապետությունը հասցված հարվածների հետևանքով այնքան էր թուլացել, որ դաշնակցական կառավարությունը ստիպված եղավ ընդունել վերջնագիրը և դեկտեմբերի 2-ին համաձայնագիր ստորագրվեց, որով դաշնակները իշխանությունը հանձնեցին բուլղարիկներին: Թուրքերի հետ պայմանագիրը կնքվեց դեկտեմբերի 2-ի գիշերը, այսինքն դաշնակների բուլղարիկներին իշխանությունը տալուց հետո, որից և կառույցում էր Թուրքիայի կողմը, որ պայմանագիրը կնքվել է ոչ թե դաշնակցական կառավարության, այլ բուլղարիկների հետ: Դրանով Թուրքական պատվիրակությունը ձգտում էր զավթած տարածքները իրավականորեն հիմնավորել: Այդ բանը հաստատելու համար բախական է մեջբերել պայմանագրի առանձին հոդվածները: Այսպես, 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանը պարտավորվում էր վերացնել պարտադիր զինվորական ծառայությունը երկրում, իսկ նրա կանոնավոր զորամասերի ընդհանուր թիվը չպետք է գերազանցեր 1500 զինվորից՝ ութ հրանոթով և 20 զնդացրով: 5-րդ հոդվածով վերը նշված պայմանների կատարման վերահսկողությունը դրվում էր Թուրքիայի հատուկ քաղաքական ներկայացուցչի կամ Երևանում թուրքական հյուպատոսի վրա: Պայմանագրի 12-րդ հոդվածը Հայաստանի բոլոր երկաթուղիները և հաղորդակցության այլ ճանապարհները դնում էր թուրքական իշխանությունների վերահսկողության տակ: 13-րդ հոդվածով Թուրքիան իրավունք էր ստանում իր զորքերը մտցնել և ռազմական բնույթի միջոցառումներ ձեռնարկել Հայաստանի տարածքում: Այսպիսով, Հայաստանի ինքնուրույնությունից մնում էր միայն նրա սովերը, այն վեր էր ածվում սովորական թուրքական մի նահանգի: «1920 թ. վերջին,— գրում է ժամանակակից պատմաբան Սերգեյ Լեզովը,— անկախ Հայկական Հանրապետությունը, գոյատևելով երեք տարուց պակաս, ընկավ թուրքական և ռուսական բանակների հարվածներից: Հայ-

1. Рубинштейн Н. Л., Внешняя политика Советского государства в 1921-1925 годах. М., 1953, с. 62.

կական տարածքները բաժանման ենթարկվեցին քեմալական Թուրքիայի և կոմունիստական Ռուսաստանի միջև»:

Թուրք հեղինակները ինքնազոհ փրվածությունը շեշտում են, որ «դա թուրքական նոր պետականություն միջազգային առաջին պայմանագիրն էր (տե՛ս Մյոքերբեմ Քյամիլ Սուի<sup>1</sup>, էմրե Քոնգարի<sup>2</sup> և այլոց աշխատությունները): Իսկ Յավուզ Արաղանը, ցանկանալով պայմանագրին իրավական հիմք տալ, գրում էր. «Արտաքին քաղականության իմաստով Ալեքսանդրապոլի պայմանագիրը կրկնակի կարևոր նշանակություն ուներ: Նախ և առաջ այն հանդիսացավ խորհրդային և թուրքական կառավարությունների միջև կնքված Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հիմք: Եվ ապա՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը պատճառ դարձավ, որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ճանաչի Անկարայի կառավարությունը»<sup>3</sup>: Դեպի Անդրկովկաս նվաճողական դինարչավր թուրք հեղինակները մատուցում են որպես «ազգային-ազատագրական» պատերազմի» բաղկացուցիչ մաս: Ավելին, 1920 թ. հաղթանակները նրանք ներկայացնում են որպես «անկախության համար պատերազմում տարած առաջին հաղթանակը»<sup>4</sup> (էնվեր Ջիա Կարալ): Իսկ Ջեմալ Քութայը հենց այդ հաղթանակի հետ է առնչում «ազգային-ազատագրական պայքարի հետագա ճակատագիրը. «Եթե Կարաբեքիրը արևելքում այդ հաղթանակը տարած չլիներ, ապա ինչպիսին կլինեիր ազգային պայքարի ճակատագիրը»<sup>5</sup>, — գրում է նա:

Նույն դնահատականն է տալիս նաև Ալի Ֆուադ Ջեքեսույը, որն իր հուշերի գրքում առաջինն է հրատարակել Արեվմարտյան ռազմաճակատի հրամանատար, Քեմալի մերձավոր զինակից Իսմեթ Բեյի նամակը Քյազիմ Կարաբեքիրին. «Իմ թանկագին, իմ ամենասիրելի եղբայր Քյազիմ... Արևելյան զինարչավր մեզ և մեր գործը կյանքի կոչեց: Այնքան տառապեցինք, այնպես հյուծվեցինք, որ ազատ շունչ առնելու համար անհրաժեշտ էր գտնել վճռական մի ելք: Ալլահի օգնությամբ դու այդ ելքը գտար շափազանց ճիշտ և հաջող... Հատկապես Մուսթաֆա Քեմալ փաշան չգիտի՝ ինչպես ար-

1. Մ. Քյամիլ Սու, Թուրքիայի Հանրապետության պատմությունը, Ստամբուլ, 1964, էջ 305 (Թուրք.):

2. Էմրե Քոնգար, Կայսրությունից հանրապետություն..., Անկարա, 1979, էջ 113-114 (Թուրք.):

3. Պրոֆ. Յավուզ Արաղան, Մուսթաֆա հեղափոխության պատմության, Անկարա, 1960, էջ 66 (Թուրք.):

4. Կարալ էնվեր Ջիա, Թուրքիայի հեղափոխության պատմությունը, «1918-1960», Ստամբուլ, 1958, էջ 29 (Թուրք.):

5. Ջեմալ Քութայ, Կարաբեքիրը Հայաստանին ինչպես վերջ տվավ, Ստամբուլ, 1958, էջ 97 (Թուրք.):

տահայտել իր երախտագիտութունը...»<sup>1</sup>: Թուրք պատմաբաններն իրենց հերթին, պայմանագրի թվանշիական բնույթը քողարկելու իրենց փորձերում կանգ չեն առնում նույնիսկ պատմական իրողութուններն ու վավերագրերը նենգափոխելու փորձության առաջ: Պրոֆեսոր Յունալն, օրինակ, գրել է. «Ալեքսանդրապոլի պայմանագրով հայերը հարկադրվեցին ի նպաստ մեզ հրաժարվել մեր այն հողերից, որոնք օսմանյան կայսրութունը կորցրել էր 1878 թվականին»<sup>2</sup>:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո քեմալականները ջանացին շարունակել Անդրկովկասում իրենց նվաճողական քաղաքականությունը. միաժամանակ շթաքցնելով իրենց հակախորհրդային էությունը: Ավելին, Հայաստանի վրա նախահարձակման նախօրեին Անկարայի ղեկավարները ամբողջապարոն հայտարարում էին, թե իրենց «կարճատև» գրոհի նպատակն է աշխատավոր հայ ժողովրդին ազատագրել դաշնակների լծից»:

Հաշվի չնստելով Հայաստանի խորհրդայնացմամբ առաջացած նոր իրադրության հետ, Անկարայի կառավարությունը նկրտեց կյանքի կոչել Ալեքսանդրապոլի խայտառակությունը: 1920 թ. դեկտեմբերի 10-ին Թուրքիայի կառավարությանն ուղարկված հուշագրում Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը ասում էր. «Խորհրդային կառավարությունը հաստատ համոզմունք ունի, որ այսուհետև բացառվում է Թուրքիայի և Հայաստանի ժողովրդների միջև թշնամական բախումների ամեն մի հնարավորություն, որ նրանց միջև նոր հարաբերությունները պիտի հաստատվեն արդարացի իրավունքների փոխադարձ ճանաչման և յուրաքանչյուր ժողովրդի ազատ և անարգել զարգացման հնարավորության ապահովման հիմքի վրա»: Հուշագրում այնուհետև ասված էր. «Խորհրդային Հայաստանի կառավարությունը Թուրքիայից ակնկալում է նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի շեղյալ հայտարարում և նոր պայմանագրի կնքման համար մի նոր համաժողովի մասնակցություն պատրաստակամությունը»<sup>3</sup>:

Սակայն Անկարայի կառավարությունը ոչ միայն մերժեց վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, այլև, ինչպես երևում է 1920 թ. դեկտեմբերի 15-ի իր հուշագրից, փորձեց «հիմնավորել» իր օրինական իրավունքները բռնախլված

1. Ջեբեսոյ Յուագ, նշվ. աշխ. էջ 485-486 (Թուրք.):

2. Պրոֆ. Տ. Յունալ, քաղաքական պատմություն, 1700-1958, Անկարա, 1958, էջ 270 (Թուրք.):

3. ДВП СССР, т. III, М. 1959, стр. 379.

հայկական տարածքների վրա, «Մենք անհրաժեշտ ենք համարում նշել, որ թուրք-հայկական խաղաղությունը ոչ թե բռնի խաղաղություն է, այլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա հիմնված խաղաղություն և մենք մեզ ենք կցել լուկ թուրքական ազդարնակչությամբ տարածքները»...<sup>2</sup>։ Իր մի այլ՝ 1921 թ. փետրվարի 5-ի հուշագրում ևս Անկարան շարունակում էր կառչել Ալեքսանդրապոլից։ Մենք գրտնում ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը մարմնավորումն է ոչ թե բռնության, այլ՝ արդարության և որ նրա գիրառումն անհրաժեշտ է Կովկասում ամուր խաղաղություն հաստատելու համար»։ Հուշագրի վերջում Հայաստանից պահանջվում էր բարեխղճորեն հարգել պայմանագիրը, որը «կազմված է այնպես, որ բավարարի արդարության և հավասարության սկզբունքները»<sup>1</sup>։

Գծվար չէ նկատել, որ քեմալականները վճռել էին շհրաժարվել հայ ժողովրդի ու Հայաստանի նկատմամբ թուրքական «դասական» ու հարատև քաղաքականությունից։ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը վճռականորեն հայտարարեց, որ չի ճանաչում Ալեքսանդրապոլի թալանչիական պայմանագիրը։ Այդ կապակցությամբ Գ. Զիշերինը ղեկավարների 3-ին ղիմում է ՌԿԿ ԿԿ քաղբյուրոյի հետևյալ առաջարկությամբ. «Պետք է սանձահարել թուրքերին և շափավորել նրանց պահանջները Հայաստանի նկատմամբ։ Ժուրքերը մեղնից օգնություն են սպասում ոսկով և զենքով, և մենք նրանց վրա ազդելու այդպիսի հղոր միջոց ունենք։ ... Մենք կարող ենք թուրքերին խոստանալ վերսկսել մեր օգնությունը այն պայմանով, որ նրանք դուրս գան Հայաստանից...»<sup>2</sup>։

Զիշերինը նույն գրությունում մատնանշում է, որ «Կարսը Բաքվի բանալին է», և Կարսը պետք է նաև Թիֆլիսի պաշտպանության համար։ Զիշերինը առաջ է քաշում Կարսը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու անհրաժեշտության հարցը<sup>3</sup>։ Զիշերինը ղեկավարների 8-ին Օրջոնիկիձեին հղած հեռագրում նշում է. «Լեզրանը համառոտակի հեռագրում է, որ թուրքերը շեն ցանկանում պայմանագիր կնքել Հայաստանի էմբանիստական կառավարության հետ և ասում են, որ ամեն ինչ կորոշվի Մոսկվայում, Ռուսաստանի հետ բանակցություններում, հայ կոմունիստների միևիմալ մասնակցու-

1. ДВП СССР, т. III, М. 1959, стр. 397.

2. Նույն տեղը, էջ 487-488:

3. ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 26, թ. 1, տե՛ս է. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Եր., 1979, էջ 186:

4. Մեղքերում ենք է. Զոհրաբյանի աշխատությունից, էջ 186-187:

թյամբ: Ի՞նչ է հայտնում Մդիվանին, արդյոք դա ձգձգման, կամ թե Հայաստանի խորհրդային կառավարությանը բարոյապես հեղինակազրկելու փորձ չէ՞»<sup>1</sup>:

Մդիվանին վարում էր հայատյաց քաղաքականություն: Նա ամեն կերպ ձգտում էր Չիչերինին և Օրջոնիկիձեին համոզել, որ վերջ տրվի թուրքերի նկատմամբ անվստահությանը, որ «սիրալիր լինելը Կարաբեքիրի նկատմամբ», քանի որ նա խորհրդային Ռուսաստանի համար «ամենաձեռնտու գործիչն է», «Ճիշտ է,— գրում է Մդիվանին Օրջոնիկիձեին,— որ մենք պետք է հոգ տանենք խորհրդային Հայաստանի մասին, բայց պակաս ճիշտ չէ և այն, որ թուրքերին էլ պետք է սիրաշահենք և ներկա պահին գործի այդ կողմը առավել կարևոր է...»<sup>2</sup>: Մդիվանին նույնիսկ հակադրվում է Չիչերինի թուրքերի նկատմամբ վարած քաղաքականությանը: «Ճիշտ է Չիչերինը,— գրում է Մդիվանին,— բայց ես կարծում եմ, որ կայուն պետք է լինել այն հարցերում, որոնք անվերապահորեն պետք է լուծվեն մեզ համար ցանկալի ձևով, այլ ոչ այն հարցերում, որոնք շպետք է բարձրացնել: Վանի և Մուշի հարցը, ներկա դրությամբ հենց այդպիսին են»: Մդիվանին թուրքասիրությանը այնքան էր տարվել, որ «Կոնֆերանսում Յուսուֆ Քեմալը հայտարարեց, որ Մդիվանին մասնավոր կերպով թուրքերին խորհուրդ է տվել մտնել Բաթում,— գրում է Չիչերինը Օրջոնիկիձեին 1921 թ. մարտի 1-ի հեռագրում:— Այդ միտքը կա նաև Կարաբեքիրի նամակում, դա ի՞նչ կարող է նշանակել, դա խիստ տարօրինակ է»<sup>3</sup>:

Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Օրջոնիկիձեին 1920 թ. դեկտեմբերի 11-ին իր ուղարկած հեռագրում արտաքին գործերի նախարար Չիչերինը ասում էր, որ հարկ է թուրքերին հասկացնել հետևյալը. խորհրդային կառավարությունը պահանջում է Ալեքսանդրապոլի նահանգից թուրքերի հեռացում դեպի Կարսի մարզ<sup>4</sup>: Դեկտեմբերի 19-ին արտաքին գործերի պաշտոնակատար Ահմեդ Մուսթաֆին հասցեագրված իր հեռագրում ևս Չիչերինը պնդում էր՝ Անկարայի կառավարությունը, Հայաստանի և խորհրդային մյուս հանրապետությունների բանվորների և գյուղացիների նկատմամբ իր բարի զգացմունքները հավաստելու համար, պետք է ձեռք առնի անհրաժեշտ մի-

1. Նույն տեղը, էջ 187-188:

2. Ջ. Առեաբյան, նշվ. աշխ., էջ 188:

3. Նույն տեղը, էջ 189:

4. Տե՛ս ДВП СССР, т. III, էջ 380:

չոցներ՝ «որպեսզի թուրքական բանակը անհապաղ մաքրի Ալեքսանդրապոլի շրջանը և մյուս բոլոր կետերը, որոնք գտնվում են Կարսի շրջանից հյուսիս և արևելք, որոնց գրավումը, սակայն, մեր կարծիքով պետք չէ կանխորոշի թուրք-հայկական վերջնական սահմանը»<sup>1</sup>: Մի այլ վավերագրում, 1921 թ. հունվարի 18-ին Օրջոնիկիձեին ուղարկված հեռագրում Չիչերինը խոսում էր Հայաստանը աղետալի վիճակից դուրս բերելու անհրաժեշտության մասին. «Թուրքերը ոչ միայն աջակցություն ցույց չեն տալիս խորհրդային հանրապետությանը, այլև շրջափակում են այն, թալանում, սովի մատնում: Յուրաքանչյուր խորհրդային հանրապետության գործը մեր գործն է և մենք մեզ հավատարիմ չէինք լինի, եթե անտարբեր դիտեինք եղբայրական խորհրդային հանրապետության հագեցվաբքը»<sup>2</sup>: Փետրվարի 3-ին դարձյալ Օրջոնիկիձեին հասցեագրված հեռագրում արտաքին գործերի նախարարը նորից էր ասում. «հարկ է թուրքական կառավարությանը նախազգուշացնել Հայաստանի գրավված տարածքներում թալանին ու բռնամիջոցներին վերջ տալու անհրաժեշտության մասին: «Մենք դրան շատ մեծ նշանակություն ենք տալիս... Կրկին՞ էք Ալեքսանդրապոլը մաքրելու պահանջը»<sup>3</sup>:

Անկարայի կառավարությունը ոչ միայն չէր պատրաստվում իր գործերը դուրս բերել, Ալեքսանդրապոլի շրջանից, այլև, օգտվելով վրաց մենշևիկների իշխանության թուլությունից, նրանց հետ գործարք կնքելով, փորձեց իր նվաճումներն ընդարձակել Վրաստանի հաշվին: 1921 թ. հունվարի 17-ին Քեմալի կառավարությունը ճանաչեց մենշևիկյան Վրաստանը: Փետրվարի 5-ին Անկարա ժամանեց Ս. Մըդիփիանիի գլխավորած վրացական դիվանագիտական առաքելությունը: Անտանտի երկրների թելադրանքով մենշևիկները Թուրքիայի հետ բանակցությունների մեջ մտան՝ Անտանտի հովանավորության ներքո Թուրքիայի, Վրաստանի, Անդրկովկասի մյուս տապալված իշխանությունների և Հյուսիսային Կովկասի լեռնականների մասնակցությամբ հակախորհրդային բլոկ կազմելու նպատակով:

1921 թ. փետրվարին, երբ Վրաստանում ապաստամբություն սկսվեց մենշևիկյան կառավարության դեմ և կարմիր բանակի զորամասերը փութացին աջակցել ապստամբներին,

1. Նույն տեղը, էջ 393:

2. Նույն տեղը, էջ 479:

3. Նույն տեղը:

Թիֆլիսում Թուրքիայի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ զնդապետ Քյազիմ Բեյը Անկարայի հանձնարարությունը վարչապետ Ն. Ժորդանիային համոզեց կորոզի դիվանդրությունն ցույց տալ ընդդիմադիրներին և խոստացավ հասցնել Թուրքական զորամասերի աջակցությունը: Թուրքերի նպատակը հետևյալն էր. մենշևիկյան բանակի ուժերով դիմագրավել կարմիր բանակի հարձակմանը, ժամանակ շահել և կարմիր զորամասերից առաջ գրավել Բաթումը, Ախալցխան և Ախալքալաքը, դրանով իսկ Մոսկվայում ընթացող Թուրք-խորհրդային բանակցություններում խորհրդային կառավարությանը կանգնեցնելով կատարված իրողությունն առաջ: Բարոյալքված մենշևիկյան բանակի անհուսալի վիճակին և Ժորդանիայի կառավարության Թիֆլիսից փախուստի անխուսափելիությունը համոզված, Քյազիմ բեյը հեռախոսով այդ մասին նախազգուշացրեց Անկարային: Նա իր փորձերից ձեռք չբաշեց նաև մենշևիկյան կառավարության մայրաքաղաքը լքելուց հետո և գնացքում Ժորդանիային խորհուրդ էր տալիս Գորիի մոտ կամ Սուրամի լեռնանցքում կարմիր բանակը կասեցնելու փորձ անել: Սակայն Քուծայիսում, ամեն մի հույս կորցրած, Քյազիմ բեյը սուրհանգակ ուղարկեց Բաթումի շրջանի Թուրքական զորքերի հրամանատարին՝ թիւղդրելով արագացնել Բաթումի վրա գրոհը՝ կանխելով կարմիր բանակին:

Թիֆլիսից Անկարա Քյազիմ բեյի հեռախոսազանգը անհետևանք չմնաց: Գլխավոր շտաբի պետ զնդապետ Իսմեթ բեյը (Ինյոնուն) այցելեց Անկարայում մենշևիկյան ներկայացուցիչ Մդիվիանուն և փորձեց անել այն, ինչը չէր հաջողվել Քյազիմին: Նա Մդիվիանուն վստահեցրեց, որ եթե մենշևիկյան զորքերին հաջողվի կասեցնել կարմիր բանակի գրոհը, ապա Թուրքական զորքերն այդ դեպքում անպայման օգնության կգան:

Իրադարձությունները արագ զարգացան: Կարմիր բանակը մոտեցավ Բաթում, Ախալցխա և Ախալքալաք քաղաքներին: Շտապեցին և Անկարայում: Արդահան ուղարկված զորքերը հրաման ստացան շարունակել գրոհը և գրավել Ախալցխան և Ախալքալաքը: Միաժամանակ, Բաթումին տիրելու համար կազմավորվել սկսեց ճորոխի զորախումբը:

Բախվելով կարմիր բանակի և աշխարհազորայինների ներկայությունը, Թուրքական զորքերը հարկադրված եղան ձեռք քաշել Ախալցխայից և Ախալքալաքից: Սակայն մարտի 11-ին մտնելով Բաթում, նրանք այնտեղ Քյազիմ բեյի գլխավորությամբ Թուրքական վարչություն ստեղծեցին: Ըստ որում, երեք քաղաքներին տիրելու փորձն արվեց հակառակ

այն իրողության, որ թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Կարաբեքիրին հայտնի էր մոսկովյան բանակցություններում այդ քաղաքները Վրաստանին թողնելու վերաբերյալ կայացած համաձայնությունը: Նա իր առաջին հրամանում հռչակում էր. «Վերջին ժամանակներս, վրացական կառավարության համաձայնությամբ, Բաթումի մարզը, Ախալքալաքի և Ախալցխայի շրջանները գրավվեցին մեր զորքերի կողմից: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության որոշմամբ, որը հիմնված է տարբեր ժամանակների պայմանագրերով, բազմիցս հաստատված մեր ազգային իրավունքների վրա, այդ մարզերն այսօրվանից վերադառնում են մայր հայրենիքի սահմանների մեջ և քաղաքական ու վարչական տեսակետից ենթարկվում են Թուրքիայի ազգային կառավարությանը»<sup>1</sup>:

Անդրկովկասում թուրքական նվաճողական այս գործողությունները ուղեկցվում էին թուրքական մամուլի հակախորհրդային ուժեղացված քարոզչությամբ: Այսպես, «Իրավունքների պաշտպանության» Տրապիզոնի նահանգային կոմիտեի պաշտոնաթերթ և Անկարայի իշխանությունների տեղական խոսնակ «Իսթիքբալը» պարբերաբար հրատարակում էր Անդրկովկասում, առանձնապես Վրաստանում և Աջարիայում, նորաստեղծ իշխանության դեմ ուղղված հոդվածներ: Թերթը պահանջում էր, որպեսզի Բաթումը վերամիավորվի, «մայր հայրենիք Թուրքիային»: Մի շարք խմբագրականներ վերնադրված էին «Բաթումը մերն է», «Բաթումը բացառապես թուրքական քաղաք է», «Թուրքերը պատրաստ են միասնականորեն պայքարելու Բաթումի համար»<sup>2</sup>:

Տակավի՛ն մոսկովյան բանակցությունների բացման նախօրյակին արտաքին գործավարությունը խորհրդարանում Բաթումի վերաբերյալ բացահայտ նվաճողական մի հայտարարություն էր արել. «Բաթումը մերն է, պետք է մեզ պատկանի: Մակայն, քանի որ Կովկասի ժողովուրդների դեպի ծով միակ ելքն է, ապա կհամաձայնվենք նավահանգստի միջազգայնացմանը: Քաղաքը պետք է թուրքական մնա»<sup>3</sup>:

Բաթումի 4000-անոց մենշևիկյան զորքը անցավ քաղաքի հեղկոմի կողմը և մարտի մեջ մտավ թուրք զավթիչների դեմ: Մինչև 11-րդ կարմիր բանակի զորամասերի ժամանումը թուրքերն արդեն ջախջախված էին: Մարտի 11-ին Բաթումը,

1. ЦГАОР Грузии, ф. 130, д. 124, л. 27.

2. Юст К., Анатолийская печать. Тифлис, 1922, с. 39.

3. ЦГАКА, ф. 196, ст. 4, д. 675, л. 363.

Ախալքալաքն ու Ախալցխան ազատագրվեցին և խորհրդայնացան:

Քեմալական զորքերը, սակայն, միառժամանակ, խախտելով Թուրք-խորհրդային պայմանագրի դրույթները, իրենց պիղծ ներկայութունից շմաքրեցին Ալեքսանդրապոլի գավառը, որը, ըստ պայմանագրի, Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ էր ընկնում: Դիմելով դիվանագիտական տարատեսակ խորամանկումների, Անկարայի կառավարութունը շարունակեց իր զորքերը թողնել գավառում: Իսկ Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը Խորհրդային Հայաստանի կառավարութայնը հասկացրեց, որ իր զորքերը չեն հեռանալու և անհրաժեշտության դեպքում պատրաստ են պատերազմ հայտարարել Հայաստանին: Այս կապակցությամբ Չիչերինը ապրիլի 6-ին հեռագրում էր Օրջոնիկիձեին. «Հենց հիմա նրան (Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին, — Ծ. Ս.) հաղորդելու եմ Կարաբեքիրի խուլիզանության մասին և հասկացնելու, որ Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև պատերազմը, պատերազմ է նշանակելու Թուրքիայի և Խորհրդային Խուսատանի միջև»<sup>1</sup>:

Թուրքական զինվորականութունը շրջափարվելով Անդրրկովկասի նկատմամբ իր դավթողական ծրագրերից, շարունակում էր պատրվակներ հորինել՝ արդարացնելու համար իր զորքերի պահպանումը բռնագրաված շրջաններում: Չիչերինը, մերկացնելով Թուրք բարբարոսների նենգութունները, ապրիլի 8-ին Ալի Ֆուադին հասցեագրված հուշագրում շեշտում էր. «Ձեմ կարող ձեզանից թաքցնել իմ խոր դարմանքը, որն ապրեցի ծանոթանալով Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ռազմական նախարար Քեմալ Ֆեդուկի փաշայի հայտարարության հետ... Ռազմական նախարարը հատկապես հայտարարում է, որ Արևելյան ռազմաճակատի Թուրքական բանակը, Կովկասում մնալով, պետք է այնտեղ ծառայի որպես հավասարակշռության տարր: Ինձ համար դժվար է հասկանալ, թե ուրիշ ի՞նչ ռազմական ուժի դեմ է Արևելյան ռազմաճակատի Թուրքական բանակը կոչված հանդես գալ՝ Կովկասում ուժերի հավասարակշռութունը վերականգնելու համար: Քանի որ այս շրջանում մյուս միակ ռազմական ուժը խորհրդային հանրապետութունների միացյալ կարմիր բանակն է, անխուսափելի է դառնում եզրակացութունը. այն, որ ռազմական նախարարի կարծիքով Թուրքական բանակը պետք է ծառայի որպես խորհրդային

1. ДВП СССР, т. IV, М., 1960, д. № 35.

դային ուժերին թշնամական և նրանց ռազմական հզորության հակակշիռը լինելու նպատակ ունեցող տարր... Այդ նույն հայտարարության մեջ ռազմական նախարարն ասում է, որ Հայաստանի առ այսօր թուրքական զորքերի գրավման ներքո գտնվող մասը պիտի դատարկվի միայն Ալեքսանդրապոլի պայմանագրի գործողության մեջ մտնելուց հետո: ... Վճռականորեն հայտարարում ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի կատարումը հավասարազոր է Մոսկվայի պայմանագրի շեղյալ հայտարարմանը»<sup>1</sup>:

Հակառակ այս բոլորին, Անկարայի կառավարությունը շարունակեց իր զորքերը պահպանել Ալեքսանդրապոլի գավառում: Ապրիլի 8-ին Չիչերինը Օրջոնիկիձեին հեռագրեց, որ Խորհրդային Ռուսաստանի Անկարայում գտնվող ներկայացուցչի՝ Մդիվիանու միջոցով «թուրքական կառավարությունից պահանջվի անհապաղ կենսագրոծել Մոսկվայի համաժողովում ընդունված նոր սահմանները և մաքրել Ալեքսանդրապոլը»<sup>2</sup>:

Սակայն գործը չկարգավորվեց առանց վերջնագրի: Ապրիլի 13-ին, Խորհրդային Ռուսաստանի կառավարության հանձնարարությամբ, Գեկկերը Քյազիմ Կարաբեքիրին ուղարկեց հետևյալ բովանդակությամբ մի հուշագիր. «Խուսափելու համար ողբայի թյուրիմացություններից, որոնք կարող են ունենալ մոտակա օրերին և որոնք կարող են խիստ ծանր անդրադառնալ մեր բանակների բարեկամության ու միություն վրա, խնդրում ենք ձեզանից անհապաղ կարգադրություն անել, որպեսզի մաքրվի Ալեքսանդրապոլի շրջանը, և թուրքական զորամասերը քաշվեն Մոսկվայի պայմանագրով մատնանշված գծից այն կողմ: Այն դեպքում, եթե ձեզանից տեղեկություն չստանամ զորամասերի հետքաշման սկզբի մասին, մեծ ցավով պետք է հարկադրված լինեմ հրաման տալ, որպեսզի կարմիր զորամասերը մուտք գործեն վերոհիշյալ շրջաններ, ըստ որում իմ վրայից վերացնում եմ դրան հաջորդելիք իրադարձությունների պատասխանատվությունը...»<sup>3</sup>: Այս վերջնագրով Գեկկերը Անկարային պարզորոշ հասկացնում էր, որ Խորհրդային կառավարությունը որևէ բանի առաջ կանգ չի առնելու, եթե թուրքական զորքերը շարունակեն մնալ Խորհրդային Հայաստանի տարածքում: Թուրքական հրամանատարությունը ապրիլի 22-ին հարկադրված իր զորքերը հեռ քաշեց:

1. Նույն տեղը, ժ. № 39:

2. ДВП СССР, т. IV, д. М 40.

3. Տե՛ս Хармандарян С., Документы периода гражданской войны в Армении в 1921 г., «Известия» АН Армении, 1957, ст. 2.

## Գ լ ու ի խ շ ո Ր Ր Ո Ր Կ

ԱՆԴՐԿՈՎՎԿԱՍԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ ԽՈՂՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1921 թ. ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ  
ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐՏԻ 16-Ի ՈՒ ԿԱՐՍԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի  
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

### Կոլխոսների հետևում

Կովկասում կարմիր բանակի հաջող առաջխաղացքն ու վրանգելի պարտությունը խորտակեցին Անկարայի կառավարողների համաթուրքական ցնորքները: Այդ ազդակները ըսթափեցուցիչ ներգործություն ունեցան, և քեմալականները որոշեցին վերսկսել 1920 թ. օգոստոսին ընդհատված մոսկովյան բանակցությունները:

Դեռ նախքան Մոսկովայի խորհրդաժողովի վերսկսելը, 1921 թ. փետրվարի 12-ին, Ստալինը նախազուշացրել էր Լենինին այն մասին, որ Չիչերինին թույլ չտրվի Հայկական հարցն արծարծել այնպես, ինչպես դա արել էր առաջին և ձախողանքով ավարտված խորհրդաժողովում. «Ընկեր Լենին, ես միայն երեկ իմացա, որ Չիչերինն ինչ-որ մի ժամանակ թուրքերին ուղարկել է տիամար (ու պրովոկացիոն) պահանջ՝ Վանը, Մուշը և Բիթլիսը, թուրքերի խոշոր գերակշռությամբ թուրքական այդ նահանգները Հայաստանի օգտին դատարկելու վերաբերյալ: Իմ պերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է Չիչերինին արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով հուշագրեր ուղարկելու թուրքերին»:<sup>1</sup>

1. ЦПА ИМЛ, ф. В, оп. 1, д. 5214, л. 2

Ինչ խոսք, որ Ստալինի դիրքորոշումը ձեռ էր տալիս Թուրքական պատվիրակությանը: Մոսկվայում Թուրքիայի առաջին դեսպան Ալի Ֆուադ Ջերեսույը գրել է. «Ինձ հաղորդեցին, որ մոսկովյան խորհրդաժողովին զործուն մասնակցություն է բերելու ընկեր Ստալինը»: Այնուհետև խոսելով Ստալինի հետ իր հանդիպման մասին, ավելացրել է. «Ոչ մի բան չփոխանակվեց Թուրքիայի կողմից իր հողատարածքի մի մասը Հայաստանին հանձնելու մասին»<sup>1</sup>:

Ստալինի հակահայկական դիրքորոշումն աներկբա արտահայտված էր հենց իր իսկ գլխավորած Ազգությունների ժողովրդական կոմիսարիատի պաշտոնաթերթ «Ժիզն նացիոնալնստեյ» պարբերականում, որի 1921 թ. մարտի 4-ի համարում լույս էր տեսել «Հայաստանը և Թուրքիան առաջիկա խորհրդաժողովում» առաջնորդողը: Հոդվածի ներքո Ա. Սկաչքոյի ստորագրությունն էր, այն նույն Սկաչքոյի, ում Օրջոնիկիձենն անվանել էր «Թուրքական իմպերիալիզմի դատապաշտպան»<sup>2</sup>: Սահմանափակվենք մի քանի մեջբերումներով, որոնք թույլ կտան առավել խորն ընկալելու հայատյաց այդ հոդվածի էությունը.

«Անհրաժեշտ է, որ խորհրդաժողովի մասնակից պետությունները միմյանց կատարեն այնպիսի զիջումներ, որոնք թույլ կտան վերացնելու փոխադարձ դժգոհության և անվստահության արմատները... Մինչդեռ պետական-ազգային շահեր հետապնդող Անկարայի կառավարության համար արտակարգ կարևոր է Թուրքական հողատարածքի պահպանումը, զույգ և ծավալումը, սոցիալիստական պետությունների համար ո՛չ հողատարածքը, ո՛չ էլ ազգային միասնությունը ոչ մի դեր չեն խաղում... Այս բոլոր նկատառումները հիմնականում վերաբերում են Հայաստանին, քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ադրբեյջանը Թուրքիայի հետ վիճելի ոչ մի հարց չունեն: Խորհրդաժողովի գլխավոր հարցը հայկականն է, այլ խոսքով՝ Թուրքիայի և Հայաստանի միջև բոլոր թյուրիմացությունների հարթումը և բարեկամական հարաբերությունների հաստատումը... Հայաստանն, անկասկած, պիտի հարկադրվի ղեկավարվել ազգային մեծագույն դոհաբերությունների վերաբերյալ լենինյան սկզբունքով: Նա պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն Մեծ Հայաստանի վերաբերյալ դաշնակցականների իմպերիալիստական ծրագրերից, այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ

1. Ջերեսույ, նշվ. աշխ., էջ 146 (Թուրք.):

2. Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 558, оп. 1, л. 2202, л. 2.

որի մասին դաշնակցական կառավարության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը շտապ երկու հեռագիր հղեց. մեկը Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Զիչերինին (1921 թ. մարտի 12-ին), մյուսը՝ Լոնդոնի կոնֆերանսին (1921 թ. մարտի 26-ին):

Զիչերինին հղած հեռագրում Վրացյանը պահանջում էր. «Մոսկվայի կոնֆերանսը իրավասու չէ քննության առնելու Հայաստանի և հայկական խնդիրները: Հայաստանի հեղափոխական կոմիտեի ներկայացուցիչ, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարն (Ա. Բեկզադյան) իրավունք չունի մասնակցելու կոնֆերանսին, քանի որ արդեն տապալված է Խորհրդային իշխանությանը»<sup>1</sup>:

Դեռ նախքան մոսկովյան կոնֆերանսի սկսվելը Խորհրդային Հայաստանի կողմից «Պատգամավոր լրկված էի Մոսկվա,— գրել է Բեկզադյանը,— խնդրելու, որ Ալեքսանդրոպոլի դաշնագիրը վերանայվի: Ամենուրեք հանդիպեցի կենտրոնական կառավարության բոլոր շրջանների անկեղծ համակրության: Լիովին հաստատած եմ, որ այսօր Կարսն էլ իր շրջաններով և նախքևանի ու Սուրմալուի գավառներն էլ կցած կլինեին Խորհրդային Հայաստանին, եթե տեղի չունենար դժբախտ դեպքը (փետրվարի 18-ի արկածախնդրությունը: Այն օրը Զիչերինի մոտ էի: Գրեթե ստացել էի նրա հավանությունը, Կարսն ու հիշյալ նահանգերը մեզ վերադարձնել, երբ ստացվեց նախկին հանրապետության վարչապետ Ս. Վրացյանի շարաքախտ հեռագիրը»:

Երկրորդ հեռագիրը Վրացյանը հղեց Լոնդոնի կոնֆերանսին, որում նա խնդրում էր. «Հայաստանը ուզում է ապրել հաշտ ու բարեհամբույր հարևան Թուրքիայի հետ, ուստի ցանկանում է, որ Լոնդոնի կոնֆերանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահության կամ դժգոհությունների Թուրքիայի և Հայաստանի միջև»<sup>2</sup>:

Վրացյանը, խոսելով Անկախ Հայաստանի Հանրապետության վերջին օրերի մասին, նշում է, որ «Խորհրդարանը երկիրը կամովին է հանձնել բոլշևիկներին: Մենք պետք է ավելի խոհեմ լինեինք, ավելի շրջահայաց պետք է այդ քայլը բրած ըլլայինք մայիսյան ընդվզումների օրերին, Հայաստանը հանձնած ըլլայինք բոլշևիկներուն: Հայաստանի տա-

1. Հայասր, ի՞նչ է «Մայիսի 28-ի անկախությունը» Լիբանան, Բեյրութ, էջ 47:

2. Նույն տեղը, էջ 43:

րածքը ավելի ընդարձակ կըլլար Ղարս, Արղահան, Իգդիր... է՛հ, ի՛նչ ըսիմ, ինչպես արդարանամ»<sup>1</sup>։

82 տարեկան հասակում միայն Սիմոն Վրացյանը հասկացել էր, որ «Վարչակարգերը ժամանակավոր են, հայրենիքը մնայուն է։ Գուրգուրեցեք հայրենյաց հողը»։ Այդ կոշով նա դիմել է կուսակցական հին ու նոր գործիչներին։

Իսկ ի՞նչով ավարտվեց դաշնակցական կառավարության այդ քաղաքականությունը։ Դրա արդյունքը եղավ այն, որ Հայաստանի տարածքը, ինչպես նշվեց վերևում, — 71 հազար ք. կիլոմետրից կրճատվեց մինչև 29,8 հազար ք. կիլոմետրի հօգուտ Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի։ Թուրքական պատվիրակությունը նորից հանդես եկավ հողատարածքային հարցերում Բրեստ-Լիտովսկի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը հիմք վերցնելու պահանջով։ Իր հերթին, Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինը վերստին պահանջեց արդարորեն լուծել Հայկական հարցը, հատկապես վերադարձնել Արևմտյան Հայաստանի թեկուզ մի փոքր մասը, ինչպես նաև քեմալականների դավթած Կարսն ու Արղահանը։ Այդ պահանջը սակայն, Ստալինի կողմից պաշտպանություն չարժանացավ։

Պատահական չէ, որ բանակցություններին մասնակցած թուրք դիվանագետները, նաև թուրքական պատմագրությունն ընդհանրապես, միաձայն գովաբանում են Ստալինին և վատարանում Չիչերինին։ Ֆ. Ջեքսոն, օրինակ, գրել է. «Լենինից հետո երկրորդ դեմք հանդիսացող և Լենինի համաձայնությամբ երկրում ամբողջ իշխանությունն իր ձեռքերում կենտրոնացրած Ստալինի կողմից, մոսկովյան խորհրդատու դուլին մասնակցելու վերաբերյալ մեզ ուղարկված պաշտոնական հրավերը ոչ այլ ինչ էր, եթե ոչ նկրտում՝ փոխելու խորհրդային կոմիսար Չիչերինի հաջողությունն շունչեցած քաղաքականությունը, որը նա վարեց Թուրքիայի նկատմամբ։ ...Չիչերինի և Կարախանի հետ հանդիպումներից մենք հասկացանք, որ այդ ճանապարհով մենք որոշակի արդյունքների չենք հանգի։ Եվ որպեսզի իզուր ժամանակ չկորցնենք, մենք Ազգությունների գործերի կոմիսար ընկեր Իոսիֆ Ջուղաշվիլի-Ստալինից խնդրեցինք մեզ ընդունել»։ Այնուհետև, վերհիշելով Ստալինի հետ իր զրույցը, Թուրքիայի նախկին դեսպանը մեջբերել է նրա հետևյալ խոսքերը. «Հայաստանի հարցը դուք ինքնիրոջ լուծել եք։ Եթե դեռ չլուծված ինչ-որ

1. Տե՛ս, Ռուբեն Զարյանի հուշերը, տպագրված «Հայաստանի Հանրապետություն» թերթի 1993 թ. նոյեմբերի 24-ի հ.։

բան մնացել է, ապա դա ևս դուք ինքներդ լուծեք, սակայն մեզ տեղյակ պահեք վերջնական ժամկետների մասին»: Եվ եզրափակել. «Ընկեր Ստալինի հաստատ, մեծարժեք ու մեզ գոհացնող հայտարարութիւնից հետո մենք նրան հրաժեշտ տվեցինք»:<sup>1</sup>

Այս ամենը խոստով է այն մասին, որ մոսկովյան խորհրդարանը թուրքական պատվիրակութեան հաջողութիւնը կանխորոշված էր: Պատահական չէ, որ թուրքերը ոչ մի հարցում զիջումների չզնացին և հողատարածքային կարևոր ձեռքբերումների հասան: Ահա թե թուրքիայի բանագնացներն ինչպես են բնութագրել (Քյազիմ Կարաբեքիրին ուղարկված հեռագրում) Ստալինի դերը. «Ստալինն անձնապես հայերի որսերիմ թշնամին է... Պայմանագրի կնքումը իրականացավ Ստալինի շնորհիվ»:<sup>2</sup>

1921 թ. մարտի 16—ին կնքված «Բարեկամութեան և եղբայրութեան» թալանչիական-հակահայկական պայմանագրով թուրքիային անցան ոչ միայն Կարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա նրա հարցը նույնիսկ չարժարժվեց: Ի դեպ, թուրք պատմաբանները շնն էլ թաքցրել իրենց խոր գոհունակութիւնը: Բըլբըլըօղլուն գրել է. «Մարտի 16-ի պայմանագրով Արդահանը, Կարսը և Արդվինը, առանց հանրաքվեի անցան թուրքիային, Բաթումի փոխարեն մենք ստացանք Սուրմալուի գավառը (Արարատ լեռան հետ միասին— Ե. Ս.) և Ադրբեջանի հոգատարութեան ներքո ստեղծվեց Նախիջևանի ինքնավար հանրապետութիւնը, այն պայմանով, որ Ադրբեջանն այդ հոգատարութիւնը չզիջի մի երրորդ պետութեան (այսինքն՝ բուն իրավատեր Հայաստանին,— Ե. Ս.): Ավելին, Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտ քայլեր նախաձեռնել անդրկովկասյան հանրապետութիւնների նկատմամբ, որպեսզի նրանք թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերում»:<sup>3</sup> Հասկանալի է, որ ի տարբերութիւն Ադրբեջանի, որը բնականաբար ողջունելու էր նմանօրինակ նպաստավոր պայմանները, Հայաստանը հարկադրվելու էր հրաժարվել կենսականորեն կարևոր իրավունքներից և շահերից:

Ինչպես արդեն ասվեց, թուրքերի պահանջով խորհրդարանը իր դռները փակ պահեց հայկական պատվիրակու-

1. Ալի Ֆուաթ Չեքիտոյ, նշվ. աշխ., էջ 146 (Թուրք.):

2. Ռ. Մ. Իսիրի, նշվ. աշխ., էջ 936 (Թուրք.):

3. Տեֆիկ Բրյուլըօղլու, նշվ. աշխ., էջ 21 (Թուրք.):

թյան առաջ, թեկուզ այնտեղ վճույժում էին բացառապես Հայաստանին վերաբերող հողատարածքային հարցեր: Դա խորհրդային Ռուսաստանի հետ պայմանագրային որևէ պարտավորություններ չկապված Հայաստանի Հանրապետության գերիշխան իրավունքների ազդակողոզ ոտնահարում էր: Խորհրդային Ռուսաստանը իրավական որևէ իրավասություն չունեի տնօրինելու նրա հողատարածքը, կամայականորեն ճշտորոշելու նրա պետական սահմանները:

Խորհրդաժողովի որոշումների մասին հայկական պատվիրակությունն իմացավ հետին թվով, որպես կատարված իրողություն: Նրա ղեկավար Բեկզադյանը Չիչերինին ուղղված իր հայտարարության մեջ խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը մեղադրեց Կարսը, Արդահանը և Սուրմալուն ապօրինաբար Թուրքիային հանձնելու մեջ: Իր պատասխանում Չիչերինը հարկադրված էր բացել բանակցությունների անդրկուլիսյան վարագույրը, խորհրդային պետության ու բուլղեիկյան կուսակցության երևելիների անվայելուշ միջամտությունը, որը և կանխորոշել էր խորհրդաժողովի ընթացքն ու արդյունքը: Չիչերինը գրել է. «Ընկեր Բեկզադյանը գործն այնպես է ներկայացնում, որ կարծես բանակցությունները սկսվել են մեր քաղաքական հանձնաժողովի առաջին նիստից: Տարօրինակ կերպով նա կատարելապես շրջանցում է այն, որ քաղաքական հանձնաժողովի նիստերը սկսվեցին մեր ու թուրքերի միջև բուն բանակցությունները սկսելուց համարյա երկու շաբաթ անց: Բանակցությունների առավել բուռն ժամանակաշրջանն ընթացավ բուլղորովին էլ ոչ հանձնաժողովի նստաշրջանում, այս, մասամբ, անդրկուլիսային բանակցություններում և մեծազդեցիկ ընկերների ներգործության ներքո: Քաղաքական հանձնաժողովի նստաշրջանը բացվեց միայն այն ժամանակ, երբ հիմնական հարցերն արդեն վճույժ էին: ...Պայմանագրային սահմանն այդ պատճառով բուլղորովին էլ չի հանդիսանում ոչնչով շարժարացված մի նվեր Թուրքիային: Այն պարզապես արդյունքն է ամենաբուռն երկարատև մի պայքարի: Բեկզադյանին չի կարող հայտնի չլինել, որ բանակցությունների յուրաքանչյուր քայլ ուղեկցվեց Կենտկոմի որոշումներով: Պայմանագրային սահմանագիծը ճշտորոշվեց բուռն վիճաբանություններից հետո, ըստ որում քայլ առ քայլ տեղի ունեցան փոխզիջումներ, իսկ մեր կողմից զիջումներն արվեցին կենտրոնական կոմիտեի որոշումներով: Չեղավ ոչ մի կարևոր հարց, որի վերաբերմամբ կենտրոնական կոմիտեն որոշում ընդունած

չլինեն: Հենց այս ամենն էլ հայտնի չէր հայկական պատվիրակութիւնները»<sup>1</sup>:

Այսպիսին եղավ մոսկովյան առաջին քայլը քաղաքական այն անվայելուչ խաղում, որը խորհրդային կառավարութիւնը վարեց Հայկական բազմաշարժար հարցի շուրջ: Ապշեցուցիչն այն է, որ հայ ժողովուրդը, հանձին իր դիվանագիտական պաշտոնական պատվիրակութիւն, այդ խաղից դուրս թողնվեց: Մոսկովյան անօրինական և անբարո մեքենայութիւնների հետեանքով արնաթաթախ և մահամերձ Հայաստանը զրկվեց ևս 28 հազար քառակուսի կիլոմետր բուն իր տարածքից:

Քաղաքական անվայելուչ խաղի հակահայկական հաջորդ քայլը Մոսկովյան ձեռնարկեց 1921 թ. հուլիսին, երբ Արցախը խլվեց իր մայր Հայաստանից ու գցվեց ադրբեջանցի թուրքերի հրախը: Եվ նորից ոչ ոք չհարցրեց հայ ժողովրդի կարծիքը: Իսկ այդ անբարո քայլի հետեանքը, ինչպես և նախորդինը, զգում և ուղղակի ապրում ենք առ այսօր:

Թուրքիայի կառավարող շրջանների թշնամական վերաբերմունքը Անդրկովկասի խորհրդային հանրապետութիւնների նկատմամբ ի հայտ եկավ նաև Թուրքիայի և երկրամասի հանրապետութիւնների միջև պայմանագիր կնքելու հարցում: Մոսկովյան պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, նախատեսվում էր նույնպիսի պայմանագիր ստորագրել Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետութիւնների միջև: Սակայն քեմալական կառավարութիւնը ձգձգում էր այդ հաստատագր հարցի լուծումը, պատճառաբանելով, որ անհրաժեշտ է պայմանագրեր կնքել Անդրկովկասյան հանրապետութիւններից յուրաքանչյուրի հետ առանձին: Դրանով իսկ, նա ձգտում էր վերջիններին պարտադրել իր պայմանները: Անդրկովկասի խորհրդային հանրապետութիւնները Անկարայի կառավարութիւնը տեղյակ պահեցին, որ Թուրքիայի և Անդրկովկասյան երեք հանրապետութիւնների միջև կնքվելիք պայմանագիրը պետք է մշակվի համատեղ կոնֆերանսում՝ Մոսկովյան պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն: Անդրկովկասյան հանրապետութիւնների և հատկապես Հայաստանի նկատմամբ Թուրքիայի թշնամական գործողութիւններին վերջ դնելու նպատակով ՌԽՖՍՀ կառավարութիւնը, հիմնվելով Մոսկովյան պայմանագրի վրա, պնդում էր, որ կարճ ժամանակում հաշտութիւն կոնֆերանս հրավիրվի՝ Թուրքիայի և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև հարաբերութիւնները նորմալացնելու համար: Մինչ-

ղևն Թուրքիան, օգտվելով պայմանագրի բացակայությունից, և մշտապես խախտելով Մոսկվայի պայմանագրի կետերը, սրով փաստորեն կանոնավորվել էին Թուրքիայի հարաբերությունները անդրկովկասյան հանրապետությունների հետ, վերջիններիս նկատմամբ թշնամական քաղաքականություն էր վարում և ամեն կերպ ձգձգում հաշտության կոնֆերանսի հրավիրումը: Վերջապես, 1921 թվականի հուլիսին, երբ հունական զորքերը հարձակման անցան ամբողջ ճակատով, և թուրքական բանակը ստիպված էր նահանջել Սակարյա գետից այս կողմը, քեմալականները, հայտնվելով ահեղ սպառնալիքի առջև, վերստին ստիպված էին դիմել խորհրդային Ռուսաստանի օգնությանը: Հիմա արդեն քեմալականները իրենք էին խնդրում արագացնել կոնֆերանսի հրավիրումը՝ անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ու Թուրքիայի միջև պայմանագիր կնքելու համար: Այսպիսով, Մոսկվայի պայմանագրի ստորագրումից վեց ամիս հետո, 1921 թվականի սեպտեմբերի 26-ին, Կարսում բացվեց կոնֆերանս՝ անդրկովկասյան երեք խորհրդային հանրապետությունների ու Թուրքիայի մասնակցությամբ: Դրան ներկա էր նաև խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը:

Կոնֆերանսի առաջին իսկ նիստում թուրքական պատվիրակությունը նորից առաջ քաշեց անդրկովկասյան հանրապետությունների ու ՌեՅՍՉ կառավարության կողմից արշևն մերժված առաջարկը, յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին պայմանագիր ստորագրելու վերաբերյալ: Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի պատվիրակությունը այս անգամ էլ միահամուռ հակահարված տվեց թուրքական ներկայացուցիչներին, որոնք սեպտեմբերի 30-ի նիստում հանդես եկան սադրիչ հարցապնդումով՝ «Ինչպիսի՞ փոխհարաբերության մեջ են գտնվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունները»: Այդ կապակցությամբ Գ. Վ. Չիչերինը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Յուսուֆ Քեմալ բեյին, 1921 թվականի հոկտեմբերի 3-ին ուղարկած նոտայում պաշտոնապես տեղեկացնում էր, որ «Ռուսաստանյան հանրապետության հետ դաշնակից Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների կառավարությունները ռուսաստանյան կառավարությանը տեղյակ են պահել այն մասին, որ հիշյալ հանրապետությունները իրար հետ քաղաքական ու տնտեսական սերտ դաշինքի մեջ են գտնվում և ներանց վերաբերող քաղաքական ու տնտեսական բոլոր հարցերը լուծվում են համատեղ»<sup>1</sup>: Միայն դրանից հետո, 1921

1. «ДВП СССР» т. IV, док. ст. 248.

թվականի հոկտեմբերի 13-ին, Կարսում ստորագրվեց «բարեկամութեան մասին» պայմանագիրը Ադրբեջանական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի ու Վրացական ԽՍՀ-ի միջև մի կողմից և Թուրքիայի՝ մյուս կողմից: Կարսի պայմանագրի հիմնական հոդվածները, այդ թվում տարածքային հարցերին վերաբերող հոդվածները, համընկնում էին Մոսկվայի պայմանագրի համապատասխան հոդվածներին:

Կոնֆերանսում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Յա. Գանեցկին առաջ քաշեց Անիի և Կողբի աղահանքերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը: Նա հիմնավորեց, որ Անին «Հայերի համար ունի պատմական ու գիտական մեծ արժեք», իսկ Կողբը՝ որպես Կովկասի ժողովուրդներին աղով ապահովելու կարևոր աղբյուր: Անդրկովկասի պատվիրակութունը պահանջեց վերադարձնել Թուրքերի կողմից կողոպտված հսկայական գույքը, հայրենիք վերադարձնել ռազմագերիներին: «Թուրքերը, — հեռագրեց Ա. Մըռավյանը Ալ. Մյասնիկյանին, — ցուցաբերում են խիստ անհաշտ վողականություն, հրաժարվում են զիջել Անիի ավերակները, մերժում են Կողբի կոնցեսիան, համառում են ներման հարցում, չեն ուզում վերադարձնել Ալեքսանդրապոլի դեպոյի ունեցվածքը»<sup>1</sup>:

Գանեցկին Չիչերինին հղած հեռագրում ի մի բերելով Թուրքական պատվիրակության կոնֆերանսում բռնած լիտի դիրքը, որ նա ոչ մի հարցում չէր գնում փոխադարձ զիջումների, մատնանշեց. «Թուրքերի վարքագիծն այնպիսին է, որ ակամայից հարց ես տալիս. ինչո՞ւ էինք մենք նրանց համար այդքան զոհաբերություններ անում»<sup>2</sup>:

Հայտնի է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը 1920-1922 թ.թ. զենքով, մեծ քանակությամբ ոսկով ու ռազմամթերքով օգնել է քեմալական Թուրքիային, նրա ազգային պատերազմի ամենածանր ժամանակաընթացքում:

Այսպիսով, հակառակ հայ ժողովրդի կամքի, Խորհրդային Ռուսաստանի գիտություններ ու հովանավորությամբ, կնքվեցին Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, որոնցով խլվեց շուրջ 28 հազար քառ. կմ. տարածք: Այլ կերպ ասած, այն, ինչ շահողվեց իրականացնել երիտթուրքական զավթիչներին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Արևելյան Հայաստանի նկատմամբ, մասամբ կենսագործվեցին Թուրքիայի նոր կառավարողների, «Արևելքում հեղափոխության դրոշակակիրներին»՝ քեմալականների կողմից:

1. Տե՛ս 22 ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թ. 1-77:

2. Տե՛ս Ռ. Սանակյան, Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից Թուրք պատմագրության մեջ, էջ 35:

## ՎԵՐՋԱՐԱՆ

Երիտթուրքական նվաճողները հաշվի չառան պատերազմի տխուր դասերը Կովկասյան ռազմաճակատում 1914-1917 թվականներին, ինչպես նաև երկրի տնտեսության ու ֆինանսական աղետալի վիճակը, որն առաջ էր եկել շորսամյա պատերազմի ու ռազմական մի շարք պարտությունների հետևանքով: Նրանք մերժեցին առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների հաշտություն կնքելու վերաբերյալ խորհրդային կառավարության առաջարկը: Երիտթուրքական կուսակցության պարագլուխները և երկրի ռազմամուլ շրջանները շարունակում էին հետևել Կովկասի նկատմամբ իրենց մշակած ագրեսիվ պլաններին: Օգտվելով 1918 թվականի սկզբին Ռուսաստանում ստեղծված իրադրությունից, նրանք, մասնավորապես, Կովկասյան ռազմաճակատից ռուսական բանակի հեռացումից հետո, ձեռնարկեցին նոր արշավանք:

Եթե Անդրկովկասի նկատմամբ երիտթուրքերի զավթողական նպատակները պատերազմի առաջին իսկ տարում ձախողվեցին ռուսական բանակի հարվածների ներքո, ապա 1918 թվականին դրանք չիրականացան՝ Անտանտի պետությունների տարած հաղթանակների և Հայաստանի, ինչպես նաև երկրամասի ժողովուրդների պայքարի շնորհիվ:

\*\*\*

Չնայած քեմալական շարժման հակաանտանտյան բնույթին, Անկարայի կառավարությունը հույս ուներ հակախորհրդային գործարքի մեջ մտնել Անտանտի տերությունների հետ, որպեսզի վերջ տար Սևրի պայմանագրի իրագործմանը: Քեմալականների Հայկական Հանրապետության դեմ ձեռնարկած ագրեսիան նույնպես հետապնդում էր նույն նպատակը.

աշխարհի քարտեզից ջնջել Արևելյան Հայաստանը ևս (ինչպես Արևմտյան Հայաստանի հետ արվեց), գլխովին ոչնչացնել հայ ժողովրդին, ցույց տալ Սևրի պայմանագրի բացարձակ անիրագործելիությունը և դրանով իսկ ազդել Թուրքիայի և կատասար դաշնակից պետությունների վարած քաղաքականության վրա:

Ինչպես արևիվային փաստաթղթերի, այնպես էլ թուրք հեղինակների վկայությամբ, քեմալական կառավարությունը կանխօրոք նախապատրաստել և հանգամանորեն մշակել էր Հայաստանի ոչնչացման ծրագիրը և սեփական նախաձեռնությամբ էլ ձեռնամուխ եղավ դրա գործադրմանը:

\*Լեւալական կառավարությունը սկզբում փորձեց իր նպատակին հասնել դիվանագիտական ճանապարհով՝ Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու միջոցով: Սակայն 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում սեղի ունեցած խորհրդա-թուրքական բանակցությունները ձախողվեցին՝ թուրքական պատվիրակության Հայաստանի Հանրապետության նկատմամբ առաջ քաշած ագրեսիվ պրաչնների պատճառով:

Խորհրդային Ռուսաստանը առաջին պետությունն էր, որ անաչեց Անկարայի քեմալական կառավարությանը: ՌեՅՍՄԷ-ը քեմալական շարժմանը օգնեց զենքով, զինամթերքով և սակով: Թուրքիան դիտվում էր որպես Արևելքում սոցիալիստական հեղափոխության դրոշակակիրը:

Նախքան քեմալական Թուրքիայի Հայաստանի Հանրապետության դեմ ձեռնարկած արշավանքը, Անկարայի և Խորհրդային Ռուսաստանի կառավարությունները պայմանավորվել էին, որ հարձակման անցնելու դեպքում թուրքական զորքերը Սարիղամիշի գծից այս կողմ չպետք է անցնեն, Դա միջազգային իրավունքի կոպիտ խախտում էր Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից, որը Հայաստանի Հանրապետության հետ շունենալով ոչ մի առնչություն, հայերի ոխերիմ թշնամի՝ քեմալական Թուրքիային է հանձնում Հայաստանի տարածքը, ընդհուպ մինչև Սարիղամիշ: Դրա հետևանքը եղավ այն, որ քեմալական բանակը, Սարիղամիշը գրավելուց հետո, շարունակեց իր ավերիչ առաջխաղացումը, գրավելով նաև Ալեքսանդրապոլը: Թուրքական զորքերի հաղթանակին քիչ դեռ չխաղաց Ստալինի հակահայկական Վիքտորոշումը և նրա հայ-թուրքական պատերազմի ընթացքի սասին ապակողմնորոշող հեռագրերը քաղբյուրոյի անգամներին:

Քեմալական զորքերի հաղթանակին նպաստեցին նաև Հայաստանի հեղկոմի գրավոր և բանավոր կոչերը, պրոպագանդան, որոնցով կազմալուծում էին հանրապետության

բանակը, թուլացնում նրա մարտունակութունը, դրանով իսկ չլատելով ազգային ուժերը:

Քեսալականների հաղթանակին քիչ օգնություն չբերին նաև նրանց կմխտարների ակտիվ գործունեությունը: Խորհրդային Ազրբեջանում: Ի վերջո թուրքական և խորհրդային զորքերի հարվածներից Հայաստանի Հանրապետությունն այն աստիճան թուլացավ, որ դաշնակցական կառավարությունը ստիպված եղավ ընդունելու ՌեՅՍՆ—ի վերջնագիրը՝ իշխանությունից հրաժարվելու և այն բոլշևիկներին հանձնելու մասին: Դրանով վերջ տրվեց Հայաստանի առաջին Հանրապետությանը:

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին մոսկովյան խորհրդա-թուրքական երկրորդ բանակցությունների ժամանակ, խորհրդային պատվիրակության ղեկավարը նույն Գ. Չիչերինն էր, սակայն այդ բանակցություններում ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս Լենինը, Ստալինը, Տրոցկին և Բարվից նրանց խորհրդատուներ՝ Նարիմանովը, Կարակը և ուրիշներ:

Նորահայտ փաստաթղթերի ուսումնասիրությունը մեզ սյարդում է, որ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Գ. Չիչերինի և քաղբյուրոյի ու կենտրոնական կոմիտեի միջև քեմալական Թուրքիայի նկատմամբ գոյություն ունեին տարբեր տեսակետներ:

Լենինը, Ստալինը, Տրոցկին, հակառակ Չիչերինի արդարացի, օրյեկտիվ տեսակետի, թելադրում էին նրան «Ինչ զընով էլ լինի, բավարարել հեղափոխության դրոշակակիր քեմալական Թուրքիայի պահանջները»:

Այդ ամենի արդասիքը եղավ այն, որ մարտի 16-ին կընքվեց «Բարեկամության և եղբայրության» խալտառակ, ապօրինի սլայմանագիրը, որով առանց Հայաստանի Հանրապետության իմացության նրա տարածքից 28 հազ. քառ կմ հանձնվեց Թուրքիային, իսկ Նախիջևանը և Ղարաբաղը բռնակցվեցին Ազրբեջանին:

Դավադիր գործարքի հետևանքը եղավ այն, որ Հայաստանի 71 հազ. քառ. կմ. տարածքից ընդամենը մնաց 29,8 հազ. քառ. կմ.:

*«Օսմանյան կառավարութեան ազդարային քաղաքականութիւնը Թուրքահայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին», Հայկական ԳԱ «Տեղեկագիր», 1948 թ. № 7, էջ 39-53:*

Рец.на кн.: Е. Токаржевский, Бакинские большевики-организаторы борьбы против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 г., «Труды», X. Азерб. филиал ИМЭЛ при ЦК ВКП(б), Баку, 1948, с. 212-222.

О работах проф. А. Ф. Миллера: «Краткая история Турции», «Очерки новейшей истории Турции»— «Вестник АН СССР» М., 1949. № 8. с. 94-104. «Известия АН Арм. ССР». Общественные науки, Ереван, 1949. № 4. с. 81-91.

Сталинское учение по национально-колониальному вопросу и народы Востока— «Вестник АН СССР». М. 1949, № 12. с. 60-85.

Аграрные отношения в Кемалистской Турции— «Труды» Сектора экономики АН Арм. ССР. Ереван, 1949, т. I. с. 212-238.

Ленин и народы Закавказья— «Известия АН Арм. ССР» Общественные науки. Ереван, 1950, т. 5. с. 3-10.

Англо-американские противоречия в Иране и их обострение после II мировой войны. «Известия АН Арм. ССР». Общественные науки, Ереван, 1952, № I. с. 19-36.

*«Անգլո-ամերիկյան ինտերվենցիան Անդրկովկասում 1918-1920 թթ. և Անդրկովկասի ժողովուրդների պայքարը իրենց պատմության համար», ՀԳԱ «Տեղեկագիր», 1953 թ., № 3, էջ 35-48:*

Из истории борьбы армянского народа против американских агрессоров и их агентов— жур. «Партийная жизнь», орг. ЦК КП Армении, Ереван. 1954, № 2 с. 54-59.

Обнищание трудящихся Турции после II мировой войны, Ереван, 1954, № 12, с. 59-72.

Влияние русской революции 1905-1907 гг. на Турцию.—В тез. «Объединенная научная сессия отделений общественных наук Аз. ССР. Груз. ССР и Арм. ССР посвященной 50-летию Первой русской революции». Тбилиси, 1955, с. 35-40.

Труд по истории национально-освободительной борьбы армянского народа— жур. «Вопросы истории». М. 1955, № 11, с. (совместно с В. Меликсетяном).

Влияние русской революции 1905-1907 гг. на развитие революционного движения в Турции.— «Известия АН Арм. ССР». Общественные науки. Ереван, 1955. № 12, с. 59-76.

Крайнее обнищание трудящихся Турции после Второй мировой войны. Изд. «Общество по распростран. полит. и научн. знаний». Ереван, 1955, 33 стр.

Из истории армянского нагода— В книге: «Армянская ССР», М., 1955, с. 34-48.

Положение трудящихся масс в современной Турции. Ереван. изд. АН Арм. ССР, 1955, 156 стр.

Влияние Октябрьской революции на национально-освободительное движение в Турции. — «Известия АН Арм. ССР». Обществ. науки. Ереван, 1955, № 10, с. 7-22,

Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине 19 в. Ереван, «Госиздат Армении». 1957, 135 с.

Армяне. В кн. Народы Передней Азии. Этнографический очерк. М., Изд. АН СССР, 1957, с. 291-294

Великая Октябрьская социалистическая революция и национально-освободительная борьба в Турции (1918-1922 гг. Ереван. изд. АН Арм. ССР, 1958, 82 стр.

Из истории турецкой интервенции в Закавказье в 1918 г.— «Известия АН Арм. ССР». Общественные науки. Ереван, 1958. № 7, с. 27-42.

Борьба народов Закавказья против турецких оккупантов в 1918 г.— «Востоковедческий сборник». Ереван, изд. АН Арм. ССР, 1960, т. 1. с. 190-242.

О некоторых фактах антинаучного освещения истории.— «Востоковедческий сборник». Ереван. изд. АН Арм. ССР, 1960, т. 1. с. 379-400 (со автор А. Х. Саф-растян).

Фальсификация некоторых вопросов истории армянского народа в трудах турецких историков. — «Известия АН Арм. ССР». Общественные науки. Ереван, 1961. № 12. с.13-22 (со автор Р. Г. Саакяном).

Пантюркистская и панисламистская агентура Османской империи в Закавказье накануне «первой мировой войны». — «Известия АН Арм. ССР» Обществ. науки, Ереван, 1961, № 7, с. 17-30.

Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, изд. АН Арм. ССР, 1962, 497. стр.

К вопросу о вступлении Османской империи в войну на стороне Центральных держав.— «Краткие сообщ. Ин-та народов Азии» (АН СССР). М., 1963, № 1, с. 132-140.

Zum Kriegseintritt des Osmanischen Reiches an Seite der Zentralmächte in November 1914. Ko'on al'smus und Ne kolonialismus in Nordafrika und Na ost\*, Akademie-Verlage, Berlin, 1964, S. 168—179.

«Թուրքիան և նրա նվաճողական բաղաբականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ.», «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1964, 541 էջ:

«Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության հենցափոխումը թուրք պատերազմի ժամանակ», Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1963, էջ 96 (Հեղինակակից՝ Ռ. Գ. Սահակյան): Այս աշխատությունը հրատարակվել է անգլերեն՝ ԱՄՆ-ում:

Vital Issues In Modern Armenian History, Watertown, Massachusetts, 1965, USA.

«Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրականացումը երիտթուրքերի կողմից 1915-1916 թվականներին», Պեյրոսի, 1965, 133 էջ:

Ценная монография.— «Известия АН Арм. ССР». Общест. науки, Ереван, 1965, № 7. с. 185-193.

Армяноубийственная политика младотурок в 1915-1916 гг.— жур. «Советская Армения». Ереван, 1965, № 4. с. 16-23.

Армянский вопрос и великие державы.— жур. «Литературная Армения». Ереван, 1965, № 6, с. 63-74.

Геноцид армян 1915-1916 гг.— «Историко-филологический журнал» (изд. АН Арм. ССР). Ереван, 1965, № 1, с. 23-36.

Монография о национально-освободительной борьбе в Турции.— «Вестник архивов Армении», Ереван, 1967, № 1. с. 233-251.

Советско-турецкие отношения в Закавказье в 1920-1921 гг.— жур. «Литературная Армения», Ереван, 1967, № 6. с. 79-91.

Великая Октябрьская социалистическая революция и национальная война в Турции (1918-1922 гг.).— «Вестник архивов Армении», Ереван, 1967, № 3. с. 153-174.

Дипломатическая миссия РСФСР в Армении.— «Вестник архивов Армении». Ереван, 1967, № 3, с. 21-32.

Введение, дашнакско-турецкая война.— В кн.: Новейшая история Турции., М. «Наука», 1968. с. 7-18, 253-259.

Рец.: В. Парсамян—История армянского народа, т. 3. — «Вестник общественных наук» АН Арм. ССР. Ереван, № 7, 1968, с. 70-73.

Գրախ. Ա. Ս. Համբարյան, «Ազգաբնակչության հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)», Երևան, 1965. «Պատմաբանասիրական հանդես», 1968, № 1, էջ 253-259;

Об армяно-венгерских исторических и культурных связях и задачах их изучения.— «Вестник общественных наук» АН Арм. ССР», Ереван, 1969, № 5, с. 39-56. (совместно Агаян Ц. П. и Восканян В. К.)

На XII Всемирном форуме алтаистики (Берлин, ГДР).— «Вестник архивов Армении», Ереван, 1969, № 3, с. 262-268.

Великие державы и восточный вопрос.— «Вестник архивов Армении», Ереван, 1970, № 3, с. 211-220.

Ленин и освобождение армянского народа.— «Вестник архивов Армении», Ереван, 1970, № 1, с. 27-36.

Административная и демографическая политика османского правительства в Западной Армении.— «Страны и народы Ближнего и Среднего Востока», т. У. Турция. Ереван, 1970, с. 357-378.

Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го и в начале 20 вв. Ереван, изд. АН Армении, 1972, 332 стр.

К вопросу о вступлении Османской империи в первую мировую войну на стороне центральных держав (доклад на XII Всемирной конференции Алтаистики в Берлине).

„Sprache, Geschichte und Kultur der Altaischen Völker“. Protokollband der XII. Tagung der Permanent International Altaistic Conference 1969 in Berlin. Akad. Verlag. Berlin, 1974, S. 511-520.

Ценный труд. (История армянского народа. Т. У. Изд. АН Арм. ССР, Ереван, 1974).— «Литературная Армения», 1975. № 8, с. 106-109.

Советское-турецкие отношения и Закавказье в 1920-1921 гг.— В кн.: «Великий Октябрь и Турция», М., 1997, с. 31-40.

«Երիտթուրքական հեղափոխություն», Հայաստանի Հանրապետության, Երևան, 1977, հատ. 3, էջ 590-591»:

Туркология в Армении и перспективы ее развития. В кн.: Турция, История и экономика. М., 1978, с. 78-82,

«1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմը և Բուլղարիայի ազատագրումը թուրքական լծից», «Պատմաբանասիրական հանդես», № 1, 1978, էջ 17-29:

Турецкая агрессия в Армении осенью 1920 г. Позиция Советской России — «Страны и народы Ближнего и Среднего Востока. Т. X. Турция, Ереван, 1979, с. 71-89.

Младотурецкая революция 1908-1909 гг. — «Армянская Советская энциклопедия», 1977, т. 3 с. (на арм. яз.)

Османская империя — исторический очерк — «Армянская советская энциклопедия», 1978. т. 4. с. (на армя, яз.),

«Օսմանյան կայսրությունը» (պատմական ակնարկ), Հ հանրապետության, Երևան, 1978, հատ. 4, էջ 254-258:

«Հայ թուրքագիտությունը XIX դարում և XX դարասկզբին», «Մերձավոր Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ», հատ. X, Թուրքիա, Երևան, 1979 էջ 241-283»:

«Հայաստանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին», «Հայ ժողովրդի Պատմություն», հատ. 6, Երևան, 1981, էջ 536-582:

К вопросу о характере национально-освободительной войны в Турции в 1919-1923 гг. — «Вестник архивов Армении», 1982, № 3, с. 160-174.

Панисламизм и пантюркизм во внутренней политике младотурок. «Вестник востоковедения». Ереван, 1983, № 1-2, с. 5-19.

Изучение истории Западной Армении в армянской советской историографии. — Историко-филологический журнал». Ереван, 1984, № 4, с. 78-90.

Из истории туркологии в Советской Армении.— «Народы Ближнего и Среднего Востока». Ереван, 1985, т. XII, Турция, с. 248-274.

Положение угнетенных народов Османской империи в освещении турецких авторов. Тезисы.— «Актуальные вопросы историографии Востока нового и новейшего времени. Проблемы национально-освободительного движения в странах Азии и Северной Африки в советской и зарубежной историографии 50-80-х гг. XX в. «М.» 1985, с. 119-122.

Особенности аграрных отношений в Западной Армении во второй половине XIX века. — «Вопросы востоковедения». Ереван, 1987, № 3-4, с. 99-107,

Актуальная монография (о книге Б. М. Поцхверич «Внешняя политика Турции в 60-х-начале 80-х годов», М., 1986). — «Вестник архивов Армении», Ереван. 1987. № 3, с. 232-236.

Положение угнетенных народов Османской империи в освещении турецких авторов, — «Вестник общественных наук». Ереван. 1989, № 3, с. 13-23,

*Փանիրսիմիզմի և փանթորիզմի վարդապետությունները Երիտթուրքերի ներքին քաղաքականության մեջ: «Պատմագիրք Ենդզասի և շրջակայք» (Գամիրք) հայտ, Պեյրուս, 1989, էջ 386-395:*

Геноцид—политика пантюркистов, — «Вестник архивов Армении», Ереван. 1990. № 1, с. 29-43.

За кулисами, Как рождался московский договор 1921 года.— «Литературная Армения», Ереван, 1991, № 1, с. 71-82.

История Армении 1918-1921 гг, в освещении турецких авторов, — «Литературная Армения». Ереван. 1991, № 8, с. 91-103.

Армянское добровольное движение 1914-1918 гг, — «Армянский вопрос. Энциклопедия». Ереван, 1991, с. 62-64.

Кемалистское движение.— «Армянский вопрос. Энциклопедия». Ереван, 1991, с. 198.

Из истории советско-армянских дипломатических отношений. — «Вестник общественных наук». Ереван, 1993. № 3, с. 3-17.

Армянский вопрос и Россия в 1912-1914 гг. «Историко-филологический журнал». Ереван, 1994, № 4, с.

*Քեմալականների 1920-1921 թթ. արշավները Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագիրը: «Լրարբեր հասարակական գիտությունների, Երևան, 1992 № 1, էջ 19-34:*

*Հայ-թուրքական հարաբերությունների պատմությունից— 19-րդ դարի վերջը 20-րդ դարի սկիզբը (մի քանի փաստաթուղթ «որոշակի էջերից»), «Իրանամե», գիտամշակութային հանդես, 1994, ր տարի թիվ 1 (8), էջ 21-26:*

*Երիտթուրքերի պանթորական դավթողական նոր նկրտումները Բա-  
նուսի հաշտության կոնֆերանսում (1918 թ. մայիսի 11-ից հունիսի 4-ը)  
«Լրարբեր» հասարակական գիտությունների, Երևան 1994 № 4 էջ:*

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք	3
Գլուխ առաջին. Օսմանյան կայսրության ազրեսիան Անդրկովկաս 1918 թվականին	
Գլուխ երկրորդ. Նախարայլ դեպի Մեծ Թուրան Պայքարի բովում	5 103
Գլուխ երրորդ. Քեմալական Թուրքիայի արշավանքը Անդրկովկաս 1920 թ. աշնանն ու 1921 թ. ձմռանը և խոր- հրդային Ռուսաստանի դիրքորոշումը	
Ո՞ւմ ապավինել	136
Գլուխ չորրորդ. Անդրկովկասը մոսկովյան խորհրդա-թուրքա- կան բանակցություններում 1921 թ. փետրվար- մարտ ամիսներին և մարտի 16-ի մոսկով- յան ու Կարսի հեղտեմբերի 13-ի պայմանագրերը	
Կուլիսների հետևում	182
Վերջաբան	193

# ԵՐՎԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԱՎԱԳԻՐ ԳՈՐԾԱՐՔ

Հայաստան — Ռուսաստան — Թուրքիա

*Խմբագիր՝ էդ. Գևորգյան, Ա. Կարապետյան  
Նկարիչ՝ Դ. Պատյայան  
Դեղ. խմբագիր՝ Գ. Հովհաննիսյան  
Տեխն. խմբագիր՝ Հ. Վարդանյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Կարապետյան*

ИБ 7681

Հանձնված է շարվածքի՝ 22.05.1992 թ.: Ստորագրված է տպագրության՝  
5.10.95 թ.: Յորմատ՝  $84 \times 108 \frac{1}{32}$ : Թուղթ՝ տպագրական՝ № 1:  
Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր՝ 8,92 պայմ.  
մամ., 10,71 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 1.000: Պատվեր՝ 431:  
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:  
ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության նախարարության  
Արտաշատի շրջ. տպարան, Մանուշյան 7:

32 (36)  
U-25

«ՀԱՅԱՍՏԱՆ»